



Q - 34



50

ԱՐՈՒԵՍ

ՆԵՐՏԵՐԵԼԻՕՍՈՒԹԵԼՆ



2004

2004

2004

2021

5)

489-669

Printed in Tur.

9--45

Ե Ր Ո Ւ Ե Ս Տ

ՃԵՐՏԵՐԸԻ ՕՍՈՒԹԵԼՆ

ԶՈՐ ՅՕՐԻՆԵԱԼ Է

Հ. ԵՆՏԵԹԻԼՅ ԳԵՐԸԳԵՇԻԼՆ

ՅԱՀԱԿԵՐՏԱՅ ՄԵԾԻ ՀՕՐՆ

Մ Ե Ր Թ Ե Ը Ը Յ

75-4586



Ի Վ Ի Ի Ն Ն Ը

Ի ՎԱՆՍ ՊԱՇՏՊԱՆ ՍՈՒՐԲԵՍՈՒԱԾՆԵՐԻ

1 8 4 4

808.05

1952



42-9282

Յ Ե Ռ Ե Ջ Ե Ի Ե Ն

Եթէ մարդոյ խօսել հարկ իցէ, ճարտարն խօսել պարտ իմն է. զի զոր օրինակ յանասնոց, նոյնպէս եւ յընկերէն ընտրի մարդ խօսիւքն: Եւ թերեւս ասիցէ որ յի՛նչ պիտոյ իցէ առ մեւք ճարտարախօսութիւն. առ ամենայն ինչ, յուսումն, ի շրջել ընդ մարդկան, յարուեստս անգամ, ի վաճառականութիւն եւ յիշխանութիւն: Միթէ փոքր ինչ իցէ նստել եւ առանց զինուց զամուրս աւերել, եւ զզօրս նուաճել, նա զմիտս անգամ, որ ազատն են, գերել եւ ընդ ծառայութեամբ արկանել. եթէ զոյս ամենայն առնել հնար ինչ իցէ, ճարտարախօսութեան միայն հնար է. ապա յիրաւի ասիցեն զՖիզիպոսայ, թէ քան յԱբամազոսայ, առաւել ի Ղեմոսթենեայ երկնչէր. եւ ընդ ո՛ւմ աւելի դութ եւ բարեկամութիւն կայցէ մարդկան, եւ ո՛ւմ յաջողիցի, բայց այնմ որ զխօսիցէ խօսել, եւ խօսել ո՛ւր եւ սրպէս պարտն իցէ, եթէ արդար ինչ որ զհին առակն համարիցի թէ խօսեաց զի ծանեաց զքեզ:

Իայց քանզի ոչ զճարտարախօսութիւն ինչ գովել ի մտի կայ մեր, որոյ շահ եւ պէտք ամենեցուն իսկ յայտնի եւ երեւելի են, առացուք զկարեւորս

ՎԱՄՆ ՃԱԲՏԱԲԱՆՕՍՈՒԹԵԱՆ ԵՒ ԳԻՈՅՍ ԱՅՍՈՅԻԿ

Հերբայեցիք, որպէս ասեն, տեղեկագոյնք եղեն ի մէջ հին ազգաց, եւ մանաւանդ ճարտարութիւն վիպասանաց առ նոսա մեծապէս ի պատուի էր: Յետոյ յԱզիպատս ընտիր ընտիր ճարտարութիւնք սփռել

ցան, եւ իբրեւ յԱզիպտացւոց անտի զԼորհրդոցն զանձառ ճառս եւ զառասպելաց պաճուճանս ընկալան Յոյնք, զայնր ամենայնի զՀռոմայեցիս, որ վայրենագոյնք էին, այլ յուսումն յօժարէին, հաղորդս արարին. եւ նոյնք հռոմայական իշխանութեամբ առ ամենայն ազգս հնազանդեալս յորդեցին:

Ասկայն չեւ ուրուք վարդապետութիւնս ճարտարախօսութեան աւանդեալ էր. զի զԱորակեայ եւ զՏիւսեայ ասեն, թէ ի Սիկիդիա զառաջինն սորին արուեստի վարդապետք կացին: Իբրեւ ընդերկար զերս իւրաքանչիւր ուրուք անդ ի դատաստանս յեղլեղէին, պատիւս եւ իշխանութիւնս տալ սովոր էին այնոցիկ որ զժողովուրդն մտադիր հնարիւք եւ ճարտարութեամբ բանից պինդ ունիցին. մանաւանդ ի Սիրահուսս յայտնի եղեւ, թէ քանիօն օգուտ մարթիցի լինել ճարտարախօսութիւն:

Ի Սիկիդիայ յԱթէնս ածաւ նոյն արուեստ ի ձեռն Ղիւսեայ որ Տիւսեայ եւ Աորակեայ ամոխախ էր, որ իբրեւ նրբութեամբ եւ ընտրութեամբ ճառիցն զնոյն հոյակապ քաղաք սքանչացուցեալ յինքն յանկուցանէր, ձեռն արկանէր այնուհետեւ ի ճարտարախօսութեան հրամանս ընդելացուցանել զմանկաին, որ ստէպ ի լսել զնա ժողովէին:

Օհորա զհետ եկն Վորդիաս զեւանախնացի, որ իբրեւ եկն յԱթէնս խնդրել թիկունս օգնականութեան վասն իւրոյ զաւառին ընդդէմ Սիրահուսացւոց, այնչափ իւրով յեղլեղուկն ճարտարախօսութեամբ եւ թրթրակ լեզուաւ ստացաւ, ասեն, համբաւ, մինչեւ տօնս տարեկանաց առնել զաւուրսն, յորս նայն ի հրապարակ ելանելոց էր ճառ արկանել: Այլ ամբարտաւանեալ ընդ այնչափ ի նա յանկել ժողովողեանն, իբրեւ խոստանայր թէ զորոց եւ իրաց իցէ յանկարծակի վաղվազակի մարթի խօսել, եւ իբրեւ բազում ինչ որ անպատեհ, սուտ եւ անհնարին էին, պատիր յանդիմանութեամբք վիճէր թէ պատշաճ, ճշմա-

րիտ եւ հնար իսկ են, իշխան եղև սփեւտէից, զորս
Սոկրատէս իբրև զպպականիչս մանկուոյ բոտ աշխարհն
հանեալ որոշել պարտ համարեցաւ :

Աոյին տիոց յաջորդեաց Նսոկրատէս, որ ի ման-
կութենէ Գորդեայ լսողն լինեալ էր, բայց քանզի ազ-
նուագոյն միտք էին առնն, զնորա պաճուճանսն մեղ-
մացոյց, եւ լեալ իմաստուն եւ կատարեալ վարդա-
պեա, այնչափ օգուտ դործեաց ճարտարախօսու-
թեամբն, զի ի դպրոցէ նորա իբրև ի Տրուացւոց ե-
րիւարէն անհամար իշխանք ճարտարախօսաց ելին :

Ճարտարախօսութիւն պայծառագոյն լինէր Ս-
թէնս, իբրև Գեմսթենէս յասպարէզ իջանէր եւ
ղպակ յամենեցունց յափշտակէր : Այնպիսի փու-
թով եւ աշխատութեամբ ամենայն խափանչաց բնու-
թեան յաղթեալ, որ ինչ միանգամ ազնուագոյն ի
ճարտարախօսս գոյր, յիւր անձն յաւել : Սուր ի
գտանել էր, խորագէտ ի յառաջագոյն տեսանել,
պնդութեամբ եւ ընտրանաւ խօսէր, բարբառով,
կերպարանօք եւ բովանդակ մարմնոյ շարժմամբք յա-
ջողութեամբ զիրս յայտ առնէր, եւ իշխան եւ գլխաւ-
որ ճարտարախօսաց ճանաչէր :

Այլ իբրև Յունաց աշխարհն ի Մակեդոնացւոցն
իշխանութիւն անցանէր, եւ իբրև Գեմսթենէս կո-
րեաւ դեղովք, նովաւ հանդերձ թուի թէ եւ յունա-
կան ճարտարախօսութիւն կորեաւ. առ Հոռոմս յետ
ոչ բազում ինչ ամաց միւսանգամ եկեաց. եւ սոքա,
որ յառաջագոյն զՏոկտորս հալածել ի քաղաքէն
պատշաճ համարեցան, յետոյ ունկնդիր լինալ ճար-
տարախօսաց Յունաց եւ տեղեկացեալք հեղզէն դպրու-
թեան, բարբոքէին իմն չհաւատալի փութով ու-
սանելոյ :

Իսկ ի Հռոմ քաղաքի լինել եղևն բազում ճար-
տարախօսք յառաջ քան զՏուղիոս, որոց անուանք ի
նմանէ իսկ յիշատակին, սակայն համօրէն ճարտա-
րախօսութիւն առ նովաւ զօրացաւ այնպէս, զի զուար-

Ճանալ յառաջ քան զնա ընդ սակաւս մարթ է, իսկ զարմանալ եւ ոչ ընդ մի դք չէ հնար. եւ յետոյ այնմ իմն եհաս Վիկերոն, մինչեւ ոչ զմարդոյ այլ զճարտարախօսութեան անուն ունել :

Այլ որչափ դժուարին է ի գլուխ բարձու կատարման հասուցանել ինչ, նոյնչափ անհնարին իմն է զնոյն յակաստանի պահել: Օյ զոր օրինակ յառաջնումն վառիմք առ հասանել այնց, նոյնպէս ուր չկայցէ յոյս թէ դամագիտ լինել կամ նոցին հաւասարել մարթիցիմք, փոյթ յուսով հանդերձ ծերանայ, եւ որում հասանելն չիցէ մարթ, ամենեւին բառնայ թողու: Ասան այնորիկ իբրեւ սպանաւ Վիկերոն, եղծանել եւ զառածանել սկսաւ ճարտարախօսութիւն ի նոցանէ, որ ի զուր գուն եղեալ ջանային ի նորա հետոց վերայ կալ, յորոց միջի Վենեկայ անցոյց զանցոյց, որոյ գրեանն զոր օրինակ բազում եւ ազնուագոյն մտօք եւ իմաստութեամբ, նոյնպէս եւ բծովք լի են:

Ի մէջ բազմաց որոց եղծանել ճարտարախօսութեան ցաւէր, եւ որ յառաջին փառս անդր հանել զայն ջանային, ֆարիսս Վուինտիդիանոս երեւեցաւ, որ իւրովք ճարտարախօսութեան հրահանգօք զմանկտին ընդ ազնուագոյն կարգս ընդելացուցանել եւ ի պատիրն շաւղաց հանել ի ծանծաղ մեծաւ հոգարարձութեամբ ջանայր: Թէպէտ եւ ժամանակին յանցմամբ չեղեւ ձեռնհաս զՎիկերոնեայ տիս միւսանդամ հաստատել, սակայն զճարտարախօսութեան եղծումն ամօքէր, եւ այնպէս ուղղէր, զի նորին դպրոց ոչ ամենեւին առանց գեղեցկութեան մատենագիրս երեւեցոյց: Ակայ զամանէ լինիցի Պղինիոս մանուկ, որոյ թուղթք թէպէտ եւ պայծառութեամբ եւ ընտրութեամբ ընդ Տուղեայսն ոչ կշիռ համեմատել մարթիցին, սակայն շատք ի նոցանէ մեծարին ի գիանոց. եւ գովութիւնն առ Տրայիանոս համարի թէ զճմարիտ կերպարանս Նատիկեցւոց ընծայեցուցանիցէ:

Ասի թէ առ Հայս նախ Եղրաս յԱնգեղ տանէ, որ աշակերտ էր մեծին Մովսէսի խորենացւոյ, սկսաւ ուսուցանել զճարտարախօսութիւն. բայց երանելի Հարց մերոց ճարտարախօսութիւն յայտնի է. Եզնկայ եւ սքանչելոյ Վորեանն, սրբոյն Եղիշէի եւ Մովսէսի խորենացւոյ եւ Յովհաննու մանդակունւոյ, եւ յետոյ ուրեմն սրբոյն Ներսեսի շնորհալոյ եւ Ներսեսի լամբրոնացւոյ:

Օ ճարտարախօսութենէ գրեցին առ Յոյնս նախ Տիւսիաս եւ Վորաքս, որպէս ասացաք. յետոյ Պղատոն եւ Բրիստոտեղէս, եւ յետ ամենեցուն Գիսնեսսիոս աղիկառնացի ի Հարիւրորդութմեներորդ եւթնէրորդ ողոմպիադին պէսպէս խօսս արար զճարտարախօսութենէ. իսկ Բիթոնիոս յերկրորդում գարի վասն մանկանց եւ Ղոնդինոս վասն կարգի մատենագրեցին:

Ի մէջ Հռոմայեցւոյ ազգի ազգի գիրս երեւեցոյց Վիկերոն, յորոց ճարտարախօսութեան գիրք, եւ մանաւանդ մեւս եւս մատեան զոր Որատորն կոչէ, այս ինքն է ճարտարախօս, յոյժ ազնուագոյնք են: Բայց կատարեալ յոյժ են Վուինտիղիանեայ երկստասան գիրք, որ զամենայն իրաց ճառս որ դպրութեան եւ ճարտարախօսութեան անկ են, բովանդակ ունին: Յետոյ յայլ եւս ժամանակս ցմեր իսկ ամս բազումք եղեն, որ զնախնեաց ճարտարախօսութեան կանոնս, եւ զայլ եւս ինչ զոր ուրուք ուրուք ասացեալ էր, ի մի վայր ժողովեալ գիրքնկալ յոյժ արարին զուսումն ճարտարախօսութեան:

Գող դոն եւ առ մեզ ճարտարախօսութեան մատեանք, յորոց մարթ է Հմուա լինել արուեստին, բայց քանզի կարդ եւ պայման ուսուցանելոյ բնդ ժամանակին միանդամայն շրջին եւ փոփոխին, եւ որչափ բազում են մատեանք, դոյնչափ եւ ուսումն առնի գիրագոյն եւ յաճախագոյն, ակն ունիմք թէ աւելորդ ինչ սք զմեր փոյթս չհամարիցի: Ամենայն կանոնք ճարտարախօսութեան կան ի գիրս յայս, եւ որ

այլուրն երկայնագոյն կամ կարճագոյն իցեն, աստ
 կշիւ հասարակ են. զամենայնէ որ ճարտարախօսու-
 թեան է, աստէն լինին բանք, եւ խրաքանչիւր ի-
 բիք գոն ազնուագոյն օրինակք, ոչ միայն ի մերոց *,
 այլ եւ յօտարաց. բանք եւ առակք իմաստնոց եւ
 պատմութիւնք եւ հին ինչ սովորութիւնք ազգաց
 նոյնպէս ի սմին գտանին, որ ոչ միայն տեղեակ առ-
 նեն, այլ եւ զուարճացուցանիցեն: Յերից հին եւ
 անուանի մատենագրաց առաք զգիրս, ի Վարդէայ
 Պաւոտայ, ի Միքայելէ Ռագաւեայ, որ վեշտասա-
 ներորդ գարուն են, եւ ի Ղոմինիկեայ Ղեկողոսեայ,
 որ յեւթնեւտասներորդում գարի էր, յորմէ եւ հին
 ճարտարախօսութիւնն առեալ է, թող զայլ եւս գիրս
 զհինս եւ զնորս: Օգամենայն փոյթ յանձին կալեալ
 առ որչափ մարթ էր կատարեալ երեւեցուցանելոյ,
 այսուհետեւ հասանիցէ զօգուան տեսանել, որ լինելոց
 է աստի ի փառաւորութիւն աննիազն Մատուծոյ, յոր-
 մէ ամենայն տուրք են, որպէս եւ սոյն այս, որ փոքրս
 է, այլ ոչ ի փոքր ինչ պէտս եւ ի շահ մանկանց
 ազգի մերոյ, որ թէ օգտիցին, առ օգտեցուցին գո-
 հացօղք գտանիցին:

* Օրինակ է հայ մարեմաբերաց սահաւտ էն քան յայլոց,
 նախ զի ի մերոց քաղաքացոյս առնելոց էմ. երկրորդ
 անգամ զի մանկիւն րեւոյնն զկերպարանս ինչ հնոցն
 ճարտարախօսութեան, յորում մանաւանդ Լաւմայեցիք
 անցին զանցին, եւ վասն այնորիկ ազնուագոյնք է մարե-
 մաբերաց նոցա թարգմանին կարգաւ եւ ի հայ թարգմա-
 լարումն լինիցին, նախ քաղաքացոյս ի պէտպէս մարե-
 մաբերաց, զոր ընդիւր ընդիւր ուսումնս ինչն, որ արիցե-
 շիւրս մանկուոյ եւ նոր նոր րեւելիս յաւելուցում. եր-
 կրորդ առանկնն գիրս նախնական ճարտարախօսու-
 թեան, որ պիտանի է յոյժ, որոց քաղաքն յանն է
 քաղաքեան:

այնց նախնեաց սովորութիւն է, որ թարգմանեն Փոխանակ
 բղէշխի, Հակառակ քրիստոսի, ուր ի յոյն լեզու մի բան է
 ἀνθύπατος, ἀντίχριστος: Ըստ սմին օրինակի զժնղիսս որ
 ցայտմ Երկասցրարանութիւն ասէր, Երկառած թարգմանեցար.
 զի լիցիսս յունարէն ոչ սայր նշանակէ, սլլ է ի լաւբանո
 բանէ որ է առնուլ, եւ ի սուրբ գիրս առած թարգմանի,
 ուստի պատշաճադոյն թուեցաւ մեզ երկառած ասել, թէ-
 պէտ եւ Գիղեմայ եւս ասել չթուի մեզ օտար, որպէս եւ առ
 նախնիս անսանեմք զի անխտիր ասի Գիփիէս եւ Երկրոյս, Որ-
 թողորս եւ Ուղղափառ, Սիւնհոդոս եւ Ժողով, սլլովք բազ-
 մնք հանդերձ. զնոյն եւ զսլլոց ինչ անուանց պարտ է իմա-
 նաւ: Զայդ սյդպէս առնել պատշաճ համարիմք ի գրոց բար-
 բառ, զի մի վայելչութիւն լեզուին եւ ճարտարութիւն թարգ-
 մանութեան առաջնոցն խախտեցցի, եւ ոչ եթէ օրէնս ինչ
 կամիցիմք զնել, եթէ որ սլլազդ ինչ առնել, կամ զոր սլլմս
 ասին պահել ախորժիցէ. եւ վասն այնորիկ յետ իւրարանչիւր
 գրոց ուսմանց զնեմք զանուանս ուսմանն հանդերձ յոյն եւ
 հռոմ բանիւր, եւ կամ սլլով իւր լեզուաւ, եւ զորս փո-
 փոխեցարն նոյնպէս առնթեր զնեմք: Բայց ակնունիմք թէ
 եւ մեզ մի մեղադիր որ լինիցի, թէ նորաձեւս ինչ առնիցեմք,
 զի ոչ ի մէնջ, սլլ որչափ մարթ է զառաջնոցն թարգմանութիւնս
 օրինակ արարեալ, որոց քաջութիւն ամենեցուն յայտնի է,
 ջանամք զի հանդերձ ուսմամք եւ լեզուն յառաջադէմ գտցի:

Գրանման, որ լեզու զվայելչութիւնն, եւ փոքս իւս սլլ
 յանելն, փոխանմի այսոցիկ սլլ պարլամենոյն բռնք ի գրեալ ին
 ի փիլիսոսփայութեան որ նորոք իւնէ:

Գ Լ ՈՒ Խ Վ

Յառաջարան .

Ս Կ Ի Զ Բ Ն

Ա . Թե զինչ իցէ ճարտարախօսութիւն եւ ուստի	1
Բ . Թե երբ յառաջ եկն ճարտարախօսութիւն	2
Գ . Թե զինչ իցէ ճարտարախօսութեան կատարած	3
Դ . Զինչ իցէ որ առաջի կայցէ ճարտարախօսութեան	5
Ե . Զխորդ բաժանիցի ճարտարախօսութեան ուսումն , եւ գիրս որ առաջի կայ	5

ԱՐՈՒԵՍ ՃԱՐՏԱՐԱԽՅՈՍՈՒԹԵԱՆ .

Պատրաստութիւն	7
Նմանօղն լինել	7
Պատմութիւն	9
Ա . Թե քանի ազգք պատմութեան իցեն	10
Բ . Թե զխորդ եւ սրպէս պարտիցի լինել պատմութիւն	16
Գ . Թե որպիսի ձեւովք եւ կերպարանօք պայծառանայցէ պատմութիւն	20
Առասպելք	21
Ա . Թե քանի ազգք առասպելաց իցեն	22
Բ . Զինչ օրէնք եւ ճարտարութիւն պիտոյ իցեն վասն առասպելաց	25
Դ . Վասն օգտի առասպելաց	26
Պէտք	29
Ա . Թե քանի ազգք պիտոյից իցեն	29
Բ . Թե սրչափ ինչ մասունք իցեն պիտոյից	30
Աճեցուցանել	36
Ա . Աճեցուցանել գիրս	36
Բ . Աճեցուցանել զբանս	43

ԱՌԱՋԻՆ ԳՊՐՈՒԹԻԻՆ

Ճարտարախօսութեան կերպարանք	47
Առաջին ճառ . Յօրինուած	48
Ա . Թե զինչ իցէ ճառ	48
Բ . Որչափ ինչ մասունք իցեն ճառի	49
Ա . ԳԼ . Յառաջարան	49
Ա . Որպիսի պարտիցի լինել յառաջարանն	52
Բ . Յառաջարանութեան մասունք	55
Գ . Թե զխորդ զյառաջարանն սկսանել մարթ իցէ	55
Դ . Որ ձեւք ի յառաջարանութեան ի կիր արկանիցին	61
Բ . ԳԼ . Յառաջադրութիւն	66
Ա . Որպէս յառաջադրութիւնն բաժանելոց իցէ	66
Բ . Զխորդ պարտիցի լինել յառաջադրութիւն	67


Գ. ԳԼ. Հաստատութիւն	68
Ա. Հաստատութիւն	69
Ա. Համար	70
Բ. Հնարք	72
Գ. Ընծայութիւն	75
Դ. Օրինակ	75
Ե. Գիղեմայ	75
Ա. Թե զիարդ լուծանել մարթ իցէ զգիղեմայն	76
Բ. Վասն կրօնորդոց եւ առանց լուծանելոյ յանդիմանութեանց	77
Զ. Շեղակոյտ	79
Է. Հանդէս	80
Բ. Խախտել	80
Գ. ԳԼ. Վերջին բանք	82
Ա. Ի համար արկանել	82
Բ. Վասն յորդորելոյ կամ շարժելոյ	82
Երկրորդ ճառ. Գիւտ	85
Ա. ԳԼ. Յանդիմանութիւն	86
Ա. Ներքին տեղեր	87
Ա. Որոշումն	87
Բ. Զմաստնս ի համար արկանել	90
Գ. Ստոյգ ճառք եւ լծակիցք	91
Դ. Ազգ եւ կերպարանք	99
Ե. Նմանութիւն եւ աննմանութիւն	94
Զ. Հակառակք	96
Է. Յուելուածք	97
Ը. Առաջինք եւ յաջորդք	102
Թ. Պատճառք եւ արդիւնք	103
Ժ. Համեմատութիւն	105
Բ. Արտարին կամ հեռուոր տեղեր	106
Բ. ԳԼ. Շարժել կամ յորդորել զմիտս	113
Ա. Սէր եւ ասեղութիւն	116
Բ. Շնորհք եւ շնորհակալութիւն	118
Գ. Նախանձ	119
Դ. Յանկութիւն եւ փախուստ	120
Ե. Նախանձաւորութիւն	120
Զ. Ուրախութիւն եւ արամութիւն	121
Է. Ողորմութիւն	122
Ը. Յոյս, վստահութիւն եւ յուսահատութիւն	123
Թ. Յասունն եւ հեզութիւն	124
Ժ. Զայրանալ	127
ժԱ. Երկեւղ	128
ժԲ. Վնթ եւ պատկառանք	129
ժԳ. Վասն խաղոյ եւ ծաղու բանից	130
Զինչ զգուշութիւն պիտոյ իցէ	131
Երկրորդ ճառ. Ճարտարաբանութիւն	132
Ա. ԳԼ. Չեւք եւ կերպարանք	132
Չեւք մտաց	132

<i>Չեւք որ ի շարժեւ կամ ի յորդորեւ յանկ են</i>	
Ա. Գոչումն	133
Բ. Էրկմուութիւն	134
Գ. Աղաւանք	134
Դ. Նուազութիւն	134
Ե. Անէծք	135
Զ. Հարցուած եւ զնովիմբ ածեւ	135
Է. Զեղչեւ եւ լռեւ	136
Ը. Բողոք	137
<i>Չեւք որ յուսուցանեւ պատշաճ են</i>	
Ա. Ընդիմադրութիւն	137
Բ. Յամեցուցանեւ	138
Գ. Հաղորդութիւն	139
Դ. Շնորհեւ	139
Ե. Յուսալագոյն գրաւեւ	140
Զ. Ուղղեւ	140
<i>Չեւք որ ի զուարճացուցանեւ ի դէպ են</i>	
Ա. Գարձուած	141
Բ. Նկարագիր	142
Գ. Երեսս առնոււ	144
Դ. Նմանութիւն	146
<i>Չեւք բանից</i>	
Ա. Շրջանք	147
Ա. Փոփոխումն	147
Թէ զինչ պիտոյ իցէ ի փոփոխմունս	149
Բ. Այլասացութիւն	150
Գ. Անուանափոխութիւն	151
Դ. Իմանալ	153
Ե. Խարդախութիւն կամ կեղծիք	154
Զ. Առաւելութիւն	155
Բ. Չեւք բանից որ չեն շրջանք	156
Ա. Չեւք բանից ի ձեռն յաւելուածոյ	156
Բ. Չեւք բանից ի ձեռն նուազութեան	158
Վասն անցման	158
Բ. ԳԼ. Շրջումն	160
Ա. Թէ բանի մասունք իցեն շրջման	160
Բ. Թէ բանի ազգք իցեն շրջմանց	161
Գ. Թէ զխորդ պարտիցի լինեւ շրջումն	162
Դ. Թէ որովք հնարիւք մարթ իցէ զշրջումն ածեցուցանեւ	162
Ե. Վասն թուոց եւ այլ եւս քաջութեանց շրջման	163
Զ. Կանոնք համարաւոր շրջմանց	164
Վասն ընդ մէջ անկեալ բանից	165
Գ. ԳԼ. Վասն կարգի	165
Ա. Բարձրագոյն	166
Որպիտի ինչ պարտիցի լինեւ բարձրագոյն կարգ	166
Բ. Խոնարհագոյն	167
Գ. Չափ ինչ	167
Վասն զերիս աղլս զայսոսիկ ի կիր արկանեւլոյ	169

Գ. Վասն Ղակոնացւոց եւ Ասիացւոց սճոյ	170
Թե իւ իւր գեղեցիկ դորձիցի կարգն	171
Չորրորդ ճառ. Չճառսն պատմել	178
Ա. Յիշատակ	178
Բ. Չոյն	179
Գ. Շարժմունք	181

ԵՐԿՐՈՐԴ ԴՊՐՈՒԹԻՒՆ.

Ճարտարախօսութեան նիւթ	187
Առաջին ճառ. Վասն յանդիմանակացութեան ազգի	187
Ա. ԳԼ. Կացրդից ճառք	187
Ա. Ժամանակ որ յառաջ քան զճնանել ուրուք է	189
Բ. Իրք ժամանակին յորում կենդանի էր ոք	191
Գ. Ժամանակն որ յետ մահուան է	195
Չգուշութիւն որ ի դովել զոք պիտոյ է	196
Բ. ԳԼ. Ծննդոց ճառք	198
Գ. ԳԼ. Առաջատար կամ հարսանեաց ճառք	202
Դ. ԳԼ. Վասն թաղման ճառից	218
Չխորդ պարտիցէ առնել զգիր ի վերայ գերեզմանաց	235
Ե. ԳԼ. Վասն դոհութեան ճառից	237
Չ. ԳԼ. Յաղթութեան ճառք եւ ուրախակիցն լինելոյ	242
Երկրորդ ճառ. Վասն խրատութեան ազգի	253
Ա. ԳԼ. Հաւանեցուցանել եւ նորին հակառակն	253
Ա. Վասն բարոյից պէսպէս եւ ազգի ազգի հասակաց	256
Բ. Վասն բարուց աշնուականաց, մեծատանց եւ խառնաղանճ մարդկան	258
Գ. Վասն պէսպէս կերպարանաց քաղաքի	259
Դ. Վասն ազգի ազգի բարոյից պէսպէս ազգաց	260
Բ. ԳԼ. Խրատ տալ եւ հակառակ թեւադիր լինել	262
Գ. ԳԼ. Գրգռել եւ ցածուցանել	264
Դ. ԳԼ. Յանձն առնել	265
Ե. ԳԼ. Խնդրուած	266
Չ. ԳԼ. Միտիծարել	271
Երրորդ ճառ. Վասն իրաւանց ազգի	274
Թե որչափ մատունս ունիցի, եւ քանիպատիկ իցէ իրաւանցն ազգ	274
Վասն յորինեալ կարգելոյ զիրաւանցն ազգ	277
Ա. ԳԼ. Հրահանգք Ափթնեայ	277
Ա. Հաստատութիւն	277
Բ. Խախտումն	278
Գ. Հասարակաց տեղի	278
Դ. Օրէնսդրութիւն	279
Բ. ԳԼ. Ա. Ամբաստանութիւն	282
Բ. Աղերս կամ պատասխանատուութիւն	282
Գ. Աշտամբանք	286
Դ. Սաստ	287
Ե. Տրանջել	287



- Ազդ, (սեռ), γένος, genus.
 Աձեւ, (արարեբերեւ), προφέρω, pronuntio.
 Աղերսի, (յարարեբրահան), relativus.
 Աճեցուցանեւ, (ընդլայնեւ), παραύξησης, amplificatio.
 Աճրաստանութիւն, κατηγορία, accusatio.
 Այլակերպութիւն, (տարբերութիւն), διαφορά, differentia.
 Այլասացիկ, (այլարանական), ἀλληγορικός, allegoricus.
 Այլասացութիւն, (այլարանութիւն), ἀλληγορία, allegoria, inversio.
 Այլափոխ սեռ Փոփոխական.
 Այրէն դանաւը, ἐπιβατήριον, epibaterium.
 Անդամ, κῶλον, membrum.
 Անէծք, ἐπαρά, imprecatio.
 Անճանալութիւն, ἀνομοιότης, dissimilitudo.
 Անուանակից, (բաղանուն), συνώνυμος, synonymus.
 Անուանափոխութիւն, (փոխանունութիւն), μετωνυμία, metonymia, transnominatio.
 Անջատեւ, διαίξευξίς, disjunctio, որ եւ ασύνδετον հոշի, այս ինքն է անյոյ:
 Անց, անցումն, μετάβασις, transitio.
 Առաքաստի, ἐπιθαλάμιον, epitalamium.
 Առակ, παραβολή, proverbium.
 Առանց լուծանելի, ἀδιάλυτος, indissolubilis.
 Առաջին, առաջնորդ, (նախորդ), προεστώς, antecedens.
 Առասպել, μύθος, fabula.
 Առուելութիւն, աւելի համ աւելեաց բանք, (չափազանցութիւն), ὑπερβολή, hyperbole, excessus.
 Առումն, առ, πρόσληψις, assumptio.
 Ատիճան, κλίμαξ, gradatio.
 Արդեանց, ἐνεργητικός, effectivus.
 Արդունագործ, (արարչական), ἀπεργαστικός, efficiens.
 Արդիւնք, ἐνέργημα, effectus.
 Արուեստգիտութեան, τεχνικός, artificialis.
 Բազմադէպ, (յարնահարկ), πολύπτυχτον, polyptoton
 Բազմադիմբ, πολυειδής, multiplex.
 Բազմայոյ, πολυσύνδετον, polysyndeton.
 Բաժանումն, μερισμός, divisio.
 Բանից, λεξικός, verbalis.
 Բաշխումն, distributio.
 Բարձրագոյն, ὑψηλός, sublimis.
 Բարդից, բարդական, ἠθικός, moralis.

ῤοζήνο[θεῶν, σωτήριος, solerius.

ῤύληων, ῤύνο[θεῶν, φηλυκῶν, φυσικός, naturalis, physicus.

ῤοσφρ, (ῤύληων[θεῶν]), ἐπιβόησις, acclamatio.

ῤολωνῆων ῤύ, (ῤολωνῆ), τὸ ὄλον, totum.

ῤύ, ἐύρημα, inventio.

ῤύρ ῤύρηκῤύων, ἐπιτάφιον, epitaphium.

ῤύρωγωρωνο[θεῶν, capitalis.

ῤύρϋ (ῤύρϋ), (ῤύρωγωρωνο[θεῶν]), συμπερασμα, conclusio.

ῤύρωγῤύ ῤύρωγῤύ, ἀποβατήριον, apobaterium.

ῤύρϋ, ἐύχαριστικός, eucharisticus.

ῤύρϋ, (ῤύρωγῤύ, ῤύρωγῤύ[θεῶν]), ποιότης, qualitas.

ῤύρϋ, (ῤύρωγωρωνο[θεῶν]), ἐκβόησις, exclamatio.

ῤύρϋ, ἐπαινος, laudatio.

ῤύρϋ, ῤύρϋ, ῤύρϋ, πρῤύ, activus.

ῤύρϋ, ῤύρϋ, ῤύρϋ, ἀντικατηγορικός, anticategoricus.

ῤύρϋ, (ῤύρωγωρωνο[θεῶν, ῤύρωγῤύ), ἀποστροφῤύ, apostrophe.

ῤύρϋ, (ῤύρωγωρωνο[θεῶν]), δίλημα, dilemma.

ῤύρϋ, ῤύρϋ, ῤύρϋ, (ῤύρωγῤύ), ὑπόθεσις, hypothesis.

ῤύρϋ, ὄρκος, jusjurandum.

ῤύρϋ, ῤύρϋ, (ῤύρϋ), προσωποποιῤύ, prosopopoeja.

ῤύρϋ, (ῤύρϋ), trimembris.

ῤύρϋ, bimembris.

ῤύρϋ, ῤύρϋ.

ῤύρϋ, ἀπορία, dubitatio.

ῤύρϋ, ῤύρϋ, ῤύρϋ, δέντερωσις, repetitio.

ῤύρϋ, distinctio.

ῤύρϋ, (ῤύρϋ), παρῤύ, praeteritio.

ῤύρϋ, ῤύρϋ, ῤύρϋ, ὑπαγωγή, subjectio, subductio.

ῤύρϋ, privans.

ῤύρϋ, (ῤύρϋ), σύνδεσμος, conjunctio.

ῤύρϋ, ὄνσιωδης, essentialis.

ῤύρϋ, ἔμφυτος, insitus.

ῤύρϋ, (ῤύρϋ), ἀντίθεσις, antithesis.

ῤύρϋ, (ῤύρϋ), ἐναντίος, adversus.

ῤύρϋ, ῤύρϋ, (ῤύρϋ), ἐισαγωγή, inductio.

ῤύρϋ, ταφῤύ, funebris.

ῤύρϋ, ἄριθμός, numerus.

ῤύρϋ, ῤύρϋ, ῤύρϋ, συνεκδοχῤύ, synecdoche, intellectio.

ῤύρϋ, (ῤύρϋ), rerum, realis.

ῤύρϋ, (ῤύρϋ), δικαστικός, judicialis.

ῤύρϋ, δίκη, jus.

ῤύρϋ, ῤύρϋ, (ῤύρϋ), ἴδιος, proprius.

ῤύρϋ, ῤύρϋ, (ῤύρϋ), συνζυγός, conjugatus.

- λελ, ἰλιθικὸν, ἀποσιώπεις, reticentia.
 ἰωῖωτελ, ἰωῖωσι, (ζέρεσι), ἀνασκευή, confutatio.
 ἰωκὺ, μικτός, mixtus.
 ἰωρηωῖωσιθικὸν, ἡγεθῆρ, ἡγεθῶσιθικὸν, (ζέρεσιθικὸν),
 εἰρωνεία, ironia, dissimulatio.
 ἰωρηωῖωσιθικὸν ἰωρηωῖωσιθικὸν
 ἰωρηωῖωσιθικὸν, ἀίτησις, petitio.
 ἰωρηωῖωσιθικὸν, (αἰρηθῆν), humilis.
 ἰωρηωῖωσιθικὸν, (αἰρηθῆν), λογισμὸς, ratiocinium, ra-
 tiocinatio.
 ἰωρηωῖωσιθικὸν ἰωρηωῖωσιθικὸν
 ἰωρηωῖωσιθικὸν, hortatio.
 ἰωρηωῖωσιθικὸν, (αἰρηθῆν), συμβουλευτικὸς, delibe-
 rativus.
 ἰωρηωῖωσιθικὸν ἰωρηωῖωσιθικὸν
 ἰωρηωῖωσιθικὸν, (αἰρηθῆν), διαλογισμὸς, sermocinatio.
 ἰωρηωῖωσιθικὸν, ἰωρηωῖωσιθικὸν, λογικὸς, rationalis.
 ἰωρηωῖωσιθικὸν, (αἰρηθῆν), (αἰρηθῆν), ἰωρηωῖωσιθικὸν,
 λογικὴ, logica.
 ἰωρηωῖωσιθικὸν, γενεθλιακὸς, natalitius.
 ἰωρηωῖωσιθικὸν, (αἰρηθῆν), ὑποκειμενός, subjectus.
 ἰωρηωῖωσιθικὸν, ἰωρηωῖωσιθικὸν, τέλος, finis.
 ἰωρηωῖωσιθικὸν, (αἰρηθῆν), τελωταῖος, finalis.
 ἰωρηωῖωσιθικὸν, (αἰρηθῆν), ἀκολουθία, consequentia.
 ἰωρηωῖωσιθικὸν, ἰωρηωῖωσιθικὸν, ἰωρηωῖωσιθικὸν, stylus.
 ἰωρηωῖωσιθικὸν, (αἰρηθῆν), πάθος, affectus.
 ἰωρηωῖωσιθικὸν, πανηγυρικὸς, panegyricus, laudativus.
 ἰωρηωῖωσιθικὸν, (αἰρηθῆν), εἰδικὸς, formalis, specialis.
 ἰωρηωῖωσιθικὸν, (αἰρηθῆν), εἶδος, forma, species.
 ἰωρηωῖωσιθικὸν, (αἰρηθῆν), συνωνυμία, synonymia.
 ἰωρηωῖωσιθικὸν, invectiva.
 ἰωρηωῖωσιθικὸν, conduplicatio.
 ἰωρηωῖωσιθικὸν, κροκόδειλος, crocodilus.
 ἰωρηωῖωσιθικὸν, (αἰρηθῆν), ἐναντίος, contrarius.
 ἰωρηωῖωσιθικὸν ἰωρηωῖωσιθικὸν ἰωρηωῖωσιθικὸν, μεταπειθῶ, dehortatio.
 ἰωρηωῖωσιθικὸν ἰωρηωῖωσιθικὸν ἰωρηωῖωσιθικὸν, (αἰρηθῆν), dissuasio,
 ἰωρηωῖωσιθικὸν. ἰωρηωῖωσιθικὸν ἰωρηωῖωσιθικὸν, ἰωρηωῖωσιθικὸν
 ἰωρηωῖωσιθικὸν ἰωρηωῖωσιθικὸν ἰωρηωῖωσιθικὸν, (αἰρηθῆν),
 ἀντιλογικὸς, contradicens, contradictorius.
 ἰωρηωῖωσιθικὸν, κοινωνία, communicatio.
 ἰωρηωῖωσιθικὸν, σύντομος, brevis.
 ἰωρηωῖωσιθικὸν, ἰωρηωῖωσιθικὸν, (αἰρηθῆν), συλλογισμὸς, syllo-
 gismus, computatio, ἰωρηωῖωσιθικὸν ἰωρηωῖωσιθικὸν, ἰωρηωῖωσιθικὸν
 ἰωρηωῖωσιθικὸν ἰωρηωῖωσιθικὸν ἰωρηωῖωσιθικὸν ἰωρηωῖωσιθικὸν
 ἰωρηωῖωσιθικὸν ἰωρηωῖωσιθικὸν
 ἰωρηωῖωσιθικὸν ἰωρηωῖωσιθικὸν, (αἰρηθῆν), καταλογισμὸς, enu-
 meratio.
 ἰωρηωῖωσιθικὸν, ἀριθμητικὸς, arithmeticus.

Πωθηκελ, ωσηνωθηκελ, impulsio.

Πωθημε, στίχος, versus.

Πωθημερωουσιθριεν, ωσηγη δωμη, (ωπημερωουσιθριεν), ἐτυμολογία, etymologia.

Πωπηωθηωσιθριεν, ἀπολογία, apologia, defensio.

Πωπηωμηρωουσιθριεν, ἐγκληματικός, criminalis.

Πωπηδωμη, αἰτία, causa.

Πωπηθελ, ωθηελ (ηδωπη), (ωπηωπηθελ), ἐκφωνέω, pronuntiatio.

Πωπηθωσιθριεν, δειγήγημα, narratio.

Πωπηη, ἀπλοῦς, simplex.

Πωπηω, χρεία, chria.

Πωπηθριεν, (ηθριενωουσιθριεν), ἐπίλογος, epilogus, peroratio.

Πωπηθριεν, (ωπηθριενωουσιθριεν), διαλεκτική, dialectica, ars disputandi.

Πωπηωουσιθριεν, ωπηωουσιθριεν, (ωπηωουσιθριεν), ποιητής, poeta.

Πωπηωουσιθριεν, μάστιξ, testis.

Πωπηωουσιθριεν, tabula.

Πωπηωουσιθριεν, βάσανος, tormentum.

Πωπηωουσιθριεν, τόπος, locus.

Πωπηωουσιθριεν, ωπηωουσιθριεν, γογγυσμός, murmuratio, ωπηωουσιθριεν
ωπηωουσιθριεν, (ωπηωουσιθριεν), ἐκποσίσις, expostulatio, ωπηωουσιθριεν
ωπηωουσιθριεν, (ωπηωουσιθριεν), ἐκποσίσις, expostulatio.

Πωπηωουσιθριεν, συναλλαγή, conciliatio.

Πωπηωουσιθριεν, (ωπηωουσιθριεν), μεταφορικός, metaphoricus.

Πωπηωουσιθριεν, (ωπηωουσιθριεν), μεταφορά, metaphora, translatio.

Πωπηωουσιθριεν, minor.

Πωπηωουσιθριεν, πολιτικός, civilis.

Πωπηωουσιθριεν, (ωπηωουσιθριεν), ποσότης, quantitas.


Πωπηωουσιθριεν, ωφέλιμος, utilis.

Πωπηωουσιθριεν, νομοθεσία, legislatio.

Πωπηωουσιθριεν, νόμος, lex.

Πωπηωουσιθριεν, παράδειγμα, exemplum.

Πωπηωουσιθριεν, ορθωσιθριεν, νόμιμος, legitimus.



Ե Ր Ո Ւ Ե Ս Տ

ՃԵՐՏԵՐԸ ԵՍ ՕՍՈՒԹԵԼՆ

Ս Կ Ի Ռ, ԲՆ

Ե. ԹԷ ԶԻՆՉ ԻՑԷ ՃԵՐՏԵՐԸ ԵՍ ՕՍՈՒԹԻՒՆ
ԿԸՄ ՈՒՍՏԻ

1. ՃԵՐՏԵՐԸ ԵՍ ՕՍՈՒԹԻՒՆ է որ զճարտարն խօսելոյ Հանգամանս ուսուցանէ եւ որ զայսպիսի ճարտարութիւն ունիցի, ճարտարախօս կամ բանիբուն կոչի: Ապա բանիբուն եւ ճարտարախօս ոչ միայն հետաորք եւ պատմագիրք կոչին, այլ եւ պետք. նորա ճառիք, եւ սորա վիպքք:

Իսկ սոփեստայութիւն ոչ է հետաորութիւն, թէպէտ եւ հին Քաղատացիք զսոփեստէս առ հետորս ունէին. եւ Սարաթոն զիսոկրատէս ընդ սոփեստէս համարի: Զի յունարէն սոփեստէս, որ եւ հայերէն ճարտարասի, նորա են, որ յանգիմանութեամբ վիճին, թէպէտ ճշմարիտ իցէ, թէպէտ սուտ:

Բայց զճարտարն խօսելոյ Հանգամանս զոր ճարտարախօսութիւն ուսուցանէ, ոմանք բնութեամբ ունին, այլք արուեստիւ եւ ճարտարութեամբ ուսանին. ապա յոյտ է թէ կրկին է ճարտարախօսութիւն, մի բնութեամբ, եւ մեւս եւս արուեստիւ: Բայց որ բնութեամբն է, քան զայն որ արուեստիւ է, յառաջագոյն է. զոր օրինակ եւ լեզուք յառաջագոյն են քան զդարութիւնս, եւ վիպասանութիւն յառաջագոյն քան զարուեստ վիպասանաց: Ապա յիրաւի առայ Կիկերոն, զլուիս ճարտարախօսացն Հոռոմոց, թէ Չէ ճարտարախօսութիւն յարուեստէն, այլ արուեստն ի ճարտարախօսութենէ:

2. Եւ սկիզբն արուեստին ոչ այլուստէք եղև, եթէ ոչ ի միա դնելոյ մարդկան. զի իբրև տեսին

Թէ ոմանք բարւոք խօսին եւ ոմանք անճաճս, ի միտ առին զխօսիրն, եւ խօսիրքն յետ ժամանակաց եղեն կանոնք, յորոց արուեստն եկաց:

Ի կանոնաց աստի յաջողի եւ կատարեալ յօրինի արուեստինն անուանեալ ճարտարախօսութիւն. մանաւանդ թէ ոչ արուեստինն միայն, այլ եւ որ բնութեամբն կոչի. զի բնութիւն ինքն ազնուական է, իսկ հանդերձ արուեստինն առնի կատարեալ:

3. Բազմադիմի են ճարտարախօսութեան պէտք ի կեանս. իսկ նոցա որ ի բիրտ ժողովրդենէ անտի զանձինս որոշել կամիցին, կարեւոր եւս է: Օ ի մեծ մեծ է սորա ի միտս մարդկան զօրութիւն. նորին օգնականութեամբ ոչ միայն զհանճար, զմիտս, զուսումն եւ զխորհուրդս մեր յայտ առնեմք, այլ եւ զնոսին յայլոց միտս զարթուցանեմք, եւ զնոսա խոնարհեցուցանեմք եւ ածեմք յիրան եւ յարժան: Ըստստին եւ օգուտ ճարտարախօսութեանն յայտ է. զորմէ աւելորդ է երկայն խօսել:

Բ. ԹԷ ԵՐԲ ՅԱՌԱՋ ԵՐՆ ՃԱՐՏԱՐԱԽՕՍՈՒԹԻՒՆ

4. Ղարտարախօսութիւն յընկերհաշտութեան պայծառագոյն եղեւ: Յոյնք որ ընդ ընկերահաշտեաց վերակացութեամբ էին, եւ ճարտարախօսութեան պատկառ կային, ոչ միայն ինքեանք բանիրուն եղեն, այլ եւ կանոնս եւս զարուեստին աւանդեցին: Հռետորք բազումք եղեն առ նոսա, որպէս Աբխատտեղէս, Վիսնիսիոս աղիկառնացի, Հերմոզենէս, Թէոփիլ, Վեմեարիոս փաղերացի, եւ Ղոնդինոս. եւ բաց ի սոցանէ բազում անուանի ճարտարախօսք, Պերիկղէս, Վեմոսթենէս, Ազքինէս, Ղիւսիաս եւ խոհրատէս, որ ի հասարակաց իրս քաղաքին, եւ յայլ եւս ժամանակս զիւրեանց ճարտարաբանն խօսողութիւն ցուցին:

Ի Յունաց ի Հռոմայեցիս անդր էանց ճարտարախօսութիւն. զի Հռոմնց ազգն ի բարւոք ժամա-

նակի զընկերհաշտութիւն կալաւ . եւ Ղիկատարք որ
 են ճարտարախօսք մտանէին եւ ելանէին առաջի ժո-
 ղովորդեան : Այլն եւ ի մէջ հռոմայեցւոց ճարտարա-
 խօսք կատոն , Լնտոնինոս , կրասոս , Որաննսիոս ,
 կայսր , Բրուտոս , եւ Ղիկերոն որ անցոյց զանցոյց զա-
 մենէքումբ . եւ ի գլուխ իսկ կատարման հասոյց բզ-
 ճարտարախօսութիւնն , որ յետ նորա նուագեաց առ-
 միահեծան իշխանօք . որպէս ինքն իսկ յառաջագոյն
 ասաց : Յայնչափ խոնարհութենէ յայնպիսի բար-
 ձունս եհաս , ասէ , գովութիւն ճարտարախօսացս ,
 մինչեւ թուի թէ ... ծերանալոց իցէ եւ ի սակաւ
 ժամանակս յոչինչ դառնալոց : Աւ ի գիրսն որում
 Որատոր անուն եդ , ասէ , Լրեսուն ամօք քան զիս ի
 վեր է տիօք կրասոս . զայս վասն այնորիկ եգի , զի
 մարթիցի նշանակել թէ յորում ժամանակի եղեւ
 զառաջինն հասանել բարբառոյ , եւ իմանայցի թէ
 արդէն իսկ գրեթէ ի գլուխ իսկ եկն եհաս . մինչեւ
 ոչ ոք հաստատութեամբ յաւելուլ ինչ կարիցէ :

Բայց եւ յետ քրիստոնէութեան բազում ճար-
 տարախօսք եղեն յարեւելս եւ յարեւմուտս , որ-
 պէս եւ այժմ իսկ ի մէջ մեծամեծ ազգաց Լերոպա-
 ցւոց , Գաղիացւոց , Լնգղիացւոց եւ Գերմանացւոց :

Գ. ԹԷ ԶԻՆՉ ԻՑԷ ՃԱՐՏԱՐԱԽՕՍՈՒԹԵԱՆ ԿԱՏԱՐԱԾ

Ճ. Ամենայն ուսման կամ ճարտարութեան է
 կատարած , որում հասանել կամի . որպէս բժշկա-
 կան ճարտարութեան կատարած առողջութիւն է ,
 զոր բմբունէն ցանկայ : Արդ ճարտարախօսութեան
 կատարած է հաւանեցուցանել . զի այնմ հասանել
 կէտ առաջի եղեալ է : Բայց հաւանեցուցանել չկա-
 րէ ոք , եթէ ոչ նախ ուսուցանիցէ , երկրորդ անգամ
 զուարճացուցանիցէ , եւ երրորդ յորդորիցէ կամ շար-
 ժիցէ . ապա երեք ինչ , Ուսուցանելն , Զուարճացու-
 ցանել եւ Յորդորել ի միջի կան , յորոց ձեռն մարթի

Ճարտարախօսութիւն ի կատարած անդր հասանել , որ է հաւանեցուցանելն :

Աստտին առնի յայտ թէ որչափ կարեւոր իցէ ճարտարախօսութիւն . զի կատարած սորա է հաւանեցուցանել . արդ չէք ինչ հաղորդութիւն կամ ընկերութիւն մարդկան , որում չիցէ հարկ հաւանեցուցանել . ծնողաց զորդիս եւ զդասերս , վարդապետաց զաշակերտան , տերանց զճառայս , իշխանաց զիշխանաւորս , զօրաւարաց զզօրականն , եւ իւրաքանչիւր ումք զիւր ընդանի : Ասան որոյ շէն ինչ զարմանք թէ ի հին ժամանակս քաղաքք մեծամեծք ի ձեռն ճարտարախօսաց կային յակաստանի : Հրձիգ լեալ էր արդեւք Հռոմայ ի Վատիղինեայ , թէ շէր ի միջի Վիկերոն , որ հայրն կոչեցաւ աշխարհին . եւ հոյակապ քաղաքն Վթենացւոց ի Փիղիպեայ , եթէ չգոյր Վեմոսութենէս զորմէ յիրաւի ասէին թէ փայլատակունս արձակիցէ . զի քան յՆրամաղղայ , առաւել ի ճառից նորա երկնչէր Փիղիպպոս :

6. Երդ ուսուցանել լինի յանդիմանութեամբք , զուարճացուցանել իմաստութեամբ , եւ յորդորել առաքինութեամբ :

Աստտին եւ զայն մարթի ի միտ առնուլ թէ որպիսի ինչ որ պարտի լինել ճարտարախօսն . նախ դիտուն , այս ինքն տեղեակ պատմութեան , իրաւագիտութեան , աշխարհագրութեան եւ այլ եւս բազում ուսմանց , յորոց կարիցէ առնուլ պատճառս յանդիմանութեանց , զի ուսուցէ եւ խելամուտ առնիցէ . երկրորդ պարտի լինել իմաստուն , այս ինքն է խորհրդական , ընտրող , եւ կորովի մտօք զի ի դէպ ժամանակի եւ ըստ չափոյ լսողացն կշռիցէ զբանան , զի ընդ միտ մտանիցէ եւ հաճոյ լիցի ունկնդրացն . երրորդ անդամ առաքինի եւս պարտի լինել , այս ինքն է վարուք եւ բարոյիք ազնուագոյն , զի յորդորել մարթացի . ապա եթէ խառնագնաց որ իցէ եւ չաբաբարոյ , անսալ որ նմա չառնու յանձն , զայս լուեալ ,

միտ դիցեն մանկունք գիտութեան, խմաստութեան եւ առաքինութեան :

Գ. ԶԻՆՉ ԻՑԷ ՈՐ ԱՌԱՋԻՆ ԿԱՅՑԻ ՃԱՐՏԱՐԱՐԸ
ԽՕՍՈՒԹԵԱՆ

7. Ամենայն ուսման կայ ինչ առաջի, զորմէ ճառել պարտի. Եւ որ առաջին կայ կամ նիւթ է, եւ կամ կերպարանք, որով նիւթն դայ յարգասիս եւ ի կերպարանս. որպէս նիւթ որ առաջի կայ բըժըշկութեան, ցաւք են. իսկ կերպարանք զեղք եւ դարմանք են որովք բժշկին ցաւք :

Արդ նիւթ որ ճարտարախօսութեան ճառել առաջի կայ, այն ամենայն իրք են, զորոց մարթի ճարտարութեամբ ճառ արկանել : Ապա յայտ է թէ ճարտարախօսութեան նիւթ յաճախագոյն է, այնչափ որչափ բազում են իրք որ ճառել մարթին. եւ որովհետեւ զրեթէ չիք ինչ զորմէ ճառել չիցէ ձեռնհաս ճարտարախօսութիւն, ապա զրեթէ չիք ինչ որ չիցէ նիւթ ճարտարախօսութեան :


8. Իսոյց թէպէտ եւ այսպէս անչափ եւ անբաւ է սա, սակայն եւ այնպէս դնեն սահման ճարտարք արուեստին այնու զոր Ազգն անուանեն, եւ ազգքն երեք են, շանգիսի, Խրատտուութեան, եւ Խաւանց :

9. Իսկ կերպարանք ճարտարախօսութեան են գոյնքն, որովք իրքն դան ի յարգ եւ ի զարգ եւ ի կերպարանս, եւ չորք են, Վիւտ, Ո՛րտարաբանութիւն, Յօրինուած եւ զՆառան պատմել :

Ե. ԶԻԱՐԴ ԲԱԺԱՆԻՑԻ ՃԱՐՏԱՐԱՐԱՒՕՍՈՒԹԵԱՆ
ՈՒՍՈՒՄՆ ԵՒ ԳԻՐՍ ՈՐ ԱՌԱՋԻ ԿԱՅ

10. Որովհետեւ որպէս ասացաք, ճարտարախօսութիւն ի բնէ ի նիւթ եւ ի կերպարանս բաժանի, ապա եւ ուսումն ճարտարախօսութեան զնիւթոյ եւ զկերպարանաց պարտի ճառել :

Ըստ սմին օրինակի եւ մեք զգիրս որ առաջի կայ,
 յերկուս դպրութիւնս բաժանեացուք յառաջնումն
 զկերպարանաց ճառեացուք, եւ յերկրորդումն զնիւ-
 թոյ ճարտարախօսութեան. եւ թէպէտ եւ ի բնէ
 նիւթն յառաջագոյն է քան զկերպարանս, սակայն ի
 ճարտարախօսութեան երկրորդս այս կարեւորագոյն
 է, եւ գրեթէ բովանդակ ի նմին կայ արուեստն,
 ուստի եւ զառաջին տեղին յիրաւի առնուցու:



Ե Ր Ո Ւ Ե Ս Տ

Ճ Ե Ր Տ Ե Ր Ե Խ Օ Ս Ո Ւ Թ Ե Ե Ն

Պ Ե Տ Ր Ե Ս Տ Ո Ւ Թ Ի Ի Ն

11. ՄԻՆՉՉԵԻ սկիզբն ճառիցն արարեալ, ասացուք ինչ ինչ համառօտիւք, որ յառաջագոյն պատրաստիցեն զաշակերտեալն եւ մտավարժս առնիցեն առ ուսումն ճարտարախօսութեան:

Երդ հնգեքումք իրօք կրթին մանկունք եւ առնին բաւականք առ ընդունել զուսումն ճարտարախօսութեան. նմանօղ լինելով, Պատմութեամք, Լուսապելօք, Պիտոյիւք, եւ Լճեցուցանելով, որ սանդուղք իմն են ընդ որս իբրեւ ընդ որոշս լինի ելանել ի սրահ ճարտարախօսութեան. սկսցուք ի դիւրնոցն:

ՆՄԱՆՕՂՆ ԼԻՆԵԼ

12. Նմանօղն լինել առնէ, զի եղիցուք հանգոյնք հմուտ մատենագրաց եւ ստեպ եկեացուք զնոցին զրովք որ աղնուագոյն իցեն: Եւ վասն զի նմանօղն լինել, եթէ ըստ պատշաճի լինիցի, բազում ինչ նպաստ լինի ի ճարտարախօսութիւն, եւ սակաւք դիտեն որպէս պարան է նմանել, վասն որոյ ըմբոն համարիմք նախ վասն նմանօղն լինելոյ ասել ինչ ինչ համառօտիւք. զի գիտացեն մանկտին զընտիր ընտիր զրեանն անդէն ի սկզբանն օգտիւ ընթեանուլ:

13. Երդ բազում օրինակաւ մարթ է նմանօղ լինել:

Նախ պարտ է զգոյշ լինել, զի մի զգոյն ոք օրինակ առնուցուս, այլ հաւաստեաւ խնդրեա զհմուտ եւ զաղնուագոյն ոք, զորոյ բովանդակ զհետ երթիցես, ի Հայոց, ի Յունաց, ի Հռոմայեցւոց, ի Վա-

զիացւոց եւ յորոց եւ պէտ ազգի ճարտարաց, զորոց զբարբառն գիտիցես:

Աստ բանբս են վասն նմանօղ լինելոյ ճարտարախօսութեան, եւ ոչ հայերէն լեզուի. զի սողոյք է թէ հայերէն միայն ի Հայոց մասեանագրաց մարթ է ուսանել, զորոց ընտրութենէն եւ զնմանօղն լինելոյ յայլում տեղւոջ ասասցուք:

Արկրորդ անգամ, ոչ միայն զազնուագոյն արտառնուցուս օրինակ, այլ եւ զազնուագոյնսն ի նոցա զրեանն, որպէս եթէ ընթեռնուս զճառսն Աիկերոնի, մանաւանդ զվերջին բանսն ընթերցիր, յորս նայն ճարտարագոյն է, եւ զիւր ճարտարաբանն խօսողութիւն անդ ցուցանէ. եթէ զՂեմսութենէն, մանաւանդ կարգա զճառն որ պսակին կոչի: Աւ վասն այսորիկ ունիցիս հանապազ ի ձեռին զքաղուածոյս յընտիր ընտիր զրոց, եւ զգեղեցիկ գեղեցիկ վայբս:

Յետ ճարտարախօսութեանս ունիմք ի մտի առնել եւ քաղուածոյս ի մերոց եւ յօտարաց վասն զիւրութեան եւ օգտի մանկանց, յորմէ ոչ միայն զբարբառն, այլ եւ զճարտարախօսութիւն ուսանիցին:

Արրորդ անգամ, գեղեցիկ տեղեացն զորոց տասացին, ոչ տղայաբար եւ ծառայաբար նմանօղ լինիցիս, որպէս բազումք որ իբրեւ զպապկայս միշտ զնոյն բան ասեն, եւ համարին թէ քաջ նման եղեն նախնեաց:

Բայց դու զոր ինչ եւ առնուցուս, քո արասջեր, զի իբրեւ զճմուտ երեւեսցիս:

14. Վրս առնել մարթիս նախ եթէ զմիտսն պահիցես, միայն զբանսն կամ ողջոյն եւ կամ փոքր ի շատէ փոփոխիցես:

Արկրորդ յորժամ զնոյն բանս ամենեւին պահիցես, այլ փոփոխեսցես զնոսս յայլ միտս, կամ ի նոցին նման, կամ ի հակառակ:

Արրորդ յորժամ ոչ զբանսն եւ ոչ զմիտս, այլ զձեւս, զչրջմունս, զանցս, զողջոյն իսկ զնացս եւ զկարդ ճառին առնուցուս:

Չորրորդ եթէ կամ կարճեցես ինչ ի բանիցն եւ կամ յաւելցես ինչ ի նոյնս :

Հինգերորդ եւ գլուխ իսկ, քաջ նմանօղ լինիցիս, եթէ ի Յունաց եւ ի Հռոմայեցւոց եւ յայլ եւս ազգաց թարգմանութեամբ առնուցուս : Այսպէս Վիկերոն ի Վեմոս թենեայ առնու, եւ Վիրգիլ յՆէիդսըն ի Հոմերոսէ, յանդիօրդութիւնսն ի Թէոկրիտեայ, եւ Որատիոս ի Պինդարեայ եւ ի Վաղիմաքեայ, եւ Տերենտիոս ի Մենանդրեայ եւ յԱրիստոփանեայ :

Բայց մանաւանդ յայնժամ գովութեան արժանի լինիցիս, յորժամ ոչ ջանայցես լոկ նմանօղ լինել, այլ եւ գլել իսկ զնոքօք սրոց նմանօղն լինիս. որպէս արարին իսկ արքն զորոց այժմ զանուանան յիշատակեցաք, զի ոչ միայն նմանեցին Յունաց այլ եւ քաջ անցին զանցին. զի որպէս Հին առասպելն ասէ, Գտանել դժուարին է, այլ ի գտեալսն յաւելուլ դիւրին :

Բայց եւ զայն պարտ է գիտել, զի ոչ միայն ի լուաց, այլ եւ ի յուեաց մարթի հանել ինչ պիտանի, որպէս Վիրգիլիոս յՆեայ, ուստի սովոր էր ասել Յազրեւացն Վնեայ ոսկի եւ ականս պատուականս ժողովեմ : Միայն թէ զայս ինչ գիտացեն մանկտին զի մի իբրեւ քան զօրինակազիրսն առաւել լինել ջանայցեն, ի շատխօսութիւն եւ յերկայնաբանութիւն անկանիցին, եւ կորուսանիցեն զկշիռն : Բարեոք նմանութեան օրինակս ունին մանկտին զՎիրգիլ, թէ միայն գիտիցեն զյոյն եւ զհոռոմ լեզու. արդարեւ ոչ կարէին ընտրել, թէ Վիրգիլ ի Հոմերոսէ, եթէ Հոմերոս ի Վիրգիլեայ առնուցու, այնպէս իմաստութեամբ յիւր լեզուն հանէ ճարտարն :

Եւ վասն սորին այսչափ շատ լիցի :

ՊԼՏՄՈՒԹԻՒՆ

15. Պատմութիւն է զիրս ինչ արդարեւ լեալ կամ իբրեւ զլեալ յանդիման կացուցանել, այս ինքն է, զճմարտութիւն կամ զառասպելս :

Ասասցուք նախ թէ քանի ազգք պատմութեան իցեն . եւ ապա թէ զիարդ պարտիցի լինել պատմութիւն . եւ երրորդ թէ որպիսի կերպարանօք եւ ձեւովք պայծառանայցէ :

Ա . ԹԷ ԲԸՆԻ ԱԶԳԻՔ ՊԼՏՄՈՒԹԵԱՆ ԻՑԵՆ

16 . Այս ազգք պատմութեան են , այս ինքն է , Պատմագրաց , Վիպասանաց եւ Ճարտարախօսաց : Պատմագիրք զիրս եղեալս պատմեն , վիպասանք պաճուճեն , իսկ ճարտարախօսք զայնպիսի իրս պատմեն զորոց հակառակութիւն է :

Այս այս ինչ ի միջի կայ ընդ երիս ազգս պատմութեանց , զի պատմագիրք եւ ճարտարախօսք զսկիզբն զմէջ եւ զկատարած պահեն (17) , իսկ վիպասանք է զի թողեալ զսկիզբանն իրս , որ ինչ ի միջոցին զիպեցաւ , զայն յառաջագոյն պատմեն . որպէս Վիրգիլիոս սկիզբն պատմութեանն յԱնեայ նաւարկելոյ յԽաղացոց աշխարհն առնէ . իսկ որ ինչ նախ քան զնաւարկութիւնն անցք անցեալ էին , որպէս զՏրոփացոց քաղաքին աւերել , զճանապարհորդութիւնն , զայն ամենայն յերկրորդ եւ յերրորդ գիրսն կարգէ եւ զնոյն Անեայ տայ պատմել Ղիգեայ :

Արկրորդ զի այր պատմագիր զճմարտութիւն ինդրէ , ճարտարախօսն զհաւանութիւն . իսկ վիպասանք առակօք եւս զճմարտութիւն քարոզեն : Արրորդ անգամ , զի պատմիչք յստակ , համառօտս եւ մերկ ճառեն . ճարտարախօսք զարդարուն եւ յորդագոյն . իսկ վիպասանք յաճախեն զզարդն , եւ պէսպէս գունիւք նկարեն եւ յղկեն :

ՕՐԻՆԸԿ ՊԼՏՄՈՒԹԵԱՆ Ի ՂԻԵԱՅ ՊԼՏՄԸԳՐԷ

Յունիոս ի Տարկուինեանցն ի Ղեզիիս ածեալ , արդարեւ այսն կատականաց քան ընկեր , ասի , թէ զուպ սակի քերծեալ զկեղեւ դաւազանին տանէր նուէրս Ղարդնեայ , առակաւ իմն իբրեւ պաշկէր իւրոյ

Հանձարոյն: Անդր եկեալ Հասեալ, իբրև Հանին ի գլուխ զոր հօրն պատուէր տուեալ էր, ցանկացան տեղեկանալ գիտել, թէ առ ո՞ր նոցանէ Հոռոմոց թագաւորութիւնն Հասանելոց իցէ: Ի ներքուստ յայրէն բարբառ լիեալ ասեն, թէ Գլխաւոր իշխանութիւն Հոռոմոց քաղաքին կալցի, որ ի ձէնջ զառաջինն, ով մանկունք, Համբոյր մօրն տացէ: Տարկութեանք, որովհետեւ Սեքստոս, որ ի Հոռոմ մնացեալ էր, անգէտ պատասխանւոյն եւ անտեղեակ հրամանին էր, դուլ եւ պատուէր ետուն զիրացն ամենեւին լուել, եւ ինքեանք արկին վիճակս թէ ո՞ր յերկոցունց նախ, իբրև Հասանիցեն ի Հոռոմ, հարոյր տացէ մօրն: Իսկ Բրուտոս քանզի համարեցաւ թէ այլ ինչ նկատիցէ բարբառն զոր հարցուին ետ, որպէս թէ զթեալ ինչ յերկիր անկաներ եւ համբուրէր զգեալինն, զի նա իսկ է հասարակաց մայր ամենայն մահկանացուաց:

Իսցց զի յայտ լինիցի թէ քանի այլազգ ի միմեանց պատմեն պատմագիրք եւ վիպասանք, բերից պատմութիւն ինչ ի Ղիւեայ, որ զնոյն ընդ Վիրգիլեայ զձերակղեայ պատմէ:

Օ՞ ձերակղեայ, ասէ, յիշատակեն թէ ի վայրսն յայնստիկ, յետ զՎերիսնն սատակելոյ, անդեայս գեղեցիկս արածէր, մօտ առ Տիբերիս գետ, ընդ որ ի տուարածին ի լիւղ անցեալ էր. ի տեղւոջ ուրէք խստալից ճարակաշատ, զի ի հանգստեան եւ յարօտս ուրախութեան դարմանիցէ, եւ ինքն վաստակեալ ի ճանապարհէն ի կողմն լինէր: Անդ իբրև ի կերակրոյն եւ ի զինւոյ ծանրացեալ, թմբբութիւն ի վերայ հասանէր, հովիւ մի որ ի նմին տեղւոջ բնակէր Վակոս անուն, վայրենադոյն զօրութեամբք, զարմացեալ ընդ գեղեցկութիւն անդէոյն, կամեցաւ խոտորեցուցանել զաւարն, եւ զգեղեցիկ գեղեցիկ եզինսն մէն մի ընդ ագիսն ձգեալ տարաւ յայրն. զի եթէ խաղացուցանէր զերամակն ստիպաւ յայրն, հետքն զտէրն որ ի խնդիրն ելանելոց էր, անդր մարթէին ածել:

Հերակղեաց այգուցն թ ջնայն զայնթուցեալ, իբրև
 հաւաստեալ նայեցաւ ընդ հասն եւ թ միտ առ թէ
 շէք մանն մի թ համարոյն, շոքաւ թ մատաւոյ այնն թէ
 գուցէ անդք արահեաքն տանիցին: Առ մինչ պնաւ
 արտաքոյ եղծեալ ետեա, եւ ոչ ընդ այլ կորնն գոյք
 մուտ, խռովէր եւ թ վարան տարակուսի մտանէր. եւ
 թ անդուղէ անտի հեռագոյն եւս սիտաւ տաննչ զհասն
 Անդուտ իբրև գրդեալ խաղային, թ բաղմահչաւ ար-
 ջաւոցն կէտք առ գուցէ մնացելոյն խանդաղատեալ
 բլէին գոլէին, եւ զուարակաց գոյննն որ յայրէ ան-
 տի գոյք, գարնոց զՀերակղեա, զոր իբրև ետեա Նա-
 կու թէ յայր անդք գայ, բնութեամբ ջանացաւ ար-
 գելուլ. այլ նայցաւ հարեալ, ընդ վայր զհոլիւան
 յոգնականութիւն կարգացեալ, մահու վախնանէր:

ՆՈՅՆ Ի ՎԻԿԻՆԵՆՑ

Այր մի էր մեկնեալ եւ զատուցեալ յոյժ, զոր
 կակեայ, որ կէս մարդ էր, գեմք խոժոք անմատոյց
 յարեգական նառագայթիցն ունէին. եւ հանապաղ
 թ նորոգ սպանութենէ գոյննայր գեաթին, եւ զբար-
 նանց գրացն կախեալ կային զլուխք սպանելոց գու-
 նատք երթիթացեալք թարտխաղէցք: Սորին գազանի
 Հեփեստոս հայր էր. զի թ նորին բերանոյ որ հուր եւ
 կայծակունս ընչէ, մեծաւ յաղթ մարմնովն եկն եկաց:

Մատոյց ժամանակն եւ մեզ որ փափաքեաքն եր-
 բեմն երբեմն զդիցն օգնականութիւն եւ զգալուտ:
 Օ թ մեծ վրէժիկնդիրն զերիոնի երեքկինն մահուամբ
 եւ աւարտքն պայծառագոյն, Աղկիդէս եկեալ հառ-
 եալ կայր, եւ ցուլս վիթխարիս արածէր անդէն.
 զհոլիւան եւ զխաղս գետոյն ունէին անդեալքն: Բայց
 կակեայ միտք գազանացեալ կատաղութեամբ, զի
 մի ինչ անփորձ եւ առանց շարեաց եւ նենգութեան
 մնայցէ, ցուլս շորս յաղթս մարմնով թ հանգրուա-
 նայն բառնայր. եւ երինջս նոյնչափ որ առաւել էին
 գեղով. եւ գնսսին, զի մի հետք ինչ յոտիցն լինիցին,

ընդ ազիսն յայր անդր քարշէր, եւ աղամոզեալ բզ-
 ճանապարհացն արահետս, զորս յափշտակեացն ծած-
 կէր ի քարածերպս ի խաւարին տեղւոջ: Չգոյր նշա-
 նակ ինչ, որ զնա որ խնդրէրն յայր անդր տանէր:
 Ի նմին ժամանակի իբրեւ այն ինչ զերամական յա-
 դեալս ի հանգրուանացն Ամիթիգրիոնեանն գղբդէր,
 եւ հանդերձէր զչուն, ի մեկնելն բէէին գոշէին զուա-
 րակքն, զանտառն ամենայն լնուին աշխարանօքն եւ
 զբլուրսն լնուին աղաղակաւ: Մին ի զուարակացն ետ
 բարբառ եւ գոշեաց յընդարձակ այրին, եւ զկակեայ
 ակնկալութիւնն խաբեաց: Ընդ Աղկիդեայ ցասումն
 բորբոքէր առ զայրուցս ցաւոցն. յափշտակեաց ան
 ի ձեռն զէնս եւ զարդս, եւ հանգուցիւքն պնդա-
 կաղմն. օգեղէնն զնացիւք գիմեաց ի գժուարս
 լերինն: Յայնժամ զառաջինն ետես զկակոս որ զա-
 հի հարեալ եւ խռովեալ իմն նայէր: Ընդէն աճա-
 պարեաց խոյս ետ արագազոյն քան զԱւրոս, եւ ան-
 կաւ ի դարափորն, զի երկեւղ թեւս տայր ոտիցն:
 Իբրեւ ի ներքս ամրանայր, խզեալ զշղթայսն ընկե-
 նոյր զվէմն յաղթ եւ ստուար, որ երկաթով եւ հայ-
 րենի արուեստին ճարտարութեամբ կախեալ կայր
 զգրացն, եւ եղեալ մոյթս պնդեաց զգրունան: Պայր
 հասանէր Տիւրինթիացին ի սրտամութիւն բարկու-
 թեան, եւ զամենայն մուտ նկատեալ այսր անդր յա-
 ծէր, եւ կրճէր զատամունան: Արիցս լի ցամամբ
 հայեցաւ շուրջ զԱւենաին լերամբ, երիցս ընդ վայր
 զփորձ աւնոյր զհանդէս տեսանէր զքարեղէն սեմոցն.
 երիցս խանջեալ նստէր ի ծործոր հովտին: Պայր վէմ
 մի ապառաժ, յամենայն կողմանց շուրջ յապուեալ
 ի քարանց, ի թիկանց անտի այրին յարուցեալ կայր,
 բարձր ատանելով, եւ էր տեղին գիպան անագորոյն
 թռչնոց ուր զբոյնան գիցեն: Օչապառաժն զայն,
 քանզի ի բարձրաւանդակէն ի գետ անդր կարկա-
 ուեալ կայր, ի հանդիպոյ յեցեալ խարխալեաց, եւ
 խլեաց ի ներքուստ ընջովին, ապա յանկարծուստ

մղեաց, եւ ի մղելոյ անտի լինելը հնչիւն սաստիկ յեթեր. հարթնուն խաղք դեւոյն, եւ զահի հարեալ միւսանդամ հոսէ վտակն: Բայց այրն եւ յաղթ արքունիք Վահեայ որ ծածկեալն էին, յայանեցան. եւ փապարք եւ ծերպք հովանաւորք բովանդակ բացան. որպէս եթէ յանկարծ պատառեալ երկրի տացէ զդժախականն, եւ զլծազաւորութիւնն զխաւարին, որ դիցն իսկ ատելի է. եւ անդունք իմն ի վերուստ նշմարեացին եւ ընդ նշոյլս լուսոյն որ ի ներքս արձակիցին, խուճապեցին ուրուականք: Արդ մինչդեռ նորա զահի հարեալ ընդ յանկարծակի ծաղել լուսոյն ի ծակս վիմաց զուղէր, եւ գոչէր, ի վերուստ Վղկիդէս նեւաիւք եւ սլաքօք ի նեղ արկ, եւ ապա զինուք եւ ստտովք եւ մեծամեծ վիմօք սախպէր տազնապէր: Իսկ նա, քանզի չգոյր ակզի փախստի ծուխ սաստիկ հանէր ընդ բերանն, եւ յանհարին մառախուղ թանծրութեան ընդր զտունն, եւ շտայր որ ինչ ի ներքս կայր, տեսանել. զի գիշեր ծխախառն հեղձամղձուկ պատեաց զայրն: Վղկիդէս ոչ կարաց ժոյժ ունել, վաղեաց արկ զանձն վաղվաղակի ի հուր անդր, եւ մրրկեալ գնայր զայր ծուխն իբրեւ զպիս ծովու, եւ տոչորէր այրն միգաւ եւ մառախղով: Անդ զՎակոս որ հուր եւ կայծակունս շնչէր, կապեալ կծկեալ զաչան ի դուրս կորդէր, եւ անդէն առեակ յոգւոյն ցամաքեալ սատակէր: Աոյնժամայն իբրեւ ի վեր առնոյր զգրունան, լուսաւորէր տունն, որ մթովն պաշարեալ էր. թափէր զանդեայան, եւ զամենայն զառ եւ զաւար հանեալ արեւու ցուցանէր, եւ զգին քարշեալ ընկենոյր: Չէր մարթ յաղել ի հայելոյ ընդ աչան ահագինս, ընդ երեսան եւ ընդ լանջան, ուր խողանստեւ թաւացեալ իբրեւ էրէոյ, եւ ընդ հուր բերանոյն որ շիջանէր յափշէր:

ՕՐԻՆԵԿ ՊԵՏՐՈՒԹԵԱՆ ՃԵՐՏԵՐԸ ԵՒ ՊԵՏՐՈՒԹԵԱՆ Ի ԿԻՊԵՐՄԵՆԵՆ

Ի բանտ մտանեն, տանջանք եւ պատիժք սահմանին վասն նոցա . ի հէք եւ ի թշուառական ծնողաց նաւապետացն պահանջին վրէժք: Արդելուն հարց, զորս տեսանէքդ, մտանել առ սրգեակս իւրեանց, շտան թողլ զի կերակուր ոք կամ հանգերձս տանիցի նոցա . անկեալ զնէին առաջի սեմոց, եւ մարք զցայգն ամենայն կային օթազացեալ առ գրունս բանդիցն . եւ շթողոյր ոք թէ գոնեայ միանգամ գիրկս արկանիցեն զորդւովքն: Արդ կային եւ աղաչէին զի թերեւս հնար լիցի ի շունչ վախճանին նոցա անդէն առ նոսա լինել: Ասցր անդ մօտ Աեքստիոս նուիրակ, գլուխ բանտապահացն որ գահճապետն իսկ էր, յահ եւ յերկիւղ նիզակակցացն եւ քաղաքացւոց, որում ընդ միոյ միոյ իւրաքանչիւր յողւոց հանելոյ եւ վշտանալոյ պարգեւ ելանէր: Արդ սա մատուցեալ խօսի . զի հուպ երթայցես, ասէ, այսչափ ինչ պարտ է քեզ տալ . եւ զի ճաշ եւս ի ներքս տանել մարթայցես, այսչափ եւ այսչափ . շհրաժարէր ոք . իսկ նա զի՛նչ, ասէ, եւ ընդ այնր տացես, զի մի անգամ եւեթ հարից տապարաւ, եւ ոչ կրկնեցից, զի մի ի տակ կատեսցի, եւ բազում վէրս առնուցու, զի մի ցաւոցն ինչ զգայցէ, եւ այնպէս շարալուկ յաշխարհէ ելանիցէ: Սորին վասն եւս առնոյր կաշառ նուիրակապետն: Ա՞ մեծ եւ անհնարին աղէտք, ո՞ ծանր եւ գծնդակ բախտ . ոչ զկեանս որդւոցն այլ զմահուն եւրազութիւն զնոց զնել հարկ էր ծնողաց: Այլ պատանեակքն զլիովին ընդ Աեքստեայ զնմին հարուածոյ եւ զմի անգամն հարկանելոյ խօսէին . նոյնպէս եւ զԾնողն աղաչէին տալ ինչս գահճապետին զի փոփոգանք լինիցին ցաւոցն: Բազում եւ անհնարին գծնդակ վիշտս ջերմոց եւ մօտաւորաց հասուցանէին . բայց եւ բազմոց վախճան մահ էր: Այ՞ ինչ քան զայս անագորունութեան, զո՞յ քան զայն գաղանութեան գործ . թո՞ղ զայն եւս գտցեն: Արդ եւ զայն եւս

հնարին. զի որդիքն իբրևւ տապարաւ տաշեացին եւ մեռանիցին, մարմինք նոցա ի հաւակերի դիցին եւ անկցին գէշ գազանաց: Օտր տեսանել թէ վիշաք իցեն ծնողաց, տացեն գինս փրկանաց զի հնար լիցի նոցա թաղել զմեռեալսն:

Բ. ԹԷ ԶԻԱՐԴ ԵՒ ՈՐՊԷՍ ՊԱՐՏԻՑԻ ԼԻՆԵԼ,
ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

17. Պատմութիւն պարտի լինել Յայտնի, Համառօտ, Վաղցր եւ Հաւանութեան:

Ը. Յայտնի կոչի պատմութիւն, զոր ամենայն ոք դիւրաւ կարէ իմանալ. եւ վասն այնորիկ պարտի պատմութիւն լինել Նախ ողջ եւ կարգաւ: Աղջ յայնժամ է, յորժամ սկիզբն եւ մէջ եւ կատարած գոյ:

Վարդ ի պատմութեան պարտ է նախ զսկիզբնն դնել, այս ինքն է զպատճառսն թէ յոր սակս եւ յինչ միտս ձեռն արկաւ յայն գործ, ապա զմէջն որ է զարդիւնսն, թէ զինչ ինչ դիպեցաւ եւ զհարդ յառաջ եկին: Աւ ապա յետոյ զկատարածն թէ զհարդ եւ իւ ի զլուխ ելեալ կատարեցաւ:

Իսկ կարգաւ է պատմութիւն, ուր սկիզբնն եւ մէջ եւ կատարած զորոց ասացաք (16) կարգաւ պատմին:

Նրկրորդ յայտնի լինի պատմութիւն եթէ բանքն սեպհական եւ ընդել իցեն ամենեցուն:

Նրրորդ, մի գացի բան երկմիտ, որպէս եթէ ասէր ոք, Ըսեն Պիւռոսի արքայի յաղթել Հռոմայեցոց. ուր չէ յայտ թէ Պիւռոս Հռոմայեցոց, եթէ Հռոմայեցիք Պիւռոսի յաղթեցին:

Վպա եթէ մթին լինիցի, ի պատմիչ անդր դնան պատճառքն, ուստի եւ ի գէպ ելանէ բան պուեափկոսին, որ ասէ բայ, եթէ չկամիս թէ իմանայցեն այլք, ամենեւին իսկ լուռ լեր:

Ը. Համառօտ լինիցի պատմութիւն եթէ ոչ անդուստ ի վերուստ, կամ որպէս ասեն ի ձուոյ սկասնիցի, այլ անտի ուստի արժանն է:

Արկրորդ մի բազում անգամ հատանել զկարգ պատմութեանն եւ այլ ինչ պատմել :

Արրորդ մի զմանր ինչ իրս , որ շեն հուպ յիրսն ի մէջ բերել : Բայց զգոյշ լինել պարտ է զի մի կարի համառօտան հատանել մթացուցէ . զաւելորդան միայն յապաւելոյ հրաման է , եւ ոչ զորս պիտոյն են առ բարուք իմանալոյ զմիտան . իսկ առ բարուք իմանալ պարտ է ոչ միայն զինչ գործեցան , այլ եւ զխարդ եւ որով օրինակաւ գործեցաւ ասել . նա թէ յոյր ձեռն եւ որպիսի արամբք կամ սւր եւ երբ զիպեցաւ :

Գ. Իսկ քաղցր այն է որ գրաւիցէ եւ յափշտակիցէ զմիտս , որ լինի յիրացն մեծութենէ , եւ ի ճարտարութենէ ասողին :

Վ ասն մեծութեան իրացն յայտ է , թէ որչափ մեծ իմն եւ նորանշան եւ չքնաղ իցեն իրքն , նոյնչափ մտազիրս եւ ուշակալս առնեն :

Յայտ է եւ վասն ճարտարութեան ասողին , թէ եւ այն բազում ինչ օգուտ է . յորժամ զամենայն կանոնս զայստիկ հաւատեալ պահիցէ :


Դ. Իսկ հաւանութեան է պատմութիւն , որոյ ճշմարտութիւն եւ հաւատարմութիւն ծանօթ է :

Արկրորդ յորժամ իրքն առանց սեթեւեթելոյ պատմին , զի յստակութիւն եւ յայտնութիւն առաւել հաճեն , քան խորագիտութիւն , եւ աւելի բանք :

Արրորդ մի ինչ լիցի անմիաբան ի ճշմարտութենէ , եւ օտար ի հասարակացն սովորութենէ եւ ի կարծեաց :

Ապա թէ ուրեք զանհաւատ ինչ իրս հաւատարիմ առնել կամիցիս , պարտ է ասել զՏին զըոյցն , թէ բազում ինչ ճշմարիտ է , թէպէտ եւ չթուիցի ճշմարիտ :

Չորրորդ եթէ խնամով ցուցես զհանգամանս տեղւոյն եւ ժամանակին եւ արանցն , որով բառնի կասկածն . որպէս Աիկերոն յետ ցուցանելոյ թէ Աղոդիոս



75-4566 1202

զարան զորնեալ էր Միգրնի որ առանց զինաց եւ յանհոգս զնայք, առեւ Միգր առիցի որ զխորդ է զի յայնմեցաւ Արդոխոս, եթէ սա ի զարանի կայք եւ նա յանհոգս, այլ զառեալ եւ նա անգին: Քի ոչ Միգր անցաւօրք յաւազակաց, այլ է ուրք զի եւ աւազակք յանցաւօրաց կատարին, եւ թեպէտ եւ սա կայք էր եւ նա առանց պատրաստութեան, սակայն եւ կանայք երբեմն յարեակեցան յարս:

Մար ամենայնի որինակ զառանի ի պատմութեանն Վիսնիսեայ սիրակուսացւոց բռնաւորի, եւ Վամակղեայ, որնորին հայկառակ էր, զոր Ալիքբան պատմեւ, յարմե ուսանիցին ճանկունք քաղցրութեամբ եւ վայելչութեամբ պատմել:

Վամակղեա մին ի սուրաակասպասաց թագաւորին սակալ յիշառակէր զմեծութիւն եւ զիշխանութիւն նորա, զիբաց յանախութիւն եւ զշքեղութիւն ազարանիցն, եւ առիք թէ չիք որ քան զնա երանելի: Մեցնա թագաւորն, կամին եւ զու յայնպիսի փառս վայելել, եւ զնորին զիտրն առնուլ, նա իբրեւ յանձն էառ, յայնժամ հրաման եւ հանել զնա յսկեղէն դահոյս, եւ արկանել ոսկեհուռ նուարտանս, եւ սպասս ոսկեղէնս եւ արծաթեղէնս. կացոյց ճանկունս զեղեցիկս եւ պատուէր եւ սպաս ունել նմա: Ապին անդ եւ իւզք անուշունք եւ պատկեր, եւ ծխէին խունկք, եւ սեղան ամենայնի խորակօք առաջի կայր: Վամակղեա բախտաւոր զանձն կարծէր: Ի մէջ այնպիսի պատրաստութեան հրաման եւ թագաւորն սուսեր պաղպաջուն զցուոյն կախել մազով ձիոց, որ կայցէ կախեալ ի վերայ պարանոցի նորա: Իբրեւ զայն զգաց Վամակղեա այնուհետեւ ոչ բնդ զեղեցիկ սպասուորան նայեր, ոչ բնդ անսթմն ոսկիս, եւ ոչ ձգեաց զձեռն ի սեղան անդր. սկսաւ աղաչել զբռնաւորն զի թող տայէ երթալ, զի ոչ եւս ախորժէ երանելի լինել: Չէր մարթ Վիսնիսեայ լաւ եւս յայտ առնել, թէ չէ եւ չէ երանելի, որում հանապաղ խեթ ի մտի կայ:

Բայց պարտ եւ պատշաճ է յայսմ վայրի զգուշացուցանել, զորս կամիցինն մատենագրել, յիրացինչ յոր երկեւղ մեծ է թէ անկանիցին: Արդարեւ չէ պարտ սուտ ինչ երբեք ասել, բայց եւ ոչ հարկ ի վերայ կայ հանապաղ զճշմարտութիւն պատմել, ուր լռելն լաւ եւս է, զի որպէս ասէ զրոյցն, վասն խօսելոյ զղջանայցես բայց վասն լռելոյ ոչ:

Աւ զայն նախ յայնժամ, յորժամ յայտ իցէ թէ չեն ակործելոց բազումք բնդ պատմութիւնն, այլ խոսովութիւն ինչ կամ ատելութիւն զբզուելոց է:

Արկրորդ յորժամ որ պատմին այնպիսի ինչ իցէ, որ զախտս զբզուիցէ թէպէտ եւ ճշմարիտ իցեն իրքն եւ որ պատմեն ոչ զայլս զեղծուցանելոյ վասն ասիցէ, սակայն վասն բնութեանն զեղխութեան շոյլամիտ մարդկան միաս լինելոց է. զոր պարտ է պատմելն յառաջիմաց գիտութեամբ խափանել, ամենեւին իսկ թողլով. մանաւանդ ուր չիք հարկ պատմելոյ. զի միշտ զայս ինչ պարտի ի մտի ունել որ պատմեն, շինիչ լինել եւ ոչ աւերիչ, բարեաց եւ ոչ չարեաց խրատուու: Օ՛ի այնպիսի անիմաստ պատմութիւնք առաւել վտանկեն եւ զեղխեցուցանեն, քան զգիրս որ զչարիս եւ զախտս մերկագլուխ ուսուցանիցեն: Ապա եթէ կարի ինչ հարկ ի վերայ կայցէ պատմելոյ այնպիսի ինչ, պարտի յայնժամ որ պատմագրէն զիւր զգօնութիւն ցուցանել, այնպէս թաքուցանելով զի ոչ միայն չբզուիցէ զչարիս, այլ եւ յորդորիցէ առաւել զարշել եւ տաղտկալ: Օրինակ առաջի կայ մեզ Առաքեալ, որ ի սկզբան առ շոտմայեցիս թղթին պատմէ զանհնարին չարիս իմաստնոցն հեթանոսաց, զթշնամեաց աւետարանին, զի այնպէս իսկ հարկ էր վասն օգտի պաշտամանն, առ յամօթ առնելոյ զնոսա, եւ խորշեցուցանելոյ թէ յոր չարիս անկանիցին առանց շնորհաց, բայց պատմէ այնպէս զի եւ զնոսա յամօթ առնէ եւ զարշեցուցանէ զլսօղան:

Գ. ԹԷ ՈՐՊԻՍԻ ՉԵՒՈՎԷ ԵՒ ԿԵՐՊԱՐԱՆՕՒՔ
ՊԱՅԾԱՌԱՆԱՆՅՅԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

18. Չեւ եւ կերպարանք են զարդք իմն ճառին, կամ ասացած ի վեր քան զհասարակացն սովորութիւն. որպէս, ՈՎ Սողոն, Սողոն, գեղեցիկս բարբառեցար. կամ Ողորմիմ քեզ, եկեղեցի Հայաստանեայց: Ո՛ ոչ տեսանիցէ թէ այս ամենայն ասացուածք որ իբրեւ զհուր են, ոչ դատանին ի հանապազորդ եւ ի հասարակաց խօսս:

Յամենայն ձեւոց, զորոց յերրորդ ճառս (82) ասացուք, պաաշաճագոյնք վասն պատմութեան են նախ Նկարագիր, որ է կենդանի եւ իբր շնչաւոր գունովք նկարել եւ պատմել, այնպէս զի տեսանել թուիցի եւ ոչ լսել կամ ընթեռնուլ (99):

Արկորդ Յամեցուցանել, որ է ձեւ որով ճարտարախօսն վասն մտադիրս առնելոյ զլսողն, եւ զարթուցանելոյ զնոսա, վայր մի յերկբայս թողու զնոսա թէ զինչ արդէք ասելոց իցէ (93):

Արրորդ Վոչումն, որ է բարբառ արձակել ս, վայ, աղէ, ան. կամ յայանի կամ դաղտ, որ զյոյզս մտաց յանդիման կացուցանեն (84):

Չորրորդ Հազորդութիւն, յորում ճարտարախօսն որ վստահ է յիւր իբաւունան, զունկնդիրսն կամ զգատախաղս հարցանէ խրատ տալ նմա թէ զինչ առնիցէ (94):

Հինգերորդ խօսել, այս ինքն է, ոչ լսի պատմել, այլ եւ այլոց իբրեւ կենդանի բարբառով տալ խօսել. որպէս,

Վիողենէս իբրեւ հարցաւ ի բարեկամաց թէ ուր կամիցի թաղել, ասէ. արկէք զիս անթաղ. յայնժամ բարեկամքն ասեն, միթէ ի հաւակերի՞ կամ դազանաց. ոչ այդպէս, ասէ, այլ զիք ցուպ առնութեր, որով քշեցից: Ըսեն ցնա զհարդ կարիցես, զի զգայցես իսկ ոչ. ապա զինչ փնաս իցէ, ասէ, ի դազանաց զիշատել, եթէ շիցեմ զգալոց. Վիկ:

Ակիպիոն Նասիկա եկն առ Աննիոս պւեա, եւ կացեալ առ դրանն խնդրէր զԱննիոս, ասէ ցնա աղախինն, չէ ի տան: Նասիկա գիտաց թէ հրամանաւ տեառնն ասէ, եւ թէ ինքն ի ներքս է: Յետ սակաւ ինչ աւուրց իբրեւ եկն Աննիոս առ Նասիկա, եւ կոչէր զնա ի դրացն, աղաղակեաց Նասիկա թէ չէ ի տան: Իսկ Աննիոս ասէ, զի՛նչ, միթէ ո՞չ գիտիցեմ զձայն քո: Յայնժամ ասէ ցնա Նասիկա, Աս իբրեւ խնդրէի զքեզ, աղախնոյ քում որ ասէր թէ չէ ի տան, հաւատացի, դու ինձ ո՞չ հաւատաս. Աիկ:

Օսոյն եւ պւեաիկոսք սովոր են առնել, ուստի Որատիոս պատմէ. Արթայի բնդ ճանապարհ, եւ էի մտախորհ: Յանկարծ ընթացաւ ոմն, եւ բուռն հարեալ ասէ, սրպէս կաս, ողջոյն իցէ. ասեմ ցնա առայժմ ողջոյն է, եւ դու ողջ լեր: Իբրեւ ընդերաներ յարել, ասեմ ցնա, միթէ կամիցի՞ս ինչ. իսկ նա ճանաչե՞ս զիս ասէ . . . :

Այս հնդէքին ձեւք միանդամայն գտանին ի պատմութեանն Աիկերոնի, զոր բերաք վերադոյն (16): Եւ այսչափ վասն պատմութեան շատ եւ բաւական է:

ԱՌԱՍՊԵԼԷ

19. Առասպելք են պաճուճեալ բանք որ զճրչմարտութիւն յանդիման կացուցանեն, որպիսի է Ալբատեայ առակն ձիոյ զմարդ յօգնականութիւն կոչելոյ:

Եղն բնդ ձիոյ կռուեալ, զնա ի հասարակաց արօտէ մերժէր. սա իբրեւ վատթարանայր յերկար պատերազմին, ի մարդոյ թիկունս օգնականութեան խնդրէր, եւ առնոյր սանձս եւ թամբս. բայց յետոյ ապա իբրեւ յաղթեալ բռնութեամբ ի թշնամւոյն ի բաց կայր, ոչ զհեծեալն ի թիկանց, եւ ոչ զսանձսն ի բերանոյ կարաց ընկենուլ:

Իայց տես զխորդ ծածկութեամբ առակին զճրչմարտութիւն ուսուցանէ ճարտարն, զի զնավիմբ ամէ:

Վոյնպէս որ յաղքատութենէ երկուցեալ, անկանիցի յաղատութենէ, որ քան զոսկի եւ զարծաթ պատուականագոյն է, այնպիսին ազիտարար աւեր կրէ, եւ յաւիտեան ծառայ է, զի սակաւուն ոչ գիտաց վարել:

Ասացուք նախ զպէսպէս ազգաց առասպելաց. սպա զօրինաց եւ զարուեստգիտութենէ առասպելաց. եւ յետոյ սպա վասն նոցին օգտութեան:

Ա. ԹԻ. ՔԱՆԻ ԱԶԳ.Ք ԱՌԱՍՊԵԼԱՅ ԻՑԵՆ

20. Արիս ազգս առասպելաց վարկանին Վ. Թ. անիոս եւ Թ. Է. ովն սոփեստէս, որ զհռեւորական հրահանգս աշակերտաց յոյժ օգտակարս գրովք թողին մեղ. եւ են, խօսուն, Բարոյից եւ խառն:

Վ. Խօսուն առասպելք կամ առակք են, որ շէն արդարեւ լեալ, սակայն մարթին լինել. որպիսի է առակ տասն կուսանացն, մեծատանն եւ աղքատին, անառակ որդւոյն յաւետարանի: Ապում օրինակք կան այսպիսի առակաց ի գիրս, բերցուք օրինակ մի ի Փեղրոսէ, որ զԱստվազայ առասպելն ի հռոմ լեզու գրեաց, որպէս ասէ, Յնիւթն զոր Աստվազոս իշխան եղիտ, զայն ես յղկեցի ի վեց վեց սաիքս:

Ի ԿԱՐՈՒՆԿԷ ԲԺԻՇԿ

Արուակ ոմն որ անգէտ էր արուեստին, իբրեւ առ վասնդի կարօտութեան յանձանօթ վայրի բժըշկութիւնս առնել սկսանէր, սուտ անուամբ որպէս թէ անդեղեայ վաճառիցէ, հնարիւք ճարտարաբանութեամբ շահեցաւ անձին համբաւ: Ի նմին ժամանակի իբրեւ յախտ ծանր անկեալ գնէր թագաւոր քաղաքին, զնորա զփորձ առնլոյ վասն տաշտ խնդրէր, եւ արկեալ ջուր կեղծեօք որպէս թէ թոյն ընդ անդեղեայ խառնիցէ, զայն բմպել նմա հրամայէր, եւ խոստանայր վարձս: Աորա զահի հարեալ ի մահուանէ խոստովան լինէր, թէ ոչ բժշկական ինչ արուես-

աին իմաստութեամբ, այլ սպշութեամբ խառնիճա-
ղանճ առակին անուական եղէ: Քաղաւորն ժողով կո-
չէր, եւ զայս ինչ ճառ արկեալ խօսէր: Վանի անմիտ,
ասէ, զանձինս համարիցիք, որ զգլուխսդ հաւատալ
առնուք յանձն, որում զոսան անգամ չեթող դք
առնել օգս: Օչայս ի դէպ այնոցիկ համարիմ, որոց
անմտութիւն անամօթից շահ է:

Բ. Բարոյից առասպելք են, որ զգաղանաց
բարս մեկնեն առ ի զբարս մարդկան յօրինելոյ: Այդ-
պիսի առասպելք Եսովպայ կոչին, ոչ զի Եսովպոս
եղև գասկ, որպէս առհասարակ կարծի, զի եւ յա-
ռաջ քան զԵսովպայ ժամանակն Հոմերոս եւ Եսիո-
զոս արկին ի կիր, այլ վասն զի Եսովպոս նոքիմք
զուարճանայր, եւ ինքն բազում նոյնպիսի հանճա-
րեղ առակս գրեաց: Բայց ոչ միայն զազանաց,
այլ եւ ծառոց եւ բուսոց, կռանի եւ սալի բնծային
բարբառք. օշինակ նոյնպէս ի փեղբոսէ:

ԳԼՏԼԵՒ ԳԼՈՒՆ

Գայլ եւ զառն տազնապեալ ի ծարաւոյ եկեալ
կային ի նմին խաղի. գեր ի վերոյ կայր զայն, իսկ
զառն քաջ ի բաց խոնարհադոյն: Անդ աւազակն
այն գրգռեալ յորկորոյն շարութենէ մատուցեալ ամ-
բատան լինէր. բնդէր, ասէ, պղտորեցեր զճուրղ-
ուսաի ըմպեմն: Իսկ գեղմնաւորն զահի հարեալ,
զխորդ աղէ առնել կարիցեմ, ասէ, զորմէ շարախօ-
սեադ. զի ի քէն եւ սյսր հոսէ վտակդ: *Արա տազ-
նապեալ ի ճշմարտութեանն զօրութենէ, յառաջ
քան զամիսս վեց անիծեր զիս, ասէ: Պատասխանի
եա զառնն. եւ ծնեալ իսկ շէր իմ յայնժամ տա-
կալին: Ապա հայր քո էր, ասէ, որ զիսն անէծ. եւ
այնպէս դէշ դէշ պատառեաց զնա տարապարտուց:
Առակս վասն այնպիսի մարդկան գրեցաւ, որ յօգնե
զօգնն պատճառս զի զանպարտսն հարստահարեցեն:

Այս ինչ ի միջի կայ ընդ սա եւ ընդ առաջին աւաստեւն, զի այնմ հնար է լինել, իսկ սմա չէ մարթ, զի չէ հնար դազանաց խօսել :

Վ. Ասառն առասպելք են որ ի խօսուեն եւ ի բարոյական առասպելաց խառն են այս ինքն է, յորժամ մարդ ընդ դազանս խօսիցի :

Ասառն առասպելաց օրինակ դացես առ Յուստինեայ ի քառասներորդ երրորդ գպրութեան պատմութեանցն . զի Մասիղինացիք, որ Մ. սիացւոց անտի եկին ի կողմանս Վաղատացւոց զարմացեալք ընդ զեղեցկութիւն վայրացն իբրեւ խնդրեցին ի բնակչացն շինել քաղաք առ ժամանակ մի, Աեդուղոս զայս առակ արկ Վաղատացւոց :

Արբեմն շուն մերձ ի ծնանել խնդրեաց ի հովուէ վանս, ուր ծնանիցի . իբրեւ էառ, զարձեալ սկսաւ աղաչել, զի եւ զկորիւնսն ի նմին տեղւոջ մարթացի սնուցանել : Ասցց ապա իբրեւ զարգացան կորիւնքն, յընտանի պահպանութիւնն ապաստան, զբաւեաց զտեղին : Այս սմին օրինակի, ասէ, եւ Մասիղինացիքդ, որ այժմ վանաւորք թուին, ապա տեաւրք լինելոց են աշխարհին : Աւ սովին զրդուեաց զՎաղատացիսն, զի թագաւորն ի միտ առ զնենգութիւնն եւ մերժաց զնոսա :

Վեղեցիկ է յոյժ եւ այն զոր փեղբոսն պատմէ զգորտոցն թագաւոր խնդրելոյ :

Աթենացւոց քաղաքն իբրեւ օրինօք արդարութեան պայծառանայր, յանդուզն ազատութիւն աղմկեաց զքաղաքն, եւ համարձակութիւնն արձակեաց զերասանակսն : Անդուստ Պիսիսարատոս բռնակալ նոքօք հանդերձ՝ որ ի խակագործ ստահակութիւնն միաբանեալ էին, առ զբաւեաց զամուրն : Իբրեւ բղղձնդակ ծառայութիւնն աշխարէին Ատտիկեցիք, ոչ զի անադորոյն էր նա, այլ վասն զի ամենեւին ծանրատաղտուկ էր բեռնն որոց չէինն սովոր, եւ իբրեւ սկսան տբանջել, յայնժամ Ասովպոս այսպիսի ինչ առակ արկ նոցա :

Վորտք, ասէ, որ համարձակ շրջէին յեղաւերս մեծաձայն աղաղակաւ խնդրեցին թագաւոր Ղ. Բամազդայ, որ զմեղկ բարս բռնութեամբ սանձահարիցէ: Օրծաղեցաւ Բ. Բամազդ, եւ ետ նոցա գերան փոքրիկ, զոր յանկարծօրէն յեղակարծումք ընկէց ի ջուր անդր, յորոյ շարժմանէն եւ ի հնչիւն բարբառոյն սոսկաց երկշոտ ազգ գորտոցն: Աւ մինչդեռ նորքս ընդ երկար ի խորսն ընկղմեալ զօղեալ կային, յանկարծ մին ի նոցանէ մեղմով ամբարձ զգլուխ իւր ի լճէն, եւ դիտեալ զթագաւորն, կոչեաց զամենեւին. նորքս ի բաց թօթափեալ զերկեւոյն գան ի լիւղ. եւ ամբոխ բազմութեանն վաղեաց ել ի վերայ փայտին: Որում իրբեւ ամենեքին թշնամանս դնէին եւ աղաչէին Ղ. Բամազդ այլ թագաւոր առաքել նոցա, զի որ տուան անպիտան է, ասեն, յայնժամ յղեալ նոցա զհիդրոս որ է օձ ջրային, որ սաստիկ եւ յորտք ատամամբքն սկսաւ զմի մի ի նոցանէ ունել. վայրագար խուսափեին ի սաստկմանէն, առ ահին եւ ճիկ հանել չկարէին: Ապա գաղտ ի ձեռն Տիւր դից տան պատգամս առ Բ. Բամազդ, զի ի թիկունս հասանիցէ նեղելոցն: Իսկ նա որովհետեւ ոչ կամեցայք, ասէ, ձերոյն որ լաւն էր, հանդարտել, յոււոյն ժուժկալեցէք: Վորք եւս, ս քաղաքացիք, ասէ Ասովպոս, սմին համբերեցէք զի մի եւս չար ինչ պատահիցէ:

Բ. ԹԷ ԶԻՆՉ ՕՐԷՆՔ ԵՒ ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ ՊԻՏՈՅ
ԻՑԻ ՎԱՄՆ ԱՌԱՍՊԵԼԱՑ

21. Առաջին օրէնք այս են, զի յառասպել անդր յարեսցի եւ նորին մեկնութիւն, որով միտք առակին համառօտիւք յայտ առնին. զոր մեկնութիւն՝ համարձակիմ շունչ եւ ոգի առասպելաց կոչել. որ երբեմն ի կատարածին եւ երբեմն ի սկզբանն դնի:

Արկրորդ զի պատմութիւն առասպելին յայտնի, համառօտ, հեշտական եւ հաւանութեան լիցի, զո-

րոց բաւական ասացաւ ի պատմութեան տեղւոջ (17):

Բայց առտ ասացուք թէ զհարդ հաւանութեան առնել մարթ իցէ զառասպելս, որ սուտ եւ անհաւատ պատմութիւնք են, զի տան զազանաց ճառս խորհրդոց իբրեւ զմարդ խօսել: Արդ թէպէտ եւ պաճուճեալ եւ սուտ են առասպելք, սակայն եւ այնպէս պարտին նմանութիւն ինչ եւ միաբանութիւն ճշմարտութեան ունել. որ լինիցի, եթէ իւրաքանչիւր շնչաւորի իւր բնութիւն եւ հանճար պահեսցի, որպէս ազուիսու խորամանկութիւն, առիւծու յեղուզակութիւն, գառին զգօնութիւն եւ հեղութիւն, եւ իւրաքանչիւր գազանի անցնիւր բարք տացին: Օ ի բանաստեղծն պարտի զստութիւն ի ճշմարտութիւն անգրմերձէ զուգանել:

Որ ի յիբաւի կշտամբի ֆեզրոս, որ ասէ. Աղջերու խնդրեաց յոչխարէ քոռ մի ցորենոյ, եւ գայն երաշխաւոր կայր. նորա իմացեալ զնենգութիւնն. ասէ. գայն հանապաղ յափշտակել սովոր է, եւ դու փախուցեալ սրանայցես, ես յումք պահանջեցից զիմն: Աղջերու եւ ոչխար խոտակեր են, իսկ գայլ շաղղակեր, զինչ պիտոյ իցէ նոցա ցորեան: Այնպէս եւ այն թէ Վով եւ ոչխար եւ այժեամն գնացին ընդ առիւծու յորս, որ ոչ երբեք ելանեն յորս զի գէշ ոչ ուտեն:

Գ. ՎԱՄԵ ՕԳՏԻ ԱՌԱՍՊԵԼԷՑ

22. Օւրմանալի պիտանութիւն է առասպելաց, եթէ ի գէպ ժամանակի եւ ի պաշաճ վայրի, որպէս պարան է, արկցին ի կիր: Ատի զի զուարթացուցանեն եւ զբօսուցանեն զսօզան. եւ մտադիրս գործեն. որպէս արար իսկ երբեմն Ղեմոսթենէս, որ ի խօսել իւրում ի մէջ Ղթենացւոց զկարեւոր ինչ իրաց քաղաքին, իբրեւ ետես թէ ձանձրացեալ են եւ յօրանչէն, առական իմն զարթոյց զնոսս յունկնդրութիւն:

Պատանեակ մի, ասէ, որ ի սօթածամու յԱթենաց-
ցոց քաղաքէն ի Մեղարա երթալոց էր, վարձեաց
էշ, եւ ի սաստկանալ տապոյ արեղական ի միջօրէի,
խուսեաց յերեսաց տապոյն ի հովանի անդր իշոյն:
Իսկ իշավարն, որ ի վարձու եա զէշն, մերժէր զնա
անտի. զի ասէր թէ զէշն եւ ոչ զհովանի իշոյն վար-
ձեցար. իսկ նա պնդէր թէ հանդերձ իշոյն եւ զհո-
վանի նորա ածի: Իբրեւ ետես Ղեմսթենէս զգա-
տաւորսն թալացեալս ի ծաղուէ, կազմեցաւ զնալ,
իսկ նոքա աղաչէին եւ զմնացեալսն ասել. յայնժամ
նորա փոխեալ զբարբառն ասէ. զհովանւոյ իշոյն լսել
ախորժէք, իսկ զմեծամեծ եւ զկարեւոր իրաց չկա-
միցի՞ք. եւ այսպէս հնարիւք ի յօրանչելոյ եւ ի ձանձ-
րութենէ ի զուարթութիւն ած զնոսա:

Երկրորդ անգամ, ոչ զուարճացուցանեն միայն,
այլ եւ, որ զլուխ իսկ է, նպաստ լինին յուսուցա-
նել, շարժել, եւ զզեղծ բարս ուղղել: Օ՛ի զոր օ-
րինակ փիղիսոփայութեան, նոյնպէս եւ Ղաասպելաց
կէտ այն է, զմարդիկ ի շարեացն յոռութենէ ի փոյթ
համեստութեան եւ առաքինութեան ածել: Բայց
այլազգ փիղիսոփայք եւ այլազգ առասպելաբկուք
յայն փութան: Փիղիսոփայք յայտնապէս կշտամ-
բեն, ուստի վշտանան անմիտք եւ զկեցուցիչ խրատան
արհամարհեն եւ ի բաց թքանեն, զի որ կշտամբինն
կծանեն ասէ Յուենաղիս:

Բայց պւետք կուրին ընդ չարիս, դաղտ իմն եւ
հնարիւք, եւ զխրատուցն խստութիւն առասպելովքն
մեղմեն. զի միտք յիմարեալ ի քաղցրութենէ սղոքա-
նացն, զառողջարար դեղն մտադէւր ընդունիցին. ի-
բրեւ զիմաստուն բժիշկս, որք, որպէս ասէ Ղուկրե-
տիոս, իբրեւ աւշինդր մատուցանել կամիցին մանկանց,
անոյշ անոյշ դեղովք զբերան անօթոյն օժանեն, զի
յանդէտս պատրիցին. մանաւանդ թէ կազդուրեալ
առողջացին: Օ՛ի զինչ պատշաճագոյն կայցէ, ա-
ռանց զայրացուցանելոյ, զմեծարանութիւն կշտամ-

բել, քան զգեղեցիկ առասպելն փեղբեայ, որ է լեառն յերկունս: Արկներ, ասէ, լեառն, եւ երկիր ակն ունէր թէ յաղթ ինչ ծնանելոյ է, եւ ահա զայր ծնանէր մուկն: Այս վասն քո զրեցաւ, որ մեծա- մեծս փքաս, եւ վճարես ոչ ինչ:

Ի այց զմեծ օգուտ առասպելաց ցուցուք օրի- նակաւ Մենեայ Ազրիպպայ, որ զհռոմայեցւոյ ժո- վովուրդն, որ անհնարին հարստահարեալ ելին զեր- ծան յԱւենտինոս լեառն, աժ ի հնազանդութիւն եւ ի միաբանութիւն ընդ ծերոն, առակաւ անդամոց եւ որովայնի. եւ զոր օրէնք եւ ատենակալք շեղեն ձեռն- հաս առնել, զնոյն սա պաճուճեալ պատմութեամբն մարթաց վճարել:

Ի ժամանակին, ասէ, յորում ի մարդիկ, ոչ սրպէս այժմս բնաւք ի մի ինչ միամտեալ էին, այլ իւրաքանչիւր անգամք զանցնիւր խորհուրդ եւ զհրա- մանս ունէին, ցասուցեալ այլոց անդամոց թէ ըն- դէր հոգամք եւ վաստակեմք եւ սպաս ունիմք որո- վայնի, եւ նա լայնեալ հանդուցեալ, այլ ինչ ոչ առ- նէ բայց յանոյշ անոյշ տուբսն վայելել. ուստի միա- բանեցին, զի ոչ ձեռն տանիցի կերակուր ընդ բերանն, ոչ բերանն առնուցու թէ տացի ինչ նմա, եւ ոչ ա- տամունք ծամիցեն: Այսպիսի ցասմամբ մինչ զորո- վայնն քաղցիւնուաճել կամէին, միով անդամով ող- ջոյն մամինն սկսաւ ծնդել ծիւրել. ուստի յայտ ե- ղեւ թէ ոչ ընդ վայր սպաս ունէին որովայնի. եւ թէ չէ մարթ սնանել, եթէ ոչ նախ զնա սնուցանիցեն, զի նա է որ զարիւնն, որով կեամք եւ աճեմք, զոյգ ընդ ամենայն երակսն եւ ընդ բնաւ մարմինն բաշխէ: Աստտին կռուեալ թէ զիւրոյ մարմնոյ ստահակու- թեան նման էր Հռոմայեցւոյն ցասումն, խոնարհե- ցոյց զմիտս սրերոյն:

ՊԵՏՔ

23. Պէտք կոչին, զի զպէտս ի Հանդիսի անցուցանելոյ զբանս ինչ, լուսաւորագոյն գործելոյ եւ աճեցուցանելոյ ուսուցանեն. նմին իրի իսկ պիտանի յոյժ են մանկանց, զի սովին կրթեացեն զիւրեանց մտավարժութիւն, զի մարթացին յետոյ ի մեծամեծսն ձեռնարկել:

Ասացուք նախ զպէսպէս ազգաց պիտոյից, եւ ապա զնոցին մասանց:

Ա. ԹԷՒ ՔԱՆԻ ԱԶԳՒՔ ՊԵՏՈՅԻՑ ԻՑԵՆ

Երեք ազգ են պիտոյից. կէսք ի բանս միայն են եւ կոչին Բանից, այլք ի գործս, եւ Գործոց անուանին, ոմանք եւս յերկոսին միանգամայն, ուստի եւ խառն ասին:

Ը. Բանից պէտք են որ զանուանի եւ զիմաստուն բանս ուրուք մեկնեն. որպիսի է բան Պիւթագորայ. Ի նորեա առողջ լինել մտօք քան մարմնով. կամ Գիողինեայ, որ իբրեւ Հարցաւ թէ զիարդ ոք անձին վարդապետ կարիցէ լինել, ասէ. Եթէ վասն որոց զայլս կշտամբէ, նոքիմբ եւ զանձն խրատիցէ:

Ի. Գործոց պէտք են, զգործս ուրուք յիշատակել. որպէս Պիւթագորաս իմաստուն Հարցեալ երբեմն, թէ որչափ երկար իցեն կեանք մարդկան, սակաւ ինչ երեւեալ թագեաւ. որով զկարճութիւն կենաց մարդկան կամեցաւ յայտ առնել: Եւ Կոտիւս արքայ թրակացւոց, իբրեւ ոմն առ նա յղեաց պարզեւ յովազ, նա փոխանակ առաքեաց առեւծ, եւ բան ինչ ոչ ասաց, յայտ արարեալ թէ զկշիռն պարտ է դարձուցանել:

Յիշատակաց արժանի է եւ այն զոր Գիւիոս եւ փղորոս պատմեն զերկոցունց Տարկուինեանցն զհօրէն եւ զորդոյ: Օ ի Սիքստոս Տարկուինոս Տարկուինեայ Սուպերբայ հուսկ վերջին թագաւորի Հռոմայեցւոց որդի, թշնամանեալ ի հօրէն իբրեւ շոքաւ առ Գա-

ղատացիս, եւ յետ սակաւ միոյ ի մեծ իշխանութիւն
 Թաղաւորութեան եհաս, գաղտ զոմն առ Հայր իւր
 առաքէր զի հարցոյէ Թէ զինչ առնել պարտ իցէ:
 Եւ ինչ ոչ ասաց, այլ վաղվաղակի եմուտ ի պարտեղ
 տան իւրոյ հանդերձ պատգամաւորաւն: Աւ
 շուրջ եկեալ սկսաւ հատանել զգլուխս մեկոնիոն
 ծաղկանց, որով տայր խրատ զճոխս քաղաքին սպա-
 նանել. զոր ի գլուխ հանեալ որգւոյն գաւով, գիւրաւ
 եւ անջան նուաճեցաւ քաղաքն ընդ Տարկութեանցն
 իշխանութեամբ:

Ասան պէտք են, յորս ընդ բանից կից են եւ
 գործք: Արպէս Ղիթոնեայ տեսեալ երբեմն ի հրա-
 պարակի անդրի պատկեր, մատուցեալ աղաչէր եւ
 ձգեալ զձեռն ինդրէր ինչ հարուստ ժամս: Օլարմա-
 ցեալ բարեկամացն իբրեւ հարցին զպատճառն, փորձ
 փորձեմ, ասէ, չհասանել ինդրուածոց:

Նոյն տեսեալ երբեմն Թէ ամբոխ բազում ելա-
 նէ ի Թեատրոնէն, ինքն սկսաւ բանութեամբ ի
 ներքս մտանել, եւ որոց կշտամբէինն զնա, ասէ,
 զայս յամենայն կեանս իմ փութամ առնել:

Բ. Թէ ՈՐՉԱՓ ԻՆՉ ՄԱՍՈՒՆՔ ԻՅԵՆ ՊԻՏՈՅԻՅ

Արեցունց ազգաց եւս պիտոյից ութ մասունք
 են, որպէս Ղիթոնիոս ուսուցանէ ի հրահանգսն. եւ
 են Պովութիւն, Սեկնութիւն, Պատճառք, Հա-
 կառակք, Նմանութիւն, Օրինակ, Նախնեաց վկայու-
 թիւն եւ Սերջին բանք:

Ե. Պովութիւն այն է, զի ի սկզբանն զովեա-
 ցի նա որ ասացն եւ արար. զի ի նորին զբուատեաց,
 բանքն եւս կամ գործք յարդին եւ ազնուազոյն ե-
 րեւին:

Բ. Սեկնութիւն եւս պահանջի, զի բանքն
 կամ գործք յայտնազոյն լինիցին:

Գ. Պատճառն յայտ առնէ, Թէ պարտ է հաւաս-
 աեաւ հեաազօտել զպատճառս Թէ վասն էր ասացաւ

կամ արարաւ : Որպէս այնր թէ Պարտ է ասնել չարեաց բարեկամայն , պատճառ է , զի չիք ոք ի կանանցածնաց առանց բծոյ ախտից , այլ նա է ազնուագոյն որ ի սակաւ ախտից զբաւեալ իցէ :

Դ . Ի հակառակէն եւս պարտ է հաստատագոյն ասնել , զի ամենայն ինչ ի հակառակէն պայծառագոյն երեւի , որպէս սպիտակ ի թխոյ , առաքինութիւն ի շարութենէ , ուստի յետ յայտ ասնելոյ թէ Վաղցր եւ վայելուչ է Վասն աշխարհին մեռանել , ցուցցես ի նորին հակառակէն թէ որպիսի ամօթ եւ նախատինք են զօրականի որ վասն աշխարհին մարտնչի , առերկիւղի մահուան ի փախուստ մտաբերել : Այնպէս յետ ցուցանելոյ թէ ծուլութիւն եւ պարապութիւն սկիզբն եւ նիւթ են ամենայն շարեաց , ասացես թէ նոցին հակառակ ջան եւ տքնութիւն պահ եւ զգուշութիւն են պնդութեան եւ անարատութեան :

Ե . Մմանութիւն կամի , զառաջակայ բանն զեղեցիկ իմն նմանութեամբ զարդարել եւ պայծառագոյն գործել . որպէս եթէ զաշխատութիւն եւ զփոյթ կամիցիս գովել , կարող ես ասել ընդ Վիկերոնի , որպէս ձի առ ընթանալ , եզն ի ձգել զակօս , եւ շուն ի հետազօտել , նոյնպէս եւ մարդ առ իմանալ եւ գործել ծնաւ :

Զ . Օրինակին այս են միտք , զիրս՝ զորոց ճառքն են , լուսաւոր եւ յայտնի օրինակաւ յանդիման կացուցանել . որպէս եթէ կամիցիս օրինակ ինչ բերել թէ քաղցր եւ վայելուչ է վասն աշխարհին մեռանել , բեր օրինակ զհուսկ վերջինն ի թագաւորաց Վթենացւոց , զՎոդրոս Սեղանութեայ , որ այլակերպեցաւ եւ առանց զնուց մտեալ ի պատերազմ մեռաւ վասն աշխարհին , զի հրաման էր ի գիցն թէ որոց իշխան ի ճակատու անկանիցի , նոքա յաղթելոց են : Կամ զՎեռոնիդեայ արքայի Ղակեղմոնացւոց , որ ի Թերմոպիլիդիս սակաւ արամբք մեռանէր ի պատերազմին ընդդէմ Վսեբքսեայ . կամ զՎեկոսի բգեշի

Հռոմայեցւոյ, որ զլիսով սքողելով եւ պէսպէս բանիւք վասն աշխարհին կենաց ինքնակամ տայր զանձն ի պատերազմն, եւ անկանէր: Ամ Մատիղեայ Հռոմացւոյ առն բղեշխի Հռոմայեցւոյ, որ զիւր վիշտս գերութեանն առաւել ընտրեաց քան զաշխարհին վտանգ:

Լ. Վախնեացն վկայութիւն, այն ինքն է ի բանից եւ ի վկայութենէ Հին մատենագրաց զասացեալն Հաստատուն առնել. որպէս առ այն թէ, անիրաւութեանց ներել պարտ է մանաւանդ քան վրէժխնդիր լինել, ած զբանս Տակիտոսի թէ Շառք թշնամանօք բժշկին. կամ զմեւս եւս զնորին բան արժանի առն քրիստոնէի թէ Ռամբասանք իբրեւ արհամարհիցին, չքանան եւ պակասեն:

Բ. Պիտոյ են եւ Համառօտ վերջին բանք, որ է յանկել զճառն կարճ ի կարճոյ յիշատակեալ զբանսն որ ցայնժամ ասացան: Օ ի վերջին բանք փականք իմն են, որով ի սակաւ ինչ ամփոփեմք, զորս երկայն բանիւք յիշատակեցարն:

Բայց որովհետեւ օրինակաւ զիւրին եւ կարճ է ճանապարհ քան վարդապետութեամբ, կարեւոր համարիմք օրինակ ինչ պիտոյից առաջի դնել:

ԿԱՐՃ Է ԺԱՄԸՆԵԿ ԿԵՆԱՑ ԱՄԵՆԵՑՈՒՆ ԵՒ ՈՉ ԵՒՍ
ԴԱՌՆԱՑ ԱՅՍՐԷՆ՝ ՎԻԳ՝ ԵՆԷ՝ Ժ՝

Ա. ԳՈՎԱՌԻԹԻՒՆ

Թէպէտ եւ ամենայն վիպասանաց կէտ ազնուական առաջի եղեալ կայ, ընդ քաղցրութեան եւ զօրութան խառնել, սակայն տակաւին ոչ գաի զոք ի վիպասանաց որ յայդմ ընդ Վիրգիլեայ ի կշիռ համեմատութեան գայցէ: Օ ի սա ոչ միայն զՅունաց եւ զՀռոմոց ճարտարօքն անցոյց զանցոյց հնարագէտ ճարտարութեամբն ուստի եւ ի բանից կարգի էր թէ Մուսայք եւ Մպոզոն ոչ կարեն ազնուագոյն

քան զնա երգել յիւրեանց զնդի, եւ, թէ Լըրամազդ, եթէ լինէր պւետ, ոչ մարթէր լաւ քան զնա խօսել. այլ եւ, որ դլուխ իսկ է, իմաստութեամբ բանիցն առաւել եղև. մինչև վարուց կարգաց եւ առաքինութեան վարդապետ անուանեալ կոչել զնա ամենեցուն: Ի մէջ բազում խրատուց եւ վարդապետութեանց, որովք լի են նորին մատեանք, կեցուցիչ եւ արժանի գովութեան է եւ այն զոր ասէ ի գիրսն զոր Լնէիդան կոչեն, վասն կարծութեան ժամանակին եւ կենաց մահկանացուաց որ սահի անցանէ. ՎԼԲՃ Է, ասէ, ԺԱՄԱՆԱԿ ԿԵՆԱՑ ԱՄԵՆԵՑՈՒՆ ԵՒ ԱՅԼ ՈՉ ԵՒՍ ԴԱՌՆԱՑ:

Բ. ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

Ի իսկ արդարեւ այնպէս. այնչափ սակաւ եւ անձուկ են զնացք որ շուրջ զմեք են, զի հազիւ ի լոյս եկեալ ուրուք, եւ անդէն մեկնի զնայ. եւ հասանիցէ կեանս ընդ մահու փոխանակել: Օ ի իբրեւ զվայրկեան ժամանակի են այս կեանք, զորովք այնպէս կղկաթեմք, եւ սակաւ եւ իբրեւ ոչ ինչ իմն է անջըբպետութիւնն, որ ընդ ծագել եւ ընդ մեռանել ի միջի կայ: Խոյս տայ սակաւ ժամն, աւուրք զաւուրս ձեպեն, ամք զամս ստիպեն, երիտասարդութեան ծերութիւն. ծերութեան մահ յանկարծ ի վերայ հասանէ. եւ այն իսկ են աղէտք, զի իբրեւ անցանիցէ ժամանակն, ոչ եւս դառնայ այսրէն:

Գ. ՊԱՏՃԱՌԻ

Եւ չիք մեղադիր լինել, թէ ընդէր այնպէս սակաւ ժամանակք կենաց տուան մեզ. զի եթէ զիտիցես վարել, բաւական իսկ են, թող զի եւ ստուգիւ հմուտ եմք թէ արդարեւ կայ մեզ մեռանել: Կայնպէս անմիտ կայցէ, որ ոչ գիտիցէ թէ այս է պատիժ պատուհասի մեղաց, եւ սոյն պայման եւ վիճակ մահկանացուաց, եւ թէ մարդ կորէնքս ամենայն

ակար եւ զազգիազգիունք են. եւ չիք ինչ որ մշտնջե-
նական իցէ. եւ իւրաքանչիւր ումեք սահմանեալ է
սակաւ ինչ ժամանակ զի երանելի կենացն յերկինս
արժանի դասնիցիմք: Բայց էին իսկ մարդիկ երբեմն
երկայնակեացք, սակայն վասն անօրէնութեան եւ
մեղաց եղեն կարճօրեայք, եւ նուազ աւուրբք:

Գ. Ի ՀԱԿԱՌԱԿԻՆ

Այլ իբրեւ լինիցի արձակել ոգւոց յապականա-
ցու մարմնոց, եւ ընդ ոգւոց երանելեաց հասանիցէ
վայելել յերկինս, այնու հետեւ չիք ուստեք երկեւղ,
ոչ դարձ ժամանակաց, ոչ տիոց փոփոխել, ոչ ան-
ցանել ամաց, եւ ոչ աւուրց շրջանք, եւ ոչ ամք
զամս փոխանակիցեն: Այլ հանապաղ ինմին երանու-
թեան կայցեն մնայցեն, եւ ցանգ ընդ Աստուծոյ լի-
նիցիմք:

Ե. ՆՄԱՆՈՒԹԵԱՄԲԻ

Այս չիցեմք հեղգք եւ ծոյլք, եւ ո՛ր կարիցէ
արժանի զմեր թշուառութիւն ողբալ. որ զմիշտ կայան
թողեալ, ընդ չկայսս իբրեւ ընդ ստուերս եւ ընդ
պատկերս հարեալ եմք: Օյի եթէ ճշմարտութեամք
եւ ոչ ի կարծ զիրան կշռել կամիցիմք, զինչ այլ ինչ
անցաւոր եւ եղձանելի աշխարհս իցէ, բայց ծուխ
թեթեւ, որ ի միում վայրկեան ժամանակի չքա-
նայ, կամ վտակ սահեալ, կամ իբրեւ զձազիկ արա-
զախամուր, որ ընդ առաւօտս բուսանի, յերեկոյին
ծաղիկէ, եւ զցայդ խամրի թառամի, կամ որպէս
ստուեր եւ տեսիլ ունայն, որ ըստ ձեռն ելանիցէ
մարդոյ:

Զ. ՕՐԻՆԱԿԱԻ

Մարթի յայսմ վայրի այսր ամենայնի վկայս կո-
չել զարս առաքինիս եւ զիմաստունս որ զանցաւոր
կենաց կարճութիւն այնչափ ջանիւք եւ աքնու-

Թեամբք եւ անխոնջ հոգովք զնեցին : Վարձեալ եւ զկուսանս եւ զիշխանս եւ զերիտասարդս , որոց իմացեալ թէ առանց հաստատութեան են ամենայն իրք մարդկեղէնք , ոչինչ գրեցին զորս մարդիկ կուրացեալ առաջին եւ զլիաւոր համարին , եւ առ ոտն կոխեցին զամենայն հրապոյրս ցանկութեանց , եւ ըզփափկութիւն քամահեցին :

Է. ՆԼԻՆԵԼՏՆ ՎԿԼՅՈՒԹԵԼՄԻ

Օչոյն իմն յայտ առնել կամէր Կորնթացւոց աստուածեղէնն Պաւղոս , յորժամ ասիցէ , թէ ժամանակն կարճ է . զնոյն խրատ տայ եւ մեծն Յովբ , յորժամ լցեալ աստուածեղէն հողւովն խօսի եւ ասէ , կարճ են աւուրք մարդկան : Օչոյն եւ Որատիոս գիտաց , որ խրատէր իմաստութեամբ զբարեկամն , թէ Զամենայն օր որ լուսանայ քեզ համարեա թէ յեաին իցէ . եւ փեղրոս ի գեղեցիկ աւասպելսն զնոյն ճշմարիտ բարբառ բարբառի . Ընդր , ասէ , երթալոց ես , ուր՛նախնիքն զնացին . զի՞ զոգիսդ զվայրօք ածեա :

Ը. ՎԵՐՉԻՆ ԲԼՆԻԲ

Ըւ արդ եթէ այնպէս կարճ է ժամանակն , եւ ոչ եւս դառնայ , ապա պարտ է մի ծոյլս եւ վեհերոտս լինել . ի մէջ այնչափ անձկութեանց եւ վշտաց չէ արժան ի դատարկութիւն հաստանել : Ըրդարեւ թշուառականք են , որ առ ծուլութեան ի միօջէ ի մեծ եւ ի կարեւոր իրաց զլացեալ զբիկցեն զանձինս որ մշանջնաւոր անեղծութիւնն է : Ըպա պարտ եւ պատշաճ է ժբանալ եւ յօգուտ զժամանակն ի կիրարկանել , եւ իբրեւ զհեղեղ ինչ որ տազնապաւ զայ եւ զնայ , այնպէս արագ արագ աւցուք յամանս :

Օ իմաստուն ինչ բանս գտցեն մանկախն ի կատարած գրոցս , որ ոչ միայն ի յօրինել զպէտս , այլ եւ յայլ եւս ճառս բազում օգնականութիւն լինիցի նոցա :

ԸՃԵՑՈՒՑԱՆԵԼ

24. Սպրապար եւ ամենեւին ծաղու արժանի համարել պարտ է զոր ոմանք առ ոչ ուզիլ իմանալոյ զմիտս բանիցն խօսկրատեայ, ասեն թէ Ըճեցուցանել է զսակաւ ինչ իբրեւ զմեծ ցուցանել, կամ զգոյզն ինչ բան ստուարացուցանել: Արդարեւ մանկութեան խաղալիկ եւ իբրեւ խաբէութիւն համարէր եթէ այս զեղեցիկ մասն ճարտարախօսութեան, որպիսի աճեցուցանելն է, սուտ զարդուք եւ աւելի քան զարժանն ստուարացուցեալ աճեցուցանէր զիրս: Օխ որպէս սովոր էր ասել Ըղեսիղաւոս թագաւոր Սպարտացոյ, անգէտ է կարուակ, որ փոքր սախց մեծամեծ օդս առնիցէ:

Իայց զԸճեցուցանելն ուզիլ որոշէ Վիկերոն, այսպէս. Ըճեցուցանել է հաւաստեաւ հաստատել ինչ, որ յորդորիցէ զմիտս լսողաց, եւ տացէ հաւատալ բանիցն: Հաւաստեաւն հաստատել նշանակէ ստտիկ եւ զօրեղ բանիւք խօսել, որով զմեծութիւն եւ զառաւելութիւն, կամ զնկեութիւն եւ զնուազութիւն իրացն յանդիման կացուցանեմք, այնպէս զի միտք լսողացն հարկանին եւ շարժին, եւ բանքն անկին ի միտս նոցա. ապա յայտ է թէ աճեցուցանելն ոչ սուտ պատմութեամբք ստուարացուցանել է, այլ զզօրութիւն մտացն որ ի սակաւ բանս թագուցեալ կայ, մեկնել եւ լայնել:

Արկին ազգք են աճեցուցանելոյ, Իբաց, յորժամ իբքն կամ արդիւնք իրացն բնդարձակին, եւ երկրորդ Բանից, յորժամ բանքն միայն աճեն:

Ը. ԸՃԵՑՈՒՑԱՆԵԼ ԶԻՐՍ

25. Օխրսն մարթ է աճեցուցանել, Նախ որոշմամբք, Երկրորդ զմասունս ի համար արկանելով, Երրորդ յաւելուածովք, Չորրորդ պատճառօք եւ արդեամբք, Հինգերորդ ի հակառակաց, Վեցերորդ նմանութեամբք, համեմատութեամբք կամ օրինակօք:

Օձեւոց զորոց ասաս խօսիմք, յերբորդ ճառս ճրչ-
դիւ հաստատութեամբ ասելոց եմք, բայց զի մի բնդ
հաս երեւեոցի կարգն, ասասցուք եւ ասա համառօտիւք

Ե. Որոշմամբ աճեցուցանել ինչ ոչ այլ ինչ է,
բայց զնորին բնութիւն մեկնել, որպէս Աիկերոն առ ի
ցուցանել թէ անհնարին էր անօրէնութիւն այնոցիկ
որ զմեհեանն այրեցին սկիզբն առնէ մեկնել թէ զինչ
մեհեանն իցէ:

Օինչ քան զայն, ասէ, հիքազոյն կայցէ, զինչ
դառն, զինչ քան զնոյն ողբոց եւ արտասուաց ար-
ժանի: Օսրբութեան մեհեանն, զմեծութեան, զի-
մաստութեան, զհասարակաց խորհրդոյ, զգլուխ քա-
ղաքին, որ նիզակակցաց բազին էր եւ նաւահանդիստ
ամենայն ազգաց. որ նիսան շնորհեալ էր յամենայն
ազգէն շոռոմոց միանգամայն հրձիգ առնել, յաւեր
եւ յապականութիւն դարձուցանել:

Բ. Օմասունս ի համար արկանելով աճեցուցա-
նել յայնժամ լինի, յորժամ ամենայն, կամ գլխաւոր
մասունք իրիք ի համար դան: Որպէս Աիկերոն առ
Պիսոն զայս սակաւ բան թէ յիշել անգամ ոչ կամին
զանազորոյն իշխանութիւն քո, աճեցուցանէ. նախ
թուէ մի բստ միոջէ զգործս, զբարս, զկերպարանս
եւ զանուն իշխանութեանն զոր նայն վարեաց. ապա
համարի զզօրսն եւ զգաւառս. որ զիշխանութիւն նո-
րա ատէին, զզօրսն բաժանէ ի պատգամաւորս, ի
հաղարպետս, ի հարիւրապետս եւ ի ջոկս. ապա
զգաւառսն վարկանի, զՎքայիա, զԹեասաղիա, զՎ-
թէնս, զՎպողմնիա, եւ զայլ եւս գաւառս որ բնդ
նորա իշխանութեամբ եղեն:

Եմենեքին որ ի քաղաքէն են, ի քո բղեշխու-
թեան յիշատակէ, ի գործոց, ի բարուց, յերեսաց
եւ յանուանէ իսկ խորշին: Որոց հրեշտակագնաց լեալ
եւ ի դաշն մտեալ էր, օտարացան. հաղարպետք
զօրաց թշնամիք են, հարիւրապետք եւ այլ եւս
զօրն, թէ մնացորդ ինչ տակաւին յայնչափ զօրաց

կայցէ, ոչ եթէ արձակեալ ինչ ի քէն, այլ թօթափեալ, ատեան զքեզ, զմահ ժանտութեան ըղձանան քեզ, եւ նղովեն եւ անիծանեն: Աքայիա սպառեալ, Թեոսաղացոց աշխարհն նեղեալ, ի լկանս մատնեալ Աթենացոց քաղաքն, Գիւռաքիոն եւ Ապողոնիա ունայնացեալ թափուր ի բնակչաց, կապուտ կողոպուտ լիեալ Ամբրակիա, Պարթինացիք եւ Բուղինացիք խաբեալք. Եպիրոս քանդեալ, Գոկրացիք, Փոկիացիք, Բէովտիացիք հրձիգ լիեալ, Եկաունանիա, Ամիիդոքիա, Պեռեքիա եւ Աթամանաց ազգքն վաճառակուր լիեալ, Մակեդոնիա մատնեալ հինաւանդին, Ետողիա ի կորուստ յուղարկեալ. Գողոպայք եւ սահմանորդք լեռնականք քաղաքին եւ գեղջն բնաջինջ եղեալք, արք հռոմայեցիք որ ի կողմանսն յայնոսիկ վաճառաշահ լինին, իբրեւ գունդք չորբար, ի միտ առին թէ գող, շարչարիչ, հէն եւ թշնամի եկն:

Գ. Յաւելուածով աճեցուցանել է ի պէսպէս դիպացն ցուցանել զհանդամանս մեծութեան եւ զձձութեան իրացն: Որպէս Վիկերոն զՄիհրդատայ արքայի զգազանամիտ յանդգնութիւն աճեցուցանէ ի ժամանակէն եւ ի տեղեաց եւ յարանցն զորս նա անխնայ ետ սպանանել:

Այժմ պարտ եւ պատշաճ է ձեզ զայն բիծ զոր յառաջնում պատերազմին Միթրիդատայ առէք յանձինս, ի բաց սրբել, որ ամենեւին իջեալ նստեալ կայ ի Հռոմայեցոց անուան վերայ, եւ հնացեալ իսկ է. զի նա որ ի միում աւուր ընդ ամենայն աշխարհն Ասիացոց յայնչափ քաղաքս դեսպան արարեալ միով հրովարտակաւ հրաման ետ զարս հռոմայեցիս ընդ սուր հանեալ կոտորել, ոչ միայն պատիժս պատուհասից արժանի ըստ իւրում ամպարըշտութեան չընկալաւ, այլ եւ անդստին ի ժամանակէ անտի զամս քսան եւ երիս թագաւորէ. եւ այնպէս թագաւորէ, զի ոչ ի Պոնտոս եւ ոչ ի Գամբաց

աշխարհին կամի դադարել, այլ բոս հայրենի իշխանութիւնն ելեալ, անդր իսկ ուստի ձեզ հարկ եւ սակ ելանէ, այս ինքն է յՄսիացւոց աշխարհն մտեալ տակաւին կենդանի կայ եւ զարեւ տեսանէ:

Այլ Որատիոս ցուցանէ նոյնպէս թէ դարնայնոյ ժամանակ եկեալ հասեալ է:

Առձանի ձմեռն, իբրեւ դայ հասանէ գարուն եւ սիբ քաղցրաշունչ շնչէ. նաւք ի ցամաքէ ի ծով անդր մխին, ոչ եւս ի դադարս իւրեանց որջացեալ կան անասունք, եւ ոչ հերկահան ջեռնու առ հրով եւ ոչ մարդադեափնք սպիտակացեալ են եղեմամբ: Պայ Մսողիկ եւ ընդ նմա պարաւորք, մինչդեռ լուսնակայ է. գան յարին ի նոսա եւ շնորհք վայելչութեան, եւ ոտիւքն զերկիր դոփեն, մինչ Վիկղոպայքն եւ Վուղկանոս զհնոցսն բորոզեալ տոչորիցեն:

Դ. Ա ձեռն Պատճառաց լինի աճեցուցանել եթէ զպատճառս վասն որոց եղեն ինչ, ցուցցուք. որպէս Վիկերոն ցուցանէ զպատճառս իւրոյ աքսորելոյն թէ այն ոչ իւրովք յանցուածովք, այլ ի նախանձուէ դիպեցաւ:

Ոմանք, ասէ, պատշպանել ինձ չկամին, զի կասկածէին իմն թէ գուցէ վիշտս ինչ անտի կրիցեն. կէսք հին ինչ ատելութեամբ գրգռէին ընդ իս. այլք խանտային, կիսոց այնպէս իմն թուէր թէ խոչընդակն իցեմ նոցա. այլք վասն զի ոխս ի մտի ունէին, կամին վրէժս առնուլ. գոյին եւս ոմանք, որ զքաղաքն ի գլխովին ատէին եւ չկամին հաստատել եւ ի խաղաղութեան լինել լաւաց. ի պատճառս այսպիսի եւ այսչափ ազգի ազգի իրաց, խնդրէին զիս:

Իսկ յարդեանց այս ինքն է ի գործոց աճեցուցանէ նոյն զյոռութիւն ցանկութեան յազգի ազգի շարեաց որ անտի սովոր են ծնանել:

Արքիտաս սովոր էր ասել թէ չիք ցաւ այնպէս ժանտազործ որպէս մարմնոց ցանկութիւն. զի անյազ ցանկութեանն տենչանք յախուռն եւ ընդարձակե-

բասանակ ի զեղխութիւն գրգռէ. անտի աշխարհի մասն լինել, անտի քաղաքաց աւերել, անտի գաղտ ի թշնամիս անդր բանազնաց լինել. շէք սճիր ինչ կամ եղեռն շարեաց, յոր շտացէ մտաբերել ցանկութիւն:

Ի Հակառակացն աճեցուցանել է, յորժամ ըզմեծութիւն կամ զվատթարութիւն իրիք ցուցանեմք ի նորին հակառակէն. ուստի Վիկերոն զինայութեան օգուտ ցուցանէ ի նորին հակառակէն, այս ինքն է ի զեղխութենէ:

Առնու նա յիւրոց կալուածոց վեցհարեւր դահեկան, ես հարեւր յիմոցն. նմա որ սկեզօծ ձեղրենս ի գեղս եւ յատակս մարմարեայս գործիցէ, եւ նշանակաց, տախտակաց, կահի կազմածոց եւ պատմութանի ցանկանայցէ սաստիկս անհնարին, ոչ միայն ի ծախսն սակաւ են այնպիսի շահք, այլ եւ առ վաշխսն: Իսկ յիմմէ սակաւիկ թողակէն, ի բաց թօթափեալ զցանկութեան ծախսն, եւ յաւելուցու եւս ինչ: Արդ ո՞քան զո մեծատուն իցէ, որում պակասէն արդեւք, թէ որում յաւելու. որ կարօտանայցէն, թէ որ առաւելեալ իցէ. նա՞ արդեւք, զոր քանզի աւելի ստացուածք են, յայն աղազս եւ բազում ինչ խնդրիցէ առ դարման անձին տանելոյ, եթէ որ ինքնին անձինն բաւական լինիցի:

Չ. Աճեցուցանել նմանութեամբք, համեմատութեամբք եւ օրինակօք լինի, յորժամ բերցուք նմանութիւնս եւ օրինակս: Արպէս Վիկերոն նմանութեամբ ցուցանէ թէ նմա մանաւանդ անկ է Սուրենեայ պաշտպան լինել, որ բղեշխն կալ հանդերձեալ էր:

Եթէ որք միանգամ ի ծովէ ի նաւահանգիստ անդր հասանիցեն, նոցա որ նաւարկելն կամիցին, սովոր են մեծաւ փութով պատուիրել եւ ցուցանել զհողմոց եւ զմրկաց հանգամանս եւ զհինից, եւ զվայրաց պատմել նոցա, զի բնածին իմն բարք են օգնա-

կան լինել այնոցիկ որ ի նոյն վիշտս, որոց մեքն տա-
րաք, միջամուխ լինիցին. ապա եւ ինձ որ յետ այն-
չափ ծովածուփն եւ արեկոծ լինելոյ զցամաք տեսի,
որպիսի միտս, զոր խնամն չիցէ պարտ ունել վասն
առնս, որ որպէս տեսանեմ, բազում կարածմեռն
ձմերայնոյ եւ մրրկաց ժուժկալել հանդերձեալ է:

Նոյնպէս եւ Սենեկայ նմանութեամբ ցուցանէ
թէ մարդիկ ոչ զմեծութիւնսն, այլ զբարութիւն
նկատել պարտին:

Բարի եւ գեղեցիկ կոչի նաւ, ոչ որ երփներփն
գունովք նկարեալ իցէ, եւ որոյ խելք յոսկւոյ կամ
յարծաթոյ իցեն, այլ որ հաստատուն իցէ եւ արող,
եւ տակայցէ հողմոց եւ մրրկաց: Սուսեր բարւոք կոչի,
ոչ որոյ կամարն ոսկեղօծ իցէ, եւ պատեանք ընդե-
լուղեալք ակամբք պատուականօք, այլ որ հասուն է
եւ պողովատիկ: Աւ կանոն ոչ որ գեղեցիկ իցէ, այլ
որ հարթն եւ ուղիղ է խնդրի: Ապա եւ մարդոյ չէ
ինչ մեծ, թէ որչափ արտս եւ կալուածս առնուցու,
եւ քանի այնք իցեն որ նմա ողջոյն տացեն, այլ թէ
որչափ բարեբարոյ իցէ եւ զգաստ:

Աւ Վիկերոն օրինակաւ արանց աւազաց հո-
մայեցոց ցուցանէ թէ չէ ինչ պատուական մեծու-
թիւն եւ փառաւորութիւն: Աւ արդ, ասէ, սակաւ
ինչ հաճոյս արդեւք դիցն զՆումայ Պոմպիլեայ զո-
հարանսն եւ զխեցեղէն թակոյկան, քան զայլոց նկա-
րէն տաշտան համարիցիք: . . . Օ՞ինչ ժուժկալու-
թիւն էր Փաբրիկիոսի, զինչ կերակրոցն նուազութիւն
Վորիոսի: Օ՞ինչ երկոքին պատուարքն պունիկեան
մարտին Վն. եւ Պ. Սկիպիոնքն, որ զՎարքեդոնացոց
զյարձակումն իւրեանց զօրականօք ի մէջ առեալ
փակէին: Օ՞ինչ Վիբրիկանոսն մեծ, զինչ կրսերն.
զինչ ի աիս նոցա Վատոն. զինչ այլքն անհամարք
անթիւք, զի ընտանի օրինակօք առատանամք:

27. Բայց զի յայտնագոյն եւս լիցի որ ինչ ցայժ-
մըս ասացաւ վասն ստուարացուցանելոյ, բերցուք

օրինակ ինչ ի կիկերոնէ, թէ զհարգ ստուարացու-
 ցանելով յօրինէ զգովութիւն բարեկամութեան :
 Որոշումն . Ոչ այլ ինչ է, ասէ, բարեկամութիւն,
 բայց ամենայն իրաց աստուածեղինաց եւ մարդկե-
 ղինաց սերտ եւ անձուկ միաբանութիւն : Չգիտեմ,
 բաց յիմաստութենէ, իցէ՞ արդեւք ազնուագոյն ինչ
 ի զիցն մարդկան շնորհեալ քան զբարեկամութիւն :
 Ի համար արկեալ . Ոմանք զմեծութիւնս նախամե-
 ծար համարին, այլք զառողջութիւն, կէսք զիշխա-
 նութիւնս, այլք զպատիւս, բազումք եւս զփափկու-
 թիւն : Ի այց սա անասնոց է . իսկ վերագոյնքն ան-
 կածք եւ անյայտք . որ ոչ այնչափ մերովք խորհրդ-
 ոովք յաջողիցին, որչափ ի բախտին յանդգնութենէ :
 Պատճառք . Որք միանգամ ի քաջութեան յառա-
 քինութեան զգլխաւորն բարութիւն իմանայցեն, ար-
 դարեւ այնպիսիքն միտս ազնուականս ունին . եւ արգ-
 առաքինութիւն ինքն զլխովին է որ զբարեկամու-
 թիւն ծնանի եւ պինդ ունի . զի առանց առաքինու-
 թեան բնաւ չէ իսկ մարթ թէ կայցէ բարեկամութիւն :
 Օրինակք . Ան առ այսր զարս լաւս եւ առաքինիս,
 որ իցենն իսկ արդարեւ առաքինիք, տեսցուք, զՊաւ-
 ղոս, զԼատոն, զԿաղոս, զՈկիպիոն, զՓիղոս եւ զնո-
 ցին նմանս . որ հասարակաց կենօքս շատանային : Ա-
 պա ի մէջ այնպիսի որերոյ այնչափ պատուական էր
 բարեկամութիւն, որչափ ասել հազիւ դք թէ բաւիցէ :
 Արդիւնք . Ասիս ո՞ այն իցէ, որպէս ասէ Աննիոս, որ
 ոչ ի սէր բարեկամին հանդուցեալ դադարիցէ : Օ ի՞նչ
 քաղցրագոյն կայցէ, որպէս ունել զոք ընդ որում
 իշխիցես այնպէս խօսել, որպէս ընդ քո իսկ անձինդ :
 Օ ի՞նչ շահ, որ օգուտ կայցէ ի յաջողութիւնս, ե-
 թէ չունիցիս զոք, որ ընդ քեզ զոք ուրախ լինիցի :
 Իսկ վշտաց համբերել ապաքէն դժուարին իցէ ա-
 ռանց այնր, որ այնց քան զքեզ առաւել տալովու-
 թեամբ տանիցի :

Ի Հակառակէն. Այլ ամենայն իրք որ խնդրին, իւրաքանչիւր միում միում իմիք առանձինն պիտանացու են. մեծութիւնք զի նոքօք վարիցի ոք. արարք զի ի դարմանս լինիցին, պատիւք զովութեան վասն են, փափկութիւնք զի ուրախ լինիցիս, առողջութիւն զի անցաւ իցես, եւ մարմին զիւր պաշտօն կատարիցէ. այլ բարեկամութիւն զբազում ինչ իրս ունի. եւ ամենայն ուրեք, կազմ եւ պատրաստ է. չիք տեղի ուր ոչ գտանիցի, ոչ տարածամ ինչ է եւ ոչ տալովալի երբեք: Օ ի եթէ զբարեկամութեան զօդ ի բնութենէ բառնայցես, ոչ տուն ինչ ուրեք եւ ոչ քաղաք կարիցեն կալ յակաստանի, եւ ոչ անդոց մշակութիւն կայցէ մնայցէ: Ապա եթէ տակաւին չեկն յայտ թէ որչափ ինչ զօրութիւն բարեկամութեան եւ միաբանութեան իցէ, յերկպառակութեանց եւ ի կռուոց մարթի ի վերայ հասանել: Օ ի որ տուն ուրեք այնպէս հաստատուն, որ քաղաք այնչափ ամուր կայցէ, որում չիցէ մարթ յատելութեանց եւ յերկպառակութեանց հարթյատակ լինել: Ա կայութիւն. Ազրիդենաինոս ոմն, այր խրատեալ եւ իմաստուն, երզս յունականս, ասեն, գրեաց, թէ որ ինչ ի բնութեան եւ ի բովանդակ աշխարհի հաստատեալ կայցեն, եւ շարժիցին, բարեկամութիւն խառնեալ, եւ զերկպառակութիւն ջրեալ են: Աւ զայս ամենայն մահկանացուք եւ իմանան, եւ արդեամբք իսկ զայնր զչափ առնուն: Այսու ամենայնիւ մարթի ի վերայ հասանել թէ որչափ բարութիւնք ի բարեկամութեան մթերեալ կայցեն:

Բ. ԱՃԵՑՈՒՑԱՆԵԼ ԶԲԱՆՍ

27. Աճեցուցանել զբանս մարթէ՛ Նախ փոփոխական բանիւք, Արկրորդ աւելեաց բանիւք, Արբորդ անուանակից բանիւք, Չորբորդ խիստ եւ սաստիկ բանիւք, Հինգերորդ շրջանակաւ բանիւք, Վեցերորդ կրկնելով:

Ը. Նախ լինի աճեցուցանել զբանս փոփոխական բանիւք, այս ինքն է այնպիսի բանիւք որ ի բնէ զայլ ինչ նշանակեն. որպէս եթէ ասիցես. Յասամբ բորբոքել, Ոտնառել ի մոլորութիւն, Մթազգած լինել, ուր բորբոքելն, որ զհրոյ ասի, եւ ոտնառելն որ է զթել սոսամբ, ասացեալ զմոլորութենէ, եւ մթազգածն լինել, այս ինքն է մթով զգենուլ, զգինույ, առաւելուն եւ աճեցուցանեն զբանսն, քան թէ լոկ ասէին, ցասնուլ, մոլորել, սխալակել:

Ի. Աւելեաց բանք են, որով առաւել քան որչափ է ինչ ցուցանի. ուստի ասի անթիւ զօրօք, անհամար դնդաւ, եւ զճառոց թէ երկնաբերձ են, կամ զճխոյ թէ յերկին կցի, ուր այս բանք անթիւ, անհամար, երկնաբերձ, աւելի իմն ասացեալ են եւ աճեցուցեալ զչափ իրացն:

Գ. Անուանակից բանիւք եւս լինի աճեցուցանել զբան ինչ, այս ինքն է յորժամ փոխանակ միոյ բանի բազում համանուն բանք դնին, որպէս. Ղթողում, շառնում յանձն, չտամ թոյլ. Վանդէր աւերէր, Պատեցին պաշարեցին:

Դ. Խիտ եւ սաստիկ բանիւք աճեցուցանել զբանն է, յորժամ սաստիկ բանք փոխանակ նուազագունացն ի կիր արկանիցին. որպէս Աիկերոն զԱերեայ ասէ. Աչ գող, այլ յափշտակիչ. ոչ տաճարակողոպուտ, այլ թշնամի սրբութեան եւ կրօնից, ոչ սիկարեան, այլ անազորոյն դահիճ: Նոյնպէս սաստիկ եւս է ասել, դառնադառն մահ, շարալլուկ լինել, կտտամահ սպանանել, քան դառն մահ, լկել, կտտել, որովք եւ միտք եւ բանք միանդամայն աճեն:

Ե. Ըջանակաւ ասացուածով լինի աճեցուցանել, յորժամ երկայն բանից շրջանօք ասիցեմք, զոր սակաւութեամբ ասել մարթ էր. որպէս Օրն տարածամեր եւ մօտ առ երեկս կարճատեր. Աղիչ. փոխանակ ասելոյ երեկոյանայր:

9. Կրկնելով եւս աճեն բանք, յորժամ կամ առ ի շարժել զոր ի դուժ կամ ի արամութիւն կրկնին եւ երեքինին ի սկզբան կամ ի միջոցին եւ կամ ի կատարածին: Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշիսի, տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սթինկանն:

Այս ամենայն համառօտիւք ասացան վասն աճեցուցանելոյ, բայց զրեթէ ամենայն իսկ կերպարանք եւ ձեւք որ յերրորդ ճառս կան, նոյնպէս ի կիր արկանին, մանաւանդ Նկարագիր, Գոչումն, Երեսս առնուլ, Կարձուած եւ Հարցուած:

ՁԻՆՁ ԶԳՈՒՇՈՒԹԻՒՆ ՅԱՃԵՑՈՒՑԱՆԵԼ ՊԻՏՈՅ ԻՑԷ


28. Արկու են բիծք, կամ մանաւանդ խութք յորս անկանին մանկունք յորժամ զբան ինչ աճեցուցանիցեն: Ասխ այն զի զմանր մանր եւ զչնչին ինչ իրս յիշատակեն, որ բիծ մեծ է յանձն ճարտարասօսի: Օ՛ի որպէս խրատ տայ Աիկերոն յաճեցուցանելն չէ արժան մանրակրկիտ առնել. զի այս տեղի զկարեւորագոյնան եւ զմեծամեծան խնդրէ մանաւանդ, քան զսակաւս եւ զմանունս:

Արկրորդ ի կիտէն զոր առաջի եղին, հեռանան, եւ օտարանան ի բուն մտացն, քան զոր չիք ինչ անպատեհ, զի բան անկարգ արձակերասանակ ձիոյ նման է, որ եւ զանձն եւ զհեծեալն ի վախէ արկանէ:

Արկրորդ խոչընդոտն մանկանց է, յորժամ առ ի ընուլ զթիւ ճառին. բանս դատարկս, եւ ունայն հնչմունս յաւելուն: Ամի իրի չէ պարտ ասել ինչ, որ ոչ արգոյ երեւեցուցէ զճառն, եւ ոչ զմիտան աճեցուցէ. զի որպէս Որատիոս ասէ, եթե կայցեն միտք կազմ եւ պատրաստ, բարբառք ինքնին ի վեր երեւին:

Բայց եւ զայն խոստովան լինել պարտ է, թէ լաւ է մանկաւոյ յորդութիւն քան նուազութիւն. զյորդն եւ զլին մարթ է ցածուցանել, եւ առատու-

Թեանն չափ դնել, կրթութեամբ եւ ուսմամբ, զի
 դիւրին է զաւելորդն բառնալ, քան նորոգ յաւելուլ.
 եւ յերկուց ծայրից անչափն յառաքինութիւն մերձ է
 ասէ Ն. քիտտուեղէս: Օգոյսչափ ինչ վասն յառաջա-
 դոյն պատրաստելոյ շատ համարեալ, սկիզբն արաս-
 ցուք բուն ճարտարախօսութեանն կանոնաց:



ՆԵՐՏԵՐԵԽ ՕՍՈՒԹԵԱՆ

ԿԵՐՊԵՐԵՆ Վ

ԱՆԵՐԳՈՅՆ (9) ասացեալ է մեր, թէ կերպարանք ճարտարախօսութեան են գոյնքն որովք իրքն որ ճառելոց են, դան ի զարդ եւ ի կերպարանս, եւ թէ վասն սոցին իրաց շորք ինչ պիտոյ են Վիւտ, ճարտարաբանութիւն, Յօրինուած եւ զճառսն պատմել զսոցանէ կայ մեզ առաջի յառաջնում զպրութեանս կարգաւ ճառել:

Չորեքին մասունքս այսոքիկ ի միասին նպաստ լինելոց են ի կատարել կամ ի բովանդակել զճառս. եւ իւրաքանչիւր այնպէս, որպէս ճարտարապետին իւր արուեստն, զի զոր օրինակ որ շինէն, պարտի նախ ի մտի ունել զհանգամանս շինուածոյն, ապա պարտի ատաղձս գտանել, ապա զարդարել, գունել եւ արծնել, եւ յետ այնորիկ յանդիման կացուցանել տեառնն, նոյնպէս եւ ճարտարախօսն պարտի զհանգամանս եւ զկարգ ճառիցն գիտել, զոր ուսուցանիցէ Յօրինուածն, ապա զնիւթն հնարել որ Վիւտն իսկ է, ապա զարդարել որ ճարտարաբանութեան է, որ զպէսպէս ձեւոց հանգամանս ուսուցանէ, եւ յետ այնորիկ ապա այլոց եւս պատմել զճառսն: Այս է աւասիկ գործ շորից մասանցս այսոցիկ, որովք եւ լինիցի հասանել ի կատարած անդր ճարտարախօսութեան, որ որպէս ասացաք (11) ոչ այլ ինչ է, բայց հաւանեցուցանել. եւ զի երեք ինչ պիտոյ է ի հաւանեցուցանել, այս ինքն է ուսուցանել, զուարճացուցանել եւ յորդորել, երկուքումք առաջնովքն, որ են Յօրինուած եւ Վիւտ, լինի ուսուցա-

նել, զի սոքօք յանդիման կացուցանին իրացն պատ-
ճառք. երրորդն, որ է ճարտարարանութիւն տայ
զուարճացուցանել, իսկ չորրորդն այս ինքն է պատ-
մել զճառան, յորդորէ եւ շարժէ, զի տայ պատկա-
ռեցուցանել:

Ա ՈՒ Ա Ջ Ի Ն Ղ Ա ՈՒ

Յ Օ Ր Ի Ն ՈՒ Ա Ծ

29. ՅՕՐԻՆՈՒԱԾ է օրինօք զճառան կարգել. որ
այնպէս կարելոր է առ հաւանեցուցանել, որպէս
կրթութիւն զօրաց առ ի կռուել եւ յաղթել. կամ
որպէս ի մարդկեղէն մարմնի անդամք առ ի գեղեց-
կութիւն եւ ի պատշաճութիւն. կամ որպէս ի շի-
նուածս քարինքն եւ շաղախ ի պէտս որմնց են. ուս-
տի ասաց Որատիոս յարուեստի վիպասանութեան,
թէ իւրաքանչիւր տեղի ունիցի զիւր ելս, որպէս եւ
վայել է:

Օ ի ուր կարգ է, մտադիւրադոյնս լսեն, եւ զոր
լսենն դիւրաւ ի միտ առնուն, եւ զորս առնունն ի
միտ, հանապաղ յիշատակեն իսկ նորին հակառակն
ամենեւին անկարգ եւ անկերպարան է, կամ որպէս
նոյն այր ասէ, իբրեւ զերազս տապաղելոց են, կամ
որպէս մարմին ինչ որոյ ոչ ոտն յայտ իցէ եւ ոչ զլուխ:

Եւ որով հետեւ Յօրինուածք վասն բովանդակ
ճառին են, նախ զայն ասացուք թէ զինչ ճառն ի-
ցէ, եւ ապա զնորին մասանց:

Ա. Թ. Է. Զ Ի Ն 2 Ի Ց Է Ճ Ա ՈՒ Ն

30. ՂՂառ անուանեալ կոչին ամենայն բանք եւ
խօսք մարդկան. բայց աստ յորժամ ճառս ասիցեմք,
իմանամք զայնպիսի բանս, որ այնպէս ճարտարու-
թեամբ եւ հնարիւք յօրինեալ են, զի պատճառօք
եւ յանդիմանութեամբք, եւ զլսողսն յորդորելով,
տացեն հաւատալ իմիք կամ առնել ինչ, եւ կամ

զերկոսին միանգամայն: Որպէս որ պատժապարտին առաջի դատաւորաց պաշտպանէ, զդատաւորսն ճառիւքն յորդորել ջանայ զի եւ հաւատայցեն թէ վասն որոյ ամբաստանութիւնն է, անպարտ է. եւ միանգամայն առնիցեն զի անմեղն պարտաւոր արձակիցի: Սամ այր ճարտարախօս ճառ արկեալ զքրիստոնէական կրօնից յօժարեցուցանել փութայ զլսողսն եւ ի հաւատալ թէ քրիստոնէից կրօնք աստուածեղէն են, եւ մեզ կեցուցիչ, եւ ի դործել եւս, այս ինքն է զի հանգոյն եւ համեմատ քրիստոնէական կրօնիցն վարս ընծայեցուցեն:

Բ. ԹԷ ՈՐՉԱՓ ԻՆՉ ՄԱՍՈՒՆՔ ԻՑԵՆ ՃԱՌԻՆ

31. Որովհետեւ, որպէս բովանդակ ճարտարախօսութեան, նոյնպէս եւ ճառից կէտ հաւանեցուցանել է, բնութիւն իսկ ուսուցանէ թէ շորք մասունք պարտին լինել ճառին, Յառաջաբան, Յառաջադրութիւն, Հաստատութիւն, եւ Վերջին բանք: Օ ի յորժամ խնդրել ինչ ոք յուսեքէ կամիցի, նախ զմիտս նորա յանկուցանել խնդրէ, որ Յառաջաբանն իսկ է, ապա զայն ինչ զոր ցանկայ, առաջի գնէ, որ է Յառաջադրութիւն, յետ այնորիկ գուն ի վերայ դործէ հաստատել զայն յանդիմանութեամբք, որ այն իսկ է զոր Հաստատութիւնն կոչեցաք, եւ յետոյ ապա ջանայ յորդորել զմիտս նորա զհետ գալ եւ կատարել զխնդիրն որ են Վերջին բանք: Օ շորեցունց աստի կարգաւ ասասցուք:

Ա Գ Լ Ո Ւ Ի

ՅԱՌԱՋԱԲԱՆ

32. ՅԱՌԱՋԱԲԱՆ սկիզբն ճառին է, որ զմիտս լսողացն պատրաստէ լսել մտադեր բանիցն որ ասելոց են: Սա կարեւոր յոյժ է, եւ բազում անգամ եւք իրացն զյաջողութենէ յառաջաբանութեանն կախեալ կան. նմին իրի իսկ յատենի Վրիսպագին

արդելեալ էր առնել յառաջաբանութիւն , զի մի արուեստագիտութիւն արդարութեան յաղթիցէ :

Յառաջաբանութեան կրկին ազգք են , Յանկարծն եւ Օրինօք :

Յանկարծ այն կոչի , յորժամ ճարտարախօսն առանց յառաջագոյն զմիտս պատրաստելոյ տազնապաւ սաստիկ բանիւք սկիզբն առնէ : Այսպիսի է նշանաւոր սկիզբն Աիկերոնի յառաջնում ճառին ի Աատիղինայ . Մինչեւ ցերբ զեղծանիցիս , Աատիղինայ , մերով Համբերութեամբս , այլովքն Հանդերձ :

Իսկ օրինօք այն , որով լսողքն յայլ եւս մնացեալ բանն պատրաստագոյնք եւ յորդորագոյնք լինին . այս է բուն եւ ճշմարիտ յառաջաբանութիւն :

Օրինօքն անուանեալ յառաջաբանութեան երկրորմբք օրինակօք մարթ է սկիզբն առնել , Համարձակ յայտնապէս , եւ Մեղմով իմն :

Յայտնապէս յայնժամ , յորժամ իրքն չեն ինչ զիճեցուցանելոց կամ զայրազնելոց զլսողն . որպէս Աիկերոն իրբեւ վասն Պոմպէի խօսել կամեր , Համարձակութեամբ սկսաւ ասել . Նախ ընդ այն իսկ մանաւանդ թուի ինձ թէ ուրախ լինել եւ խնդալ պարտիմ , զի յայսպիսի նորանշան իրս այնպիսի ինչ բանս խօսել առաջի կայ ինձ , ընդ որ ոչ որ դժկամակ ինչ լինել կամ զչարել մարթի : Օ ի զԱն . Պոմպէի զչքնաղ եւ զանդուգական առաքինութենէն ճառել կայ ինձ :

Իսկ Աայսր նմին Հակառակ իրբեւ նոցա որոց յայստամբութիւն միաբանեալ էր , պաշտպանել կամեր , ոչ իշխեաց վաղվաղակի յայտնապէս ասել , զի յանհնարին ցասման տեսանէր զատենակալն . ուստի նախ մեղմով յայտ արար թէ դատաւորաց արժան է միտս ազատս յամենայն աղմկէ եւ յոխակալութենէ ունել . ապա սկսաւ կասկած ի մտի դնել , թէ դուցէ ցասումն եւ ատելութիւն զբաւեալ ունիցին զատենակալացն միտս . եւ յետ խստովան լինելոյ թէ անհնարին եւ մեծաց պատժոց եւ պատուհասից ար-

ժանի են որ ի խակագործութիւնն մտաբերեցին, սկսաւ յայտ առնել եւ ցուցանել Հակառակ Պորկեան օրինացն թէ չէ պարտ զնոսա մահու պատժապարտ առնել:

Վոյնպէս եւ Աիկերոն զՎիզարիոս, որոյ զՎայսր նշկահեալ էր, ի սկզբան ճառիցն խոստովան եղեւ թէ պատժապարտ է. բայց հրաժարէր ամբաստան լինել զնմանէ, աղաչէր եւս զՎայսր թողուլ եւ ներել նմա. եւ իրբեւ զնա մեղմացոյց եւ ած յաղերս, անդէն ած ի վերայ թէ Վիզարիոս չէ ճշմարտիւ այնր յանցանաց վնասապարտ զորմէ ամբաստանն լիեալ էր:

Իսկ թէ ուստի զյառաջաբանն առնուլ պարտ իցէ, այն յիմաստութիւն ճարտարախօսին է ապաստան: Արբեմն ի մօտաւոր ժամանակէն եւ ի տեղւոջէն եւ ի լսողացն. երբեմն նշմարեցուցանելով ի պատմութիւն ինչ կամ ի նմանութիւն եւ այլ երբեմն ի հասարակաց տեղւոջէ, ուրէք ի հակառակաց, եւ բազում անգամ պարզուզիղ առաջի դնելով զիրսն, զորոց ի մօտոյ ասացուք:

Յառաջաբանութիւն յայնժամ բարւոք է, յորժամ Աեպհական, Խնամով, Յաճութեամբ եւ Համուտ գործիցի:

Վ. Աեպհական յայնժամ լինի, յորժամ Յառաջաբանն ընդ այլ եւս մնացեալ ճառիցն կից եւ յար իցէ, որպէս զլուխ ընդ մարմնոյ. ապա եթէ սորին հակառակն իցէ, եւ ամենայն իմիք պաշտօնէ մարթիցի, յայնժամ յիրաւի նման լինի թամբի, զոր մարթ է որոյ եւ պետ ձիոյ ի նուսն դնել:

Բ. Խնամով յայնժամ է, յորժամ ճարտարութեամբ լինին եւ իմաստուն բանիք, որպէս հմուտ ճարտարապետ, որ զգաւիթսն եւ զսնուտս մեծապայծառ յօրինեն. զի եթէ սկիզբն ճառին առանց ճարտարութեան իցէ, զանգաղազոյն եւ անյօժար առ մնացեալ բանն գտանին լսողքն: Անգէտ է, ասէ փարիոս, նաւավարն որ վաղվաղակի իրբեւ ելանիցէ

ի նաւահանդատէն, խրիցէ զնաւն: Բայց եւ անտի զգուշանալ պարտ է զի մի, որպէս բազում անգամ դէպ լինի, իսկզբանն պայծառադոյն եւ բազում ճարտարութեամբ, եւ ապա ցուրտ եւ անհամ զտանիցի. իբրեւ զլեռանն որ երկնէր եւ գոչէր առ երկունսն, եւ դոյզն մուկն ծնանէր:

Գ. Յաճութեամբն այն է, զի ճարտարախօսն ամօթով եւ պարկեշտութեամբ սկիզբն առնիցէ խօսել. որպէս Աիկերոն զԱրասոսէ ասէ թէ ամօթղած յոյժ էր, եւ ինքն Արասոս վկայէ, թէ իբրեւ սկիզբն առնէր, ամաչէր եւ դողայր. քանզի դիտէր թէ որ յանդուզն եւ յանձնապատան են, չթուին հաճոյք:

Դ. Իսկ համառօտն այն է, զի յառաջաբանութիւն այլ եւս ճառիցն համեմատ իցէ մեծութեամբ. զի ոչ փոքր մարմնոյ զլուխ հսկայի վայելէ, եւ ոչ դոյզն խցկան դրունս եւ սրահս մեծամեծս առնեն: Ապա եթէ այնպէս ինչ լիցի, ի դէպ ելանեն բանք Դիողինեայ, որ ծաղը առնէր զԱիւնդիացիս, որոց քաղաքին իւրեանց փոքու դրունս մեծամեծս արարեալ էր, եւ ասէր, Արք Աիւնդիացիք, փակեցէք զդրունսդ զի մի արտաքս ելանիցէ քաղաքդ:

Աւ ոչ դարձեալ մեծամեծ ինչ ճառից սակաւ սկիզբն արժան է. որպէս եւ ոչ մեծի տաճարի դրունք փոքունք վայելեն, եւ ոչ յաղթ ինչ մարմնոյ զլուխ փոքրիկ:

ՈՐՊԻՍԻ ՊԼՐՏԻՑԻ ԼԻՆԵԼ ՅԱՌԱՋԱՐԱՆՆ

33. Յառաջաբանութիւն այնպիսի պարտի լինել զի զլսողսն առնիցէ Բարեկամս, Մտադիրս, եւ Յօժարս:

Ե. Բարեկամս առնել չորիւք օրինակօք հնար է, Նախ ի կողմանէ ճարտարախօսին, Արկրորդ ի հակառակորդաց, Արրորդ յունկնդրաց կամ ի դատաւորաց կուսէ, Չորրորդ ի նորա իսկ թերէ, վասն որոյ ճառքն են:

Ի կողմանէ ճարտարախօսին յայնժամ, յորժամ նա պարկեշտ զանձն ընծայեցուցանիցէ, ցածուն, լաւ, իմաստուն եւ անկեղծաւոր միտս ունիցի: Սնրթի եւ, բայց դուն ուրեք եւ զգուշութեամբ, զիւր ցածութիւն, եւ զճմարտութիւն եւ զգութ առանց ամբարտաւանութեան գովել:

Արկրորդ ի հակառակորդաց կուսէ նոյնպէս մարթէ առնել բարեկամս, յորժամ կամ գովեսցուք զնոցա ճարտարութիւն եւ զիմաստութիւն, սակայն եւ զմեր իրաւունս ցուցցուք, որով զմեր աննախանձ բարս ցուցանեմք, եւ զլսողսն ի մեզ կորզեմք. եւ կամ եթէ հակառակորդացն շարութիւն յայտ իցէ, յայտնապէս կշամբեսցուք, որպէս Աիկերոն առնէ. Աաստոր, ասէ, անագորոյնն, զի մի ասացից թէ աւորէն եւ ամպարիշտ, որ եւ զիւր հաւն ի վիշտս մահու հասոյց, զորոյ զճերութիւնն տածել եւ խնամել պարտ էր:

Ապա եթէ հակառակորդն չիցէ անուանարկ ոք, յայնժամ դարձեալ Աիկերոնի նմանել պարտ է, որ զկատոն, քանզի անուանի էր այրն, ոչ թշնամանեաց, այլ զի զնա կասկածագոյն առնիցէ, զաղանդ Սույիկեանց, զոր եւ Աատոն ունէր, ծաղը առնել սկսաւ. եւ զայն այնպէս համով եւ վայելութեամբ, մինչեւ ի ծաղը լուծան դատաւորքն եւ ասեն, Ո՛հ, որպիսի ծաղրածու բղէշի ունիմք:

Արրորդ յանձանց դատաւորաց կամ ունկնդրաց առնին բարեկամք, եթէ ասիցէ ճարտարախօսն թէ վստահ է ի նոսա. երկրորդ անգամ յայտ առնիցէ թէ իրքն վասն որոց ինքն պնդեալ է, ի նոցա եւս օգուտ են. երրորդ զնոցա արգարութիւն, զհաւատս, զիշխանութիւն եւ զայլ եւս առաքինութիւնս գովիցէ խնամով:

Չորրորդ յանձնէ նորա վասն որոյ ճառքն են, մարթ է նոյնպէս առնել բարեկամս: Աթէ զմեծամեծ ինչ իրաց բանք իցեն, չէ ինչ դժուարին զնոսա

Հաճոյս երեւեցուցանել լսողացն, եւ այնպէս զնոսա յանկուցանել. բայց ի խոնարհազոյն ինչ իրս դժուարին է յոյժ: Բայց եւ յայնպիսի իրս բազումք բազում անգամ նշանաւորք եղեն, եւ զիւրեանց հանձար ցուցին. որպէս երբեմն Պողիկրատէս զմկունս գովեաց, եւ Ղուկիանոս զճանճս, եւ աստ ուրեմն Սաւորագիոս գրեաց զգովութիւն սկոյ եւ կաւոյ, Վազկանիոս, եւ յետոյ Պսեղոս զլու գրուատեցին, Սկազիդէր զսագոս, Պասերատիոս զոչինչն իսկ յարգել էառ, Յանոս զստուերն, եւ Հենսիոս զէշ եւ զորջիւս անգամ գովեցին:

Այլ ի սոցին նման իրս, որպէս եւ յայնս որ չեն հաճոյ լսելեաց, ճարտարութիւն մեծ պիտոյ է, որ մեղմով զմիտս լսողացն ցածուացէ եւ յանկուացէ:

Բ. Ստազիրս առնել երկոքումք մարթի, խոստմամբ եւ խնդրուածովք. խոստմամբ, յորժամ խոստանայցէ թէ զնորանշան ինչ իրաց, կամ զմեծամեծաց, կամ զպիտանեաց ճառերոց է. եւ խնդրուածովք, յորժամ խնդրիցէ զի մտազիւրութեամբ միտ գնել կամիցին: Օ երկոսին եւս միահաղոյն արար Վիկերոն. Ըզէ, ասէ, դուք որ ցայժմ լուպքդ ինձ մտադեր, նոյնպէս եւ զորս կանն եւ մնան լուիջք: Չիք ինչ յայնցանէ զոր ասելոցն եմ, որ չթուիցի արժանի դմին ժողովոյ եւ ցածութեան, ձերոյ փութոյդ եւ լսելեաց:

Գ. Իսկ յօժարս առնել երկոք իրօք մարթ է. նախ եթէ խոստանայցես թէ համառօտս հատանելոց ես, եւ կայցես ի խոստմունսդ. զի լաւ է, ասէ Վիկերոն, թէ ցանկանայցեն լսողքն այլ եւս լսել, քան եթէ ձանձրանայցեն եւ տաղակասցին: Արկրորդ նոյնպէս յօժարագոյն զորժին լսողքն եթէ համառօտիւք, յայանի առաջի գնիցես լսողացն թէ զորոց իրաց իցեն ճառքն: Արկրորդ եթէ պատմութեամբ ինչ կամ օրինակաւ սկիզբն առնիցես:

ՅԱՌԱՋԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍՈՒՆԻՔ

34. Չորք մասունք մարթին դտանել յառաջարանութեան, Բաաջի դնել, Գպատճառսն ասել, Խնդրել եւ Գհանդէս ցուցանել: Ուստի նախ առաջի դնել պարտ է զիրսն, որպէս. Չէ ոք ի ձէնջ անդէտ, ո շոմայեցիք, թէ որչափ վիշտս կրեն Վարքեդոնացիք վասն անհնարին հարկացն . . . : Ապա զպատճառսն ասէ. Գի եւ ոչ փոքր ինչ են իրքն, թէ թագչել մարթայցեն: Յեա այնորիկ խնդրէ եւ աղաչէ. Բրդ ձեզ պարտ եւ արժան է, ասէ, վասն ձերոյն անուան փառաց եւ դովութեան նուազեցուցանել ըզհարկսն: Աւ յետոյ ապա զհանդէս կամ զփորձ իրացն ցուցեալ ասէ, Գի մի առ վշտին վտանգի բանադատեսցին զորդեակսն զորս ծնանն, վաճառել ի ստրկութիւն ծառայութեան:

ԹԷ ԶԻԱՐԴ ԶՅԱՌԱՋԱԲԱՆՆ ՍԿՍԱՆԵԼ ՄԱՐԹԻՑԷ

35. Ասացուք այժմ թէ զհարդ զերկուս ազգս յառաջարանութեան զյանկարծն եւ զորինօք, զորոց վերոյն ասացաք, սկսանել մարթ իցէ:

Օյանկարծն մարթ է սկսանել նախ ազատութեամբ իւիք, որպէս. Ադի ի մտի դալ յանդիման լինել ձեզ, ով դատաւորք, ոչ զի պատճառանօք աղերս արկից, այլ զի վտահ յիրաւունսս եմ, յայտ արարից թէ չզանգիտեմ ինչ ի ձեր արդարն դատատանէ: Օի թէպէտ եւ առ շուառութեան չհամարիցի ինչ պատասխանատուութիւնս, եւ պարտաւորեցայց եւ զլիապարտ եւս եղէց, սակայն չեմ ինչ անկանելոց ի վհատութիւն, եւ չէ ինձ զեղջ թէ յանիրաւի զկեղտ անուն առեալ տարապարտուց կրիցեմ պատիժս: Ամ որպէս Ղիւիոս. շոմայեցի եմ, ասէ, թշնամի զհակառակորդն սպանի. մտադեր, որպէս ի կեանս, նոյնպէս ի մահ նրթամ. զի եւ դործել եւ կրել զդժնդակս հոմայեցուց է:

Արկրորդ աղաչելով, որպէս Զոհաստէ զորդին. Որդեակ, զմայր քո սպանանես, եթէ առնիցես ինչ լիաս եղբոր քում զի ի նմա եւ իմ կենդանութիւն թագուցեալ կայ: Անզմայուսցեն արտասուքս, որդեակ, զաղիս քո, թող յաղթեսցէ գութ՝ սրտմտութեան . . . :

Արրորդ կշտամբելով եւ սաստիւ, որպէս զօրաւար ցզօրն ասէ. Գինչ, զօրականքդ, որ ցայժմ առաքինիդ էիք, եւ արդ իմն յուացայք: Աշխարհն եւ ազդականք, իշխանն, երկիր եւ երկինք անզամ յամօթ եղեն, եւ խնդրեսցեն վրէժս զվատութեան. ոչ ապաքէն այնչափ եւ այնպիսի նշանաւոր յաղթութեանցն մոռացօնս առնիցէ այժմնն ձեր յետս կալ եւ ապտամբել. հասկա դարձարուք ի թշնամիս անդր, հասէք ի վերայ, եւ անհնարին կտորածով զպսակն ձեզ զանմահութեանն ի գլուխ դնիցէք:

Զորրորդ արանջելով, որպէս քաղաք որ վասն հեռի լինելոյ իշխանին, քանքատիցէ եւ հեծիցէ. Մինչեւ ցերբ ոչ խանդաղատեսցիս ընդ մեր սուգս, իշխանդ, մինչեւ ցերբ կայցես մնայցես յօտարութեան, եւ զայլոց քաղաքս, քան զքոյն, որ կղկղաթ կաթողի է զքէն, նախամեծար համարիցիս:

Մինգերորդ ստուարացուցանելով, որպէս Ղաբեհ որ հանդերձեալ էր երրորդ անզամ տալ պատերազմ, ասէ. Զետ այնչափ եւ այնպիսի վիշտս վշտանալոյ, ո զօրականք, զնոյն նիզակ միւսանդամ ի նոյն դարձուցանել, ոչ միայն օգուտ իցէ, այլ եւ կարելոր. սոյն սա է գլուխ պատերազմի, նոյն կեանք եւ փրկութիւն, եւ ազատութեան ճանապարհ:

Անցերորդ արգահատութեամբ. այսպէս Փիղիպպոս թագաւոր ի մեջ որդւոցն ցՊերսեւս որ դատախազ էր եւ ցՂեմետրիոս պարտաւոր հօրն սպանութեան, ասէ. Մը այս չար եւ որ ոգի անողորմ ետ ինձ ի ձերում միջն դատաւոր կալ, դու ամբաստան ես զեղբօրեդ, եւ դու լիասապարտ. երկոքին ի բիծ եւ

յամօթ եւ ի խայտառականս էք ինձ. այր զընկեր
կէճանէ, որպիսի՞ զեղջ շիցէ այդ ինձ, ո որդեակք:

Աւ միանգամայն իսկ գոչմամբ, որպէս. Ո զօրա-
կանք, երանելի էք, բախտաւոր էք . . . :

Իսկ օրինօքն յառաջարանութեան մարթ է սկիզբն
առնել նախ ի կարծեաց նոցա առ որոց խօսիմքն, զի
կարծեցուցեալ թէ մէք ըստ նոցա մտաց զիջանիմք,
զնոսա ի մեզ յանկուցանեմք, որպէս եթէ ի պատե-
րազմ հաւանեցուցանելոց իցես զարո որ գոռ պատերազ-
մօղք իցեն, սկիզբն առնիջիր գովել զմարտս պատե-
րազմաց: Ապա եթէ հակառակ կարծիս ունիցին, պարտ
է խնամով զայն ի մտաց նոցա բառնալ, ցուցանելով
զվնասն որ անտի լինելոց է, եւ զօգուտն որ աստի:

Արկրորդ բաժանելով, յորժամ զբազում նշա-
նաւոր իրս իրիք ցուցեալ, զմին կամ զոմանս ընտրի-
ցեմք, որ առաւել ի գովութիւնս լինի, որպէս. Աչ յա-
նիրաւ ինչ զչոտմ քաղաք մայր արանց անուանեաց
կոչիցեն, որ եւ քաջութեան եւ առաքինութեան
տաճար եւ պաղատն համարի: Աորին իրաւացի գո-
վութիւնք ի վարանս արկանեն զիս ասել ինչ զնմա-
նէ, զի բազում ինչ է զորոց ասելն կայ առաջի:
Օ սկիզբն արդեւք ասացից որ աստուածեղէն իմն է.
միթէ զճերակուտի՞ն մեծութիւն, թերեւս զյօրի-
նուածս շինուածոցն, կամ զմեծամեծ ձաղութիւնսն,
զի միանգամայն իսկ ասել չոտմ քաղաք զլուխ եւ
զշտոյ եւ տիկին եւ հրաշակերտ իմն է աշխարհի:

Արրորդ ի պէսպէս մերձաւոր իրաց, ուստի մարթ
է յանձնէ հակառակորդին սկսանել, ընդ որում գըր-
գոութեամբ գնան. կամ յանձնէ ճարտարախօսին,
որ զամենայն շար կարծիս յանձնէ մերկանայցէ, եւ
զկասկածն բառնայցէ. կամ ի ժամանակէն որ ի դէպ
եւ պատեհ է. եւ կամ ի տեղոջէն որ վասն մեծու-
թեանն եւ փառաւորութեան գովի. եւ կամ յայլոց
նոյնպիսեաց. օրինակ լինիցի քեզ ճառն որ վասն Սի-
ղանի է, ուր Աիկերոն սկիզբն առնէ խօսել ի ժամէն

եւ ի նորանշան օրինակէ դատաստանայն, զի սպա-
ռազէնք արտաքոյ շուրջ կային :

Չորրորդ յերեւելի ինչ խնդրոց, որպէս Աիկե-
րոն ճառիցն որ զգիւտէ եւ, այսպէս սկիզբն առնէ.
Բազում անգամ եւ ստէպ, ասէ, զայս ինչ խորհե-
ցայ ի մտի իմում, թէ բարւոյ իմիք արդեւք եթէ
մանաւանդ շարեաց պատճառք լինիցի մարդկան եւ
քաղաքաց ճարտարաբանն խօսողութիւն, եւ անշափ
փոյթ ճարտարախօսութեան : Օ ի իբրեւ եւ զմեր եւ
զքաղաքին վատթարութիւն նկատեմ մտօք, եւ զմե-
ծամեծ քաղաքաց զվիշտ վտանգին զմտաւ ածիցեմ,
դտանեմ եթէ մանաւանդ ի ձեռն բանիբուն մարդկան
բազում վիշտք եկին հասին. բայց իբրեւ զնեմ ի մտի
ընդ հին ինչ գիրս յիշատակարանաց անցանել, զոր մէք
առ հնութեանն չյիշատակիցեմք, ի միտ առնում թէ
ոչ միայն մտօք եւ իմաստութեամբ, այլ եւ դիւրաւ
եւս ի ձեռն ճարտարախօսութեան բազում քաղաքք
կանգնեցան, մարտք եւ պատերազմունք ցածեան եւ
սերտ միաբանութիւնք եւ բարեկամութիւն սրբու-
թեան յօրինեալ յօդեցան : Իբրեւ զայս այսպէս ընդ-
երկար զմտաւ ածիցեմ, ինքնին դամ յայնպիսի միտս
եւ յայնպիսի ինչ կարծիս կարծել, թէ իմաստու-
թիւն առանց ճարտարախօսութեան սակաւ ինչ օգ-
տէ քաղաքի, իսկ ճարտարախօսութիւն առանց ի-
մաստութեան մնասել բազում անգամ կարէ, այլ
օգտել ոչ երբեք :

Քինգերորդ յիրացն հակառակէ, եւ այս բա-
զում անգամ ի գովելն կամ ի պարսաւել լինի. օրի-
նակ այսպիսի ինչ ցգօրս. Յետ այնչափ ազգս եւ աշ-
խարհս ընդ մերով իշխանութեամբ նուածելոյ, սիրե-
լիք, եւ գեր ի վերոյ լինելոյ այնչափ աշխատութեանց
եւ ճգանց, շէն ինչ զարմանք եթէ սակաւիկ ինչ հանգ-
չել եւ ոգի առնալ, եւ զաշխարհ եւ զգաւառ ձեր
տեսանել յօժարիցէք, զի էք իսկ անուանի եւ նշա-
նաւոր : Աւ եթէ հաւաստեաւ ի վերայ հասանէի թէ

քաջ մարթ է մեզ այսու ամենայնիւ անկասկած վայելել, ինքնին ձեզ թելադիր լինէի եւ հաւանեցուցանէի իսկ դառնալ այդքէն ի տոհմ եւ յաշխարհ ձեր. բայց քանզի այնպիսի ինչ բռնութիւն ունի զմեզ, մինչ թշնամին ի վերայ կայ, զի եթէ ի բաց զզէնս թօթափեցուք, կորուստ մօտ առ կուրծս կայ եւ ամենեւին իսկ ի կենաց հրաժարել, ապա . . . :

Վեցերորդ նմանութեամբ, որպէս. Ո՞չ ապաքէն արդահատէիք իմն եթէ տեսանէիք զոք, որ աչօք բացօք ոչ ինչ զբնութեան կամ զճարտարութեան գործս մարթէր նկատել. որոյ մտեալ ի տունս մեծապայծառս, ուր ազգի ազգի մեծութիւնք շուրջ յորդեալ զեղուցուն, եւ անտի ի սրահ ուրեք զարմանալի քանդակօք նկարեալ, ապա ի դրախտ ինչ զանազան անուշահոտ ծաղիօք զարդարեալ, եւ ոչ զմի ինչ վասն կուրութեանն ի ցանկալեացն ոչ նշմարիցէ: Իսկ արդ սրչափ առաւել արժանի արդահատելոյ իցէ նա, որ մտօքն կոյր, այս ինքն է անուսումն եւ անզէտ իցէ, որ չիցէ ինչ հմուտ եւ տեղեակ բղբարուքն կելոյ, եւ յայնչափ տարակուսանս յորում կան մարդիկ, խորհուրդ ինչ խորհել չիցէ բաւական:

Վթներորդ ի շնմանութենէ. շեռագօտեալ եւ զփորձ իսկ առեալ գիտեմք, եթէ մարդիկ այնպէս սերտիւ ընդ անձինս հարեալ են, զի համարին այնպէս թէ շեն վայելելոց զայս, եթէ ոչ ամենեցուն եւ իւրաքանչիւր ըմբոստանայցեն եւ ոտնհար լինիցին, եւ ամբարհաւածեալ զայլս իբրեւ զխոնարհագոյնս եւ զվատանշանս արհամարհիցեն: Արդարեւ այսպիսի միտք քաջ ի բաց հեռի են յիմաստնոց եւ յառաքիներաց, որ զնոցին հակառակ գնացս գնային, յայնժամ համարէին զանձինս երանելի, յորժամ խնամակալ ումք լինէին, ընդ ամենեւին գութ ունէին . . . :

Ութերորդ յիմաստուն ինչ բանից, որպէս. Ոմն փիղխոփոս նշանաւոր երբեմն ցթագաւոր որ կաքաւեր, ասէ, ի միտ առ, թագաւոր, զՂգամեմնանի կեր-

պարանս յանձին բարձեալ բերես : Բայց քանի՞ ի դէպ մարթ է նովին զքրիստոնեայս կշտամբել . ոչ ապաքէն ամաչել եւ կորանալ պարտ է քրիստոնէի, որ ի կատարեալ նմանութիւն Նստուծոյ ցանկայ հասանել , յաղտեղութիւնս հատանել ծաղրածու գուսանաց :

Իններորդ ի պատմութեանց , որպէս . ԾԻՅԵՐՔՍԵԱՅ Պարսից թագաւորէ ասեն , թէ իբրեւ չյաջողէր ծովական պատերազմն զոր ընդ Յոյնս տայր , ոսկեղէն շղթայս ասեն , ընկէց ի ծով , որպէս թէ պատժիցէ զդիս ծովու , զի չետուն նմա յաղթութիւն : Սմին նման են անմիտք , որոց իբրեւ չյաջողիցին խորհուրդք , սկսանին մեղադիր լինել Նստուծոյ թէ չեա նոցա զոր խնդրէինն , ուր պարտ էր իւրեանց անմտութեանն մեղ դնել :

Ամ թէ վկայութեամբ հանդերձ , որպէս . Նսի թէ չիշխէր ո եւ պէտ ոք զպատկեր Նդէքսանդրի նկարել , այլ միայն Նպեղէս որ ճարտար քան զամենայն նկարիչս էր . եթէ ի թագաւոր այդպէս , սրչափ եւս առաւել յաստուծոյսն չիցէ պարտ ամենեցուն համարձակել . վասն որոյ յիրաւի ասիցէ Նստուած մարգարէին ցամպարիշտն , թէ Նու ընդէր պատմես զարդարութիւնս իմ . . . :

Տասներորդ յառասպելաց . ԾԷՐԱԿԻՂԵԱՅ ասեն վիպասանք , թէ իբրեւ կուռէր ընդ շիզրոս գազանի, որ է վիշապ , ոչ կարաց , ասեն , յաղթել , զի իբրեւ հատանէր զգլուխ մի , այլ գլուխ ընդ այնր բուսանէր , մինչեւ կոչեաց ասեն զշիւզոս մանուկ , որ հրով այրէր զհատածսն եւ այլ ոչ ելանէր : Իցէ ինչ պատշաճագոյն քան զայս առ ի ցուցանել մեղ զհանգամանս մարտին որով կարիցեմք յաղթել չարեաց ախտից : Թէպէտ եւ քան զշերակղէս առաքինի իցես , չես ձեռնհաս զմի ինչ ի չարեաց խլել , եթէ ոչ կոչիցես զմանուկն խոնարհութիւն , որ աղօթիւքն կիզուցու զչարեացն հիւթանիւթս զի մի անդրէն բուսանիցին :

Մետասաներորդ առակօք, որպէս. Յիշեմ զգեղեցիկ առասպելն Ասովպայ, թէ եղջերու տեսեալ զիւր կերպարանս ի ջուր, սկսաւ գովել զեղջիւրսն թէ բարձունք են, եւ զսրունսն արհամարհել թէ ազազունք են. իբրև հասին ի վերայ որսորդք, նա սրացաւ եմուտ յանտառախիտ մայրիս, բայց արգելեալ յեղջերացն ի բուռն անկանէր, յայնժամ սկսաւ պարսաւել զոր գովեացն, եւ գովել զոր պարսաւեացն: Օխարդ գեղեցիկ յանդիման կացուցանէ առակս բարս անմիտ մարդկան, որոց յառեալ ընդ յեղձեղունկ իրս աշխարհի, ընտրեն զբարձրութիւն եւ զպաճուճանս, եւ զաղքատութիւն եւ զառաքինութիւն խտտեն. բայց իբրև հասանիցէ ի վերայ՝ ամենեցուն որսորդն մահ, կամին խուսափել, բայց ոչ կարեն զի շողեալ պատեալ կան ի մեծութիւնսն, յայնժամ սորջանան եւ սկսանին պարսաւել զմեծութիւնս, եւ զաղքատութիւն եւ զսկիւթիւն յարգել:

Արկտասաներորդ ի զուարճացուցիչ բանից որպէս. Ղիտգենէս իմաստուն հարցեալ թէ ընդէր խարտեաշ իցէ ոսկի, որովհետեւ, ասէ, բազումք հետամուտ լինին, առ ահին գեղնեալ է: Արդարեւ խաղոյ, բայց գեղեցիկ յոյժ են բանք իմաստնոյն զբազմաց անյազն ցանկութենէ ոսկւոյ. բայց ինձ թուի թէ ոչ այնչափ տօգունի ոսկի յորոց հետամուտն լինիցին նմա, որչափ սոքա յոսկւոյն. շտեսանիցես զգէմս ազահացն դունատս, զի շողին ոսկւոյն որ զայլ ինչ ի փայլուն շքէ, զստացիսն յայլագոյնս դարձուցանէ:

ՈՐ ՁԵՒՔ Ի ՅԱՌԱՋԱԲԱՆՍ Ի ԿԻՐ ԱՐԿԱՆԻՑԻՆ

36. Այսոքիկ սովոր են լինել ձեւք յառաջաբանութեան. Արկմատութիւն, Ղնել գրել, Պաշարել, Աղատութիւն, Բաշխումն, Բնդդիմադրութիւն, Յաւպաղումն եւ Ղարձուած:

Ա. ԵՐԿՄՏՈՒԹԻՒՆ ՅԱՂԵՐՄՆ ԱՐԿԱՆԵԼ

Չեղէ երբէք երկմիտ թէ արդեւք ճոռոմ բանք իցեն պիտոյ առ աղերս արկանել վասն առն որ ամենեւին անպարտ է. բայց քանզի ի նեղ մտեալ զանձն տեսանեմ, չգիտեմ թէ զոր բանս ընտրեցից, կամ ուստի բուռն հարից, զի զիմ արամու թիւն յայտ առնիցեմ . . . :

ԵՐԿՄՏՈՒԹԻՒՆ Ի ԿՇՏԱՄԲԵԼ

Արդարեւ չեմ ինչ անգէտ, թէ քանի քաջանուն եւ հոյակապ եղերուք ցայժմ. այլ զիս նորանշան իրքս այնպէս ի վարանս արկանեն, զի ամենեւին իսկ անգիտանամ, թէ որպիսի ինչ անուամբ այժմ զձեզ կոչել պարտիցիմ. քաղաքացիս, որ զգաւառուք բարձէք թողէք. զօրակա՞նս, որ բնաւին ի փափկութիւնս հատայք. թշնամիս, որ ի բարիս եւ յարարս մեր վայելեցէք:

Բ. ԳՆԵԼ ԳՐԵԼ

Աթէ մարմինք ձեր զոյգ եւ հաւասար էին իմաստութեանն, որում հազորդ էք, քանիցս անգամ բազմանալ եւ աճել մարթ էր. հարեւր ձեռք չէին բաւականք ի գլուխ հանել զխորհուրդսդ, զորս հնարիք մենքնայել: Աւելցուք եւ զՎիկերոսն որ ցՎատինիոս ասէ. Աթէ այնպէս ինչ գնալ պարտ էր ընդ քեզ, Վատինիէ, որպէս դուդ արժանի ես, առնէի զայն ինչ, որ սոցայն հաճոյ է. զի որովհետեւ վասն յուսութեանցդ եւ պղծութեանց չգրի ինչ քսվկայութիւն, զազտ իսկ արձակէի զքեզ. զի եւ ոչ ուրուք ի սոցանէ փոյթ ինչ է ջանալ իտիտեւ զքեզ իբրեւ զհակառակորդ, կամ որպէս վկայ վաւերական հարցանել ինչ ցքեզ: Թէպէտ եւ վասն շարեայն զորս ինձ հնարեցար, բնաւի զեր ի վերոյ լինել կայ ինձ, սակայն . . . :

Գ. ՊԱՇՏԱՐԵԼ

Չէ եւ չէ իսկ մարթ, Վայսր, զմտաւ անդամ
 ածել այնպիսի ինչ, որ հրամանաց քոց հակառակ
 իցէ. եւ ոչ յայլ ինչ այնպէս մտադոյնք եմք, որպէս
 քաջութեամբ զմահ իսկ համբերել ընդ քեզ, եւ
 վասն քո: Բայց սակայն եթէ շնորհս ինչ առնել մեզ
 չհրաժարիցիս, մինչ դեռ յանձկութեան եւ ի նեղու-
 թեան եմք, սակաւիկ ինչ հանդիստ շնորհիցես մեզ
 մարդասիրութեամբդ . . . :

Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Թէպէտ եւ իբրեւ զյանդուզն դատելոց եմ, սա-
 կայն ասացից. որ վասն զի չեմ ինչ վնասակար, դա-
 տաւորք, յամենայն զըպարտութեանց որ զինէն ասի-
 ցին, յապահովս եւ յամբի զանձն համարիմ . . . :

Ե. ԲԱՇԽՈՒՄՆ

Արկու ինչ որ ի քաղաքի աստ առ բազում ինչ
 բաւական են, նոյնք ի ժամանակի աստ յայտիկ հա-
 կառակ մեզ կան, անչափ շնորհ եւ ճարտարաստու-
 թիւն. յորոց ի միտջէն, Վկուիղիէ, կասկածեմ, եւ
 ի միւսմէն երկնչիմ: Ամ իսկ ի վարանս թէ գուցէ
 շորտենսեայ ճարտարբանն խօսողութիւն խափան
 ինչ լինիցի ինձ ի ճառս արկանել. դարձեալ եւ ոչ
 փոքր ինչ երկեւզ է ինձ թէ եւ Սեքս. Նեւեայ շնորհ
 Վուինգեայ վնասիցէ: Աւ ընդ այն չէր ինչ փոյթ, թէ
 այն ամենայն առանց չափոյ է ի նոսա, եթէ գոնեայ
 չափ ինչ եւ ի մեզ դտանէր: Բայց սակայն այն իսկ
 են աղէտք, զի ես, որ չեմ կիրթ եւ մտք սակաւ ի-
 միք ձեռնհաս եմ, ընդ բանիբուն ջատագովս կշռի-
 ցիմ, եւ Պ. Վուինտոս որոյ սակաւ զօրութիւն է,
 կարողութիւն եւ ոչ մի, բարեկամք նոյնպէս նուա-
 զունք, հանդերձեալ է դուալ ընդ հակառակորդի որ
 յամենեցուն աչս է:

Զ. ԸՆԴԴԻՄԸՆԴԻՈՒԹԻՒՆ

Հանապազ եւ բազում յոյժ խորհէի ընդ միտս, Բրուտէ, թէ արդեւք հրաժարել եւ շառնուլ յանձն զոր ստէպն խնդրես, եթէ առնել եւ կատարել զժուարին եւ մեծ իմն իցէ: Օ ի նմա զոր սերտիւ սիրիցեմ, եւ զխտակ եւս իցեմ թէ մեծարոյ եւ պատուական եմ նմա, մանաւանդ որ զարդարն ժտիցէ, եւ ազնուագունաց ցանկանայցէ, խիստ իմն եւ անհնարին թուէք հրաժարել. բայց եւ առնուլ յանձն զայնչափ իրս, զոր ոչ միայն հասանել եւ ըմբռնել, այլ եւ զմտաւածել անգամ զժուարին իցէ, ոչ նմա ինչ հաշուէի, որ երկնչիցի սողիւտ լինել յիմաստնոց: Օ ի զինչ այնպէս զժուարին կայցէ, որպէս ընտրել թէ որ կերպարանք եւ կամ գունակ խօսելոյ ազնուագոյն իցէ, մինչ այնչափ ճարտարախօսք անուանիք չեն միմեանց նմանք: Արդ քանզի ստէպ իմն խնդրես, ձեռն ի գործ արարից, ոչ եթէ ակն ունիմ ի գլուխ հանել, այլ զփորձ առնուլ եւ զհանդէս տեսանել կամ է ինձ:

Է. ՅԱՊԸՂՈՒՄՆ

Ար կարին ցանկալի էր, դատաւորք, եւ որով միայն գոյր հնար զնախանձն ցածուցանել եւ զկեղտ անուռն ի դատաստանաց ի բաց սրբել, այն ոչ մարդկօրէն ինչ խորհրդով, այլ ի դիցն իմն թուի շնորհեալ ձեզ ի ժամանակի աստ յայսմիկ: Օ ի հնացեալ ինչ կարծիք են ապականիչ քաղաքին եւ մեզ իսկ վնասակար, որ ոչ միայն ի Հռոմ, այլ եւ արտաքոյ առ ամենայն ազգս, ամենեցուն բանիւք աճէ, թէ ի դատաստանաց աստի որ այժմս լինին, ոչ ումք յընչեղաց, թէպէտ եւ վնասակար եւս իցէ, հասանիցէ պարտաւոր լինել: Արդ յայսմ վշտի եւ նեղութեան, մինչդեռ պատրաստս են, եւ ջանան հնարին զնոյն նախանձ եւ ի մէջ ծերակուտին բորբոքել յանցաւոր գտեալ եւ ի դատաստան ձգձգեալ է Վ. Վերբէս, որ վարուք եւ արդեամբք ամենեցուն

իսկ վճռով դատաւարաւեալ, ընչից յաճախութեամբ արձակեալ է:

Թ. ԳԼԸՉՈՒԵԾ

Նորանշան իմն յանցանս, Վայոր, եւ յայսօր անւ լուր, Վ. Տուբերոն յիմոց ջերմոց պատմեաց մեզ, թէ Վ. Դիգարիոս յՆիքիկեցւոց աշխարհին է. եւ զայս Վ. Պանսա, այր իմաստուն եւ հանճարեղ, ապաստանեալ յընտանութիւնն զոր ընդ քեզ ունէր, համարձակեցաւ խոստովան լինել: Աւարդ զՍր հնարս հնարել պարտ իցէ չգիտեմ . . . :

Աթէ տակաւին յիշիցես, Վուրնաէ եղբայր, մեզ մինչդեռ մանուկն էաք, կարծիք ի մաի եղին. զՎ. Արասեայ, թէ ոչ աւելի ինչ ընդ ուսումն ընդելաւ, քան որչափ ինչ ի տղայութեանն մարթացաւ ուսանել. իսկ զՎ. Նատոնեայ, թէ ամենեւին յամենայն վարժից անմասն եւ անգէտ էր. բայց գոյին բազումք, որ թէպէտ եւ ոչ այնպէս ինչ զիրսն համարէին, սակայն զի զմեզ, որ ընդ փոյթ ուսանելոյ հարեալ հատեալ էաք, յուսմանէ կասեցուցեն, մտադեւր զայն ինչ զոր ասացի, զնոցանէ պատմին. զի եթէ մարդք որ առանց ուսման էին, ի բարձունս իմաստութեան եւ անհնարին ճարտարախօսութեան հասին, ի զուր ամենեւին մեր ջանս իցէ, եւ փոյթ հօր մերոյ, առն քաջի եւ իմաստնոյ, զոր ունէր ի թէքել զմեզ, անմտութիւն կարծիցի: Օրս յայնժամ, իբրեւ մանկունք տղայք, խախտել սովոր էաք ընտանի վկայիք, հարբն եւ Վ. Բիուղեւոնեաւ, որ մերձաւոր էր մեր, եւ Գ. Աիկերոնեաւ հօրեղբարբ . . . :

Այսչափ ինչ շատ համարեցուք վասն յառաջարանութեան, զոր սակաւիկ ինչ երկայնագոյն ձգեցաք, զի որովհետեւ դժուարին է եւ միանգամայն կարեւոր, օրինակօք դիւրանայցէ մանկանց ճանապարհ, զի եւ ինքեանք ըստ այնմ ուսցին զհանգամանս հնարագիւտ լինելոյ պէսպէս յառաջարանութեանց:

Յ Ա Ռ Ա Զ Ա Դ Բ ՈՒ Թ Ի Ի Ն

37. ՅԱՌԱԶԱԴԲՈՒԹԻԻՆ է համառօտիւք զնիւթ ճառին յանդիման կացուցանել. որպէս Յաժութիւն սիրելի է. Յոյժ ազնուական է ներել անիրաւութեան: Յառաջադրութեան երեք ինչ գտանին. առաջին կայ, երկրորդ Սեպհականութիւն եւ երրորդ Զօդ. կայն է զորմէ բանքն են, Սեպհականութիւն՝ որ զկայէն ասի, իսկ Զօդ՝ բանն որ զերկոսին ընդ միմեանս յօդէ: Ուստի ի սմին յառաջադրութեան, Յաժութիւն սիրելի է. կայ Յաժութիւնն է, սեպհականութիւն Սիրելին, եւ զօդ Լն որ զերկոսին կցէ:

Ասացուք նախ թէ որպէս բաժանելոց իցէ Յառաջադրութիւն եւ ապա թէ զհարդ պարտիցի լինել:

Ա. ՈՐՊԷՍ ՅԱՌԱԶԱԴԲՈՒԹԻԻՆ ԲԱԺԱՆԵԼՈՑ ԻՑԷ

38. Բաժանել է զնիւթ ճառին, զոր յառաջադրեաց ոք, յերեւելի մասունս հատանել, որպէս կիկերոն իբրեւ ասաց թէ Պարտ է տալ պատերազմ ընդ Սիհրդատայ, անդէն բաժանէ, նախ պարտ է, ասէ, ճառել թէ զինչ իցէ պատերազմս որ առաջի կայ, յետոյ ապա զնորին մեծութենէ, եւ յետ սյնորիկ վասն զօրաւարն ընտրելոյ:

Երկրից իրաց վասն է բաժանումն. նախ զի յայանի գործիցէ զճառն, երկրորդ օգնիցէ ուշոյ յիշատակի ճարտարախօսին եւ լսողացն. եւ երրորդ զի բառնայցէ զճանձրոյթն ի լսելեաց: Օքի նորոգեն եւ կազդուրեն զլսողսն իւրաքանչիւր բաժինք ճառին, զոր օրինակ կազդուրեցուցանեն զճանապարհորդն իւրաքանչիւր վանք ի ճանապարհի, կամ որպէս հանգիստ յօդի առնուլ եւ շնչել:

Բ. ԶԻԱՐԴՊԱՐՏԻՑԻ Ա՛ՆԵԼ ՅԱՌԱԶԱԴԻՈՒԹԻՒՆ

39. Յառաջադրութիւն պարտի նախ Պարզ լինել եւ մի, եւ ոչ բազմապատիկ: Պարզ եւ մի կոչի յառաջադրութիւն որ ի միոջէ պարզ բանէ յօրինեալ կայ, որպէս, Պարտ է ներել թշնամոյն:

Երկրորդ անգամ, պարտի Յայտնի լինել, զի ոչ միայն իմանայցեն որ լսենն, այլ եւ դիւրաւ իմանայցեն. որպէս, Պարտ է փախչել ի դատարկութենէ:

Երրորդ անգամ՝ Նոր իմն պարտի լինել, որ յայնժամ լինի, յորժամ գեղեցիկ իմն փոփոխմամբ եւ դարձուածով լինիցի. որպէս գեղեցիկ է ասել Չիլնասի ոք, բայց եթէ յանձնէ, քան ասել, Վարդն իւրոց չարեաց պատճառ է. նոյնպէս վայելուչ է ասել Երջանկութիւն իմն է ի թշուառութեան մեռանել, քան թէ Վահ խստագոյն է որոց յերջանկութեան են, քան որոց ի թշուառութեան. եւ ասել, Չիք ոք թշուառական, բայց որ կամիցի, վայելուչ եւս է, քան թէ ասիցի, Վարդիկ իւրեանց կամօք թշուառանան:

Իսկ յօգուտ լինել առաւել այնպիսի Յառաջադրութիւնք մարթին, որ Երդեանց են, քան որ Նկատութեան, որպէս ասէ Սենեկա: Նկատութեան կոչի Յառաջադրութիւն, որ խորհրդովք մտաց նկատի, որպէս Նշափ է թիւ անմտաց. իսկ Երդեանց այն ասի, որ գործս եւ արդիւնս ինչ ուսուցանէ, որպէս Պարտ է չարեաց բարեկամացն տանել. նա զմիտս կրթէ, եւ սա զբարս յերիւրէ:

Բաժանման այս օրէնք են: Նախ պարտի կարգաւ լինել բաժանումն, այս ինքն է որ բնութեամբ առաջին իցէ, յառաջագոյն ասիցի, եւ որ յետոյ, յետոյ. ուստի չէ օրէն ասել Պամպէոս էր խելամուտ իւրաց զինուորութեան, յաջողակ, եւ առաքինի զօրաւար. զի առաքինութիւն յառաջագոյն է քան զխելամուտութիւն իրաց զինուորութեան, եւ զյաջողութիւն:

Արքիւորդ բաժինքն պարտին զատ ինչ ի միմեանց լինել, եւ մի նոյն. որպէս եթէ ասէր ոք, Աւգոստոս սենէր խորհրդական իմաստութիւն, եւ իմաստուն խորհրդականութիւն, որ նոյն բանք են: Աւ մի դարձեալ մի բաժինն ի միւսումն գտանիցի. որպէս եթէ ասիցէ ոք, Պոմպէոս խելամուտ էր իրաց զինուորութեան, ճարտար ի բանակ հարկանել, եւ առաքինի զօրաւար. զի ճարտարութիւն բանակ հարկանելոյ գտանի ի խելամտութեան իրաց զինուորութեան:

Արքիւորդ երկուս եւ թէ աւելի եւս երիս մասունս պարտի ունել բաժանումն. զի որպէս ասացաւ, յայտնութեան վասն եւ առ ի դիւրաւ ի միտ առնոյ լինի բաժանումն, ուստի եթէ ի բազում մասունս կտորիցի, կամ որպէս փարիսս ասէ, բազում յօգուածով իցէ, մթացուցանէ մանաւանդ, եւ դժուարին առ իմանալ լինի:

Վասն պատմութեան, զոր սովորութիւն է ուրեք զինի բաժանմանն կցել, յաճախադոյնս եւ պարտադոյնս ասացաք:

Գ Գ Լ Ո Ի Խ

Հ Ա Ս Տ Ա Տ Ո Ւ Թ Ի Ի Ի Ն

40. ՀԱՍՏԱՏՈՒԹԻԻՆ այն մասն ճառին կոչի, յորում հաստատուն եւ զօրեղ պատճառք կարգին գնին առաջի:

Արկու մասունք են հաստատութեան, մի որ նոյնպէս Հաստատութիւնն կոչի, յորում զմեր բանս հաստատեմք, եւ երկրորդ խախտումն, յորում զպատճառս եւ զբանս հակառակորդացն խախտեմք եւ բնկենումք: Աստատին յայտ է թէ հաստատութիւն կարեւոր եւ երեւելի մասն է ճառին, որ զշունչ եւ զկեանս նորին պահէ, եւ բովանդակ ակնկալութիւն հաւանեցուցանելոյ ի նմանէ է եւ ի նմին կայ, ուստի

եւ յիրաւի հաւատք անուանեալ կոչի յԱրիստոտեղեայ :

Ա. ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

41. Ասացուք թէ զեարդ զբուն հաստատութիւնն առնել պարտ իցէ :

Արդ բուն հաստատութիւն վճարի Յանդիմանութեամբք եւ Յանդիման կացուցանելով : Յանդիմանութիւն է գտանել բանս առ ի հաւանեցուցանել . իսկ Յանդիմանն կացուցանել է զնոյն յանդիմանութիւն յաճախութեամբք եւ ճարտարութեամբք առաջի դնել :

Անդ յանդիմանութիւն եւ ընդ յանդիման կացուցանել այս ինչ ի միջի կայ, զի նա նիւթն է որ ճառի, եւ սա օրինակն որով ճառի : Աւստի յանդիմանութիւն ինքնին մերկ եւ տկար է, եթէ ոչ հնարիք եւ ճարտարութեամբք յանդիման կացուցանիցի, որ նորին զարդ է :

Յանդիմանութիւնք ի ներքին եւ յարտաքին անուանեալ տեղեաց խնդրին եւ գտանին, զորոց յերկրորդ ճառս (56) հաւաստեաւ ասացուք :

Իսկ կարգ որով զյանդիմանութիւնն զետեղել ի հաստատութեան պարտ իցէ, այս է : Ի հաստատուն յանդիմանութեանց զկէսս ի սկզբան դնել արժան է, զի յայնժամ մտադիւրագոյն են լսողքն . եւ զայլս ի կատարածին, զի որ յետոյն ասին, խորագոյն մտանեն . իսկ զտկարագոյնսն ի միջոցին դնել պարտ է, զի տկարութիւն նոցա զօղեալ կայցէ . զոր օրինակ զտկար զինուորսն, որ վաղվաղակի իբրեւ լիցեն զձայն փողոյն, փախստի ուշ առնիցեն, ի մէջ ճակատուն կարգել սովոր են, զի որ ինքնին չեն բաւական, բազմացն օգնականութեամբք բաւական լինիցին : Ապա եթէ երկու յանդիմանութիւնք միայն գտցին, որոց մին զօրաւոր իցէ, եւ մեւսն տկար, յայնժամ որ տկարն իցէ, զայնը զհետ եկեացէ որ զօ-

բաւորն է, բայց միշտ պարտ է ի զօրաւոր անդր ապաստան լինել :

Իսկ յանդիման կացուցանել եւթն օրինակօք լինի, որ անուանեալ կոչին շամար, շնարք, Բն-
ծայութիւն, Օրինակ, Դիդեմայ, Էկզակոյտ եւ
շանդէս :

Ը. ՀԱՄԱՐ

42. շամարն կրկին է, մին փիղիսոփայութեան եւ մեւս եւս ճարտարախօսութեան : Փիղիսոփայութեան այն է որ յերկոց յառաջադրութեանց յօրինեալ կայ, որ այնպէս ընդ միմեանս յեռեալ են, զի իբրեւ երկու առաջինք, որոց մին Սեծագոյն կոչի եւ մեւն փոքրագոյն, հաստատիցին, երրորդն որ կարգն կոչի, ճշմարիտ ցուցանի . որպէս ,

Ամենայն ճարտարութիւն բարի՝ ընդունելի է .

Արուեստ ճարտարախօսութեան եւս բարի է ,

Ապա ընդունելի եւս իցէ :

Բայց ճարտարախօսութեան անուանեալ շամար, ոչ նոյնպիսի է, այլ ի հինդ մասանց յօրինեալ կայ, որ են Յառաջադրութիւն, շանդէս յառաջադրութեան, Բ.ու.մն, Բ.ման հանդէս, եւ Վլուխ բանիցն : Արդարեւ մերկ եւ ցամաք ցուցանէր փիղիսոփոսն ըստ իւրում արուեստին զաշխարհիս տեսչութիւն, այսպէս . Բստուածեղէն իմն տեսչութեամբ դարմանի, որ բարւոյն մատակարարի, արդ բարւոյք մատակարարի աշխարհս, ապա աստուածեղէն իմն տեսչութեամբ դարմանիցի :

Բայց տես որպիսի ճարտարութեամբ զնոյն Վիկերոն ցուցանէ : Յառաջադր . Ազնուագոյնս, ասէ, տածին եւ դարմանին, որ վարին խորհրդով, քան որ առանց խորհրդոյ մատակարարիցին : Յառաջադրութեան հանդ . Տուն, որ իմաստութեամբ վարիցի, ամենայն իրօք կազմեալ եւ յարդարեալ դասնի, քան

զայն որ վայրապար եւ առանց խորհրդոյ խնամիցի. զոր որոյ զօրաւար իմաստուն եւ խորագէտ է, ամենայն ուստեք ի խաղաղութեան եւ ի դիւրութեան կայ, քան զայն որ անմտութեամբ եւ յանդգնութեամբ վարիցի: Աոյն բանք են եւ վասն նաւու. զի նաւ զոր ճարտարապետ իմաստուն վարիցէ, անհող զնացս զնայ: Առումն. Արդ չիք ինչ որ այնպէս աղնուագոյնս արբանեկիցի, որպէս աշխարհս: Առման հանդէս. Օ՛ի եւ լուսաւորաց ելք եւ մուտք որոշեալ իմն կարգս պահեն, եւ տարեւոր փոփոխմունք ոչ միայն իբրեւ ի հարկէ իմեքէ առնին հանապաղ նովին օրինակաւ, այլ յամենայն իրիք օգուտ յօրինեալ են, եւ փոխանակել տուրնջեան եւ գիշերոյ, ոչ փոփոխեալ ուրեք վնասեցին ինչ: Վլուխ բանից. Այս այս ամենայն յոյս առնեն թէ ոչ փոքու իւիք խորհրդով եւ իմաստութեամբ դարմանի բնութիւն աշխարհիս:

Իսոյց չէ հարկ միշտ հինգ մասունս առնել շամարոյ, այլ մարթ է զոմանս ի բաց թողուլ: Իսկ խտիրն ի մէջ փիղիսոփայից եւ ճարտարախօսաց այն է, զի փիղիսոփայք այնպիսի յանդիմանութիւնս խընդրեն, որ ճշմարիտ իցեն, իսկ հռետորք բաւական համարին եւ զայնս, որ հաւանութեան են: Արկբորդ խտիրն է օրինակ ճառելոյն. զի փիղիսոփոսն զերիս յառաջադրութիւնսն կարգաւ զետեղէ. իսկ հռետորն ճարտարութեամբ զյառաջադրութիւնսն չըջէ, աճեցուցանէ եւ զարդարէ եւ զարուեստն խնամով թագուցանէ: Առտի զեղեցիկս ասաց Գլենն, թէ Խօսուն կամ վիճման փիղիսոփայութիւն նման է բռան, կամ ձեռին ամփոփելոյ. իսկ ճարտարախօսութիւնս ամփոյ կամ ձեռին որ ձգեալ եւ կարկառել կայցէ:

Պանոն եւ օրինակ զշամարն յօրինելոյ այս է. նախ զյառաջադրութիւնն զոր ցուցանել կամիմք, յառաջագոյն զնել պարտ է, որպէս, Գօրաւար քաջ է Պամպէոս. ապա պարտ է զպատճառսն որոնել. արդ

պատճառք վասն որոյ զՊոմպէոս զօրաւար քաջ համարիմք, այն իսկ են, զի առաքինի է եւ հմուտ իրաց զինուորութեան, եւ յաջողակ. յետ զպատճառսն դտանելոյ, ապա պարտ է սկիզբն առնել յօրինելոյ զհամարն, զայս օրինակ: Այս ի Սեպհականութիւն յառաջադրութեանն, որ է օրաւար քաջ, պարտ է զգտեալ պատճառսն յարել, միայն թէ ի հասարակաց երեսս պարտ է խօսել, այսպէս. Օրաւար քաջ նա է, որ առաքինի իցէ եւ հմուտ իրաց զինուորութեան եւ յաջողակ. եւ այս լինի առաջին յառաջադրութիւն, որ մեծագոյնն կոչի: Ապա ի Վայն նորին յառաջադրութեան որ Պոմպէոսն է, նոյնպէս զնոյն պատճառսն պարտ է յաւելուլ, այսպէս. Արդ Պոմպէոս առաքինի է եւ հմուտ իրաց զինուորութեան եւ յաջողակ. եւ այս իբրեւ ասիցի, որ է երկրորդ յառաջադրութիւնն, փոքրագոյն անուանեալ, անդէն երրորդն եւս, որ կարգն կոչի, զնորին զհետ զայ, թէ ապա Պոմպէոս զօրաւար քաջ է:

Օայս կարգ ոչ միայն ճարտարախօսք պահեն, այլ եւ պետք, որ զարմանալի իսկ է. ուստի Պերսէոս ասէ,

Միթէ այլ ինչ դք իցէ ազատն, եւ ոչ նա
 Որ կարիցէ կեալ, որպէս զհարդ կամիցի,
 Սարթ է եւ ինձ կեալ որպէս կամիմ, արդ չիցեմ
 Եւ ես ազատ, ս իբուտէ:

Բ. Հ Ն Ա Ր Ք

43. Հնարք մասն Համարոյ են, կամ անկատար Համար. որոյ երկու մասունք են, որոց մին Առաջին կոչի ի խօսուն փիղիսոփայութենէ եւ մեռն Յաջորդ, որպէս: Ամենայն ճարտարութիւն ցանկալի է, ապա եւ ճարտարախօսութիւն ցանկալի է. ուր լինի իմանալ թէ, ճարտարախօսութիւն եւս ճարտարութիւն է: Ասան այսորիկ հնարք ի Յուենագեայ խեղ կոչին,

զի կրճատ իմն են, քանզի մին յառաջագրութեանցն յապաւեալ է, որ եթէ յաւելցի, լինի Համար:

Եւ լինին Հնարք կամ զմեծագոյն եւ կամ զփոքրագոյն յառաջագրութիւնն ի բաց թողեալ. որպէս Կղոզիոս նենդ գործեաց Սիղոնի, ապա յիրաւի սպանաւ. կամ, Որ այլում նենդ գործէ, յիրաւի սպանանի ի նմանէ, ապա Կղոզիոս յիրաւի սպանաւ ի Սիղոնէ:

Ճարտարախօսք առաւել զՀնարս ի կիրարկանեն քան զՀամար. նախ զի նովին զարուեստն թագուօցեն, որք վասն այնորիկ եւ զՀամարն եւս շրջեն եւ փոփոխեն: Արկորդ զի մի կարծիցի թէ չեն վրատահ յիմաստութիւն եւ ի հանճար լողացն, որպէս թէ չիցեն կարօղ իմանալ, եթէ ոչ զամենայն մասունս Համարոյն յայտնապէս ասիցեն: Արկորդ զի Հնարքն ուժգին եւս են, եւ սուր եւ համառօտ հատանեն. վասն որոյ նեա եւ սլաք կոչին: Օխարդ կարեվէր խոցեաց Կիկերոն զՆատոնինոս Հնարիւք, իբրեւ ասաց, խաղաղութիւն կամիցի Նատոնինոս, թող ի բաց ընկենուցու զզէնսն. որպէս թէ ասէր, Ղթողու Նատոնինոս զզէնսն, ապա չկամի ընդ խաղաղութիւն:

Գ. ԸՆԾԱՅՈՒԹԻՒՆ

ԿԿ. Ընծայութիւն եւս ազգ ինչ յանդիմանութեան է, որ ի նմանութենէ եւ ի համեմատութենէ կամ օրինակաւ այլոց ցուցանէ թէ այս ինչ կամ այն ինչ իցէ կամ լինելոց իցէ. որպէս. Չենոն, Դիոզենէս, Արատէս եւ բազում եւս այլք վասն առաքինութեան եւ իմաստութեան, զմեծութիւնս եւ զմարմնոյ փափկութիւն արհամարհեցին, ապա եւ դու եթէ կայցէ ի քեզ փոյթ առաքինութեան եւ իմաստութեան, զնոյնս նոյնպէս քամահեսջիր:

Աղբերք, ուստի ընծայութիւնք ելանեն, երեք են: Առաջին է զմասունսն ի համար արկանել. որպէս Կիկերոն ընծայութեամբ մի ըստ միջէ ի համար

արկեալ զմասունս նաւի, ցուցանէ թէ ի շինել զնաւս ոչ միայն այնց որ կարեւորն են խնամ ունել պարտ է, այլ եւ որոց ի զարդ են:

Օ՛րնչ ինչ այնպէս կարեւոր ի նաւս կայցէ, որպէս տախտակամածքն, խելք եւ առաջք նաւին, եւ կայմն եւ ձող եւ առադաստք. սակայն եւ սոքա ունին գեղեցկութիւն, ապա ոչ միայն կենաց, այլ եւ վայելչութեան վասն Հնարեալ են:

Արկրորդ ի բազում նմանութեանց, որպէս սոյն այս ՚Նծայութիւն. Աթէ ձի աղնուական Համարի, որ բարկն եւ սաստիկ իցէ, եւ գինի սեռն եւ անապակ, ապա եւ զմարդ աղնուազոյն պարտ է Համարել, որ առաքինութեամբն առաւել իցէ:

Արրորդ ի բազում օրինակաց. որպէս Աիկերոն առնէ. Ղւազ որեարն, Ակիպիոն, Ա. Ղեղիոս, Ղ. Փիղիպպոս եւ այլ եւս բազումք, թէպէտ եւ ամենեքին ստոյիկեանք էին, սակայն բնակութիւն ունէին, ապա եւ ոչ Աստոնի առն մեծի անպատեհ ինչ եղել ընտանութիւնն: Յերկուց իրաց պարտ է զգուշանալ յընծայութիւնս. Նախ անտի զի որ միանգամ առ ի Հաստատել յառաջադրութիւնն մեծանին, ստոյղք եւ յայտնիք իցեն. զի եթէ մին միայն յողորդիցէ, բովանդակ յանդիմանութիւնն խախտի. որպէս որ օրինակօք արանց անուանեաց կամիցի ցուցանել թէ չէ պարտ կարի իմն ի մահուանէ երկնչել, սխալէ եթէ ընդ Ասիրատայ եւ ընդ այլոց որ զմահ արհամարհեցին, եւ զԱիկերոն զովիցէ, որ բանիւք միայն քամահեաց զմահ. կամ թէ վասն զմեծութիւնս անարգելոյ ճառել զք կամիցի, եւ խառն ընդ Ղիողենեայ եւ Արատեատայ եւ այլոց փիղիսոփայից եւ զԱնեկա բերիցէ օրինակ, որ իբրեւ ինքն մեծատուն էր եւ ինչս բազումս ստացեալ ունէր, վասն ստոյիկեանց փիղիսոփայից զմեծութիւնս անգոսնելոյ, ասեն, զրեաց:

Արկրորդ ի մեջ այնց որ յօրինակ գան, եւ այնց վասն որոց յօրինակն գան ճամարխոնմանութիւն կայցէ.

որպէս Սեծամեծ նաւք ղեկօք մեծամեծօք վարին, նոյնպէս եւ մեծամեծ ինչ գործք յարանց աւագաց վճարին. ի մէջ մեծամեծ ղեկաց եւ արանց մեծամեծաց բանիւք միայն է նմանութիւն:

Գ. Օ Ր Ի Ն Ա Կ

45. Օրինակ է, յորում ի միօջէ նմանոյ զայլ ինչ նմին նման ընծայեցուցանեմք. որպէս Աիկերոն յորինակէ մահուանն Գրակքեայ ընծայեցուցանէ, թէ եւ Աատիղինա գլխապարտ է

Ալիպիոն այրն երեւելի եւ Հոյակապ զմեծ քրմապեան զՏիրերոս Գրակքոս որ սակաւիկ ինչ զՆոսմայեցւոց իշխանութիւն եղծ, հար սատակեաց, իսկ Աատիղինայ որ համօրէն զամենայն երկիր յաւեր եւ յայրեաց դարձուցանել ցանկայ, ներիցեմք եւ երկայնամի՞ա լինիցիմք:

Օրինակի բազում մերձաւորութիւն է ընդ ընծայութեան, նմին իրիանկատար ընծայութիւն կոչի, զնոյն կանոնս պարտ է եւ սմին պատշաճեցուցանել:

Ե. Գ Ի Ղ Ե Մ Ա Յ

46. Վիղեմայն որ թարգմանի երկառած, ազգ ինչ է յանդիմանութեան սաստիկ քան զայլս որ յերկոցունց կողմանց զհակառակորդն ի բուռն արկանէ. զի Վիղեմայն յունարէն զերկոցունց կողմանց բուռն հարկանել նշանակէ. եւ կողմանքս այսօրիկ իբրեւ զառաջս ինչ կան, այնպէս զի եթէ ի միօջէն զերծանիցի, ի միւսն անկանիցի: Արպէս Ստոյիկեանք սովին յանդիմանութեամբ ջանացան ցուցանել, թէ ամենայն ցաւոց դիւրաւ մարթ է տանել: Ամենայն ցաւք, ասեն, կամ սաստիկ են, եւ կամ թեթեւք. եթէ թեթեւ ինչ իցեն, դիւրաւ մարթի տանել. իսկ եթէ սաստիկք, սակաւ տեւելոց են, ուստի եւ դիւրաւ մարթ է տակալ: Այնպէս եւ Աիկերոն ցուցանէ թէ չէ պարտ հրեշտակս առ Վնտոնինոս առաքել. Հրեշ-

տակութիւն, ասէ, կամիք առաքել, զի եթէ աղա-
 շիցեն, չառնիցէ երեսս եւ արհամարհիցէ, եւ եթէ
 հրաման ինչ տայցէք, չանտայցէ:

Ասացուք այժմ նախ թէ զիարդ մարթիցէ
 լուծանել զգիղեմայն. եւ ապա վասն Արոկողիղայ,
 եւ վասն առանց լուծանելոյ յանդիմանութեանց:

Ա. ԹԷ ԶԻԱՐԴ ԼՈՒԾԱՆԵԼ ՄԱՐԹ ԻՑԷ
 ԶԴԻՂԵՄԱՅՆ

47. Որովհետեւ բազում անգամ ի մոլորութիւն
 արկանէ այս ազգ յանդիմանութեան, պարտ եւ պատ-
 շաճ է գիտել թէ զիարդ լուծանիցին պատրանքն
 եւ խայտառակիցի խաբէութիւնն: Արդ լուծանել
 երկոքումք օրինակօք մարթ է: Անախ եթէ զամե-
 նայն զյանդիմանութիւնն ինա իսկ յասօղն դարձու-
 ցեսս, զորոյ օրինակ ինչ պատմէ Արիստոտելէս յերկ-
 րորդ գիրս ճարտարախօսութեան: Ոմն ի կանանց
 քրմաց խրատ տայր որդւոյ իւրում, զի մի ինչ խօ-
 սեսցի առ ժողովուրդն, զի եթէ անիրաւ ինչ խրատ
 տացես, ասէք, դիքն ցասնուցուն քեզ, ապա եթէ
 արդար խօսեսցիս, զմարդիկ զայրացուցես: Օայս
 բան ի մայրն, շրջեաց իմաստուն մանուկն. նա մա-
 նաւանդ, ասէ, պարտ է խօսել բանս առ ժողովուրդն.
 զի եթէ արդար ինչ խօսեսցայց, դիք սիրիցեն զիս,
 իսկ եթէ անիրաւ, մարդիկ:

Ամին նման է եւ այն նշանաւոր բան, յորմէ ոչ
 կարացին զերծանել Արիսպագացիք, որ քան զա-
 մենայն մարդիկ իմաստնագոյն համարին, ուստի եւ
 զկազն առանց իրաւ առնելոյ թողին: Օի պատա-
 նեակ մի եկեալ յուսումն Պրոտագորայ հռետորի, ինչս
 բազումս խոստացաւ տալ, եթէ յառաջնում ատենին
 յաղթիցէ. բայց յետոյ իբրեւ ուսաւ զարուեստն, չէառ-
 յանձն տալ զվարձան: Չգեաց զնա ի դատաստան վար-
 դապետն. պարտիս, ասէ, զվարձսդ յոր կողմն եւ
 դարձցին իբքն. զի եթէ յաղթեցից, պարտիս իբրեւ

զպարտաւորեալ . եթէ դու յաղթիցես , նոյնպէս պարտական ես վասն դաշանցն : **Ն**ա , ասէ խորամանկ աշակերան , յոր կոյս եւ դարձցին իրքն , շէս ինչ առնլոց յինէն . զի եթէ յաղթեցից , ի դատաւորացն վճռոյ շէմ պարտական , իսկ եթէ պարտաւորեցայց ի դատաստանի , վասն դաշանցն չպարտիմ ինչ քեզ :

Արհրորդ լուծանի դիղեմայն , եթէ զերկոսին մասունս նորին տկարացուցանել կարիցես , կամ ցուցցես թէ դոյ ինչ ընդ երկուս յառաջագրութիւնսն ի միջի . որպէս ի հարկանել ուրուք երբեմն զճառայ իւր ուժդին , ասէ ցնա ծառայն . **Ա**թէ անպիտան ոք իցեմ , ընդէր ունիս զիս ի սպասու , իսկ եթէ պիտանի զմէ՞ հարկանես զիս . իսկ տէրն իմաստութեամբ ետ պատասխանի . **Ա**չ հարկանեմ , ասէ . **դ**քեզ , զի պիտանի ես , այլ զի յանպիտանութենէ լինիցի պիտանի :

Նոյնպէս մարթ է լուծանել զայն զոր ասաց Աիկերոն , թէ շէ պարտ առաքել հրեշտակս առ **Ա**նտոնինոս . զի թէպէտ եւ ոչ առ աղաչել եւ առ հրամանս ինչ տալ առաքել պարտ իցէ , սակայն վասն խրատ տալոյ պարտ է . եւ այս է դատանել ինչ ի մէջ երկուց դժուարին իրաց :

Արհրորդ մարթ է լուծանել յորժամ ամենեւին հրաժարեցուք կամ ժխտեցուք ուստի մարթ է զբանս **Ստոյիկեանց** (46) ուրանալ , թէ ցաւք թէպէտ եւ սակաւ տեւիցեն , սակայն ոչ յայն սակս դիւրին առ տակալ են . զի մարթ է թէ սակաւիկ ինչ տեւիցէ ինչ , սակայն սաստիկ եւ անհնարին իցէ :

Բ . **ՎԱՄՆ ԿՐՈՒՄԻՒՄ ԵՒ ՎԱՄՆ ԱՌԱՆՑ
ԼՈՒԾԱՆԵԼՈՅ ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻԱՆՑ**

48 . **Ա**ստ ի դէպ է եւ վասն **Արսիողիլայն** ասել ինչ սակաւուք , զի յայս տեղի անկ է : **Ա**րդ **Արսիողիլն** յանդիմանութիւն ինչ է պատիր եւ խաբերայ , որ զազէտ մարդիկ պարաւանդեալ ի հաղրս

արկանէ. եւ կոչի Արոկողիզոս որ է գետոյ նհանգ, զի պւետիկոսք այսպիսի ինչ առասպելարկենն: Արոկողիզոս գազան, ասեն, կնոջ միում, որ աղաչէրզնա զի տացէ զորդի իւր, զոր ի շրջել նորա յեզր գետոյն յափշտակեալ էր, ետ պատասխանի թէ տալոց է զմանուկն, եթէ հարցուածոյն զոր անելոց է, ճշմարտութեամբ տացէ պատասխանի. եւ հարցուածն այսպիսի ինչ էր. Զորդիդ քո, ասէ, տայցեմ քեզ, թէ ոչ: Ի վարանս մտեալ կնոջն եւ իմացեալ զդաւաճանութիւնն, ասէ. Աչ տացես, եւ վասն այնորիկ պարտիս տալ զի զստոյզն ասացի: Ստես, ասէ, խորամանգ գազանքն, զի եթէ տաց, գտանիս սուտ խօսեցեալ, ապա չկարեմ տալ զի մի սուտ գտանիցիս:

Սմին նման է եւ այն գործ պատանւոյն, զորմէ Եսովպոս յառակին ասէ, թէ կալեալ թռչուն մի ի ձեռին եւ ծածկեալ կտաւով, մտեաւ, առ հարցուկն եւ ասէ, զիտա զինչ ի ձեռին իմում է, շնչաւոր իցէ, թէ առանց շնչոյ. ի մտի եղեալ զի եթէ ասիցէ առանց շնչոյ, կենդանի հանցէ զթռչունն, ապա եթէ ասիցէ թէ շնչաւոր է, հեղձուցէ, զի սուտ առնիցէ զհարցուկն: Իբրեւ ի վերայ եհաս քուրմըն իրացն, ասէ ցպատանեակն, որպէս կամիս արա, զի ի քո ձեռս է սպանանել եւ կեցուցանել զթռչունն:

Սոցին սակի են եւ այն յառաջադրութիւնք որ առանց լուծանելոյ կոչին, որ անձամբ զանձինս եղծանեն, որպէս այն զոր ոմն ի պւետիկոսաց կրետացոց ասաց թէ Արեւոցիք հանապազասուտք: Արդ եթէ ճշմարիտ են բանք նորա, ապա չեն ամենայն Արեւոցիք սուտ զի եւ ինքն Արեւոցի է: Ապիմենիդէս է որ ասացն, զի Արեւոցիք ունէին զգերեզման Երամազդայ, յորում գրեալ էր այսպէս, ԱՍՏ ԱՆԿԵԱԼ ԿԱՅ ԱՐԱՄԱԶԳ ԶՈՐ ԴԻԱՏՆ ԿՈՉԵՆ. վասն սորին գրոյ ճարտարն յերգ արկեալ ձաղէ զԱրեւոցիս.

Օգտերեզման քո, ասէ, ով թագաւոր
 Արեւացիք հաստատեցին, եւ դու ոչ մեռանիս
 Զի կաս հանապազ:

Զ. Շ Ե Ղ Զ Ա Կ Ո Յ Տ

49. Շէղջակոյտ է յանդիմանութիւն որով ի բազում յառաջադրութեանց աստիճան յաստիճանէ եւ առ փոքր փոքր, ի վերայ ածի ինչ. որպէս Աիկերոն ցուցանէ սովին թէ բարի է պարկեշտութիւն: Ամենայն իմէք, ասէ, միայն թէ բարի իցէ, փափաքել արժան է, եւ որում փափաքելն պարտ իցէ, զայն եւ պատուել օրէն է, եւ որ պատուին եւ մեծարի, հարկ է թէ եւ դովութեան եւ յարգանաց արժանի իցէ. եւ քանզի ամենայն ինչ որ դովութեան եւ յարգանաց է, բարի եւ զեղեցիկ է, ապա յայտ է թէ եւ որ ինչ պարկեշտութեան է, նոյնպէս բարի եւ զեղեցիկ է:

Աստ այսմ օրինակի վիճել սովոր էին Սողոմոնիկանք, եւ նոցին առաջնորդ Զենոն: Բայց մահաւանդ զուարճանայր սովին, ասեն, Վրիւսիպպոս, լսող Զենոնի, որպէս եւ Սոկրատէս ընծայութեամբ եւ հեղձութեամբ: Բայց այս ազգ յանդիմանութեան բազում անգամ պատիր եւ խաբեբայ է. զի որովհետեւ մեղմով եւ առ սակաւ սակաւ բազում բանք շէղջակուտին, դիւրին է յորոգայթ արկանել, եւ զվնասակար կարս մանել. նմին իրի պարտ է մանր կրկանել, եւ զմի մի իւրաքանչիւր ի բանիցն ուրոյն կշռել, զի այսպէս դիւրաւ ամենայն մանրի եւ խորտակի: Որպէս երբեմն թեմիտոսիզէս ընդ խաղ ասէր, Որդի իմ իշխէ մօրն, մայրն ինձ, ես Աթենացւոց, Աթենացիք Յունաց աշխարհին, Յունաց աշխարհն Աւրոպայ, Աւրոպն բովանդակ տիեզերաց, ապա որդի իմ բովանդակ տիեզերաց իշխէ: Սուտ է զոր ասէն, զի այլ է իշխել որդւոյն մօրն, եւ այլ իշխել ազգի միոջ կամ քաղաքի եւ աշխարհի:

Է . Հ Ա Ն Դ Է Ս

50. Հանդէսք են Հնարք յերկուց յառաջադրութեանց ի մի բովանդակեալ, որպէս. Ասյին որ սպան զեղբայր իւր տարապարտուց, յիրաւի դատապարտեցաւ. յորում այս երկու յառաջադրութիւնք բովանդակին. Ասյին սպան զեղբայր իւր տարապարտուց, սպա յիրաւի պարտաւորեցաւ:

Օչայս ամենայն յանդիմանութեան ազգս, լայնագոյնս եւ պարարտագոյնս գտցես ի խօսուն փիղիստիայութեան (108 — 121):

Բ . Խ Ա Խ Տ Ե Լ

51. Խախտել այն մասն ճառին կոչի, յորում զպատճառսն որ մեզ հակառակ են, խախտեմք եւ մերժեմք:

Չորիւք օրինակօք մարթէ խախտել զպատճառս հակառակորդաց: Ախ յորժամ ամենեւին հրաժարիցեմք եւ շառնուցումք յանձն. որպէս արար Աիկերոն վասն Առակեայ, զորմէ ամբաստան լինէին թէ սպանօղ է, իսկ նա ի վարուց եւ ի բարօյից առնն եցոյց թէ ամենեւին օտար է ի նմանէ սպանութիւն:

Արկորդ յորժամ խոստովանել խոստովանիմք, թէ արդարեւ գործեաց, սակայն իրաւունս ցուցանեմք թէ յիրաւի արար. որպէս Աիկերոն վասն Աարիբեայ առնէ, որ զՎատուռնինոս ռամկապետ զայր խոստարար, որ յապօտամբութիւն գրգռէր, անդէն ի Ասպիտողինին սպան:

Աարիբիոս, ասէ, յանդիմանի թէ զՎատուռնինոս սպան. զոր նա բողմաց վկայութեամբ, եւ Հորտենսեաւ հանդերձ, որ պաշտպանէր նմա, կանխաւ սուտ եցոյց: Բայց ես, թէ գոյր հնար, առնոյի յանձն զվասն, եւ խոստովան լինէի. զի Աարիբիոս զՎատուռնինոս զթշնամի ազգին Հսուամոց սպան:

Արբորդ յորժամ յայտ արասցուք թէ եւ հակառակորդն զնոյն յանցանս, կամ մեծամեծս եւս քան

զնոյնս յանցեալ. իբրև հմուտ զօրաւարս, որ զԹըշ-
նամւոյն զօրութիւն քայքայեն, եւ ընդ այլ կողմն
դարձուցանեն:

Չորրորդ յորժամ քամահիցեմք. այս ինքն է
յորժամ արնուական մտօք եւ վստահութեամբ չգրի-
ցեմք ինչ որ ինչ մեզն հակառակ խօսիցին. որպէս
արար իսկ Ակիպիոն Վփրիկանոս, որ յետ զմեծամեծ
արութիւնսն գործելոյ, զրպարտեալ ի նախանձոտաց,
եւ դատափետ լեալ, իբրև լռութիւն եղև յատե-
նին, ասէ. Ու շոմայեցիք, ընդ Վննիբաղայ եւ ընդ
Վարքեդոնացւոց յՎփրիկեցւոց աշխարհին բարւոք եւ
յաջողութեամբ ճակատ տուեալ եւ նշան յաղթու-
թեան կանգնեալ, որովհետև պատշաճ եղև դա-
տափետ ատենաքարչ լինել, ի դէպ է այժմ ի Վա-
պիտոզիոն երթալ, եւ մեծին Վրամազդայ, Վյերայ
եւ Վթենայ եւ այլոց եւս դիցն որ անգէն ի դղեկին
բնակեն, որջոյն տալ եւ գոհանալ, զի յաւուր յայս-
միկ եւ յայլ եւս բազում նուագս, ետուն ինձ միտս
եւ զօրութիւն զիրս քաղաքին մեծաւ խնամով եւ
պատուով վճարելոյ. եւ ի ձէնջ եւս ս ոք եւ կամիցի,
եկեսցէ ընդ իս աղաչել զդիսն, զի իբրև զիս զայլ
ոմն իշխան տացեն ձեզ:

Արբեմն օգուտ մեծ է ի մերժել զբանս հակա-
ռակորդին, խաղս եւ ծաղր խառնել, որ ի կարևոր
իսկ իրս յոյժ օգտեն, եւ զսօղսն զուարթացուցանեն,
միայն թէ մի ի գուսանական խեղկատակութիւն, ի
բանս կսկծելիս եւ ի շատխօսութիւն զառածանիցի:
Աւ միանգամայն իսկ ասել, մարթի մերժել զբանս
հատուցմամբ, այս ինքն է յորժամ ոչ ուրացուք,
եւ ոչ իրաւունս ցուցուք, այլ հատուցումն եւ փո-
խարէն մնասուն զայլ ինչ երեւելի եւ նշանաւոր
գործս ցուցուք. որպէս Արատիոս, որոյ զքոյր իւր
սպանեալ էր, դատաստանաւ ժողովրդեանն արձա-
կեցաւ, Վասել վասն զարմանալի քաջութեանն,
քան իրաւամբք դատաստանի, ասէ Ղիւիոս. եւ քա-

Զութիւնն էր, զի ընդ երիս կուրիատեանսն միայն ընդ միայն մարտուցեալ յաղթեաց, եւ զՀռոմայեցիս զերծոյց ի ծառայութենէ:

Գ Գ Լ Ո Ի Խ

Վ Ե Ր Զ Ի Ն Բ Ա Ն Ք

52. Վ Ե Զ Ի Ն բանս՝ կոչեն զկատարած ճառին, յորում ճարտարախօսն Զանայ Հասանեւ այնմ զոր ի բովանդակ ճառին պնտեալ էր ցուցանել: Արկու մասունք են վերջին բանից, ի համար արկանել եւ Յորդորել կամ Շարժել:

Ա Ի Հ Ա Մ Ա Ր Ա Ր Կ Ա Ն Ե Լ

53. Ի համար արկանել է զամենայն աստ եւ անդ ասացեալն ի ճառին համառօտիւք ժողովել եւ միանգամայն առաջի դնել, գլխաւորելով, որ է զյորդազոյն ասացեալն կարճառօտիւք կրկնել:

Ի համարելն կամ ի գլխաւորել երկուց իրաց պարտ է զգուշանալ, նախ զի հարեւանցի իմն կրկնեսցես զայնս միայն, որ հաստատութիւն են խնդրոյն, եւ զոր կամիս թէ հաստատութեամբ անկեսցին ի միտս լսողաց, զի եթէ զամենայն մանր երկրորդիցես, ոչ վերջին բանք լինիցին, այլ նոր իմն ճառ, ասէ փարիոս:

Արկրորդ որ ցիր եւ սփիւռ ասացեալն են, այնպէս համառօտիւք քաղեսցես, զի նոր իմն թուեսցին, սեթեւեթեալ եւ պաճուճեալ, զի մի կազամբ կրկին եփեալ կարծիցի, ասէ Սատիրիկոս, յորժամ կարի անհամ եւ մերկ կրկնեսցի:

Բ Վ Ա Մ Ն Յ Ո Ր Դ Ո Ր Ե Լ Ո Յ Կ Ա Մ Շ Ա Ր Ժ Ե Լ Ո Յ

54. Մ եւ ս եւ ս վերջին բանից մասն, եւ մեւս եւ ս պաշտօն է շարժել զմիտս, որ այնպէս նովն սեպհական է, մինչեւ վասն այնորիկ ի շխան մտաց կոչել

զնա վարդապետաց արուեստին . զի անդ պարտի ճարտարախօսն պարզել զառազատա ճառին , եւ զճարտարախօսութեան աղբերս բանալ , եւ իբր թէ ջահա եւ խթանս ի սիրտ ունկնդրացն արկանել :

Արդ յորդորին կամ շարժին ողիք աճեցուցանելով , որ է կարեւոր իմն եւ սաստիկ հաստատութիւն , առ ի շարժել եւ յորդորել յոյժ պատշաճական : Այսն աճեցուցանելոյ բաւական ասացաւ յառաջին ճառսն (24) :

Աստ պէսպէս ազգ բանից , պէսպէս յոյզս յորդորել պարտ է . ի գովելն ի դուլթ , ի զարմացումն , ի նախանձ եւ յուրախութիւն պարտ է շարժել . ի պարսաւելն յատելութիւն , ի հակառակութիւն եւ յարհամարհանս : Ի խրատութիւնս պարտ է յոյս , վստահութիւն եւ ահարկանել . իսկ յիրաւանց ճառս այս ամենայն կից ընթանայ , սէր , առելութիւն , ցասումն , ողորմութիւն :

Ի վերջին բանս զարմանալի յոյժ եղել ճարտարախօսութիւն Վիկերոնի , որ իբրեւ ասէր զվերջին բանսն ոչ միայն զգատաւորս եւ զունկնդիրս շարժէր , այլ եւ ինքն բորբոքէր իմն , մանաւանդ յորժամ արգահատել պատժապարտաց աղաչէր . մինչեւ բազում անգամ , որպէս եւ ինքն ասէ , արտասուս հարկանել , եւ ընուլ զհրապարակն ողբովք : Այսն այնորիկ եթէ յանկարծ բազում ճարտարախօսք վասն միոյ առն աղերս արկանէին , սովոր էին զվերջին բանսն Վիկերոնի թողուլ . որպէս եւ ինքն վկայէ : Օրնչ վասն ողորմածութեան , ասէ , խօսեցայց , զոր առ բազումս ցուցի . զի թէպէտ եւ բազումք ճառարկանէաք , սակայն զվերջին բանսն ամենեքին ինձ թողուին , յորում հասանէր ինձ յաջողել ոչ իմաստութեամբ ինչ , այլ արգահատութեամբ : Աւ ի ճառսն զոր վասն Վաբիրեայ Պոստումայ խօսեցաւ , ցնա ինքն Պոստումաս ասէ : Արդ որովհետեւ որպէս կարծեմ , զհաւատարմութիւնն զոր մարթայայ , ցուցի

քեզ, Պոստումէ, այժմ զարտասունն եւս զոր պարտիմ հատուցից . . . Այսչափ արանց ողբ եւ աշխար յայտ առնեն թէ որչափ սիրելի իցես դու քոյոցն, եւ զիս ցաւք տկարացուցանեն եւ արգելուն զբարբառն:

Իսկ վասն լաւութեան վերջին բանից երկու ինչ պիտոյ է, նախ զի սաստիկ իցէ ի շարժել զմիտս, երկրորդ անգամ համառօտ, զի որպէս ասէ Աիկերոն, Աբտասուք վաղվաղակի ցամաքին, եւ մտացն հրդեհ արագ շիջանի եւ յափշի:



55. Եթէ եկեացուք եւ վասն գիւտի ասել ինչ սակաւութիւն, առանց որոյ որպէս Աիկերոն վկայէ, ցուրտ իմն եւ բաջազանաց լինիցին ճառքն :

Եւ գիւտ պահանջին հանճար եւ խորհրդակա- նութիւն : Արկու մասունք են գիւտի, մի հնարել գտանել յանդիմանութիւնս, որ զպատճառսն հաս- տատեսցեն, եւ մեւս եւս շարժել եւ յորդորել զմիտս :

Գոն եւ այլ երեք ինչ որ ցանկալի են առ գիւտ. այս ինքն է զգօնութիւն, հաւատարիք, եւ ճարտարութիւն :

Օգօնութիւն բնութեան է, իսկ հաւատարիք պահան- ջեն նախ զի իրացն զորոց ճառեցաց եմք, խնամով հա- սուլ լինիցիմք, եւ հանապազ ջանալ զի դիպող պատ- ճառս տացուք : Արկորդ զի մտադեւր եւ ուշի ու- շով միտ դիցուք հակառակորդին եւ զբանս եւ զգնացս նորա կշռեսցուք, եւ երրորդ հանապազ ի մտի ունի- ցիմք զհետորական տեղիս, եւ զայլն ամենայն թո- ղեալ, զմեր խնդիր միայն առաջի աչաց ունիցիմք : Իսկ ճարտարութիւն որ առ գիւտ պահանջի, այն է զի զանդիրս զիւրաքանչիւր յիւր ազգ բաժանեսցուք, այս ինքն է զիրաւանց իբրեւ զիրաւազէտս, զգործոց իբրեւ զխրատտու այնպէս օրինօք ճառեսցուք, եւ մի զմին բնդ մեւսն խառնել :

Աիւթ գիւտի կրկին է, Յանդիմանութիւնք որ հաւատարիմ առնեն, եւ Շարժմունք որ զուարճա- ցուցանեն եւ խոնարհեցուցանեն : Յառաջնուն միտք, յերկրորդուն կամք պարտին ճարակել : Աւտի յեր- կուս զլուխս բաժանեսցուք զճառս, առաջին յանդի- մանութիւնք եւ երկրորդ շարժումն :

Յ Ա Ն Դ Ի Մ Ա Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

56. ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻԻՆ է գիւտ հաւանեցուցիչ, որ հաւատարիմ առնէ կամ հաստատէ ինչ, կամ որ զերկեւան երկմտութեան բառնայ յիրացն: Արդ Յանգիմանութիւնք որ ի հարկէ ազգականութիւն ունին ընդ իրան, խելամուտ առնեն. իսկ որ ըստ դիպաց իմն հային յիրան, զկարծիս ծնանին: Առաջինքն փիղիստիայութեան անկ են, որոյ է զընածին պատճառս ցուցանել. իսկ երկրորդքն ճարտարախօսութեան, որ զկարծեօքն եւ զհաւանութեանն ցուցանէ: Յանգիմանութիւն հաւանութեան այն է ըստ Արիստոտելեայ, որ տայ հաւանել, բայց չառնէ ամենեւին առանց կասկածանաց: Աւ ի հաւանելի եւ կարծելի իրաց կէսք բազում անգամ պատահեն, եւ ոչ հանապազ. որպէս բազումք որ առողջադոյնք են, յերկար կեան, բայց ոչ ամենեքին. այլք ցանկ հանգիպին, բայց եւ երկմտութիւն ինչ գոյ վասն նոցա, զի ոչ բնական ինչ օրինօք պատահեն. այլք յանկարծադէպ, որպէս հանապազ ի ձմերան լինին ձիւնաբերք, այս ամ եւս լինելոյ է. մարթ է կարծել, բայց ոչ է ճրջմարիտ: Աւ ոմանք եւս երբեք ոչ դիպին, թէպէտ եւ կարծի թէ հանգիպին, որպէս կարծեն բազումք թէ գիսուոր աստեղք պատճառ են շուառութեան, բայց չէ այնպէս: Այլ եթէ ասիցէ ոք թէ ուստի կամ որսի օրինակաւ մարթ իցէ դտանել յանդիմանութիւնս: Ասացուք թէ ազրեւր բուն եւ ճշմարիտ, ուստի մարթի յանդիմանութիւնս հանել, է իւրաքանչիւր ուրուք միտք եւ հանճար, սնեալ եւ պարարեալ խրատու եւ կրթութեամբ, բայց գոն եւ այլ եւս օրինակք զյանդիմանութիւնս դտանելոյ, որ ճարտարախօսութեան Տեղէք կոչին, որ իբրեւ ձեռամբ ածեալ ցուցանեն թէ ուստի կամ որսի օրինակաւ զյառաջադրութիւնսն հաստատել մարթ իցէ:

Վասն որոյ եթէ կամիս ճարտարախօս լինել, կազմ եւ պատրաստ պարտին լինել քեզ սոյն տեղիք, կամ թէ ի ձեռին իսկ, զի ի նոսին զառատ հունձս յանդիմանութեանց դիւրաւ գտանել մարթայցես:

Երդ ճարտարախօսութեան տեղիք շտեմարան իմն յանդիմանութեանց են, յորս յանդիմանութիւնքն զօղեալ կան, եւ անտի ելանեն եւ սփռին: Եւ տեղեացս այսոցիկ երկու ազգք են, զի կէսք յիրացն իսկ խնդրին եւ վասն այնորիկ Ներքին կամ Բնաբոյս կոչին, այլք արտաքուստ են եւ ոչ յիրաց անտի, զորոց խնդիրն է, ուստի եւ Բրտաքինք կամ շեռաւորք յորջորջին: Օ՛րկիոցունց ազգաց եւս, եւ մանաւանդ զառաջնոյ ազգէն, որ առաւել կարեւոր է ճարտարախօսութեան, խնամով եւ հաւաստեաւ յայսմ տեղւոջ ճառել արժան է:

ԱՆԵՐՔԻՆ ՏԵՂԻՔ

57. Հնգետասան տեղիք են ճարտարախօսութեան որ անուանեալ կոչին, Արոշումն, Չմասունս ի համար արկանել, Ստոյգ ծառք եւ Լծակիցք, Բզդ եւ Վերպարանք, Նմանութիւն եւ Բնմանութիւն, Հակառակք, Յաւելուածք, Բռաջինք եւ Յաջորդք Պատճառք եւ Բրդիւնք, Համեմատութիւն:

ԱՌՈՇՈՒՄՆ

58. Արոշումն զոր այլք սահման ասեն այն կոչի որ զիրացն բնութիւն մեկնէ. որ կրկին իսկ է Փիղիսոփայութեան եւ ճարտարախօսութեան: Փիղիսոփայութեան անուանեալ արոշումն յազգէ եւ յայլակերպութենէ յօղեալ կայ, որպէս Սարգն է շնչաւոր խօսուն: Եզգն հասարակաց իմն է ամենեցուն, որպէս շնչաւորն լինել եւ մարդկան եւ ամենայն անասնոց հասարակ է. իսկ Բոլակերպութիւն այն է, որ զմին ի բազմաց անտի զատուցանէ եւ որոշէ, որպէս

խօսուն կամ բանաւոր ասել զմարդոյ որոշէ զնա յայլ ամենայն շնչաւորաց, որ անխօս եւ անբան են:

Ճարտարախօսութեան որոշումն է, որ զիրացն բնութիւն պարարտագոյնս եւ լայնագոյնս ցուցանէ, զոր նկարագիր մանաւանդ պարտ է կոչել քան ճշգրիտ որոշումն, եւ այն բազում օշինակօք լինի:

Նախ ի ձեռն մասանց իրացն որ որոշելոցն են, որպէս յորժամ ասիցէ ոք վասն ճարտարախօսութեան արուեստի, ճարտարախօսութեան արուեստ այն է, որ ի յօրինուածոյ, ի գիւտէ, ի ճարտարաբանութեանէ եւ ի զճառն պատմելոյ յօրինեալ կայ:

Նրբորդ ի ձեռն պատճառաց եւ արգեանց իրացն որպէս Վիկերոն զմարդ որոշէ ի պատճառացն որ կերպարանաց կոչին. Շնչաւորս այս յառաջահայեաց, իմաստուն, բազմահնար, կորովի, ուշեղ, լի իմաստութեամբ եւ խորհրդով, զոր մարդն անուանեմք, նորանչան իմն պայմանաւ եկն ի լինել ի մեծազօրն Նստուծոյ. կամ, Սեղք են ժանտ հոգւոյ, բիծ մտաց, եւ կենաց փնասակար:

Նրբորդ ի բարուց եւ ի բնութենէ իրացն. որպէս Վիկերոն վասն շան ասէ. Արոյ, ասէ, հաւատարիմ պահպանութիւն, զտեարան ողորբել, ասել զօտարս, անհնարին սուր ոնգունան ոնել ի հետազօտել, երագութիւնն յորսս, զինչ այլ ինչ յայտ առնիցեն եթէ ոչ զայն թէ առ մարդկան գիւրութիւն ստեղծաւ: Օչայս ձեւ օրինակի զիրս որոշել մանաւանդ պետիկոսաց է, որ զիրսն իբրեւ աշօք յայտ յանդիման երեւեցուցանեն:

Չորբորդ յաճախութեամբ այլափոխ բանից, որպէս եթէ ասիցէ ոք վասն բնչից թէ, Ինչք ջիղք են պատերազմի, սիրտ բնկերհաշտութեան, կէտ ցանկութեանց մարդկան, ամբարտաւանութեան սնունդ, փափկութեան նիւթ. կամ, Օով է հիւրամեծար դետոց, կամ թէ, Նքեղակն ակն երկնից է, զարդ սուրնջեան, եւ բաշխիչ ժամուց:

Հինգերորդ նմանութեամբ, որպէս, Միտք առն ցատուցելոյ են հրապարակ լի աղմկաւ, ուր բազում է աղաղակ եւ գոչիւն մտանելեացն եւ ելանելեաց. կամ, Մնասարծուծիւն է անմտութիւն չար, նենդութեան արուեստագէտ, մայր կեղծաւորութեան, ծնիչ նախանձու, չարեաց սկիզբն, ցեց անարատութեան: Աւ կամ համեմատութեամբ, որպէս, Սեղ.ք քան զամենայն փնաս փնասակարագոյն են, պիղծ քան զամենայն զազան, եւ քան զնաւ ծանականս ծանակագոյն:

Վեցերորդ անգամ լինի ուրանալով եւ հաստատելով, այս ինքն է յորժամ նախ զայն ասեմք զինչ իբրն շեն, եւ ապա զինչ արգարեւ են. որպէս եթէ ասէր որ, Արգարութիւն ոչ է զայլոյ ինչս հանել, այլ զնորայն նմին հատուցանել. կամ, Աստուած չէ գեղեցիկ մարմին, այլ յորմէ գեղեցկութիւն ի մարմինս գայ. չէ գեղեցիկ մարդ, եւ ոչ գեղեցիկ երկին այլ ուստի ամենայն գեղեցկութիւն է: Ոչայս առնել ընտանի իմն էր Աիկերոնի. այսպէս ցուցանէ թէ Պիստղն չէ բղեշխ. Վու, ասէ, ի նուիրակն, ի պատմութեանն եւ յեզրածիրանի՞ն համարիցիս զբղեշխութիւն: . . . Սուք պարտ եւ պատշաճ է լինել բղեշխ, խորհրդով, ցածութեամբ, արթնութեամբ եւ ամենեւին ամենայն գործով բղեշխութեան:

Ուղիղ յայնժամ է որսումն, յորժամ յերկուց անտի, յազգէ եւ յայլակերպութենէ յօգեալ իցէ. ապա եթէ կրճատ ինչ եւ ծայրակտուր լինիցի որսումն, յայնժամ յիրաւի գիպեսցի, որ ինչ երբեմն Պղատոնի գէպ եղել լսել, զի իբրեւ ասաց Պղատոն վասն մարդոյ, թէ է շնչաւոր երկոտանի եւ առանց թեւոց, Վիտգենէս շնական, այր ծաղրածու, որ զՎկագեմիկեանս հանապազ ծաղր առնէր, հաւ մի առանց թեւոց եւ մերկանդամ ընկէց ի մէջ գալրոցին Պղատոնի եւ ասէ, Ահա մարդն Պղատոնի:

Բ. ՁՄԱՍՈՒՆՍ Ի ՀԱՄԱՐ ԱՐԿԱՆԵԼ

59. Օճասունս ի համար արկանել է զճասունս իրիք յիշատակել. սա եւ ի յայտնի առնել զիրս եւ յաճեցուցանել բազում ինչ օգտէ: Օ ի մի ըստ միոջէ դիւրաւ եւ բարւոյք իմանամք զիրս, քան խառն զամենայն: () Երինակ ի Աիկերոնեայ:

Ա ի է տունն անթովք Վորընթացւոց եւ Վեղիացւոց. . . իսկ որչափ ինչ դրուազս ոսկւոյ եւ արծաթոյ, որչափ ոսկեհուն հանգերծս ճամկաւորն դիւպակաց, քանի՛օն պատկերս նկարէնս, որքան նշանս եւ սիւնս կճեայս համարիցիք թէ իցեն նորա: Իսկ զերզաստանս որչափ. թող զհասարակացն խառնիճաղանճն արուեստս զխոհակերաց եւ զսեղանայօրինաց եւ զմլաղացաց եւ զգահաւորաց: Ասելեաց վասն այնչափ արս ի սուրսու ունի, որպէս զի հանապազորդ դուսանացն երգովք եւ ի նուազս տաւղի եւ սրնդի եւ ցայգութեան խրախութեամբք բովանդակ մօտաւոր վայրացն հնչել:

Ի տեղւոջէ աստի առնուլ յանգիմանութիւնս զայս ինչ օգուտ գործէ, զի իբրեւ ամենայն կամ երեւելի ինչ մասունքն հաստատիցին, նովին բովանդակ իբքն հաստատին. որպէս եթէ ասիցի, Պոմպէի էր տեղեկութիւն իրաց զինուորութեան, առաքինութիւն, ճոխութիւն եւ աջողութիւն, ապա ուրեմն ամենայն ինչ որ զովութեան է առն զօրաւարի, էր նորա: Ամ եթէ զճասունս իրիք ուրացի ոք, զբովանդակ իրսն ժխտէ. որպէս, Իբրեւ հալածական եղեւ Աիկերոն ի քաղաքէն Հոռոմոց, չգոյր ոք բղեշխ ի քաղաքին, ոչ ծերակոյտ, ոչ միաբանութիւն ազատ ժողովրդեան, ոչ հայրենի սովորութիւն, ոչ իրաւունք եւ ոչ արդարութիւն. ապա բնաւ չէր իսկ քաղաք:

Ի համարելն զճասունս իրիք, եթէ ոչ զամենայն, գէթ զերեւելի ինչ մասունս պարտ է ի կարգ արկանել:

Մասանց երկու ազգք են. կէսք առնեն ողջ եւ կատարեալ, որպէս ուսք, բազուկք, կուրծք եւ այլ

Եւս անդամք մարմնոյ, յորոց թէ մին պակաս իցէ, չէ որջանդամ մարմինն: Այլք չեն այնպէս զմիմեանց զրկախառն, մինչեւ մին առանց ընկերին չկարիցէ կալ. որպէս արդարութիւն, իմաստութիւն, ժուժկալութիւն մասունք են առաքինութեան, սակայն իւրաքանչիւր եւ առանձինն կատարեալ. նոյնպէս անհատք Պետրոսն եւ Յովհան մարդիկ են, բայց եւ մին առանց ընկերին որջոյն մարդ է: Բայց եւ զայս ինչ պարտ է զիտեւ թէ ի մասանց որ որջն կացուցանեն, են որ էականք կոչին, որպէս հոգի եւ մարմին, որ առնեն զմարդն. զի մարդ հանդերձ մարմնով եւ հոգւով, թէպէտ եւ շունիցի ձեռն կամ ոտն, մարդ է, բայց խեղ. այլ առանց հոգւոյ թէպէտ եւ զամենայն անդամս ունիցի, որջ մարմին է, այլ ոչ մարդ: Արդ այնպիսի մասունք որ զէութիւն իրիք յորինեն առաւել հաստատեն, քան զայնս որ միայն որջ կացուցանեն:

Գ. ՍՏՈՅԳ ԸԼՌԻՔ ԵՒ ԼԾԱԿԻՑՔ

60. Օճրկուս զայստսիկ վասն խնամութեանն ի միում վայրի կարգեմք. որ թէպէտ եւ երկոքեան եւս վասն թեթեւութեանն ոչ այնչափ ազգոյ ի հաւանեցուցանել թուին, սակայն որովհետեւ զուարճացուցիչք են, իրրեւ թէ յաղել ինչ եւ ի համեմել զճառն բազում անդամ ի կիր արկանին:

Արդ Ստոյգ ճառք են որ յուղեալ խնդրեն թէ ուստի ելանիցէ անուն ինչ կամ զինչ նշանակիցէ. որպէս եթէ ասէր ոք թէ, Բշխարհ կոչի, զի է ասղի աշխարանաց եւ լալոյ: Աւստի Վիկերսն վասն Վերեայ որ էր այր խոսվարար եւ աւերիչ, հեզնելով ասէ. Չեն ինչ զարմանք թէ զամենայն եղծանէ եւ աւերէ զի Վերրէս կոչի. զի ի նոցա լեզու վերրէսն վարազ նշանակէ, որ է կինճ կամ խոզ վայրի: Եւ Սսկերերան վասն իսեղկատակութեան ասէ. Խեղկատակութիւն ճանապարհ է մեղաց, եւ եթէ անունն խեղ է, ինքն որպիսի՞ ինչ:

Բայց այսպիսի բանք առաւել հանճարեղ ինչ գիւտք են, քան ճշմարտութիւն. արգարեւ դոյզն մտաց է այնպիսի ցուրտ բաջաղանօք կարեւոր ինչ ջանալ ցուցանել, եւ առաւել հիւանդագին քան առողջ մտաց. պարտ է զայս շրէից թողուլ սրոց ընտարոյս իմն է, յանուանց եւ ի դրոց փոփոխմանց եւ ի շրջանաց զիւրեանց անձնատուր վարդապետութիւնս եւ զառասպելս ցուցանել. յորոց եւ յայլ աղգս էանց սովորութիւնն, որ այժմ խափանեալ է, վասն որոց եւ ասացաք իսկ թէ ի զուարճացուցանել միայն արկանի ի կիր. որպէս յորժամ ասիցէ ոք, Ար մեծն է չեծէ. զի ամենայն հոգք ի վերայ աւագին կան. կամ թէ խրամ կոչիցէ զգրամ յոր թէ առանց զգուշութեան մերձենայ ոք, զահալէժ դարահոս անկանի. եւ այլ այսպիսի գիւտք, որ որպէս տեսանես, առաւել ընդ խաղ ասին, քան հաւաստեալ:

Իսկ լծակից կոչին անուանք, որոց ամենեցուն սկիզբն մի է, կամ նոյն մի անուն պէսպէս փոփոխմամբ դնի. որպէս եթէ ասէր ոք, Փառք ի փառաւորեւոյն առնուն զփառաւորութիւն. կամ թէ զգատտապարտելոյն ի դժոխս ասէր ոք, շանապաղորդ եւ շարաշար մահս մեռանին. զի քան զամենայն մահ շար այն է, յորժամ ցանկանայցէ ոք մահու, եւ չիցէ մահկանացու. կամ որպէս Ասկերերան ասէ. Տանջանք ի տանջանս տանջանաւորացն յաւելուցուն:

Գ. ԱՁԳ ԵՒ ԿԵՐՊԱՐԱՆՔ

61. Եզդ այն կոչի ի Հռետորաց որ բազմաց հասարակ է, եւ զբազումս ընդ իւրեւ բովանդակեալ ունի. որպէս առ աքինութիւն որ ընդ իւրեւ բովանդակեալ ունի զարդարութիւն, զժուժկալութիւն, զպրնդութիւն, զիմաստութիւն եւ զայլ բազում առաքինութիւնս. կամ շնչաւորն որ բազում ինչ յոյս առնէ, զմարդիկ, զձիս, զջորիս, զառեւծս եւ զայլ ամենայն անատունս. իսկ կերպարանք կոչին մի մի իւրա-

քանչիւր որ ընդ ազգան ըստ վանդակին, ուստի յօրինակն առարինութիւնն եւ շնչաւորն ազգ են, իսկ արդարութիւնն, ժուժկալութիւն, իմաստութիւն, մարդիկ, ձիք, ջորիք, առեւծք, իւրաքանչիւր մի մի կերպարանք են:

Արկրորումք օրինակօք մարթ է ի կիր արկանել զՎզգ եւ զկերպարանս: Ասխ ի կերպարանաց յազգն անցանել. որպէս արար Աիկերոն իբրեւ պաշտպանեաց բանիւք Վքքեայ պւետի, զի յետ գովելոյ զայրն ապա սկսաւ համօրէն զամենայն պուետս գովել: Աւոդ, ասէ, սուրբ եւ նուիրական եղիցի առ ձեզ առ արս բարեմարդիկս պւետիկոսն անուն, զոր ոչ խուժն եւ գուժուրեք բռնազքօսեաց: Աէմք եւ անապատք տան պատասխանի բարբառովք, դազանք անգամ բարկք եւ անողորմք երգովք ցածնուն եւ զգօնանան, մեք որ ազնուագոյն իրօք խրատեալ եմք, ոչ յօրգօրիցիմք ի բարբառոյ վիպասանաց: Օւոմերոս Աողոփոնացիք զիւրեանց քաղաքացի ասեն լիեալ, Քիացիք իւրեանց իսկ վարկանին, Աաղամինացիք խնդրեն, իսկ Չմիւռնացիք պնդին եւս թէ իւրեանց է. վասն որոյ եւ զմէհեան նորա ի քաղաքին նուիրեցին: Քաղում եւս այնք են, որ հակառակեն եւ կռուին: Աւոդ նոքա զօտարտաին, քանզի պւետ է, յետ մահուանն իսկ ջանան եւ խնդրեն, մեք զսա որ կենդանիս է, որ եւ կամօք եւ օրինօք մեր է, արձակիցեմք եւ հանիցեմք ի մէնջ:

Արկրորդ մարթ է յազգէն ի կերպարանս անցանել, որպէս յորժամ զարդարութենէ կամ զողորմածութենէ բանք իցեն, նախ զառարինութիւն համօրէն գովիցես, եւ ապա գայցես ի դրուատիս արդարութեանն կամ ողորմածութեան. բայց երկրորդս այս գունուրեք լինի, եւ առաւել ի յառաջարանս. եւ գունուրեքն վասն այնորիկ, զի եթէ յետ երկայն երկայն գովութիւնս՝ զըսովանդակ իրացն խօսելոյ, ի մասն ինչ նորա առանձինն գայցես, ձանձրացուցանես զլսելիս:

Պարտ է զիտել զի եթէ ժխտեսցի ազգն, ժխտին եւ կերպարանք, որպէս, Չէ շնչաւոր, ապա չէ առեւծ, ոչ ձի, եւ ոչ այլ ինչ ի շնչաւորաց. իսկ եթէ հաստատեսցի թէ է շնչաւոր, անդէն հաստատի թէ ապա կամ մարդ է, կամ առեւծ, կամ ձի, կամ այլ ինչ նոյնպիսի: Այնպէս եթէ զազգն, որպէս զշնչաւորս, գովեսցես, գովես զամենեսին որ միանգամ ընդ նովին ազգաւ են, այս ինքն է զմարդ, զձի, զի ամենեքին շնչաւորք են. ապա եթէ զտոհմն պարսաւեսցես, զամենայն տոհմակիցսն նոյնգունակ պարսաւես:

Ե. ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՆՆՄԱՆՈՒԹԻՒՆ

62. Ամանութիւն է երկուց կամ բազում այլակերպ իրաց իւրք իրօք ընդ միմեանս հաւասարութիւն կամ միաբանութիւն. որպէս է նմանութիւն ազահի եւ ջրգողելոյ. զի թէպէտ եւ ազահութիւն եւ ախտ ջրգողութեան այլեւայլք են ի միմեանց, սակայն պնու զի երկուքին եւս անյագ են, միաբանին ընդ իրեարս: Այնպէս զմարդ ցասուցեալ նմանեցուցանեն ստիւծու որ մանչիցէ, որ թէպէտ եւ որիչք են ի միմեանց, սակայն վասն մոլեգնութեանն զոյգ համարին իրերաց. եւ փառք եւ ստուեր չեն նոյն, սակայն հաւասար հաշուին, վասն այնորիկ, զի որպէս ստուեր մարմնոց, նոյնպէս փառք առաքինութեան ընկերակից են. ուստի Վիկերոն ասաց. Փառք շուք առաքինութեան են:

Աւ առնի նմանութիւն նախ ի համեմատութենէ, որպէս Վիկերոն. Օ որ օրինակ, ասէ, ոմանք վասն ախտից, կէզք առ թմբուրութեան չզգան կերակրոյն քաղցրութեան, նոյնպէս եւ ցանկացողք եւ ազահք եւ շարագործք չունին զճաշակ ստոյգն գովութեան. կամ Ու վիդեայն, թէ Օ որ օրինակ շողագոյն լինի ոսկի ի հուր, նոյնպէս հաւատք ի ժամանակի վշտաց պայծառանան:

Արկրորդ հարցուածով, որպէս, Սիթէ որ զայլոյ նաւս ընկղմիցեն, նոցա տացէ դք դիւրաւ զիւրսն.

կամ որ զօտարին երիւարս դարմանել չառնիցեն փոյթ,
նոցա զհարդ ոք զիւրսն հաւատայցէ :

Արրորդ յաճախութեամբ նմանութեանց, որպէս.
Այսպէս խաղող սփիւք ճմլի եւ դառնայ ի ճաշակ
զինւոյ . նոյնպէս ձէթ քամեալ եւ մզեալ ի բաց բզ-
մուրն թողու, եւ պարարտանայ ի պարարտութիւն
իւղոյ . նոյնգունակ կասուն ի կալս եւ որոշին ցորենա-
հատքն ի յարդից : ॥ • Գրիգ. յԱւետ :

Չորրորդ ուրանալով եւ հաստատելով միանգա-
մայն զայս օրինակ. Որ աշխարհին փրկութեան զգուշա-
նալ ցանկայ, այնպիսուոյն ոչ տուանին միայն, այլ եւ
ի հրապարակս բարբառք լսելի լինին . ոչ ընդ որմովք
տանն արգելեալ կայցէ, այլ յայտնի իսկ զեղուցու :

Եւայց թէ զհարդ պարտ իցէ գտանել նմանու-
թիւնս իմիք, պարտ է նախ զմտաւ ածել թէ զինչ
ինչ կայցէ, որոյ բնութիւն իցէ նման այնմ որում
նմանեցուցանելն կամիս . որպէս եթէ զսերտ ինչ եւ
զհաստատուն իրաց բանք իցեն, կաց եւ խորհեա թէ
զինչ ինչ կարծր եւ պինդ գտանիցի ի բնութեան,
եւ անդէն գտցես զսպառաժ եւ զաղամանդ, որ
քան զամենայն ինչ պնդագոյն եւ հաստատուն է .
ուստի զեղեցիկ յոյժ նմանեցուցանին միտք անդոց,
այր իմաստուն մըջեան, որ յառաջագոյն հոգայ,
նոյնպէս բարին առիւծու, զգօնն գառին, խորաման-
կութիւն՝ աղուխու, միամտութիւն՝ աղաւնոյ :

Իսկ Աննմանութիւն է որ զմի ինչ յայլոց
զատուցանէ, որպէս Աիկերոն զուսումն յայլոց ճար-
տարութեանց ընտրէ : Օ ի այլ ամենայն արուեստք,
ասէ, ոչ ամենայն ուրեք են, եւ ոչ ի բոլոր տիս, եւ
ոչ ի բնաւ ժամանակս, այլ ուսումն դպրութեան
զմանկութիւն սնուցանէ, զծերութիւն զուարճացու-
ցանէ, ի յաջողութեան զարդ իմն է, ի թշուառու-
թեան ապաւէն եւ սփոփութիւն շնորհէ . առտնին ու-
րախ առնէ, արտաքոյ չէ արգել եւ խափան . ընդ մեզ
բնակէ, ի պանդխտութեան եւ ի շինի ընդ մեզ է :

Զ. ՀԱԿԱՌԱԿՔ

63. Հակառակք կամ յետս ընդդէմք կոչին, որ միանգամայն ի միում իմիք լինել եւ կալ շմարթին, եւ եթէ լինիցին եւս, ի հարկէ կռուին ընդ միմեանս:

Այս տեղի ամփիթեաարոն իմն է, ուր դիւրաւ նշմարին հակառակ մարտք կռուողացն: Չորք ազգք են Հակառակաց, որ կոչին (Նդդիմակաց, Աղերսի, Օրկման եւ Հակառակութեան:

Ա. Ընդդիմակաց ասին որ միմեանց հակառակորդ են, որպէս առաքինութեան՝ չարիք. խաղաղութեան՝ պատերազմ, ջերմութեան՝ ցրտութիւն:

Բ. Աղերսի այնք կոչին, որ թէպէտ եւ շեննոյնք, սակայն ունին ինչ աղերս առ միմեանս, այնպէս զի մին առանց միւսոյն չկարէ լինել. որպիսի են, հայր եւ որդի. զօրաւարն եւ զօրական. վարդապետ եւ աշակերտ. տէր եւ ծառայ. որ տայն եւ որ ընդունի:

Գ. Օրկման անուանին, որոց մին ստացուած է, եւ մեւնն նորին զրկումն. որպէս կեանք եւ մահ, լոյս եւ խաւար, գիտութիւն եւ անգիտութիւն, մեծութիւն եւ աղքատութիւն, զի երկրորդն առ ի չգոյէ առաջնոյն լինի:

Դ. Իսկ Հակառակութեան այն, որ ինքն ընդինքեան հակառակի. որպէս եթէ ասիցէ դք, Առաքինի է եւ չէ առաքինի. ուստի ասաց Աիկերոն վասն Սիղանի թէ մարդասպան է եւ չէ մարդասպան, զի իւիք իրօք յիրաւի էր սպանութիւնն:

Յանդիմանութիւնք որ ի սոցունց ելանեն ազգողազոյն լինին, եւ կարկեն զբերանս հակառակորդաց, զի եթէ ցուցանիցես թէ այս ինչ ճշմարիտ է, վաղվազակի հաստատի թէ ապա նորին հակառակն սուտ է. որպէս եթէ ցուցանիցես թէ արդարեւ առաքինի է, անդէն լինի յայտ, թէ ուրեմն չէ շարաքարոյ, զի երկու ընդդիմակացք ի միում իմիք չկարեն լինել, առաքինութիւն եւ չարութիւն:

Յընդդիմակաց իրաց մարթ է առնել յանդիմանութիւնս, յորժամ բանք բանից կամ միտք մտաց ի դիմի հարկանին, որպէս, Բրբեալք ծաղը առնեն զլուրջս, անօրէնք զարդարս, վատթարք զառաքինիս եւ զքաջս:

Իսկ որ առ միմեանս աղերս ինչ ունին, որպէս հայր եւ որդի, զնոցանէ համեմատութեամբ պարտ է ասել, որպէս, Օր հայրն անպատիժ դորձեաց, զնոյն եթէ որդին առնիցէ, չպարտի պատիժս կրել:

Իսկ զայնց որ զբիւռմն ինչ ցուցանեն, որպէս դիտութիւն եւ ադիտութիւն, զայս օրինակ հնար է, Եթէ կուրութիւն անհնարին եւ առանց ժուժալոյ իցէ, ապա ատաննել ոչ սակաւ հեշտական եւ ցանկալի պարտի լինել:

Իսկ ի հակառակութեան անուանելոց զայս ձեւ օրինակի մարթ է ասել, Բպաշխարութիւն կեցուցիչ եւ առ կեանս է, ապա զխորդ ի մահ կարիցէ լինել. կամ, Ոչ ոք զոր սիրէն թշնամանէ, դու թշնամանս դնես ինձ, ապա զխորդ սիրիցես. զի թշնամանելն սիրելոյ հակառակորդ է:

Իայց զայս ամենայն դիւրին եւս է համեմատութեամբ ընծայեցուցանել, որպէս յորժամ ասիցես, Եթէ մինչ դեռ աղքատն էր չգողանայր, որչափ եւս առաւել յորժամ մեծացաւ. որպէս եւ արար իսկ կիկերոն վասն Սիդոնի. Օր յիրաւի, ասէ, ի պատեհ տեղւոջ, ի դէպ ժամանակի եւ ուր առանց կասկածանաց էր, չիշխեաց սպանանել, զխորդ յանիրաւի, յանդէպ տեղւոջ, յանժամ ժամու եւ անձին իսկ ճգամբք համարձակեր:

Է. ՅԱՒԵԼՈՒԱԾԻ

64. Յաւելուածք են, որ ոչ ի հարկէ, այլ բազում անդամ ընդ իրացն կից են, եւ աճեցուցանեն զլաւութիւն կամ զյոռութիւն. եւ են այսոքիկ Ո՛վ,

Օխնչ, Ուր, Իւ իւիք, Բնդէր, Օխարդ կամ որդունակ, Ե՛րբ եւ Քանիցս անգամ:

Ովն նշանակէ, թէ ո՛ կամ որպիսի դք իցէ որ առնէ եւ որ կրէ, զնորին գաւառ, զտոհմ, զկեանս, զվիճակ եւ զկրթութիւն եւ զայլ եւս ինչ որ նմին անկ իցեն:

Օխնչն ոչ զինչ էն ցուցանէ, այլ արդիւնս ինչ որ զգործոյն զհետ գայ, որպէս գեղնութիւն, այլադունել, դողալ, ոգի զոգւով ածել, տարակուսանք, անուանարին լինել կամ վասնօղ հայրենեացն, կորուստ, պատիժ մահու, սուսեր արեամբ թաթաւեալ: Աոյնպէս եւ նշանակք իրացն, որոց կէսք ի բնէ ընդ իրացն կից են, որպէս ծուխ ընդ հրոյ, սպի վերաց: Այլք շեն ի բնէ կից, այլ հնար է կարծել, որպիսի են յառաջագոյն խօսել, սպառնալիք, ստնածայն, պատրաստութիւն զինուոյ, դարանք եւ այլ նոյնպիսիք:

Ուրն զվայրն ցուցանէ, թէ դա՛շտ իցէ եթէ լեառն կամ ծով, տո՛ւն թէ տաճար, կամ ի սրբո՛ւմ թէ ի պղծում տեղւոջ, ի շէ՛ն թէ յանշէն ուրեք, ի դիպա՛ն վայրի թէ յանդէպ ինչ տեղւոջ. դարձեալ թէ ընդարձակ էր տեղին թէ անձուկ, հասարակաց թէ միոյ ուրուք:

Իւ իւիք, այս ինքն է յորո՛ց ձեռն կամ ոյր ուրուք օգնականութեամբ եւ խորհրդով, սմին պատշաճին ընկերք, զէնք, պահք եւ այլ նոցին նմանք:

Բնդէրն զպատճառսն որոնէ, զմիտս, զկատարած, զդիտաւորութիւն թէ յոր սակս արար, իւր ինչ թէ հասարակաց օգտի վասն:

Օխարդն նշանակէ զօրինակն թէ որդունակ գործեցաւ, դա՛ղտ ինչ թէ յայանի, խորհրդով թէ վրիպակաւ, բռնութեամբ թէ խորադիտութեամբ:

Երբն զժամանակն յայտ առնէ, զժամն, զօր, զչարթ, զամիս եւ զտարի. նոյնպէս ի դիշերի՞ թէ ի տուրնջեան, դարձեալ ի ժամն՛ թէ ի տարածա-

մնւ, էր դուլ եւ պատուէր շառնելոյ յայնժամ, եթէ
թոյլ տուեալ էր :

Քանիցս անգամն ուսուցանէ զնուազան, մի՞ ան-
գամ թէ բազում անգամ, որով առաւելու շարու-
թիւն կամ բարութիւն իրացն :

Արպիսի առատ համբարս մարթի ժողովել աս-
տի ճարտարախօսն . ահաւասիկ յայտնի ինչ օրինակ :

Իրուտոս մտերիմ բարեկամ Աայսեր, միաբա-
նեալ ընդ Աասեայ եւ ընդ այլ եւս արս վաթսուն ի
ճերակուտէն, սպան զնա զիւր եւ զաշխարհին երախ-
տաւոր, յանկարծ ի մէջ ճերակուտին, ի նմին իսկ
աւուր յորում թագ կապելոց էր Աայսր : Արդ սպա-
նութիւնն մի է, բայց օրինակ եւ պայման սպա-
նութեանն բազմապատիկ եւ անհնարին : Ասի որ
սպանանէն Իրուտոս է, եւ որ սպանանին Աայսր . նա
երախտառու եւ սա երախտագործ, նա մտերիմ եւ
ընտանի սորա, իսկ սա իշխան եւ հայր անուանեալ
համօրէն աշխարհին . միովն ապախտաւոր գտանի Իրու-
տոս, եւ միւսովն տիրասպան եւ հայրանարդու . վան
որոյ եւ ընդ այն մանաւանդ մորմուքեցաւ, ասնն,
Աայսր, զի եւ Իրուտոս ընդ իւր թշնամացեալ էր,
զոր անչափն սիրէր : Իսկ զինչ դիպելոց էր յեա զնա
սպանանելոյ, այնպիսի ինչ, յորմէ հասանէր անտե-
րունչ լինել իշխանութեանն, զի յարու մանկանէ
անժառանգ էր, եւ միւսանգամ յառնելոց էր ընտա-
նի պատերազմն : Ի՞նչ իւր, օգնականութեամբ Աասեայ
եւ վաթսուն խորհրդականաց, որոց ամենեցուն բա-
րերարեալ էր Աայսր, զի զպատերազմ նոցա պատե-
րազմեցաւ, մեծացոյց զնոսա աւարաւ, եւ տեարս ա-
րար զչոտմայեցիս աշխարհի : Իսկ եթէ զտեղին քրն-
նեցուք ուր զնենդն գործեցին, անհնարին աճէ շա-
րութիւնն . այս ինքն է ի մէջ ճերակուտին, անդ ուր
տուն էր խորհրդոյ, ի շինութեան եւ ի խաղաղու-
թեան տեղւոջ արիւն եւ սպանութիւն, որով անմե-
ծար առնէին զտեղին, որ նուիրական համարէր : Աւ

վասն էր իրիք արդեւք յայն յօժարեաց, ոչ առ զան-
 ձին ինչ կամ զաշխարհին վրէժ խնդրելոյ, զի գիտէր
 թէ Նստոնինոս եւ Ղեպիդոս յերից արանց իշխանու-
 թենէ, գրգռելոց եւ բռնանալոց էին, ապա յայտ է
 թէ առ շարակնութեան եւ շարակամութեան: Վայց
 եւս չար օրինակ սպանութեանն է. զի եթէ ի պատե-
 րազմ եկեալ եւ ճակատ առ ճակատ յարդարեալ էր,
 շէին այնչափ աղէտք, այլ մեղմեխանօք, բարեկամու-
 թիւն կեղծաւորեալ. զի մի ոմն մատուցեալ բուռն
 հարկանէր զգրօշակէ նորա, որպէս թէ աղաչել ինչ
 ունիցի, եւ անդէն այլքն յանկարծ զէն վերացուցեալ
 հարկանէին զնա, վէրս ոչ մի, այլ քսան եւ երիս
 եղեալ, որ յետին գազանութեան է: Վայց եկ եւ
 զայն տեսցուք, թէ երբ եւ յորում ժամանակի այս
 ամենայն վճարէր. ի նմին իսկ աւուր, յորում Վայսր
 թագ կապելոց էր, յետ այնչափ աշխատութեանց եւ
 պատերազմաց եւ այնչափ անչափ շինութեանց. եւ
 զայն ոչ բռնութեամբ ինչ, այլ ամենեցուն կամօք,
 որում եւ անդրի պատկեր կանգնեալ էին յամենայն
 մեհեանս, եւ մինչ քաղաքն սղջոյն յուրախութեան
 եւ ի խնճոյս էր, թէ թագաւոր տեսանելոց են:

Վայնպէս զՂեզոստեայ ասեն թէ զՂուկիոս Վին-
 նայ զթոռն Պոմպէի զիւր ընտանի, որ նմա նենգ
 գործել կամէր, արար բղեշխ: Արդ Ղեզոստոս Վայսր
 շումայեցւոց զՎիննա զայր ապախտաւոր, որ սպանա-
 նել զնա կամէր, փոխանակ զլիսապարտ առնելոյ,
 յառաջ ձգէր եւ տայր նմա իշխանութիւն բղեշխու-
 թեան. եւ զի՞նչ կայր անտի ակն ունել, եթէ ոչ
 ապախտիս, զի մարթ էր նմա իշխանութեամբն զեղ-
 ծանել եւ եւս չար նմա զնենդն մնէքենայել. եւ այն
 ուր, յերկրի թշնամեաց, ուր կասկածագոյն պարտ
 էր լինել, եւ արագ արագ ի միջոյ բառնալ զդաւա-
 ճանն, զի եւ այլոց ահ արկցէ, իսկ նա եւ այնպէս
 ներէր նմա: Վայց որով իւիք, իշխանութիւն տալով
 եւ յառաջ մատուցանելով, եւ ոչ վայրապար իշխա-

նութիւն, այլ բղէշխութեան, ի վերայ բիւրուց հազարայ զօրաց: Ասկ մեծ քան զամենայն օրինակ բարերարութեանն է. զի եթէ միայն զարեւն նմա շնորհէր եւ պատուհաս ինչ ի վերայ դնէր, տակաւին զարմանալոյ էր. բայց սա յետ իմանալոյ զդաւաճանութիւնն, առ ինքն կոչեալ ասէ, խնդրես, ասէ, սպանանել զիս, բայց ես երկիցս թողի քեզ, եւ արդ բղէշխ եւս կացուցի զքեզ, գոնեայ արդ բարեկամեաց ընդ իս, եւ տեսցուք ո՞ զո զլիցէ. է՞ քան զայս մարդասիրութիւն մեծ, իշխանի ընդ ասն վրիժապարտի զիջանել. եւ հի՞մ այնպէս զիջանիցի, միթէ կարօտ ինչ էր նովաւ, այլ առ խնամստ մտացն եւ առ գութ հաւուն, զի թոռն էր Պոմպէի, քաջի զօրաւարի եւ անուանոյ, զի մի այնպիսոյ ասն զաւակ բարձցի: Ա միտ առ եւ զժամանակն թէ երբ գործէր, յաւուր յորում նորա բանս եղեալ էր սպանանել զնա մինչ դեռ զոհել կայցէ ի մեհենին:

Աւ Վիկերոն ի ձեռն յաւելուածոց կշտամբէ զդաւաճանութիւնն զոր նիւթեաց Վղոզիոս Միղոնի:

Վասն յանձնէ Վղոզեայ, թէ որպիսի դք էր, անօրէն եւ բռնաւոր. երկրորդ ի գործոցն, թէ զինչ գործեաց, զՄիղոն զայրն անկազմ եւ անգէն կամեցաւ բռնաբարել. երրորդ ի տեղւոջէն, զի պատահեցաւ նմա յայնպիսում վայրի ուր դիւրին էր զնա հարբս տահարել. չորրորդ յրնկերացն, այս ինքն է արամբք սպառազինօք զորս ի դարանի արարեալ էր ի բարձրաւանդակ տեղւոջ, որ եւ սպանին իսկ զժառայս Միղոնի, եւ զկառսն շուրջ պատեցին. հինգերորդ ի ստեպ ջանալոյն, զի բազում անգամ մահ սպառնացեալ էր նմա, եւ նենդ գործեալ. վեցերորդ անգամ ի պատճառացն զի Միղոն միայն էր որ նորին յանդրդնութեան հակառակ կայր, եւ վասն այնորիկ սխալեալ էր ընդ նմա Վղոզիոս. եւ թներորդ անգամ յօրինակէն, զի դարանակալն հեծելովք եկն ի վերայ նորա, որ չէր նորա սովորութիւն, մինչ Միղոն ան-

դրուարաւ երթայր ծառայիւք եւ աղախնամբք. ու թերորդ անգամ ի ժամանակէն, զի ոչ վասն այլ իրիք պնդէր Վղողիոս յայն ճանապարհ յայնպիսում ժամու, բայց զի դարան գործիցէ Վիղոնի:

Բայց եւ զայս ինչ պարտ է գիտել, զի ոչ ամենայն դէպք զամենայն յաւելուածս զայսօսիկ միանգամայն ունին. այլ դէպ լինի բազում անգամ զոմանս միայն ցուցանել, եւ յայնժամ գործ է որոշել, թէ զոր առնուլ պարտ իցէ, եւ զոր թողուլ, զի ազգոյ եւ զօրաւոր լինիցին յանդիմանութիւնքն: Բստ այսմ օրինակի Վիկերոն յերրորդում ճառին Վատիղինայ, յայտ առնէ թէ զմնասակարս խորհրդոյն, որ զապստամբութիւնն նիւթէին յերեսացն կերպարանաց ծանեաւ: Ինձ արդարեւ ճշմարիտ յանդիմանութիւնք եւ նշանակ մնասուն թուեցան տախտակքն, նշանք եւ վաշաք, նա իւրաքանչիւր ուրուք ի նոցանէ խոստովանութիւն. մանաւանդ եւս ճշմարիտ քան զնոսին, գոյնք եւ աչք եւ կերպարանք եւ լուծիւն. զի այնպէս ընդարմացեալ ապշեալ կային, եւ զգետին նշմարէին, այնպէս զաղտաղողի հազիւ ընդ մմեանս հայէին, զի մինչ չեւ յայլոց դատապարտ լիեալ, անձամբ զանձինս դատապարտէին:

Սակաւիկ ինչ երկայնեցաք վասն դիւրութեան մանկանց:

Ը. ԱՌԱՋԻՆՔ ԵՒ ՅԱՋՈՐԴՔ

65. Առաջին այն կոչի, որ քան զայլ ինչ ի հարկէ յառաջագոյն է, թէպէտ եւ ինքն չէ այնր պատճառ. որպէս դարուն ի բնէ յառաջագոյն է քան զամառն, բայց ինքն չէ պատճառ ամարայնոյ: Իսկ յաջորդ այն որ այլում իմիք յաջորդէ բնութեամբ, որպէս ամառն դարնան:

Յառաջնոցն զյաջորդս երկուք օրինակօք մարթ է ցուցանել, ճշմարտութեամբ եւ չաւանութեամբ կամ կարծեօք: Ճշմարտութեամբ յայնժամ, յոր-

ժամ յաջորդն զառաջնոյն ի հարկէ եւ ի բնէ զհետ
 եկեսցէ, որպէս, Նաւաւ, ապա մեռանելոց է. Օսազեաց
 արեւ, ապա տիւ է: Իսկ կարծեօք յայնժամ, յոր-
 ժամ յաջորդն ոչ միշտ եւ ի բնէ նոյնպէս պատահէ.
 որպէս, Իազոււմ ծաղիկք են, ապա պտուղ բազում
 լինելոց է, հաւանութեան է, այլ ոչ ճշմարիտ, զի
 մարթ է թէ հարկանիցին ի սառամանեաց կամ ի
 խորշակէ կամ ի թրթրոյ, եւ ոչ տացեն պտուղ բա-
 զում: Իայց ի յաջորդաց զառաջինսն մարթ է միշտ
 ճշմարտիւ ընծայեցուցանել, որպէս, Պտուղ բազում
 է, ապա եւ ծաղիկք բազումք եղեն. Ունի սպի,
 ապա վէրս առեալ է. զի պտուղ եւ սպի չկարեն ե-
 բուել, բայց եթէ ի ծաղկանց եւ ի վիրաց:

Թ. ՊԱՏՃԱՌՈՒՔ ԵՒ ԱՐԴԻՒՆՔ

66. Պատճառ այն է, ուստի է ինչ, կամ այն
 որոյ զօրութեամբ առնի ինչ. որպէս վէրք պատճառ
 են մահու, ահալ կերակուրք հիւանդութեանց:

Չորս ազգս պատճառաց վարկանին փիղիստիպք.
 այս ինքն է, պատճառ նիւթոյ, պատճառ կերպա-
 րանաց, պատճառ արդիւնագործ եւ պատճառ կատա-
 րածի, կամ որ նոյն է Նիւթ, կերպարանք, Բրդիւ-
 նագործ եւ կատարած:

Ե. Նիւթ է ատաղձ կամ այն յորմէ կազմի ինչ
 կամ յօրինի. որպէս մարմարիսն կամ կուճ է նիւթ
 կճեայ սեան. նոյնպէս մարմին մարդոյ է իբրեւ նիւթ:

Ի. կերպարանք են, որ զմի ինչ յայլոց զատա-
 նեն եւ ընտրեն. որպէս խօսողութիւն կամ միտք
 մարդոյ, զի միտք որոշեն եւ ընտրեն զմարդն յայլոց
 անասնոց. նոյնպէս երկայնութիւն եւ բոլորակութիւն
 եւ այլ եւս հանգամանք սեան կոչին կերպարանք
 սեան, որովք որոշի սիւնն ի մարմարեայ սեղանոյ
 կամ յաթոռոյ, որ չորեքկուսի լինին կամ հարթ:

Պ. Բրդիւնագործ կոչի ճարտարն կամ գործիչ,
 որ զնիւթն յայս կամ յայն նիչ կերպարանս յօրինէ,

որպէս, զկուճն առնէ երկայն եւ բոլորչի, որով լինի սին, կամ զփայտն լայն եւ տափարակ որով կազմի սեղան:

Դ. Իսկ կատարած կոչի այն որոյ վասն լինի ինչ, որպէս, կատարած պատերազմի է յաղթութիւն եւ խաղաղութիւն, զի վասն յաղթութեան եւ խաղաղութեան մղի պատերազմ. նոյնպէս երանութիւն է կատարած մարդոյ, զի վասն այնորիկ գործէ մարդ զամենայն, կամ պարտի գործել, զի երանութեան հասանիցէ:

Յ. Չորեափն պատճառս եւս միանգամայն յայտարարուք օրինակաւ Հրէից տաճարին: Ախլթ են քարինքն եւ եղեւնափայտ եւ ոսկի եւ արծաթ եւ այլ եւս պատուական նիւթք. կերպարանք են զեղեցկութիւնն եւ պէսպէս յօրինուածք տաճարին. արգիւնադործ Սողոմոն է եւ այլ եւս ճարտարք որ ի նմին աշխատ եղեն. իսկ կատարած շինուածոյն Աստուծոյ պաշտօնն, յորոյ ի փառս կազմեալ յօրինեցաւ տաճարն:

Իսկ արգիւնք կոչին գործքն որ ի պատճառաց անտի դան յառաջ. որպէս տաճարն որ ի չորեցունց պատճառացն կազմեցաւ:

Ի պատճառաց մարթ է ցուցանել զարդիւնսն. որպէս ի նիւթոյ, Վնեաց փայտ եւ երկաթ եւ կտաւ եւ շուան, ապա ունի ինչ առնել ի մտի:

Ի կերպարանաց, որպէս, Էրար կայմս եւ զեկս եւ առազաստ եւ խարիսխ, ապա նաւ գործել հանգերձեալ է:

Յանդիւնադործէն, որպէս, Հմուտ է ճարտարապետն, ապա զեղեցիկ լինելոց է շինուածն:

Ի կատարածէն, Սարդոյ տուաւ իմաստութիւն եւ հանճար, առ իմանալ եւ խորհել, եւ ոչ շուայտել եւ զեղխել:

Ի այց քանզի ի պատճառաց զգործս ընծայեցուցանել զժուարին է, ճարտարախօսք սովոր են ա-

ուաւել ի դործոց անտի զպատճառս ցուցանել, որպէս, Ծօր ժողովէ բնարանաւ, ի գունդս գունդս հատանէ, ապա ունի ի մտի տալ պատերազմ. նոյնպէս, Ընածին բարոյիւք անմահութեան ցանկամք, ապա հոգիս անմահս ունիմք. որ յայտնի եւս է, քան թէ ասէիր, Ոգիս անմահս ունիմք ի բնէ, ապա բնութեամբ անմահութեան փափայրեմք:

Ժ. ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ

67. Համեմատութիւն է որով երկու կամ բազում իրք ընդ միմեանս հարկանին յիմիք, որպէս եթէ ասիցի, Զուղիսս Վայսր քաջ էր իբրեւ Ղլ. Ղեքսանդր. ուր Վայսր եւ Ղեքսանդր ընդ միմեանս համեմատին ի քաջութեան:

Արեք ազգք են համեմատութեան. առաջին յորժամ հաւասարք ընդ հաւասարս կշռին, որպէս, Ծօր օրինակ որ զհայր սպանանէ արկանեն ի պարկ եւ ընկենուն ի ծով, նոյնպէս եւ որ զմայր սպանանէ, նմին պատժոյ արժանի է: Արկորդ յորժամ մեծ ինչ ընդ փոքու համեմատի, որպէս Վիկերոն առնէ. Մախնիքն մեր, ասէ, վասն յանիրաւի զրկելոյ վաճառականաց ոմանց կամ նաւորդաց բազում անգամ ետուն մարտ պատերազմի, եւ արդ զոր վրէժս չիցէ պարտ ձեզ պահանջել, ուր այնչափ բիւրք քաղաքացւոց միով պատգամաւ եւ ի միում ժամանակի անխնայ խողտողեցան: Աւ Որատիոս ասէ. Աթէ աւազակք յառնեն գիշերայն զի զմարդիկ սպանցեն, սրչափ եւս առաւել քեզ պարտ է հսկել եւ արթուն կալ զի զանձն քո զերծուցես: Արրորդ ազգ համեմատութեան է զփոքր ինչ ընդ մեծին ի կշիռ համեմատութեան բերել. որպէս Տերենտիոս ասէ. Որ ծնողացն ոչ համբերէ, զհարդ այլում տանիցի. եւ Ովիդիոս ասէ. Ընդէր չիցէ մարթ ցածուցանել զցասումն Վայսեր, ուր տեսանեմք զի եւ զիք անգամ զան յաղերս եւ ողորին:

Այժմէ ասիցէ ոք թէ զինչ խտիր կայցէ ի մէջ համեմատութեան եւ ի մէջ նմանութեան, ասեմք, թէ նմանութիւն պատշաճի առ զոյն կամ առ որպիսութիւն իրիք. իսկ համեմատութիւն ի քանիօնութիւն նորա: Ամա թէ ի համեմատութեան զոյ զուգականութիւն, մեծութիւն եւ փոքրելութիւն. իսկ ի նմանութեան չիք ինչ նոյնպիսի. դարձեալ զօգ նմանութեան է իբրեւն. Որ արբենանն չզգան ինչ իբրեւ զննջեցեալսն քնով. իսկ համեմատութեան զօգ է որպէս կամ զոր օրինակ. . . նոյնպէս. Որպէս որ ի քունն կան չզգան, նոյնպէս որ յարբեցութեան են:

Բ. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՄ ՀԵՌԱՆՈՐ ՏԵՂԻՔ

68. Արտաքին տեղիք, որ եւ հեռաւորք անուանին, են այնք, որ շէն ի մտաց եւ ի հնարագիտութենէ ճարտարախօսին, եւ վասն այնորիկ յոյժ ի դէպ Յանդիմանութիւնք առանց արուեստի եւ ճարտարութեան կոչին յԱրիստոտեղեայ. ոչ եթէ ամենեւին անմասն են ի ճարտարութենէ, ուր վասն սոցա մանաւանդ խնդրի արուեստ, այլ վասն զի ոչ բղիսն յիրաց անտի. զի արտաքուսս դան, եւ վկայութեամբ եւ ճոխութեամբ հաստատին, եւ ոչ հնարին որպէս հնարի Վիւտ:

Արդ ոչ այլ ինչ են արտաքին տեղիք, բայց վկայութիւնք, որ կրկին են Աստուածեղէն եւ Սարգկեղէն: Աստուածեղէն վկայութիւն համարին շրամանք, Վուշակութիւն, Բղձութիւն, եւ Պատասխանի: շրամանք են բարբառ Աստուծոյ. գուշակութիւն կամ հմայք են վկայութիւն զոր ի թռչելոյ կամ ի ճշելոյ եւ ի ճռուողելոյ կամ ի ճարակելոյ հաւուց իմանային. բղձութիւն է պատասխանի բղձից եւ հարցկաց: Իսկ պատասխանոյ երեք ազգք են. կամ քրմաց են, զի ի հին ժամանակս վասն հրամանաց եւ գուշակութեանց եւ բղձութեանց զքուրմս հարցանէին, եւ կամ հաւահմայից որ յընդերաց հաւուց

խօսէին ըղձութիւնս, եւ կամ երազահանաց որ մեկնէին զերազս. բայց այս ամենայն հեթանոսաց են. մէք զմերս տեսցուք:

Բուն Նստուածեղէն վկայութիւն այն է, որոյ ինքն Նստուած է տուիչ եւ պատմիչ, ինքնին կամ յայլոց ձեռն. որպէս զրովք սրբովք, մարգարէիւք, որ եւ հրեշտակօք մատակարարի:

Բնդ մարդկեղէն վկայութիւնս համարին նախ այնք որ ընդ իշխանութիւն եւ ընդ գիտութիւն կամ ընդ մեծութիւնս եւ առաքինութիւնս մարդկան ունին ինչ հաղորդութիւն, որոց սակի են Օրինակք, Խմաստք, Նասսպելք, Նշանակք կամ այլ ինչ որ ի նախնեաց գրոց ելանեն:

Ե. Օրինակք են զերս լեալս, կամ որպէս թէ լիեալ իցեն յիշատակել. առ օրինակս պահանջի, նախ զի իցեն գործեալ յայնպիսի մարդկանէ, որ այնց իրաց բաւականք իցեն, եւ ի նոցանէ ասացեալ կամ գրեալ. երկրորդ զի պատշաճ իցէ եւ յանկ. երրորդ ի տոհմային պատմութենէ եւ ոչ յայլոց ազգաց, զի մի ստութիւն ինչ խառնեսցի. կամ ի տարեկան եւ յօրական գրոց, որ յամենեցուն ձեռս կրին եւ ծանօթ են ամենեցուն. եւ չորրորդ զի գեղեցիկ իմն ձառեսցին եւ զմտակայսն տեղեկացուցեն:

Բ. Խմաստք են իմաստուն բանք արանց գիտնոց, որպէս աստուածախօսաց, փիղիսոփայից, ճարտարախօսաց, պատմագրաց, եւ պէտեկից:

Գ. Օգոսսպելաց ասացաք յիւրում տեղւոջ (19), ընդ առասպելս համարին եւ առեղծուածք, որ են այլափոխ նկարագիրք. որպէս առ յայս առնել զտարիասիցես, Նյր ոմն է որոյ վեց զյոյք ուստերաց են, որոց երեսուն դատերք են, որ շեն հաւասարք գեղով, եւ սպիտակք են եւ թուխք. ամենեքին անմահք են, բայց եւ մեռանին ամենեքին: Որոյ մեկնութիւն յայտ է: Պէտեցիկ առեղծուած է եւ երկնէն երկին. Արինէր երկին եւ երկիր, երկնէր եւ

ծիրանի ծով. երկն ի ծովուն ունէր զկարմրիկ եղեգ-
նիկն. ընդ եղեգան փող ծուխ ելանէր, ընդ եղեգան
փող բոց ելանէր, եւ ի բոցոյն պատանեկիկ վազէր,
նա հուր հեր ունէր. ապա թէ բոց ունէր մուրուս,
եւ աչկունքն էին արեգակունք. որ զէլս արեգական
յայտ առնէ:

Դ. Աշանակ է նշան եւ ցուցիչ իրիք, դրով
եւ կամ անդիր, եւ կամ որով եւ օրինակաւ
զգայցին եւ իմանայցին: Աւտի ի նշանակաց որ բա-
նիւք են, կէսք ի նկարս եւ ի պատկերս յանդիման
կացուցանին, այլք եւ բանիւք եւ նկարու ցուցանին:
Աերպարանք նշանակաց են մեհնական նշանադիրք
որոց կամ ի նմանութենէ նկարին պատկերք, որպէս
յորժամ փոխանակ թագաւորի արեգակն նկարեսցի,
եւ ի տեղի հնազանդելոց աստեղք: Աւ կամ ոչ ի
նմանութենէ իմքէ, այլ ի պատշաճութենէ, որպէս
եղջերուաւ երկար կեանք նշանակին, եւ ի ձեռն ա-
ռիւծու զօրութիւն եւ զուարթութիւն: Աւ կամ ա-
ռակաւ իմն որ բանիւք կամ պատկերաւ լինիցին, եւ
կամ եւ բանիւք եւ պատկերաւ միանգամայն. որպէս
փոխանակ Նեղոս գետոյ նկարիցի ծեր սյր սափորով
հանգերձ, որ կայցէ ստէպ ի հեղուլ զջուրն. եւ ի
նեքոյ նհանգս գետոյ, եւ ի մէջ բաղկաց ծերոյն ման-
կունս որ խաղայցեն: Աամ թէ կամեցեալ զամն նկա-
րել, զայս օրինակ ստուերագրեսցի. նկարեսցի այր
եւ շուրջ զնովաւ մանկունք երկոտասան, որոց իւրա-
քանչիւր ընծայեսցին նշանք ըստ պէտպէս կերպարա-
նաց ամսոց. եւ առ միում միում ի նոցանէ կայցեն
օրիորդք երեսուն սպիտակ եւ թուխ գունով, որ զմի-
մեանս հալածիցեն, եւ որպէս թէ պարս պարեսցեն:
Այրն ամ է, եւ երկոտասան մանկունքն երկոտասան
ամիւք են իւրաքանչիւր իւրով նշանաւ. երեսուն
օրիորդքն աւուրք ամսոց են, սպիտակն եւ թուխ
գոյն աիւ եւ գիշեր է, որ անդադար հալածեն զմի-
մեանս, եւ պարս պարեն զի հանապազ շուրջ գան:

Արկրորդ, մարդկեղէն վկայութիւնք անուանին որ միանգամ կատարիցին ի կամաց թաղաւորաց եւ իշխանաց եւ իրաց արքունի. ի սոցա համարի են Օրէնք եւ Իրաւունք, Հրովարտակք եւ դատաւճիռք

Ը. Օրէնք Յաւիտենական, Բնական եւ Մարդկեղէն կոչին: Յաւիտենականն օրէնք են յԱստուծոյ միայնոյ. բնականքն են ի նմին յԱստուծոյ, բայց եւ ի բնութենէ: են իբրեւ ի առչէ. իսկ մարդկեղէն օրինաց մարդիկ են օրէնսդիր: Աւ մարդկեղէնս այս օրէնք կամ Ակեղեցւոյ են եւ կամ Քաղաքի. եկեղեցւոյ օրէնք դնին ի գլխաւորաց եկեղեցւոյ, որոց տուեալ է իշխանութիւն կարգելոյ օրէնս, որպիսի են քահանայապետք. իսկ քաղաքաց օրէնք յիշխանաց դնին:

Թ. Իսկ իրաւունք կրկին են մի Ազգաց, եւ մեւս եւս Իւրաքանչիւր. ազգաց իրաւունք առ ամենայն ազգս եւ ազինս գնան. իսկ իւրաքանչիւր իրաւունք են, իւրաքանչիւր դաւառի կամ թաղաւորութեան կամ քաղաքի, որոց կէսք զրեալ են, եւ կէսք ի սովորութենէ աշխարհին կամ քաղաքին յայտնի եւ ծանօթ են:

Չ. Օրինաց եւ զիրաւանց ասիցես, նախ թէ զօր են ընկերհաշտութեան, հաստատութիւն թաղաւորութեան, ջիղք եւ նեարդք արդարութեան. երկրորդ գովեսցես զնոսա յորոց օրէնքն եղան. երրորդ անգամ ցուցցես զմիասն, որ լինելոց է, եթէ անպատիժս անցանիցեն զօրինօքն. արժան է երբեմն եւ զբանս օրինացն բերել ի մէջ, իբրեւ զվճիռ իմն, որպէս, Որ տացէ զմարդ նենգաւ սպանանել, մահապարտ է:

Աթէ օրէնք հակառակ իցեն քեզ, խախտիցես զնոսա եւ խորտակեսցես. եւ ասիցես նախ թէ հին ինչ են օրէնքն, եւ չունին այլ եւս զօրութիւն. որպէս Աիկերոն. Այժմ, ասէ, ինձ զպորկեան օրինացն յուշ առնիցես: Արկրորդ օրէնս հակառակ օրինաց դնիցես. երրորդ ասիցես թէ ոչ ընդ բանս օրի-

նացն, այլ ընդ օրէնսդրին միտս պարտ է նայել: Չորրորդ ասացես, թէ արժան է ուրեք վասն մեծի ինչ օգտի ի բաց կալ յօրինացն: Արպէս յորժամ Վիրգիլիոս ի մեռանել իւրում պատուէր ետ զերգս իւր այրել հրով, Բագոստոս Վայսր ոչ եթող կատարել զպատուէրն, զի որպէս եւ ինքն ասէ. Եւ է զօրինօք ինչ անցանել, քան զմեծ ինչ եւ զդժուարին գործ ամաց բազմաց, ի միում վայրկեան ժամանակի սպառել եւ կորուսանել:

Գ. Հրովարտակք եւ դատավճիռք են վճիռք ժողովրդեան կամ ծերակուտին, եւ հրամանք եւ պատուէրք թագաւորաց եւ իշխանաց. ընդ սոսա համարին եւ տախտակք. եւ տախտակ անուանեալ կոչին ամենայն վկայութիւնք զրով հաստատեալք, որպիսի են դաշինք եւ ուխտք եւ սակք եւ դիւանք եւ կտակք եւ որ նոցին նման են, որ ի մէջ բազմաց կռին եւ հաստատին:

Արրորդ ազգ մարդկեղէն վկայութեան է զսր կամակար ղք եւ ազատութեամբ ասաց, կամ զոր բռնաբար ետուն խոստովան լինել, որպէս պատժապարտաց ի տանջանս: Բնդ սոյնս հաշուին Վկայք, Երգումն, Համբաւ եւ Տանջանք:

Ը. Վկայք անուանին, որ վասն իրաց ինչ զօրոց հակառակութիւն է, բանիւք կամ զրով բերեն վկայութիւն ի մէջ: Եւ վկայից կէսք ականատեսք կոչին, որոց հանդիսատեսն լեալ է. եւ կէսք ականջալուր որ միայն լուեալ իցեն. եւ այլք երգուեալ ասին, որոց երգուեալ եւս իցէ: Վկայութեան բազում յարգանս եւ պատիւ շնորհէ նախ եթէ վկայքն ականատեսք իցեն, կամ ականջալուր, կամ թէ երգուուցուն. երկրորդ եթէ իցեն արք լաւք եւ պիտանիք. երրորդ անգամ եթէ իցեն նշանաւորք եւ աւագք. չորրորդ անգամ որ ոչ յակնկալութենէ իմեքէ, եւ ոչ ի ցանկութենէ յորդորիցին զնել վկայութիւն:

Իսկ տկարացուցանել զվկայս մարթի, եթէ ասիցես նախ թէ վկայքն վատանշանք են, դուզնաքետյք եւ շնչինք. կամ ծառայք, ընտանիք, բարեկամք, կամ բնաւ կասկածոտք: Արկրորդ եթէ ցուցցես թէ նոքա ոչ միմեանց միաբան, այլ երկպառակս խօսին. երրորդ եթէ դու եւս ազնուագոյն վկայս մատուցես նոցայոցն. չորրորդ անգամ յանդիման կացուցես զնոցա վկայութեանն զձձութիւն. հինգերորդ անգամ եթէ ասիցես արքն այնոքիկ խոնարհագոյն վիճակի են, եւ դիւրաւ մարթին պատրել:

Ի. Արդունն է հաստատութիւն կամ հրաժեշտ իրիք իրաց որ լինի օրինօք աստուածպաշտութեան, որով զաստուած ի վկայութիւն տանիմք: Ապա եթէ զհաւատարմութիւն երգմանցն կամիցիս տկարացուցանել, ասասցես ընդ ճարտարաբանն Սաղուխանեայ, թէ Վաղումք գտանին որ ստէպ սուտ երզնուն, քան որ ամենեւին ոչ երզնուցուն: Վարձեալ նոյն այր. Աթէ սուտ երզնուցուն փրանկք, միթէ նո՞ր ինչ գործեն, որ զերդմնատութիւն ազգ ինչ բանից համարին, եւ ոչ եթէ յանցանս:

Գ. Համբաւ կամ հռչակ կոչի աստ բանն որ ի մէջ ժողովրդեան տարածեալ է, որոյ մեծ իշխանութիւն է, եթէ չիցէ ի սուտակ եւ ի բանսարկու, կամ ի դիւրահաւան մարդկանէ հնարեալ: Աթէ համբաւքն ձեռնտու իցեն քեզ, ասիցես թէ մեծ զօրութիւն եւ իշխանութիւն է համբաւոյ, որում ամենայն զք փութայ հասանել: Աւ ասիցես թէ բարբառ ժողովրդեան է իբրեւ զհրաման պատասխանոյ, որում չէ մարթ վրիպել. եւ բերցես ի մէջ զաքանչելի բանս Պղինեայ առ Տրայիանոս թէ Եւրաքանչիւր ոք առանձինն եւ խաբէ եւ խաբի, այլ մի ոք զամենեւին կամ ամենեքին զմի ոք երբեք ոչ խաբեցին:

Ապա եթէ համբաւն հակառակ ինչ իցէ բանից քոց, յայնժամ ցուցցես թէ քանի դոյզն եւ առանց հաստատութեան է համբաւ, որ բազում անգամ եւ

արանց անարատից բիծ դնէ, եւ հանէ անուն չար . եւ թէ առաւել ի կարծեաց քան ի ճշմարտութենէ ուսեալ խօսի ամբոխն . եւ ասացես զբանս Աննեկայ թէ, Յանդիմանութիւն չարեաց է ամբոխն :

Դ. Տանջանք կամ հարցափորձ են խոշտանդանք, որով զճշմարտութիւն կամին որսալ ի բերանոց յանցաւորաց . եւ զօրութիւն բազում է այսր տեղոց ի հաւանեցուցանել, եթէ յետ հարցափորձին եւս յանցաւորն տեւիցէ բաւիցէ ի խոստովանութեանն : Աւ նմին հակառակ յայտ դայ անմեղութիւն նորա որ զբարտիւն, եթէ տանջանօք եւս ոչ եկն ի խոստովանել զվնասն :

Ապա եթէ խոստովանեալ եւս իցէ զվնասն, եւ դու կամիցիս տակաւին պաշտպանել նմա, յայնժամ ասիցես թէ սուտ եւ առ վշտի վտանգի է խոստովանութիւն որ տանջանօք լինի . զի յայտնի եւ ծանօթ է ամենեցուն թէ բազում անպարտք առ վտանգի տանջանաց եւ առ ահի ցաւոցն բազում անդամ յօժարեցին ասել սուտ . զի որպէս գեղեցիկս ասաց ոմն . Որ կարօղն է համբերել ստէ, նոյնպէս ստէ եւ որ չէն կարօղ հանդուրժել . եւ Աիկերոն ասէ վասն Շիղայի . Հարցափորձ ծառայից եւ տանջանս սպառնայ, ասէ, դատախազն . յորս թէպէտ եւ ոչ մի ինչ կասկած վտանգի կայցէ, սակայն զտանջանսն ցաւք ազգեցուցանեն, եւ իւրաքանչիւր ուրուք բնութիւն մտաց եւ մարմնոց մեղմացուցանէ զցաւսն . դատաւորն ողոքէ, ցանկութիւն խոնարհեցուցանէ, պատրէ ակնկալութիւն, երկեւղ տկարացուցանէ, ի մէջ այնչափ անձկութեան իրաց չէք ակն ունել ճշմարտութեան :

Գ Գ Լ ՈՒ Խ

Բ. ՇԱՐԺԵԼ ԿԱՄ ՅՈՐԴՈՐԵԼ ՁՄԻՏՍ

69. ՈՐՈՒՀԵՏԵԻ ճարտարախօսութիւն զմտացն կարիս եւ զշարժումն ուղղել պարտի, ասացուք համառօտիք զմիտս շարժելոյ հանգամանս. մանաւանդ զի եւ զիւտ ոչ միայն զհռետորական տեղեօք զայ, այլ եւ զշարժելոյ եւ զյորդորելոյ զօրինակ ուսուցանէ: Արդ շարժումն է որով լսողացն միտք եւ կամք փոփոխին, եւ յուրախութիւն կամ ի տրամութիւն, յերկեւղ կամ ի ցանկութիւն յորդորին: Այլ ասի շարժումն յորոյ ձեռն ըզձանամք ինչ կամ խորշիմք եւ զարշիմք յիմէքէ. կամ որպէս փիղիսոփայք ասեն, շարժումն զգայական տենչանաց ի հասանելոյ բարւոյ իրիք կամ շարի ի վերայ, որով շքի յայլ ինչ որ չէ բնականոր մարմնոյ. որպէս սիրտ յուրախութեան լոյնի եւ ընդարձակի, եւ ի տրամութեան ամփոփի. վասն այնորիկ եւ կիրս եւ շարչարանս անուանեն:

Ան որք համարին թէ մի միայն են կարիք, եւ զայն զսէր դնեն, յորմէ ամենայն շարժմունք եւ յոյզք մտաց գայցեն: Աայց Սողիկեանք չորս վարկանին, յորոց երկուք, որ են յոյս եւ խնդութիւն, զբարեաց են, ասեն, եւ երկու եւս զչարաց իրաց, այս ինքն է տրամութիւն եւ երկեւղ. ուստի Վիրգիլիոս ասաց. Արկնչին եւ ըզձանան, տիրին եւ խնդան: Իսկ բազումք ի փիղիսոփայից մետասան դնեն, հինգ ցասնական տենչանաց, եւ վեց ցանկականին: Յանկական տենչանք ունին զվեց շարժմունս մտաց, զերիս զբարեաց, եւ զերիս եւս զչարաց իրաց:

Լ. Սէր որ զբարեաց է, որ յայանի եւ երեւելի են

Բ. Յանկութիւն, որ նոյնպէս ի լաւ ինչ է բոլոր տակաւին հեռի է:

Գ. Ուրախութիւն որ նոյնպէս վասն բարւոյ իրիք լինի, որ մօտաւոր իցէ:

Դ. Ատելութիւն որ ընդ շար ինչ է:

Ե. Փախուստ ի չարէ իմեքէ իբրեւ ի բացականէ :

Զ. Տրամութիւն կամ ցաւք ընդ չար ինչ իբրեւ ի մօտալուս եւ առաջիկայ :

Իսկ ցասնականն ունի հինդ ինչ , որոց երեք զչարաց է . եւ երկու զբարեաց իրաց :

Ե. Յոյս որ ի բարի ինչ է , որում դեռ ակն կայ :

Բ. Յուսահատութիւն ի բարւոյ իմեքէ յորմէ հատանի յոյս :

Գ. Յասուամն ընդ մօտաւոր ինչ չարիս :

Դ. Իսկ զհանդերձեալ ինչ չարեաց , որոց թուի թէ յաղթել մարթ է , յանդդնութիւն :

Ե. Իսկ չարիք յորոց ամրանան եւ պատսպարին , երկեւղ է :

Նախանձ եւ շնորհք ընդ սիրոյ մի են , նախանձաւորութիւն ընդ ցանկութեան , սղորմածութիւն ընդ արամութեան , զարմացումն ընդ ուրախութեան , ամօթ եւ պատկառանք ընդ երկիւղի , եւ զայրանալ ընդ ցասման : Ի մէջ մետասանեցունց շարժմանց , սէր , ցանկութիւն եւ ուրախութիւն մեղմական իմն շարժմունք են , զնոսին ի կիր արկանէ այր ճարտարախօս յորժամ զուարճացուցանել կամիցի : Իսկ այլ եւս ութք որ մնացին , ծանունք են , եւ միայն ի խոնարհեցուցանել պատշաճականք :

Շ շարժումն մտաց այլ է ի բարոյից , այնու զի եւ կարի զգօնամիտք եւ հանդարտք բարուք երբեմն սաստիկ լինին . բարք հանապաղ են ի մարդն , իսկ շարժումն մերթ գայ եւ մերթ ցածնու :

Չորք ինչ պահանջին ի շարժել զմիտս ունկնդրաց : Նախ լաւութեան կարծիք յասելին . երկրորդ հասուն հասակ . երրորդ ինքն զլիսովին խառնել եւ յուղել պարտի ճարտարախօսն այնուիկ զոր ի լսողնս յորդորել կամիցի . զի ի զուր ոք զդէմն եւ զբարբառ փոփոխիցէ , եթէ ոչ եւ զմիտսն բտա շարժմանն յարդարիցէ : Եւստի բազում եւ ազգի ազգի շարժմունս յանձին իւրում նմանեցուցանել պարտի այր

ճարտարախօս, զի զայլոց բարս յիւրան անդր կերպարանեացէ: Չորրորդ պարտ է զխտել զընութիւն եւ զպատիւ նոցա զորս յորդորելն ցանկայ. զի զանձն ըստ բարոյից ունկնդրացն յարդարել պարտի ճարտարախօսն, նոյնպէս ըստ յօժարութեան եւ ըստ սովորութեան, եւ ըստ պէսպէս կարգի իրաց, ժամանակի եւ իւրաքանչիւր դիպաց: Աարձեալ եւ բանք եւ կերպարանք եւ մարմնոյ յօրինուած զներքին շարժումն մտացն պարտին յայտ առնել, զի եւ յայլս նոյն շարժմունք դիրաւ ծնանիցին:

Իսկ որ տանն շարժել, այսոքիկ են. նախ դէմք եւ մարմնոյ կերպարանք, ուստի գոյն հատեալ, երեսք խոնարհեալք, կերպարանք հարեալ կեղով, մարմին հիւանդ յողորմութիւն յորդորեն: Չեռն վառեալ, աչք որ փայլատակիցեն, յօնք սպառնալեաց ի ցասումն զրդուեն: Արկրորդ, առաքինութիւն ի շուառութեան զողորմածութիւն յուզէ, եւ նմին հակառակ նախանձ եւ սրտմտութիւն զրդուի, յորժամ անիրաւք եւ շարագործք յառաջ դան: Արրորդ հասակ տիոց, եթէ մատաղ իցէ կամ ծեր: Չորրորդ անդամ զգաւառն զմտաւ ածել եւ զտոհմ. հինգերորդ անդամ տկարութիւն ազգի, որպէս իգական տոհմն. վեցերորդ հազորդութիւն արեան, ազգականաց խնամութիւն, ամուսնացելոց, որդւոց եւ կարեւոր բարեկամաց: Աւթներորդ տեղին ուր իրքն գործեցան, ժամանակին երկայնութիւն եւ կարճութիւն, պատճառք վասն որոց եղեն ինչ, կամ օրինակ եւ պայման լինելոյն. նոյնպէս գործիք եւ տանջանք եւ այլ նոցին նմանք: Ութերորդ նմանութիւնք որ զիրացն բնութիւն յանդիման կացուցանեն:

Իայց այնպէս պարտ է կարգել եւ ամոքել զշարժմունս, զի մի զլսօղան տազնապեցուոցեն. այլ այնպէս պարտ է խառնել զի ի կէտ անդր հասանիցեն եւ մերձենայցեն, որպէս յետ յողորմածութիւնն շարժելոյ, յորդորիցես ի սրտմտութիւն ընդ հակա-

ուսկորդին, ապա նախանձուկս արկցես, յետ այնու-
րիկ ի ցասումն, եւ այնպէս ըստ իւրաքանչիւր կարգի:

Ա. ՍԷՐ ԵՒ ԱՏԵԼՈՒԹԻՒՆ

70. Աէր այն է, որով բարիս ումք կամիցիմք,
եւ բարերարիցեմք նմա, ոչ վասն մեր ինչ, այլ վասն
նորա. ուր տեսանես զի երեք պայմանք եւ նշա-
նակք են ստոյգ եւ սերտ սիրոյ. առաջին զի նմա զոր
սիրեմքն, ըղձանայցեմք բարիս, կամ զայն ինչ որ մեզն
բարի թուիցի. երկրորդ զի զոր բարին կարծիցեմք,
ոչ ըղձանայցեմք եւեթ նմա, այլ եւ առնել եւս ջա-
նասցուք: Երրորդ պայման է զի զայնպիսի միտս ոչ
վասն մերոյ ինչ օգտի ունիցիմք, այլ ի նորա ազագս:
Օ՛ի որպէս Վիկերոն ասէ. Եթէ զմեր ինչ շահ խըն-
դրեսցուք եւ ոչ զնորա օգուտ, զոր սիրեմքն, չէ այն
բարեկամութիւն, այլ շահավաճառ իմն իւրոցն օգ-
տութեանց:

Ընդ սէր եւ ընդ բարեկամութիւն այս ինչ ի միջի
կայ, զի սէր կայ մնայ, թէպէտ եւ որ սիրէն ոչ փոխա-
րէն սիրիցի. իսկ ի բարեկամութեան պահանջի զմի-
մեանս սիրել: Աւստի իբրեւ հարցաւ Երիտաստեղէս
թէ զինչ բարեկամութիւնն իցէ, ետ պատասխանի
թէ Լ'նձն մի որ յերկուս մարմինս բնակիցէ: Աւստի
յիբաւի կապանս անուանեն զսէր, զի զմիտս ցան-
կութեամբք իբրեւ թակարդիւք վարանէ:

Երեք ազգք են սիրոյ: Առաջին բնական, որ ա-
մենայն իրաց պատշաճի, եւս եւ անզգայականաց:
Երկրորդ խօսուն որով միտք եւ կամք ի լաւ ինչ ի-
բրեւ ի բարւոք յօժարեն, որպէս ի գիտութիւն, ի
պարկեշտութիւն եւ յայլ ինչ նոյնպիսի: Երրորդ
բարեկամութեան սէր, որ սիրէ եւ փոխարէն սիրի.
զոյ եւ ցանկութեան սէր, որ այլ է ի բարեկամու-
թեանն սիրոյ, զի որ բարեկամն է ախորժէ զբարին
ոչ վասն իւր ինչ, այլ վասն նորա զոր սիրէ, իսկ ցան-
կացօղն կամ ժլատ կամի զայնուազոյնն վասն անձին

ևւ յիւր պէտս: Պատճառք սիրոյ են պարկեշտութիւն կամ առաքինութիւն եւ կենաց լաւութիւն, ստուգութիւն եւ արդարութիւն, համեստութիւն եւ զեղեցկութիւն, մեծանձնութիւն, զգօնութիւն եւ հեզութիւն բարբառոյ, երեսաց կամ բանից, անմեղութիւն եւ յատկամիտ միտք, հաստատութիւն, հաւատարմութիւն, համամիտք համաբարոյք, երախտիք, բարեաց եւ շարեաց հաղորդութիւն, բարիանուն, ընտանութիւն, վստահութիւն ի դաղտնիս, զնոյն վիշտս կրել, ընկերութիւն, եւ կցորդութիւն կենաց, ուսման եւ կրթութեան հաղորդութիւն, լսել զգովութիւն ուրուք, մոռացօծս առնել անիրաւութեան, յայտ առնել զշնորհակալ միտս, ջանալ հնարել բարիս առնել եւ միանգամայն իսկ ամենայն ինչ որ բարի, ախորժական եւ օգտակար իցէ:

Իսկ ատելութիւն է խորշել եւ դարշել ի չարէ իմեքէ. եւ լինի ատելութիւն ի յոլովելոյ մաղձոյ, որ է ատեցութիւն ամենայնի. դոյ նոյնպէս ատելութիւն դազանութեան, որ է մոլեկան ինչ կատաղութիւն չար ինչ առնելոյ ումեք, որ ընդ դիակունս անգամ եւ ընդ անմուռնչ իրս դրդօի. են եւ մարդատեցիկ բարք, որ սովորութեամբք գոյ եւ դարձեալ մարդկեղէն դարմանօք առողջանայ:

Չորք պատճառք են ատելութեան. հակառակութիւն, առաւելութիւն մաղձոյ, ամարդութիւն եւ տկարութիւն բնութեան եւ հանճարոյ. եւ չորրորդ պատճառ ի մարդկանէ, որպէս զրպարտութիւն, արհամարհանք զրկութիւն, անիրաւութիւն: Աւել զրդօի ատելութիւն ի յայտ առնելոյ զվիշտս որ եկին հասին յումեքէ, զրպարտութիւն, թշնամանք, առն որ թշնամանեաց անագորունութիւն եւ անարժանութիւն, եւ պատիւ այնորիկ որ թշնամանեցաւ, խորհրդակից եւ դորձակից լինել չարեաց ուրուք, աճեցուցանել եւ ստուարացուցանել զանիրաւութիւնն,

խայտառակել զչարիս ուրուք, որպէս զանառակու-
թիւն, զյանդգնութիւն, զանիրաւութիւն, զամբար-
տաւանութիւն, զանագորունութիւն, զազահութիւն,
զապատաւորութիւն, զանօրէնութիւն, եւ զայլ եւս
նոցին նման իրս :

Օտտելութիւն մարթ է ցածուցանել աղաչա-
նօք եւ արտասուօք, ցուցանելով զվիշտս որ յատե-
լութենէ հասանելոց են, յայտ առնելով թէ թշնա-
մին ի մեծի թշուառութեան անկեալ դնի, եւ մա-
նաւանդ զպատճառս ատելութեանն պարտ է ցածու-
ցանել, ասելով թէ ոչ առ չարակամութեան արար,
այլ միամիտ սրտիւ :

Ատելութիւն առաւել ի ճառս իրաւանց եւ դատա-
տանաց առնի եւ կատարի, յորժամ զհակառակորդս
անիծանիցեմք, եւ զնոցա չարիս խայտառակիցեմք :

Բ. ՇՆՈՐՀՔ ԵՒ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆ

71. Շնորհք են երախտիք զոր ձրի առնէ ոք
ուռեք որ իցէ ի կարօտութեան : Մարթ է յորդորել
առնել շնորհս, յորժամ դովեսցի դութ եւ երախտիք
առն որ աղաչի առնել զայն շնորհ, եւ միանգամայն
ցուցցի թէ որչափ կարօտ է եւ ողորմելի այրն որում
բարեբարելոց է, ի ժամանակէն, ի տեղօջէն, ի կա-
տարածէն, եւ յայլ եւս մերձաւոր իրաց վասն որոյ
խնդրի շնորհ :

Իսկ դարձուցանել կամ շտալ առնել շնորհս մարթ
է, եթէ ցուցցի թէ չէ կարօտ որպէս եւ որչափ կար-
ծի, եւ թէ են նորա մերձաւորք եւ ազգականք եւ
կարեւորք որ հոգան վասն նորա . կամ եթէ ցուցցի
թէ բազում անգամ եղիտ երախտիս եւ հատոյց ա-
պախտիս, կամ թէ ոչ վասն կարեւոր ինչ պիտոյից
խնդրէ, այլ զի ծախեսցէ ի գիներբուս եւ ի գործս
անարժանութեան :

Շնորհք ի նմանէ են որ առնէ, իսկ շնորհակա-
լութիւն յայնմանէ որ զայն ընդունիցի . մին երախ-

տիք են, եւ մեւան գոհութիւն երախտեաց: Արդ մարթէ ամէլ ի շնորհակալ լինել եթէ ցուցցի մեծութիւն բարեացն զոր եղիտ, եւ իւր կարօտութիւն, եւ թէ առանց նորա սրպիսի վիշտս եւ նեղութիւն հասանէր նմա կրել, եւ յայտ առնելով թէ որչափ բարիք առյապաջ լինելոց են նմա նորին երախտեօք, սր եթէ չէր լեալ, ոչ դիպէին:

Իսկ շրջել զմիտս ի շնորհակալութենէ հնար է, եթէ առնիցի յայտ թէ ոչ վասն նորա ինչ արար զերախտիսն, այլ յանկարծ եւ վրիպակաւ. կամ եթէ ասիցի թէ զոր արարն մնասակար է մանաւանդ քան օգտակար. եւ թէ ոչ ձրի ինչ արար զշնորհն, այլ զի ունէր ակն փոխարէնս ինչ առնելոյ. եւ թէ անարգ են շնորհքն եւ նախատանաց, եւ այլ նոյնպիսի իրօք:

Գ. ՆԱԽԱՆՁ

72. Ախանձ է որով ոք արամի ընդ ուրուք երջանկութիւն, ոչ եթէ կամի ինչ անտի յանձին դիւրութիւն, այլ վասն զի չախորժէ զինա, զոր ատեայ, ի բարիս վայելիցէ, զի համարի թէ անտի իւր պատիւ նուազիցի: Արիք որ ընդ նախանձու անկանին, այնք են որ զովութեան եւ յարգանաց արժանի են: Ախանձ ծնանի ի մէջ զուգականաց, եւ երբեք հակառակ խոնարհագունից:

Ախանձ գրգռի եթէ խելամուտ արասցուք թէ բարիք դիպեցան այնմ որ չէ արժանի. եւ թէ ընդ յաջողութիւնս հպարտացեալ է. կամ եթէ ցուցցուք թէ սրպէս սակաւ ջանիւ եւ դոյզն ծախիւք հասանէր այնմ պատուոյ որում հակառակորդն եհաս:

Իառնի նախանձն ամենեւին սոցին հակառակօք. մանաւանդ եթէ ասացուք թէ բարիքն ընդ որս խանտայ չեն ինչ նմա անկ, եւ թէ մեծաւ աշխատութեամբ եւ քրտամբ եհաս այնմ որ եհասն. դարձեալ համեմատելով զբարիսն զոր ստացեալ է, ընդ վշտաց որոց

կայ նմա համբերել. եւ թէ տղնուական մտաց է շնախանձել, այլ զոր ունին շատ համարել. եւ թէ քանի վնասակար իցէ նախանձն:

Դ. ՑԱՆԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՓԱՆՈՒՍ

73. Յանկութիւն է տենչանք բարւոյ իմիք որ իցէ ուրախարար եւ զուարճացուցիչ, թէպէտ մտաւոր իցէ թէպէտ բացական: Պէտպէս եւ ազգի ազգի են ցանկութիւնք, զի եւ բարիք որ զուարճացուցանեն զզգայունս, պէտպէս են. զի անչափ ցանկութիւն ոսկւոյ կոչի ազահութիւն, փառաց՝ փառասիրութիւն, փափկութեան՝ անառակութիւն:

Օ ցանկութիւն յորդորեն բարութիւն, օգտակարութիւն եւ դիւրութիւն նմին հասանելոյ: Իսկ ցածուցանել զցանկութիւն հնար է նախ եթէ ցուցցես թէ չէ մարթ կատարել եւ ի գլուխ հանել, երկրորդ թէ վնասակար եւս է. երրորդ խոտան եւ արհամարհ:

Իսկ փախուստ է խորշել ի չարէ իմեքէ, եթէ մերձաւոր իցէ եւ եթէ հեռաւոր. ամենայն ինչ որ հակառակ է ցանկութեան, տայ խուսափել եւ խորշել:

Ե. ՆԱԽԱՆՁԱՒՈՐՈՒԹԻՒՆ

74. Նախանձաւորութիւն է տիրել յայլոց երջանկութենէ, ոչ զինոցա դիպեցաւ, այլ զի մեք զրկեցաք անտի: Ապա յայտ է, թէ նախանձաւորութիւն գովելի է, եւ առ ուսանել եւ յառաջագէմ լինել յոյժ պատշաճական: Առաքինութիւն, պատիւ, մեծութիւն, դիտութիւն, փառք են մանաւանդ, որ նախանձուկս արկանեն:

Ի մէջ նախանձաւորութեան եւ ի մէջ նախանձու այս ինչ խաիր է, զի նախանձաւորութիւն բարի է եւ գովելի եւ վայելուչ, զի յորդորէ զմեզ զի նմին եւ մեք ջանասցուք հասանել: Ամին հակառակ նախանձ կամ խանտաւորութիւն չար է եւ յուրի, զի

Զանայ Տնարի զի մի ընկերն բարեաց ինչ հասանիցէ . եւ որպէս Որատիոս ասէ . Նախանձոսն յայլոց առատութենէ հաշի եւ մաշի :

Օբարուք նախանձ նախանձել մարթի օրինակաւ մեծամեծաց , ի փառաւորութենէ անուան , եւ յերեւելի գործոց արանց անուանեաց : Որպէս յորժամ Ղզեքսանդր մեծ եկն եկաց առ գերեզմանին Ղքիզեայ , նախանձեցաւ ընդ փառս նորա եւ ընդ երջանկութիւն . Ո՛ր երանի քեզ , ասէ , պատանեակ դու , որ զձոմերոս քոյոյ առաքինութեան քարոզ ստացար : Եւ թուկիդիդէս որ իշխանն կոչի պատմազրաց , մինչ դեռ մանուկն էր , լուաւ զի շերոզոտոս զիւր պատմութիւն ընթեռնոյր , այնպէս , ասեն , նախանձ եբեր , զի ոչ կարաց ունել զարտասուն . զոր իբրեւ ետես շերոզոտոս , ասէ ցհայր մանկանն . Երանելի ես , ասէ , որ այդպիսի որդեակ ունիս , որ այնպէս զփառաց եւ զգովութենէ կաթողի է :

Զ. ՈՒՐԱՒՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՐՏՄՈՒԹԻՒՆ

75 . Որախութիւն շարժումն ինչ է մտաց , որ յօժարէ ի բարի ինչ որ առաջի կայ , եւ անտի ծնանի զուարթութիւն իմն եւ հանգիստ եւ հանդարտութիւն : Ուրախութիւն ծնանի յակնկալութենէ ազնուագոյն ինչ կենաց , յանկարծ ինչ բարեաց , կամ ի չքնաղ եւ ի զարմանալի իրաց , որպիսի են մեծութիւնք , պաճուճանք , յաղթութիւն , գեղեցիկ վայրք եւ այլ նոյնպիսիք : Վարձեալ յառաքինութեանն վարձուց , ի պատժոց յանցանաց , ի յիշատակելոյ զվաստակս կամ զվիշտս սրոց համբերեաց : Յաճնուութիւն , իբրեւ յայտ լիցի թէ ընդունայն են իրքն եւ լի թախծութեամբք , եւ թէ չեն հաստատուն ինչ եւ մնացականք :

Իսկ տրամութիւն է վշտանալ եւ հողալ վասն մօտալուտ շարեաց . որ միանգամ յատելութիւն շարժեն , զրեթէ նոյնք եւ ի տրամութիւն յորդորեն ,

բայց մանաւանդ այսօրիկ, վիշաք եւ կապանք եւ մահ ազգականաց, կարօտութիւն եւ կորուստ ընչից, աղէաք եւ թշուառութիւն նոցա որ պատուականք եւ մեծարոյք են յաչս մեր: Աչ սակաւ աճեցուցանեն զտրտմութիւն արտունջք եւ պահանջմունք եւ աղազակ եւ այլ նոյնպիսիք:

Մեղմանայ տրտմութիւն, յորժամ ցուցցի թէ անպարտ է որ վշտանայն եւ նեղի. կամ եթէ յայտ առնիցես զպայման կենաց մարդկան որ չէ առանց վշտաց եւ տրտմութեան, եւ թէ յետ վշտաց հասանիցէ հանգիստ, զոր օրինակ յետ ձմերայնոյ զայ ամառն, եւ յետ գիշերոյ առաւօտ:

Է. ՈՂՈՐՄՈՒԹԻՒՒՆ

76. Ողորմութիւն է վիշտ եւ արգահատութիւն ընդ աղէսս այլոց, մանաւանդ որոց յանիրաւի շարչարիցին: Ի շարժել յարգահատութիւն պայծառագոյն երեւի քաջութիւն ճարտարախօսի. զի որպէս ասեն առ հասարակ, արտասուք ունկնդբացն են յարգանք եւ դրուատ ճարտարախօսին:

Պէտպէս օրինակօք մարթ է յողորմութիւն շարժել, նախ եթէ ասիցի թէ որ շարչարին, զուր տարապարտուց շարչարի. երկրորդ յորժամ ցուցցի թէ եւ աշխարհին եւ մեզ բազում բարիս արարեալ է. երրորդ անգամ եթէ մեծութիւն վշտացն եւ ընդերկարութիւն, եւ այլ եւս նոյնպիսի իրք խնամով յայտ առնիցին: Չորրորդ եթէ նշանակ ինչ տրտմութեան կամ այլ ինչ յիշատակ առաջի աչաց լսողացն դիցին, որպէս հանդերձ արեամբ թաթաւեալ, կամ նորին իսկ մեռելոյ մարմին կամ պատկեր: Այսպէս Մ. Անտոնինոս զհանդերձս Զուղեայ Այսսեր ծակոտեալս ի սուսերաց, թաթաւեալս արեամբ եւ ապաժուժաւ իրրեւ էած առ ժողովուրդն, այնպէս զբղռեաց զնոսա, մինչեւ նոյնհետայն ընթացան այրել զապարանս նոցա որոց զնենգն դորժեալ էր:

Վոյնպէս եւ Աղտտիղդիս դուստր Աղտտվեայ զոր խտտիւ եւ անագորունութեամբ ունէր այր նորա Վղմարիկոս թագաւորն Վթաց, իբրեւ զվարչամակ խը շաղախեալ արեամբ առաքեաց առ եղբարս իւր առ թագաւորս Փրանկաց, վաղվաղակի գրգռեցաւ պատերազմն այն, որով իբք Վթաց ամենեւին եղծան եւ քակեցան

Վոյնպէս եւ Ղնտոնիոս ոմն անուանի ճարտարխօս երբեմն մինչ դեռ պաշտպանէր Ղիուիղեայ, ի խօսել իւրում բուռն հարեալ զհանդերձէ նորա պատառեաց եւ եցոյց զսպիս վերացն՝ դատաւորաց:

Հինգերորդ ի վշտագին ծերութենէ կամ յայլոց վշտաց իւրաքանչիւր հասակի. ի բարեկամաց եւ յազգականաց եւ ի ծնողաց մեռելոց, եւ յորբութենէ որդւոց, յերկար եւ ի նորանշան վշտաց, դարձեալ դարձուցանելով զբանսն ի լսողսն, թէ զինչ կամ զոր վիշտս ոչ վշտանային, եւ քանի եղուկ զանձինս համարէին եթէ նոյն չարիք նոցա պատահեալ էին. եւ յայտ առնելով թէ ոչ զմեր, այլ զօտարին աղէտս սղամք: Հակառակ սղորմութեան է ցասումն զորմէ յետոյ ասասցուք:

Ը. ՅՈՅՍ ՎՍՏԱՀՈՒԹԻՒՒՆ ԵՒ ՅՈՒՍԱՀԱՏՈՒԹԻՒՆ

77. Յոյս է ակն ունել բարւոյ իմիք, որ թէպէտ եւ խիստ եւ դժուարին իցէ, սակայն ջանիւ եւ աշխատութեամբ մարթի ստանալ: Իսկ յորդորել զոյս եւ զակնկալութիւն մարթ է, նախ յազնուութենէ եւ ի մեծութենէ բարեացն. երկրորդ ի պատրաստութենէ որով մարթի այնմ հասանել, որպիսի են ինչք, զօրութիւն, ճարտարութիւն, իմաստութիւն, բարեկամք, հակառակորդացն տկարութիւն եւ աստուածեղէն օճան: Աստտին Աիկերոն տայր վստահութիւն ի հանդերձեալ յաղթութիւնն ընդդէմ Աատիղինայ. Հնպա կազմեցարուք, ասէ, ճակատեցէք զձեր դունդս եւ զպահիս հանդէպ զօրացն

կատիղինայ. նախ բղեշիք եւ զօրաւարք ի դիմի հարկանիցին ժանտին այնմիկ խեղելոյ եւ վարակելոյ ախտիւ. ապա զընտիր ընտիրս խաղացուց եւ զամենայն ոյժ խաղացուցէք ընդդէմ վատթար եւ ապաժաման զօրուն նաւաբեկ եղելոյ :

Արրորդ ցուցանել պարտ է զվարձան կամ զպարգեւս որ առաջի կան, կամ պատմել զանցս ինչ որոց յայնպիսի իրս ձեռնամուխ եղեն եւ յաջողեցան : Ի յոյս անդր մերձ է եւ յանդգնութիւն կամ վստահութիւն, որ է խիզախել ընդդէմ հանդերձեալ ինչ չարեաց, որ թէպէտ եւ դժնդակ իցեն, սակայն առ յաղթել են : Այլին օրինակաւ, որով եւ յոյսն, զարթնու վստահութիւն. այսպէս Աննիբազ անցեալ ըստ ձողանոս զեռ, խրախուսէ զզօրսն զդժուարս Ազպից լերանց եւ զափափայս որ ձեամբ ծածկեալ երեւէին, հատանել անցանել եւ արհամարհել զձողմայեցուցն զօրութեամբք : Օրնչ այլ ինչ, ասէ, զՂազս համարիցիք լինել, բայց եթէ բարձունս լերանց : Համարիցիք թէ բարձրագոյն քան զպիրենական լերինսն իցեն. մի թէ մարթ ինչ իցէ երկրի յերկին կցել, կամ բնաւ կայցէ՞ ինչ տեղի անմատոյց ի մարդկանէ :

Թէ յԱստուծոյ օգնականութիւնն վստահ լինել յաւելու զհամարձակութիւնն եւ յուսալից առնէ, այն յայտ ի բազում պատմութեանց է :

Իսկ սրտաբեկ լինել եւ վհատել լինի ի դժուարութենէ իրացն, ի մտաւոր չարեաց, ի սակափոփոխելոյ եւ շրջելոյ մարդկօրէն իրաց, միանգամայն յերկիւղէ վշտաց, եւ մանաւանդ յորժամ չգուցէ ուստեք օգնականութիւն. եւ բազում անգամ ի ծուլութենէ եւ ի վատութենէ :

Թ. ՅԱՍՈՒՄՆ ԵՒ ՀԵԶՈՒԹԻՒՆ

78. Թէ զինչ իցէ ցասումն, մարթ էր ասել ընդ Որատեայ, թէ Յասնուլ է վայր մի մոլեղնել. սա-

կայն կամիմ մանաւանդ ընդ Արիստոտէղեայ ասել, Յատումն է ցանկութիւն վրէժխնդրութեան վասն իւրոց թշնամանաց. որ այլ է յատելութենէ, զի ատելութիւն է հնացեալ ցատումն: Ա մէջ ցամանն եւ ի մէջ բարկութեան այս ինչ է, զի բարկութիւն է իրրեւ ծնօղ ցամանն, իսկ ցատումն ծնունդ բարկութեան, նա բարբ է, եւ սա արդիւնք բարուց: Այլ յուզի ցատումն յանիրաւութենէ եւ յարհամարհանաց, յուրախ լինելոյ թշնամւոյն ընդ մեր թշուառութիւն, կամ եթէ վասն դոյզն ինչ իրաց իցէ արհամարհութիւնն, ի զուր եւ ընդ վայր սպասելոյ օգնականութեան կամ պատուոյ, ի թշնամանաց կամ ի վնասուէ զոր ի բարեկամաց եւ ի մտաւորաց կրիցեմք. յանարգութենէ եւ յանպիտանութենէ նոցա որ մեզն վնասիցեն, յանխօսից, ի վայրապար աշխատութենէ եւ ի յամելոյ խորհրդոց մերոց, ի նենգութենէ եւ ի դաւոյ, յապախտաւորութենէ, եւ յերախտամտաց բարուց:

Արչափ ոք փառաց ցանկայ կամ մեծանունն եւ մեծահամբաւ իցէ, այնչափ առաւել ցասնու եւ սրբամտէ, յորժամ թշնամանս ինչ կրիցէ: Արոյ յուշարար յիշատակ է օրինակն Ներսէտայ ներքինւոյ, որոյ բազում փառաւորութիւնն էր յիրս պատերազմի: Սա յետ բազում նահատակութիւնս զորժելոյ ընդդէմ Տոտիղայ թագաւորին Վթաց, առ նախանձու ոմանց բանաբկու մարդկանն ի Յուստինեայ ինքնակալէ մերժեցաւ ի մարդպանութենէ իտազացւոց աշխարհին եւ ի Սոփիայ դշտոյէն թշնամանեցաւ, թէ զՆերսէս ներքինի առաքել պարս է ընդ կանայս մանել ասր. ընդ որ նա յոյժ մորմնքեցաւ եւ ասէ, վազվազակի մանեցից կարս, զոր ոչ թագաւորն եւ ոչ կին նորա երբեք հնարիւք ինչ եւ ճարտարութեամբ քակել մարթոսցեն: Այլ յետ սակաւ միոյ կոշեաց զՆնգոբարդս յատղիս, եւ զմեծ մասն աշխարհին զբաւեցոյց:

Իսկ հեղութիւն կամ զգօնութիւն եւ գթութիւն է շարժումն յետսընդդէմ ցասմանն եւ բարկութեան, ուստի շեղութիւն է մեղմանալ եւ ցածնուլ ցասմանն:

Արդ մեղմանայ ցասումն, եւ լինի հեղութիւն նախ յորժամ առանց կեղծաւորութեան խոստովանեցի որ զյանցուածսն եւ սորջասցի: Այսպէս Աիկերոն զՎայսը, թէպէտ ցասուցեալ էր յոյժ, սակայն հաշտեցոյց ընդ Ղիզարեայ. Առ դատաւորս, ասէ, այնպէս առնել սովորութիւն է. բայց ես առ հայր խօսիմ. մոլորեցայ, յանդգնութեամբ գործեցի, սորբջացեալ եմ, ի գթութիւն քո ապաւինիմ, զյանցուածոյն թողութիւն խնդրեմ, աղաչեմ զի ներեցես . . . :

Արկրորդ խաղաղացուցանէ զցասումն խոնարհութիւն եւ ցածութիւն մտաց աղաչելեաց, մանաւանդ եթէ մեծանձն որ իցէ թշնամին: Արկրորդ ածել յաղերս քաջ մարթեննորա որ տկարքն են եւ վասն որոց չկայցէ կասկած բռնութեան, որպէս են մանկունք, կանայք, ծերք: Աւստի ընթեռնումք ի սուրբ գիրս թէ զՎաւթայ ցասումն զիջոյց Ղբիզեա. եւ Աբտաշէս ցածնոյր եւ իջանէր ի բարկութենէն ի ձեռն Ասթերայ: Իսկ շոմայեցւոց մատեանք վկայեն, թէ ի գալ ի վերայ կանանց Սարինացւոց, ի մէջ Աոմոզայ եւ Տատիայ դաշինք կռեցան: *Այնպէս Աղուսիմիա եւ Աետուստա զՎարտիոս Աորիողանոս, որ սաստիկ պատերազմ տալ ընդ աշխարհին կամէր, շջեցին ի մնասակար խորհրդոյն:

Չորրորդ յամբել զսրտմտութիւն ի դէպ է, եթէ գիտիցես խելօք սպաս ունել ժամանակի եւ տեղեաց, որպէս ի կոչունս եւ ի խաղս, ի յաջող ինչ դէպս, ի յաղթութեան, ի տօնս կամ ի խնջոյս ուրախութեան, զի յայնպիսի ժամանակս սովոր են մարդիկ դիւրաւ անտալ: շինգերորդ անգամ եթէ իմաստութեամբ ցուցանիցես թէ քանի առաւել է

Հեղութիւն քան զվրէժինդրութեան ցանկութիւն . վեցերորդ անդամ բազում ինչ օգտէ գթութեան եթէ յայտ արասցես, թէ որ մեղաւն, ոչ հնարիք եւ նենգութեամբ մեղաւ, եւ ոչ զայն գործեաց զի զնա արհամարհիցէ զոր ցատոյցն, այլ կամ յանդէտս եւ ընդ խաբս, եւ կամ ի շտապ տազնապէ եկն յայն :

Ժ. ԶԼՅԻՆՆԼԼ

79. Օջրանալ է դժկամակ լինել ընդ յաջողութիւն եւ ընդ բարիս օտարին, որ չէ արժանի այնմ երջանկութեան :

Օջրանալ այլ է ի չարակնելոյ, այնու զի զայրանալ ընդ անարժանս լինի, որ յանիրաւի վայելեն ի բարութիւնս, մինչ քան զնոսա արժանաւորք հեծեն եւ տառապին վասն նոցա : Աւստի զայրանալ մանաւանդ արանց լաւաց եւ փառասիրաց է . զի լաւք դժկամակ լինին ընդ պայծառանալ չարաց . իսկ փառասէրք զայրազնին, իբրեւ տեսանիցեն զի անարժանք քան զնոսա նախամեծարք եղեն : Իսկ չարակնութիւն է ընդ բարիս այնոցիկ, որ արժանի են այնց :

Արկին օրինակաւ մարթ է ի զայրացումն շարժել, նախ եթէ դձձութիւն առաջին կենացն ընդ մեծութեան եւ ընդ ճոխութեան եւ ընդ ամբարտաւանութեան մօտաւոր ժամանակին համեմատեսցին :

Արկրորդ եթէ չարիք առնն որում զայրանամք, կշռեսցին ընդ առաքինութիւնս այնորիկ, քան զոր նա արդոյ համարեցաւ : Այլ թէ զխնդ օցտօղ է եւ անառակ, եւ վասնէ զբարիսն զոր ընկալաւ ի խնջոյս եւ ի խաղս, եւ նմին հակառակ այրն յորոյ տեղի նա եմուտ, քանի զգաստ իցէ եւ ժուժկալ, արթուն, հեզ, արդար :

Իսկ զզայրացումն դատաւորաց կամ որոյ եւ իցէ զիջուցանել մարթ է, եթէ ցուցցի թէ վասն որոյ նոքա անարժան զայրն համարէին, վասն այնորիկ մանաւանդ արժանի է նա, պատմելով զբազում նշա-

նաւոր գործս նորա. եւ թէ քանի ազնուական եւ իմաստուն մտօք իցէ, եւ թէ ցած եւ մարդասէր է հանապաղ, եւ ոչ յանդուգն կամ ամբարտաւան բարս երեւցուցեալ երբեք:

ԺԱ. ԵՐԿԵՒՂ

80. Արկեւղ կամ ահ է խռովութիւն ի վշտաց ինչ կամ ի շարեաց ի վերայ հասելոց:

Արիւք օրինակօք մարթ է երկեւղ ի միտ արկանել. նախ եթէ գուշակիցին մեծ իմն եւ անհնարին շարիք, որպէս պատերազմ, սրածութիւն, անանկութիւն, անուն վատութեան, միշտ թշուառական լինել, եւ այլ ինչ նոյնպիսի: Արկորդ եթէ ցուցցի թէ շարիքն եւ վիշտ մօտալուտ ի վերայ հասեալ կան, զի ի մահուանէ անգամ շերկնչին մարդիկ, եթէ հեռագոյն կարծիցեն. սակայն տազնապին եւ սոսկան ի մահուանէ, ուր ստիպիցեն հիւանդութիւն, ժանտամահ կամ նաւակոծութիւն: Որպէս գեղեցիկ իսկ արար Աիկերոն ըստ իւրում ճարտարութեան, իբրեւ զՎատիղինայ նենգն գուշակեաց, յորում այսպէս նկարէ զՃգունսն որ ի վերայ քաղաքին հասանելոց էին:

Թուի ինձ տեսանել զքաղաքս զայս զայս տիեզերաց եւ զամուր ապաստանի ամենայն ազգաց, վաղվաղակի յսկան թօթափել հրձիգ եւ աւեր լինալ: Ակատեմ մտօքս զաշխարհս թափուր եւ աւերակ, եւ զշեղջաշեղջ դիականցն անթաղս. թուի ինձ առաջի աչաց տեսանել զգօրացն մնլեկան կատաղութիւն ի կոտորել զձեզ: Այսն այնորիկ, ո շոմայեցիք, վասն ձերոյ փրկութեան, վասն կանանց եւ որդւոց, վասն մեհնից եւ տաճարաց, վասն կենաց եւ աղատութեան խտաղիայ, նա մանաւանդ վասն համօրէն ամենայն աշխարհի, պարտ եւ պատշաճ է ձեզ խորհել խորհուրդ մեծաւ հաւաստեալ եւ պնդութեամբ, որպէս սկսայրդ իսկ:

Արրորդ ճարտարութիւն կամ հնարք ահարկանելոյ այն է, եթէ առաջի գնիցին չարիք ոչ համօրէն եւ հասարակաց միայն, այլ եւ առանձինն եւ իւրաքանչիւր ուրուք: Օյ առանձինն ինչ վիշտք սովոր են առաւել խռովել եւ տան զգալ աղետիցն, քան հասարակաց ինչ ճգունք, թէպէտ եւ կամին մարդիկ երեւել թէ մանաւանդ հասարակաց, քան իւրեանցն չարեօք վշտագնիցին: Այսմ քաջ խելամուտ էր յոյն ոմն գուսան, որոյ երբեմն հանդերձեալ զառասպելսն Սովոկղի պատմել Վթենացոց, իբրեւ յանդիման կացուցանել կամեցաւ զվիշտս Աղեկտրեայ որ զՈրեստեայ զաճիւնն կրէր, դաղտ եբարձ ի գերեզմանէ զաճիւնն եւ զոսկերս որդւոյն եւ տարեալ եգ ի տեղի տեսնանն, ուր իբրեւ զօտարին աղէտս թուէր լալ, զիւրն ողբայր:

ԺԲ. ԱՄՕԹ ԵՒ ՊԱՏԿԱՌՈՒԹԻՒՒՆ

81. Ամօթ է վիշտ մտաց վասն իրաց որ արատեն զանուն ուրուք: Աշանակ ամօթոյ են շիկնել, կորանալ, գլխարկել:

Ինի ամաչել, յորժամ յայտ դայցէ յոռութիւն իրացն, կամ եթէ յանդիմանեալ խայտառակեցի ամբարտաւանութիւն եւ յանդգնութիւն, ապախտաւորութիւն, արհամարհութիւն, անիրաւութիւն, ի ծածուկ ինչ միաբանութիւն. նոյնպէս յազահութենէ, յարծաթսիրութենէ, յանառակութենէ, ի կծծութենէ կամ ի խնայութենէ եւ ի ոչտութենէ, յանագորունութենէ եւ ի դազանութենէ, կամ յողքբանաց եւ ի սուտակասպասութենէ զի շահեցի ինչ, եւ ի կեղծաւորութենէ կամ ի խարդախութենէ:

Իսկ փարատել զամօթն մարթ է, նախ եթէ զովեցուք զգործն վասն որոյ նայն ամաչէ, կամ եթէ բերցուք օրինակս թէ բազմաց որչափ վնաս եղեւ ի կարի ամաչելոյ, եւ թէ վատութեան է եւ ոչ աղ-

նուական մտաց ամաչել եւ յետս կալ, եւ թէ որպիսի փառս եւ անուն ժառանգելոց է եթէ փարատեսցէ զամօթն եւ ձեռնամուխ լիցի:

Իսկ պատկառանք են ցածութիւն եւ մեծարանք կամ ակնածել առաջի մեծամեծաց, եւ մարթ է արկանել պատկառուկս յառաքինութենէ, յիմաստութենէ, ի պատուականութենէ, յերախտեաց, ի քաջութենէ կամ յաւազութենէ առնն յորմէ պատկառեցուցանելն կամիս:

ԺԳ. ՎԱՄՆ ԽԱՂՈՅ ԵՒ ԾԱՂՈՒ ԲԱՆԻՑ

Իսաղ եւ բարի բանք ոչ սակաւ օգտեն, միայն թէ համով եւ պարկեշտութեամբ իցեն, եւ ի բաց լիցի բրբիջ եւ անչափ ծաղր: Արդ կարող է ճարտարախօսն ուրեք ի ծաղր շարժել, նախ առ ի զիւրեւ արծելոյ զունկնդիրսն. երկրորդ անգամ վասն ծաղր առնելոյ զհակառակորդն. երրորդ առ ի ցուցանելոյ զիւր հանձար եւ զբարեբարութիւն. չորրորդ անգամ զի զտրամութիւն կամ զատելութիւն մերժիցէ: Իսպց մի լիցի այնպիսի բանից մուտ ի ճառս որ ոչ հանդարտիցեն ծաղու բանից, որպէս ի ճառս թաղման կամ սգոյ: Այնպէս ի բաց պարտին լինել յոռութիւն եւ վայրենութիւն, եւ հանապաղ պարկեշտութիւն եւ վայելչութիւն պարտին դատանել, եւ միանգամայն պարտ է զգուշանալ զի մի ճարտարմտութիւնն ի խեղկատակութիւն, ի յանդգնութիւն, ի բամբասանս եւ ի խառնխօսութիւն շրջեսցի: Պարտի ճարտարախօսն փախչել ի վրտի ծաղուէ, ի շատխօսութենէ, յանհամութենէ, ի պառաւանց դրդանաց, ի ցուրտ եւ յաղտեղի բանից: Չէ պարտ ծաղրածու լինել, մի հոպիտ, մի թշնամանօղ, մի պատրօղ:

Իձողացուցանին ճարտարախօսաց այսոքիկ. նախ բանք որ շնորհաւոր եւ հաճոյք են, երկրորդ պարզ եւ անկեղծաւոր, երրորդ քաղցունք եւ զուարթք, չորրորդ իբրեւ աղիւ համեմեալ:

Եւ յորդորի ծաղը առակօք, առասպելօք, պատմութեամբ իւիք, կամ եթէ զտգիտութիւն պատճառիցի, կամ զանուն ուրուք կամ իրիք ի ծաղունչ հանցէ կամ ծեքիցէ զբան ինչ. նոյնպէս ի գեղեցիկ ինչ նմանութենէ, յերկբայ բանից, յըղձանաւը իմիք որ չէ հնար, եւ միանգամայն ասել, յանկարծ ինչ պատասխանույ :

ՁԻՆՉ ՁԳՈՒՇՈՒԹԻՒՆ ՊԻՏՈՅ ԻՑԷ

Յայժմ վասն կարեաց ասացաւ, բայց զայն պարտ է ի միտ առնուլ զոր Լ'նառնիոս առ Աիկերոնի ասէ. Օձամենայն շարժումն, ասէ, զոր ճարտարախօսն ի դատաւորն զարթուցանել կամիցի, յանձին իւրում բովանդակ պարտի երեւեցուցանել : Օձի չէ մարթ ի ցատումն բրդել զդատաւորն, եթէ ոչ դու վաղ զայրանայցես եւ ցասնուցուս. եւ ոչ կարէ դք զնա, զոր դու կամիցիս, ատել, եթէ ոչ նախ տեսանիցէ զքեզ յատելութիւն գրգռեալ. եւ ոչ յաղերս եւ ի գութ ածել մարթես, բայց եթէ ցուցանիցես դունախ նշանակ տրտմութեան բանիւք, մտօք, բարբառով, կերպարանօք, արատաւս արկանելով : Օձոր օրինակ չիք նիւթ այնպէս գիւրին առ սյրել, որ մինչ չեւ ի կրակ մերձեցեալ, հուր յանձն բնդունել կարիցէ, նոյնպէս չիք միտք այնպէս կազմ եւ յօժար առ ըմբռնել զգօրութիւն ճարտարախօսին, որ մարթիցի բորբոքել, եթէ ոչ դու ինքն բորբոքեալ եւ վառեալ մատչիցիս առ նա :

Եւ պա իմաստութեամբ ասաց Արատիոս ի ճարտարութեան վիպասանութեան :

Աամիս զի լացից, նախ քեզ պարտ է վշտագնել, Եւ յայնժամ քո վիշտք եւ ինձ ստնանել կարիցեն :



Ե Ր Ր Ո Ր Կ Ճ Ե Ռ

Վ Ա Ս Ն Ճ Ա Ր Տ Ա Ր Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Ե Ա Ն

82. ՆԱՐՏԱՐԱԲԱՆՈՒԹԻՒՆ, որպէս ասէ կիկերոն, է դիպող բանս եւ միաս իրացն գտելոց պատշաճեցուցանել:

Արդ զի դիւրընկալ արասցուք զճառս մանկուոյ, յերիս զլուխս բաժանեացուք. նախ ասասցուք զձեւոց, յորս չիք ինչ դժուարին առ ի կրթել, եւս եւ մատաղագոյն աշակերտաց: Արկրորդ ասասցուք զչըջմանէ, ուր գտանի ինչ ինչ դժուարին: Արրորդ ճառեացուք զկարգէ զոր ոճն կոչեն. ի դիւրնոցն, որպէս պարտ եւ պատշաճ է, տակաւ առ դժուարինսն յառաջ խաղացեալ:

Ե Գ Լ Ո Ւ Խ

ՉԵՒՔ ԵՒ ԿԵՐՊԱՐԱՆՔ

83. ՉԵՒՔ եւ կերպարանք որպէս ասացաք (18), զարդք են ճառին, կամ վայելուչ իմն օրինակ խօսելոյ, հեռի ի հասարակաց սովորութենէ. որպէս զոր կիկերոն ցկաաիղինա ասէր. Կենդանի ես, եւ կենդանի ես ոչ առ ի բաց թօթափել զչարիսդ, այլ առ եւս շար պնդել ի յանդգնութեան:

Աւ ձեւոցն կրկին ազգք են, մին ի միաս պատշաճի եւ մեւս եւս ի բանս միայն: Օ ի որով հեաեւ զիրսն նախ խորհրդով եւ մտօք պարտ է բմբունել մինչ չեւ բանիւք պատմեալ, ապա նախ զձեւոց որ մտաց պատշաճին ասասցուք, եւ ապա զձեւոց որ բանիցն կոչին:

Ե. ՉԵՒՔ Մ Տ Ա Յ

Ի մէջ ձեւոց մտաց կէսք ի շարժել պատշաճագոյն թուին, այլք առ ուսուցանել, ոմանք եւս առ զուարճացուցանել: Ակիզբն արասցուք յայնց,

որ ի շարժել կամ առ զմիտս յանկուցանել բաւա-
կանք են:

Ա. ՉԵՒՔ ՈՐ Ի ՇԱՐՇԵԼ ՊԱՏՇԱՃԱԳՈՅՆ ԵՆ

Ա. ԳՈՉՈՒՄՆ

84. Եւսիս զգոչումն եղաք, զի զսաստկադոյն յոյզս
մտաց գոչելով սովոր եմք յայտ առնել:

Արդ գոչումն է բարբառ որով զսաստիկ կարիս
մտաց նշանակեմք, եւ յայտ ածեմք զիրացն մեծու-
թիւն, որպէս. Վ ա՛յ ինձ, եղբւ՛կ եմ ես, սպառեցան
արաստուք, սակայն սակաւին տրտմութեամբ զգա-
ծեալ եմ. Վիկ:

Բնդ գոչման գրեթէ միշտ կից են այսպիսի ինչ
բանք, ո՛, ո՛հ, վա՛յ, բա՛բէ, հա՛պա, ա՛ն, աղէ՛, աղ-
նիւ. որոց կէսք զուրախութիւն ցուցանեն, սյլք
զտրտմութիւն, սմանք զքաջալերութիւն, եւ զայլ
ևւս կարիս:

Գոչումն սքանչելի իմն օրինակաւ յայտ առնէ
զցասումն եւ զգառնութիւն. Ա՛յ սէգ, հպարտ եւ
ամբարտաւան, դու զմեզ յայտց կենաց աշխարհիս
կարճել համարիս, իսկ որ աշխարհաց թաղաւորն է,
կենաց ի կեանս դարձուցանէ. Վա՛ի:

Վոյնպէս եւ յողորմութիւն ածել մարթ է
գոչմամբ. Ո՛ եղուկ եւ թշուառական աւուրն, յո-
րում Շիղայ միւսանդամ ամենայն հարիւրաւորօք
բղէշն անուանեցաւ. ո՛ վրիպելի եւ յեղլեղուկ բախտ,
ո՛ կոյր ցանկութիւն, ո՛ պատիր ուրախութիւն, զիսրդ
վաղվաղակի այն ամենայն ի խնդութենէ եւ յուրա-
խութենէ ի սուգ եւ յարտասուս դարձաւ:

Ի՛ զի եւ յուրախութիւն եւ ի զուարթութիւն
յորդորէ գոչումն. որպէս Վիկերոն առ Մատիկոս. Ո՛
քաղցր թուղթք քո, ի միում ժամանակի երկու միան-
գամայն եկին հասին. որոց չգիտեմ, զինչ տաց աւ-
ետչեայ:

Եւ ուրեք զի եւ ի հեղնութիւն յոյժ ի դէպ է .
 Ո՛ր անուանի հովիւ ոչխարաց , որպէս ասեն , գայլ :
 Օգոչումն առաւել յաճեցուցանելն պարտ է ի
 կիրարկանել եւ ի վերջին բանս , եւ ուր մեծամեծ ինչ
 իրս ըսողացն հաւատարիմ առնել կամիցիս . ի վո-
 քունս ցուրտ իմն եւ տղայական է :

Բ . ԵՐԿՄՏՈՒԹԻՒՆ

85. Երկմտութիւն է որով ճարտարախօսն ի
 ծուփս եւ յերկրայս է թէ զինչ առնել կամ խօսել
 պարտ իցէ . Հիանամ զարմանամ մտօք , եւ ոչ գի-
 տեմ ուստի պարտ եւ պաշտած իցէ առնել նախ սկիզ-
 բն ճառիս . Եթէ ի յանդիմանութենէ ընդունայնու-
 թեան արտաքնոցն , եթէ ի պատմութենէ փառաւո-
 րեալ իրաց ճշմարտութեան մերոյ . Բարս :

Եւ ուրեք զի ի նոյն յարի եւ ընարութիւնն , յոր-
 ժամ որ երկմտէրն յանկարծ զելս իրացն գտանէ :

Գ . ԱՂԱՉԱՆՔ

86. Աղաչանք , որպէս անունն իսկ ինքնին
 բաւական յայտ առնէ , է աղաչել զոր կամ պաղատել
 վասն իրիք : Աղորմեաց ինձ որդեակ իմ . յուշ լիցի
 քեզ զի անուցի զքեզ զերիս ամս , եւ հասուցի զքեզ
 յայդչափ մեծութիւն հասակի . արդ աղաչեմ զքեզ
 որդեակ , մի զարհուրիք դու ի չարաշուք դահճէ այտի ,
 այլ եղբարցն արժանի եղեալ ընտրեա զմահ քան
 զկեանս աշխարհի . զի ընդ այն եղբարս ընկալայց
 զքեզ ի ձեռս ողորմութեան մեծին Աստուծոյ .
 Սակար :

Այս ձեւ քան զայլսն սաստկագոյն է , եւ ի վեր-
 ջին բանս մանաւանդ արկանի ստէպ ի կիր :

Դ . ՆՈՒԱՉՈՒԹԻՒՆ

87. Նուազութիւն է առ ի յանկուցանել զլսողս
 զանձն խոնարհեցուցանել , որպէս կիկերոն . Եթէ

կայցէ յիս իմաստութիւն, ո՞վ դատաւորք, որ զիտեմ սակաւ է յոյժ, կամ ճարտարախօսութիւն յոր չափով իմն վարժեցայ:

Ե. ԱՆԷԾՔ

88. Ընէծք են որով չարիս մաղթեմք ումեք, կամ մեզ իսկ գլխովին: Վիք զքեզ կորուսցեն, այդպէս ոչ միայն չար եւ անպիտան, այլ եւ խակ եւ անմիտ ես. Վիկ:

Եւ Լքտաշիտի անիծեալ ասեն զԼքտաւազդ զորդի իւր այսպիսի բանիւք. Եթէ դու յորս հեծցիս յազատ ի վեր ի Սասիս, զքեզ կայցին քաջք, տարցին յազատ ի վեր ի Սասիս, անդ կացցես, եւ զլոյս մի տեսցես. Խոր. Երգ վիպաս:

Զ. ՀԱՐՑՈՒԱԾ ԵՒ ԶՆՈՎՒՄՅ ԱԾԵԼ

89. Հարցուած լինի, յորժամ հարցանեմք զոք, ոչ այնչափ առ տարակուսանս ինչ խնդրելոյ, որչափ առ ստիպեալ տազնապելոյ, եւ զսաստիկ ինչ կարիս յայտ առնելոյ. Յո՞ փախչիցիս հէքդ եւ թշուառականդ, յո՞ փախչիցիս ի կենաց եւ ի քուամէ փրկութենէ. Եթէ յՆստուծոյ փախչիցիս, զո՞ ապաստան առնիցես. Եթէ ի լուսոյ փախչիցիս, ի՞նչ տեսանիցես. Եթէ ի կենաց սրանայցես, ի՞նչ լինիցիս կենդանի. Վսկ:

Չառնո՞ւս ի միտ թէ ի վեր ելին խորհուրդք քո. շտեմանիցես զի ամենեքին ի վերայ հասեալ են միաբանութեան դաւոյն. զինչ իմտաւոր եւ յառաջնում զիշերի գործեցեր, ո՞ւր եղեր, զորս կոչեցեր, զոր խորհուրդ կալայք, համարիցի՞ս թէ զայն ամենայն անգիտանայցէ ոք ի մէնջ. Վիկ. ի Վատիղ:

Եւ յայիսի հարցուածովք առաւել կսկծեցոյց զնա, քան եթէ վայրապար ասէր. Յայտնի եղեն խորհուրդք քո, Վատիղինա, զաղտնի միաբանութիւն ձեր զամենեցուն միտս վարկեալ ունի, չէ ոք անգէտ թէ զինչ գործ գործես:

Ի՞նչ երբեք զի զնովիմբ ամի եւ պատասխանի հարցուածոյն . Աղէ զինչ իցէ որ արգելուցու զձեզ , միթէ աւագաց սովորութիւն , այլ բազում անդամ եւ առանձինն որ ի սմին քաղաքի զվնասակար քաղաքացիս մահու պարտաւոր արար : Օրէնք ինչ արգելք , որ վասն քաղաքացւոց են , այլ ոչ երբեք ուրեք ի քաղաքի աստ նորա որ ի քաղաքէն ապստամբեցին , զքաղաքացւոյ իրաւունս կարան :

Նոյն դարձեալ . Մարդ սպաներ , նա մանաւանդ զգող եւ զհայրանարգու :

Միթէ մահ ինչ կարիցէ խռովեցուցանել զողիս երկիւղածին . այլ այն անուական կենաց է սկիզբն : Իսկ աղքատութիւն ինչ . այլ այն գործակից է նմա յառաքինութիւն : Իսկ ցաւք . այլ շհամարի ինչ , չգրէ ինչ զհանդիստ : Իսկ նեղութիւն . այլ ինքն նախ նեղեայ զանձն : Մի թէ անարգանք . այլ անձամբ իսկ արար զանձն արհամարհեալ : Աչ զինչ իցէ որ զնա ըմբռնել կարիցէ . չէք ինչ . Սիկ :

Է. ԶԵՂԶԵԼ ԵՒ ԼԻԵԼ

90. Օ՞չեղչել , որ Աիկերոնի սիրելի եւ ցանկալի լեալ թուի , յայնժամ լինի , յորժամ կեղծաւորեսցուք թէ չգիտիցեմք կամ չկամիցիմք ասել , այլ զանցանել կամիցիմք , զոր քաջ ասեմք , որպէս Աիկերոն սովին մեծապէս դովէ զՊոմպէոս . Չեմ ինչ , ասէ , քարոզելոց թէ որչափ ինչ իրս դորա առ անին եւ ի զինուորութեան , ընդ ծով եւ ընդ ցամաք վճարեալ իցէ , եւ քանի յաջողութեամբ , մինչեւ ոչ միայն քաղաքացւոցն հանապաղ հաւան եւ միաբան լինել ընդ նմա , նիզակակցաց անսալ , թշնամեաց հնազանդել , այլ եւ հողմոց եւ կարածմեռն ձմերայնոյ յաջողել նմա :

Վսին մերձաւոր է եւ լուութիւն , որ լինի յորժամ յանկարծ զճառն հատանեմք , եւ լուեմք ինչ , զի թողցուք լսողաց մեծամեծս զմտաւ ամեւ , զի որ

ծածկին կարեւոր ինչ համարի. Իշխիցէք, հողմք, ղերկինս եւ ղերկիր առանց իմոց հրամանաց խռովել, եւ բառնալ զոյնչափ կազմած զոր ես . . . այլ այժմ զյուզակ ալիս ցածուցանել կայ առաջի, յետոյ կրելոց էք պատիժս որոյ նման չիցէ լեալ. Վիրդ:

Ը. ԲՈՂՈՔ

91. Իսողոք է արտունջ իմն զոր ի վերայ ածել սովորութիւն է, յետ երեւելի ինչ պատմելոյ, որպէս Վիկերոն ի ծերութեան գիրսն, իրբեւ ասաց. Հասանել ի ծերութիւն ամենեքին ցանկան. այլ իրբեւ հասանիցեն, սկսանին դարովել. վաղվաղակի զնովիմբ ածէ. այնչափ է տկարութիւն, անմտութիւն եւ կամակորութիւն մարդկան:

Բ. ՉԵՒՔ ՈՐ ՅՈՒՍՈՒՅԱՆԵԼ ՊԼՏՇԱՃ ԵՆ

Ա. ԸՆԴԴԻՄԵԴԻՐՈՒԹԻՒՆ

92. Ինդդիմադրութիւն է, յորում բանք բանից, եւ միտք մտաց ի դիմի հարկանին:

Ի հեռաստանէ զիտաց զմահն Ղազարու, եւ ի մօտ եկեալ տգիտանայ: Մըք եղիք, ասէ, զնա: Ղուք եղիք, եւ ես առնում. մեռեալ եղիք, եւ ես կենդանի բառնամ. դադաղօք տարայք, եւ ձայնիւ ընթացուցանեմ. Մամբր:

Ո կարիցէ հանդուրժել, մարդիկ վատթարք արանց զօրաւորաց դարանակալ լինին, անմիտք իմաստնոց, արբեալք որոց լուրջն են, եւ որ ի քունն կանարժնոց. Վիկ:

Նոյնպիսի են այն նշանաւոր բանք Ըղոստոսի, որ իրբեւ անցեալ էր զաւուրք, ցպատանեակս սմանս, որ աղմկէին, ասէ. Իււարուք, մանկունք, ծերոյ, որում մինչ դեռ մանուկն էր, ծերք ունկնդիր լինէին:

93. Յամեցուցանել առի յորժամ ճարտարախօսն առ ի մտադեւրս գործելոյ զլսօզնն եւ առ ի զարթուցանելոյ եւ յորդորելոյ զնոսա, սակաւ ինչ յերկբայս թողու զնոսա, թէ զինչ արդեւք ասելոց իցէ որպէս Վիկերոն ցՎերբէս. Օ ինչ պարզեւքդ այդոքիկ առնիցեն յայտ, զորոց թշնամեաց աւարէ, զորմէ յաղթութենէ պատմիցեն, թերեւս զայն թէ Սիրահուսացւոց աւանն մինչ դու հազարապեան էիր, ի հինից հրձիգ լեալ աւերեցաւ. չգտանեմ ինչ. բայց թերեւս զայդ գործեցեր, զի մի մոռացօնք ինչ լինիցին մարդկան առյապայ, թէ երբեմն դէպ եղել ձախողել քեզ:

Օ մեւս եւս գեղեցիկ օրինակ ունի Մարտիազէս հանդերձ ծաղրածութեամբ. Արդ քանզի այդպէս բազում անգամ առանց իմ, ասէ, խրախուժիւնս առնես, Ղուպերկէ, զաի հնարս, որով կարիցեմ վնասել քեզ: Յասեայց, մինչեւ եւ զիս կոչեսցես ի կոչունսդ, նա յղեսցես եւ աղաչեսցես եւս: Այլ ասես, զինչ առնիցես. զինչ առնիցեմ, եկից . . . :

Աւ Մամբրէ ի յարութեանն Ղազարու սովին օրինակաւ ցուցանէ թէ ննջելն ոչ քունն էր, այլ մահ. Արկուց աւուրց զնացք է հեռաւորութիւն ճանապարհիդ, եւ մինչեւ դու երթաս, Ղազարոս համակ ի քունն կայ. միթէ ի մանրագորաց թմբբեալ իցէ. եւ կամ ի սաստիկ անապակաց զմբեալ իցէ. եւ կամ ո՞րք ի մարդկանէ զչորս տիւ եւ զչորս գիշեր անհաս ի քունն լինիցի: Աւ արդ դո՞ւ երթաս զարթուցանես զնա. եւ քորքն նորա որք փութացան յղեցին առ քեզ զարբանեակս իւրեանց, նոքին բնդէր ոչ զարթուցանեն զնա: Ասան քնոյ նորա առ քեզ ոչ յղէին, այլ վասն մահաբեր ախաին ստէպ աղաչին, զի երթիցես եւ բժշկեսցես:

Գ. ՀԱՂՈՐԴՈՒԹԻՒՆ

94. Հաղորդութիւն է, որով ճարտարախօսն, որ վստահ է յիրաւունսն, հարցանէ զդատաւորն կամ զդատախազն թէ զինչ խրատ տայցեն առնել. որպէս Աիկերոն ի Աերրէս. Արդ այժմ հարցից զձեզ, զինչ պարտ իցէ ինձ առնել. լուռ եղէց եւ տուք ինձ խորհուրդ, զոր ես իսկ առնուլ հարկ համարիմ. Աիկ:

Աւ ցԱեկինա ասէ. Աղէ ասա, եթէ այսօր զքեզ իբրեւ երթայցես ի տուն, արք սպառազէնք ոչ միայն ի սեմոց եւ ի յարկաց տան քո, այլ եւ յառաջին իսկ մտից եւ անդաստակաց արգելուցուն, զինչ առնիցես յայնժամ:

Օ իմրդ պաշտիցեմք զարեգակն, որ մերթ կոչի իբրեւ զծառայ առ ի սպասն յոր կարգեցաւ, հասանելոյ. եւ մերթ երթայ զօղէ իբրեւ զարհուրեալ, եւ տայ տեղի խաւարին ընուլ զմիջոց ի մեծի տանս: Ամ զլուսին որ ամսոյ ամսոյ հիւծանի, գրեթէ եւ մեռանի, եւ ապա սկիզբն առնու կենդանանալոյ, զի քեզ զյարութեան օրինակն նկարիցէ: Ամ զօդ որ մերթ գոչիցէ վարազացեալ՝ հրամանաւ, եւ մերթ սարսէ ի գոչելոյն սաստիւ: Աւ կամ զհուր որում եւ զքեզ իսկ երկրորդ արարիչ կազմեաց յօրինիչն, զի յորժամ կամիցիս վառիցես, եւ յորժամ կամիցիս խափուցանիցես. Ազն:

Դ. ՀԵՈՐՀԵՆ

95. Հնորհել է ներել կամ տալ իրաւունս հա- կառակորդին, զի այլուստեք սաստիկ եւս ստիպիցէ:

Ընդէր սուտ անուանիցի սատա այ, եթէ ի ճշմարտութեան կայցէ եւ ոչ ի ստութեան. ընդէր եւ Հրեայք որդիք սատանայի կոչիցին: Աւ գրես- ցուք թէ հրեայն յանձնէ խօսիցի սուտ, նա ընդէր կոչիցի հայր հրէին, եւ ընդէր կապիցի եւ ի տան- ջանս մատնիցի, ո՞չ ապաքէն զի իւրովք կամօք վրիպե- ցուցանէ զմարդիկ յԱստուծոյ ճշմարտութենէն. Ազն:

Շնորհեմ Յունաց զգալութիւնս, տամ զբազում ճարտարութեանց զիմաստութիւն, չբառնամ ինչ զքաղցրաբան պաճուճանս, զհանձար իմաստութեան, զճարտարաբան խօսողութիւն, եւ եթէ եւ այլ եւս ինչ անձանց առնուցուն, չկամ ինչ հակառակ. այլ զուխտ եւ զգաշինս սրբութեան ոչ պահեաց երբեք ազգն այն. Կիկ:

Ե. ՅԱՌԱՋԱԳՈՅՏ ԳՐԱԻԵԼ

96. Յառաջագոյն գրուել է կանխել ասել ինչ, մինչ չեւ այլոց ասացեալ. որպէս Կիկերոն իբրեւ զԿիւղեայ մանկութեան չարիս առանց մեղադրութեան եցոյց, զի մի կարծեսցի թէ ընդ ստահկութիւն երիտասարդաց ախորժէ, ասէ. Թւերեւս ասիցէ ոք, այս ուրեմն իցէ քո խրատ, այդպէս կրթես զու զերիտասարդս. եւ ապա ասէ զպատճառսն:

Ապա եթէ ինչ յարարածոց որ գեղեցիկ է, այն ի բարւոյ արարչէ կարծիցի ոմանց, որ չար իմն էութիւն հակառակ բարւոյ զնեն, մեր առաջին եւ նախաբարբառ պատասխանի այն է, եթէ ի բարերար արարչէն չար ինչ չիք լեալ. եւ չիք ինչ չար որ բնութեամբ չար իցէ. Եզն:

Զ. ՈՒՂՂԵԼ

97. Ուղղել է, յորժամ ոք զբան ինչ կամ զանուն, զոր ասաց, այսրէն եղճանիցէ, եւ իբր թէ ուղղիցէ, որպէս Կիկերոն առնէ ուրեք. Ո՛ւնմտութիւն, անմտութիւն ասացից արդեւք, թէ անհնարին անամօթութիւն: Աւ ցլ՝ տախիոս ասէ. Այս առքեղ եկն Կատոն, նորանչան իմն թշնամանս առնէր բղեշխին. թէ թշնամանս պարտ իցէ ասել զայն, եւ ոչ մանաւանդ ցածուն մտաց եւ ամենեւին իսկ փրկութեան բարբառ:

Աւ Տերենտիոս ի ձաղութիւնսն տայ բարբառել ողորմելի ծերոյն Սենեգեմեայ. Այ իմ պատանեակ մի

որդեակ միամօր. եւ զի՞ բնաւ ասիցեմ թէ է, այլ էր երբեմն, այժմ իցէ թէ չիցէ չէ յայտ:

Մխիթարիչքն եկեալ ժողովեալ էին: Մի տաղ-նապիր, ասնն, իմ եղբայր եւս մատաղազոյն մեռաւ քան զնա. այն ինչ հարսն ի տուն ածեալ էր, ան-զաւակ էանց յաշխարհէս: Մեւս այլ ոմն կին յա-ռաջ մատչի եւ ասէ. միամօր որդեակ ունէի, եւ այն մանուկ, ի պսակի իրբեւ ծաղիկ մի թառամեցաւ: Եւ այլք եւս քան զայս խանդաղատագոյնս երկրոր-դեն. եթէ արժան իցէ այսպիսի բանից մխիթա-րութիւն ասել, ես ոչ գիտեմ. զմի մարդ եկեալ էին մխիթարել, եւ ամենքեան նստէին ի սուգ ան-մխիթար. Սամբրէ:

Գ. ՉԵՒՔ ՈՐ Ի ԶՈՒԱՐՃԱՑՈՒՑԱՆԵԼ Ի ԴԷՊ ԵՆ

Ա. ԴԱՐՉՈՒԱԾ

98. Վարձուած է ձեւ որով զբանն դարձուցա-նեմք առ այլ որ զգոյուն կամ անզգայ. որպէս Վի-կերոն վասն Միղոնի առ զօրականնս եւ առ սպայս բարբառի. Օձեզ, զձեզ կոչեմ, արք առաքինիք, որ արիւն բաղում հեղէք վասն քաղաքին. զձեզ, մինչ գեռ այրս մեծ եւ անուանի քաղաքացի ի տաղնապի է, կոչեմ, հարիւրապետք եւ զօրականք:

Եւ Տուանոս ցնիզակն ասէ. Ո՞ր գեղարդն, որ ոչ վրիպեցուցեր զիս երբեք. այժմ ժամանակ է. երբեմն մեծն Նկտոր, այժմ գբեզ Տուանեայ աջ ունի. հայա տապաստ արկջիր զմարմին փռիւզացոյն որ զկանացի բարսն ունի, եւ զգրահսն զորս խլիցես, հզօր ձեռամբ պատառեա, եւ զգիտական եւ զգանգուրս վարսիցն փոշով շաղախեա:

Օքանիւք արար զաշակերտսն, մինչեւ մեռեալն թաղմամբ գերեզմանին վճարեցաւ. ապա յեա այնու-րիկ ասէ ցնոսա: Վաղարոս բարեկամ մեր ննջեաց, եւ ես երթամ զի զարթուցից զնա: Ո՞վ ատր, իրբեւ

ընդ մանկուհնս խօսիս . իբրև տղայոց կաթն ջամբես . մայրաբար ծնանիս , եւ դայեկաբար սնուցանես . ե՞րբ էիր դու սենեկապետ Ղազարու , զի երթաս զարթուցանես զնա . Սամբրէ :

Անոնք դարձուածոյ երկու են . նախ դուն ուրեք եւ անօր պարտ է ի կիր արկանել , զի եթէ յաճախ լինիցի անդէպ եւ ցուրտ լինին : Արկորդ թէպէտ եւ բազմաց թուիցի թէ դարձուածս ի սկզբան առնել չէ մարթ , սակայն է ուրեք զի եւ ի սկզբանն յոյժ վայելուչ է , որպէս յայտ առնէ սկիզբն Աիկերոնի ցկատիղինայ . Սինչեւ ցե՛րբ զեղծիցիս , կատիղինա , մերով համբերութեամբ :

Բ • ՆԿԱՐԱԳԻՐ

99. Ակարագիր է այնպէս զիրոն պատմել , զի ոչ այնչափ լսել կամ ընթեռնուլ թուիցի , որչափ առաջի աչաց տեսանել . որպէս Աիկերոն զՎերբեա կատաղութիւնն նկարէ . Նքն մնասու եւ ցասմամբ բորբոքեալ ի հրապարակ եկն . աչք զայրագինք , ընդ բերանն սղջոյն անագորունութիւն գայր : Սինչեւ ամենեքին կային մնային թէ յո՛ արդեւք երթալոց կամ զինչ գործելոց իցէ , յանկարծ հրաման տայր ունել զայրն եւ ի փողոցամիջի անդ մերկանալ , եւ պրկել եւս եւ բրածեծ առնել . իսկ նա աղաղակ եղեալ ասէր թէ հռոմայեցի եմ :

Այն եկաց յօրինեալ զգիտական ի հոտս անուշութեան . կերպարանք վայելուչք , հանդերձ բարակ եւ ազնիւ , երեսք սիրուն . Սվիդ :

Անցին ձիւնաբերք , դաշտք միւսանգամ դալարով դղչեն , եւ ծառք վարսիք զգննուն . Որատ :

Գիշեր էր , եւ յերկինս ծագէր լուսին ի պարզ ժամանակի , ի մէջ մանր մանր աւտեղաց . Որատ :

100. Հայս տեղի պատշաճի եւ բարուց նկարագիր զոր ոմանք զատ զնեն , որպէս Սաղուատիոս զկատիղինայ . Ղուկիոս կատիղինա յազնուական ազգէ :

Ճնեալ, եղև այր զօրաւոր եւ մաօք եւ անձամբ, այլ շարաբարոյ եւ զեղծ: Միրելի էին նմա անդատին ի մանկութենէ պատերազմունք ներքինք, կոտորած, յափշտակութիւն, երկպառակութիւն ի քաղաքի, եւ նոյնպէս նոքրիմք ի մանկութեանն վարժեալ ուսաւ: Մտաղեւր համբերէր անսուաղութեան, ցրտոյ եւ տքնութեան. էր յանդուզն, նենգաւոր, խորամանկ, կերպարանօղ եւ կեղծաւոր, յօժար յառնուլ զօտարին, եւ զիւրն վատնել, ջերմանդամ եւ բուռն ի ցանկութիւնս: Նարտարախօսութիւն բազում էր նորա, բայց իմաստութիւն սակաւ. հանապազ անչափ եւ անհնարին եւ բարձրազոյն իրաց ցանկայր:

Եւ Պղաւտոս գեղեցիկ յոյժ նկարէ զբարս ազահ եւ կծծի ծերոյ, որ որպէս թէ պատուէրս տացէ ծառային զգուշանալ իրաց տանն: Չգոյշ լեր, ասէ, մի զօտար ոք ի տուն այսր մուծանիցես. եթէ խնդրիցէ ոք կրակ, ասա թէ շիջաւ, զի մի բարուրս ունիցին ստեպ գալ եւ կոչել զքեզ: Իսկ եթէ ջուր խընդրիցէ, ասասջիր թէ հատաւ. ապա եթէ դանակ ոք խնդրիցէ կամ կացին կամ սանդատոռն կամ անկան, զի զայնպիսի պիտոյից անօթս ստեպ խնդրեն դրացիք, ասացես բա դող եկն եւ եբարձ:

Օրծառն մարդասէր է. յորժամ տեսեալ մարդկան նովաւ ճանաչեն զկանաչազգեստ հասկն զարնայնւոյն աճմանն: Իսկ տատրակն ամուսնասէր երեւեալ, զջերմաձայն քաղցրաձայնն ի լսելիս մարդկան ընու, ի գործ արկեալ զթեթեւադործն զկրկտակերան զգուզնաքեայ փայտակերտիկն երկթեւեան ձուոցն իւրոց, ապաւէն ծննդոցն իւրոց պատրաստէ:

101. Ինդ սովաւ է եւ նկարագիր երեսաց, որով երեսք, կերպարանք, նկարագիր, քայլք եւ դնացք ուրուք յայտ առնին. որպէս Մարտիաղէս զՉոյիղոս տղեղ հեզնէ. Արամիր հերովք, երեսօք թուխ, կարճ ոտիք, վատեալ աչօք մեծամեծս կարեսս վճարել, Չոյիղէ:

ի քո ձեռն. եւ ոչ մի ինչ սճիր գործեցաւ առանց քո. քեզ միայնոյ համարձակ եղև անպատիժ զբազումս կոտորել, լլկել եւ յափշտակել զնիզակակիցս : Ղու ոչ միայն իշխեցեր արհամարհել զօրէնս եւ զհրամանս, այլ եւ բնաւ քակել եւ քայքայել կամեցար : Օգտաշինան զայնոսիկ, թէպէտ եւ անհնարին իսկ առ հանդուրժել էին սակայն որչափ ինչ մարթ էր տարայ, իսկ այժմ վասն քո միայն բովանդակ յահի եւ ի դողութեան կամ. եթէ աղմուկ ինչ ուրեք լինիցի, ի քէն հարկ է խիթալ եւ երկնչել : . . . Ամին իրի ի բաց գնա, եւ բարձ յինէն զերկիւզն, զե մի հարստահարեցայց, եթէ իցէ ճշմարիտ. ապա եթէ սուտ, գոնեայ յերկիւղէ եւ ի կասկածանաց ապրեցայց :

Օխարդ պաշտիցեմք զարեգակն, որ ընդ ժամանակս ժամանակս ի խաւար դառնայ առ ի յանդիմանութիւն եւ յամօթ իւրոցն պաշտօնէից. յայտ աբարեալ եթէ չեմ ես արժանի պաշտաման, այլ այն որ զիս եւ զամենայն տիւ լուսաւոր պահէ, եւ զցայդ զօղեցուցանէ, եւ երբեք երբեք խաւարեցուցանէ. եւ իբրեւ խօսուն բերանով անշշունչն բողբէ, եթէ չեմ արժանի պաշտօն առնլոյ, այլ պաշտօն հարկանելոյ. Անն :

Օպս եւ պետք գեղեցիկ յոյժ առնեն, որպէս Ղուկանոս, որ պատմե թէ Յուդեայ Ապսեր մինչ զեռառ Ռուբիկոն գետով էր, երեւեցաւ աշխարհն լուսաւոր կերպարանօք, եւ խրատ ետ նմա բառնալ զընտանի պատերազմն. Ապսր այն ինչ հատեալ անցեալ զէրինս Ղղպից, հանդերձեալ էր տալ պատերազմ, իբրեւ եկն եհաս առ ավին Ռուբիկոն գետոյ, երեւեցաւ նմա տեսիլ աշխարհին մեծ եւ յաղթ, լուսաւոր ի մթին գիշերի, որ արտմութեամբ եւ երկիւղել զսպիտակ հերսն հեղոյր արկանէր ի գլխոյն, զծամս խզեալ, եւ զտիգս մերկացեալ կայր եւ հեծութեամբ խառն խօսէր. յո, ասէ, դէմ եթեալ երթալք, արք,

ի քո ձեռն. եւ ոչ մի ինչ սճիր գործեցաւ առանց քո. քեզ միայնոյ համարձակ եղև անպատիժ զբազումս կոտորել, լլկել եւ յափշտակել զնիզակակիցս: Ղու ոչ միայն իշխեցեր արհամարհել զօրէնս եւ զհրամանս, այլ եւ բնաւ քակել եւ քայքայել կամեցար: Օգտաշինան զայնոսիկ, թէպէտ եւ անհնարին իսկ առ հանդուրժել էին սակայն որչափ ինչ մարթ էր տարայ, իսկ այժմ վասն քո միայն բովանդակ յահի եւ ի դողութեան կամ. եթէ աղմուկ ինչ ուրեք լինիցի, ի քէն հարկ է խիթալ եւ երկնչել: . . . Ամին իրի ի բաց գնա, եւ բարձ յինէն զերկիւզն, զե մի հարստահարեցայց, եթէ իցէ ճշմարիտ. ապա եթէ սուտ, գոնեայ յերկիւզէ եւ ի կասկածանաց ապրեցայց:

Օխարդ պաշտիցեմք զարեգակն, որ ընդ ժամանակս ժամանակս ի խաւար դառնայ առ ի յանդիմանութիւն եւ յամօթ իւրոցն պաշտօնէից. յայտ աբարեալ եթէ չեմ ես արժանի պաշտաման, այլ այն որ զիս եւ զամենայն տիւ լուսաւոր պահէ, եւ զցայգ զօղեցուցանէ, եւ երբեք երբեք խաւարեցուցանէ. եւ իբրեւ խօսուն բերանով անշշունչն բողբէ, եթէ չեմ արժանի պաշտօն առնլոյ, այլ պաշտօն հարկանելոյ. Եղն:

Օպս եւ պւետք գեղեցիկ յոյժ առնեն, որպէս Ղուկանոս, որ պատմե թէ Յուդեայ Ապոսեր մինչ զեռ առ Ռուբիկոն գետով էր, երեւեցաւ աշխարհն լուսաւոր կերպարանօք, եւ խրատ ետ նմա բառնալ զընտանի պատերազմն. Ապոսր այն ինչ հատեալ անցեալ զէրինս Ղղպից, հանդերձեալ էր տալ պատերազմ, իբրեւ եկն եհաս առ ավին Ռուբիկոն գետոյ, երեւեցաւ նմա տեսիլ աշխարհին մեծ եւ յաղթ, լուսաւոր ի մթին գիշերի, որ արտմութեամբ եւ երկիւղել զսպիտակ հերսն հեղոյր արկանէր ի գլխոյն, զծամս խզեալ, եւ զտիգս մերկացեալ կայր եւ հեծութեամբ խառն խօսէր. յո, ասէ, դէմ եթեալ երթալք, արք,

յոր վայր առեալ տանիք զիմ նշանս . եթէ իրաւամբք պնդեալ էք, ցայդ վայր միայն օրէն է, եւ մի անդր եւս :

Դ. ՆՄԱՆՈՒԹԻՒՆ

103. Բազում անգամ վասն յայտնի դործելոյ առաջի դնի այլ ինչ որոյ է նմանութիւն ինչ ընդ իրացն զորոց բանք են . եւ սոյն իսկ է նմանութիւն : Արդէս եթէ զմիաբանութիւն նմանեցուցանիցես միջեան, զգործօնան մեղուաց, զնախանձ ժանկոյ որ ուտէ զերկաթ, կամ բաղեղան որ զձառ զորով պատի ապականէ եւ գօսացուցանէ :

Բարիւք է արեգակն եւ զեղեցիկ բնութեամբ, եւ մեղ եւ ամենայն արարածոց որ ի ներքոյ երկնից, յօգուա եւ ի դարման, իբրեւ ճրագ մի ի մեծի տան ի մէջ ձեղուան եւ յատակի լուցեալ, առ ի զնաւարն եւ զստուերն զերկուց մեծացն անօթոյ ի բաց ի միջոյ փարատելոյ . Ազն :

Չոր օրինակ բազում անգամ ախտաժէտք, որ տապով եւ ջերմամբ տաղնապիցին, եթէ ջուր ցուրտ ըմպիցեն, զառաջինն թեթեւանալ թուին, այլ յետոյ ապա անհնարին եւ սաստիկ եւս տանջին, նոյնպէս եւ այս ցարք որ ի քաղաքին են, թէպէտ եւ բառնայցին սորին պատժով, թէ այլք կենդանի կան, սաստիկ եւս զայրանալոց են . Աիկ :

Բ. Չ Ե Ի Ք Բ Ա Ն Ի Յ

104. Ի Չեւոց որ բանից կոչին, կէսք շրջանք են, եւ կէսք չեն : Չեւք որ շրջանք են, միայն յայլափոխ բանս լինին, այս ինքն է յորժամ յիւրեանց սեպհական մտաց յայլ միաս փոփոխին, որպէս յորժամ ասիցի ծիծաղել ջուրոց, ծաղկել ալեաց, զուարձանալ բուսոց : Իսկ ձեւք որ չեն շրջանք, լինին եւ ի սեպհական անուանս, որպէս . անց, չոգաւ, յարձակեցաւ, եհաս ի վերայ :

Նախ վասն շրջանաց ասացուք, եւ ապա վասն նոցա որ շէն շրջանք :

Ա. ՇՐՋԱՆԻՔ

105. Շրջան ասի յորժամ անուն ինչ կամ բան փոփոխի յայլ ինչ զոր ոչ նշանակէր. որպէս յորժամ ասի ազուէս, փոխանակ ասելոյ խորամանգ. կամ յընչաց քերեւ փոխանակ արհամարհելոյ, եւ կամ զազիւս լուանալ, զխեցի կարկատել փոխանակ ասելոյ զուր ջանալ, բնդ վայր աշխատել : Այսպիսի փոփոխումն կամ շրջան վասն վայելչութեան լինի, զի արգոյ եւ մեծ ընծայեցուցանէ զճառն :

Իսոյց փոփոխումնս այս պէսպէս եւ ազգի ազգի օրինակաւ լինի. ազնուազոյնք ի նոցանէ եւթն են, այս ինքն է փոփոխումն, Այլասացութիւն, Ընուանափոխութիւն, Իմանալ, Խարդախութիւն, Աւաւելլութիւն եւ Շրջանակաւ ասացած զորոց մի ըստ միջէ ճառեսցուք :

Ա. ՓՈՓՈՒՍՈՒՄՆ

106. Փոփոխումն է շրջան, որով անուն ինչ կամ բան զայլ ինչ նշանակէ վասն նմանութեանն. որպէս յորժամ ասիցէ Կիկերոն ցկայօր. Որմունք սրահիս շնորհակալ լինին քեզ. ուր շնորհակալն լինել զոր մարդ միայն կարէ, փոփոխամամբ զորմոց ասի, զի զոյ նմանութիւն ինչ եւ խնամութիւն :

Օտաւջինն կարօտութիւն եւս զանուանս փոփոխել, զի իւրաքանչիւր բանք պակասէին. բայց ապա վայելչութիւն եւ քաղցրութիւն փոխանակեաց : Օրօրինակ հանդերձք վասն ի ցրտոյ պատասպարելոյ հնարեցան, եւ ապա ի զարդ եւ ի փառս եղին, նոյնպէս եւ բանից փոփոխումն առ շքաւորութեան հաստատեալ, յետոյ զարդ համարեցաւ :

Իսկ եթէ հարցանիցէ ոք թէ ուստի մարթ է առնուլ փոփոխմունս, ասացուք թէ ամենեւին յա-

մենայն իրաց մարթ է. յաստուածեղէն եւ յերկնաւոր իրաց, ի տարերաց, ի քարանց, ի քրէական նիւթոց, ի տնկոց, յանասնոց, ի մարդկանէ եւ ի նոցին գործոց. այնպէս զի զոր օրինակ նմանութիւն յամենայն իրաց դայ, նոյնպէս փոփոխումն յամենայն իրաց առնի: Աւտի մարթ է զարս լաւս հրեշտակս կոչել, եւ զչարս դեւս, նոյնպէս ասի ազրիւրք արտասուաց, արմատք առաքինութեան, հողմ անօրէնութեան, ցօղ բանից, ծաղիկ մանկութեան: Իսկ ի մարդկանէ եւ ի գործոց ձեռաց նոցա, որպէս շամերոս կոչեն զանուանի պեւտս, կամ Աիկերոն զքաջ ճարտարախօսս. նոյնպէս զՆոնգինոս հռետորն եւ զԱրիգենէս կոչէին կենդանի մատենագարան, կամ գնայուն դիւան. եւ շեղուիոս Պերտինաքս կայսր անկան բախտին կոչեցաւ, զի պէսպէս պատահարօք բախտին փորձեցաւ: Արպէս եւ Պտղամէոս Աերաւնոս կոչեցաւ այս ինքն է բարկութիւն. եւ Դեմետրիոս Լնտիգոնեայ Պաշարիչ զի սաստիկ էր ի պաշարել. որպէս եւ զԼատիղա Լստուածահարուած կոչեցին վասն անհնարին սաստկութեանն:

Օսյլ եւս ազրիւրս փոփոխմանց, որ անթիւ են եւ ամենեցուն դիւրին առ դտանել, մի բոս միոջէ ի կարգ արկանել աւելորդ եւ դատարկութեան է. բայց զչորս ի նոցանէ, զոր եւ Աուինտիղանոս համարի, դիցուք համառօտիւք, զի եւ այլքն ի նոսին բովանդակ դտանին:

Նախ լինի փոփոխումն, յորժամ ի շնչաւորէ իմեքէ յայլ շնչաւոր փոփոխի բանն. որպէս Աղիշէ ասէ. Սնչելով բարբառ արձակէր. ուր մանչել որ զանասնոց ասի, փոփոխի ի մարդիկ:

Երկրորդ առնի փոփոխումն, յորժամ անշունչք փոխանակ այլոց անշնչոց գնին. որպէս սանձ ասի, փոխանակ օրինաց:

Երրորդ, յորժամ անշունչք զշնչաւորաց ասին, որպէս ասի շիջաւ ճրագ քաղաքին, տան կամ ազ-

գատահմին, իբրեւ թագաւոր կամ գլխաւոր տանն եւ
ասհմին մեռանիցի:

Չորրորդ եւ գեղեցիկ, յայժ, յորժամ անշնչոյ
իւր անզգայ իրաց շունչ եւ զգայութիւն շնորհի-
ուստի ասի զուարթանալ երկնից, զայրանալ ցաւոց,
սրոյ ուտել, հրոյ ճարակել:

ԹԷ ԶԻՆՁ ԶԴՈՒՇՈՒԹԻՒՆ ՊԻՏԻՑԻ Ի ՓՈՓՈՒՄՈՒՆՍ

107. *Արախ մի լիցի անարգ աղտեղի, կամ ագեղ
եւ խոտան, որպէս աղբոյ կամ կուոյ նմանեցուցա-
նել, որպէս փուրիսս սմն Ռիբակուղոս ասաց. Արա-
մազդ եթուք ձիւն ի լերինս Վշպից: Օ՛խնչ քան զայս-
պիսի բանս ցուրտ կայցէ:

Արկրորդ չէ պարտ փոփոխման կարի խիստ լինել,
կամ աւելի իմն, ապա թէ այնպէս իցէ պարտ է մեղ-
մացուցանել բանիւքն իբրեւ, գրեթէ. որպէս եթէ
ասէր ոք, իբրեւ մեռաւ Աատոն, որք մնաց ծերակոյան,
յանդգնագոյն լինէր, եւ չթուէր հաճոյ, ուստի ասաց
Վիկերոն. իբրեւ մեռաւ Աատոն, գրեթէ որք մնաց
ծերակոյան. եւ գրեթէիւն միայն մեղմացոյց զխրս-
տութիւնն. զի ցածուն եւ պատկառանաց պարտի լի-
նել փոփոխումն, զի իբր փոխ առեալ թուիցի եւ մի
բռնաղբօսեալ:

Արբորդ չէ պարտ թէ լինիցի կարի այլափոխ
եւ այլասացիկ, որ պետաց օրէն է եւ ոչ ճարտարա-
խօսաց. որպէս եթէ ասէր ոք, թուշունք թեւովք
նաւեն. կամ նաւք ախօսարեկ առնեն զպիս. զի ա-
մենայնի գոյ չափ:

Չորրորդ չէ պարտ բազում փոփոխմունս շեղջա-
կուտել. զի թէպէտ եւ ի չքմանս չիք ինչ գեղեցկա-
գոյն եւ լուսաւորագոյն քան զփոփոխումն, սակայն
չէ օրէն յաճախել. եւ զոր օրինակ սակաւն ուրախ
առնէ, նոյնպէս կարին անչափ՝ ձանձրոյթ, եւ իբրեւ
առակ իմն եւ առեղծուած լինի:

Հինգերորդ բանքն որ փոփոխին պարտին միաբանութիւն իմն եւ մերձաւորութիւն ընդ միմեանս ունել . զի որպէս ասէ փարիոս, այնմ առաւել պարտ է զգուշանալ, զի ուստի սկսան ի նմին եւ կատարեսցի. զի բազումք ի մրրկաց սկիզբն արարեալ, ի հրայրեացս կամ յաւեր վախճանեն, որ անպատեհ է: Ի այց զսմանէ որ արդար եւ իրաւացի է, եւ անուանի մատենագիրք անփոյթ առնեն, բայց չէ արժան զայլոց անփոյթութիւն օրէնս արուեստին համարել:

Բ. ԱՅԼԱՍԸՑՈՒԹԻՒՆ

108. Այլասացութիւն ասի որ զայլ ինչ ասիցէ, եւ զայլ ինչ նշանակէ. որպէս Որատիոս առնէ գեղեցիկ .
 Ո՛նաւ, ալեկո՞ծ ծովածուփ լինելոց ես. կաց ի նաւահանգստիդ. չտեսանիցեն զի ոչ սամլք են եւ ոչ զեկք, կայմն բեկեալ ի հողմոց, որ զառագաստն ի վեր ունին հեծեն, եւ զխորդ առանց լարից կարիցեն տախտակամածք անել բաւել բռնութեան ջուրցն:

Ի գեղեցիկ այլասացութեան աստ, նաւ դքազաքն յայտ առնէ. ալիք՝ զընտանի պատերազմն. նաւահանգիստ զխաղաղութիւնն եւ զմիաբանութիւն. սամիքն եւ զեկք՝ զդատաւորս եւ զզօրականս, կայմն՝ զզօրագլուխս, եւ ի սկզբանէ մինչեւ ցկատարած ամենայն բանքն ընդ միմեանս կապեալ, ընդ միմեանս գրկախառն են, զոր գործ է պահել յայլասացութեան:

Օ ի թէ ոչ խլեսջիք դուք ի մտաց ձերոց զարմատս մնասակար մեղացն, որ ի ձեզ արմատացեալ են, եւ պատեալ զոստովք մտաց ձերոց առ ի խափանել զծաղիկս եւ առ ի շտալ բերել զպտուղն, թէպէտ վարել վարիցեմք, անմասն եղեալ ի պողոյն զըկի. Աղաթ:

Աւ Սամբրէ ի յարութիւնն Ղազարու. Ի հեռաստանէ կալաւ զերակս հիւանդին, մանր զննեաց

և Զճմարտիւ զպատմութիւնն արար, այն Հիւանդութիւն, ասէ, չէ ի մահ:

Ար ինչ զգուշութեան աղաղաւ վասն փոփոխման ասացաւ, զնոյնս պարտ է և զայլասացութենէ իմանալ, զի սորա և նորա չիք երեւելի ինչ խտիր, բայց զի սա երկայնագոյն է քան զնա:

Գ. ԵՆՈՒԵՆԸՓՈՒՌՈՒԹԻՒՆ

109. Ենուանափոխութիւն որպէս յանուանէ իսկ յայտ է, է փոփոխումն անուան, որ քան զամենայն շրջանս լայն և ձիգ և պիտանագոյն ևւս է. և լինի չորիւք օրինակօք:

Սախ յորժամ պատճառքն փոխանակ արդեանց կամ գործոց դնին. կամ գտիչ իրիք փոխանակ իրացն որոց նայն գտակ եղև. որպէս Արէս ասի փոխանակ պատերազմի. Սանդարամետապետ փոխանակ արմտեաց. Ափեստոս հուր. Համերոս կամ Արոգոտոս փոխանակ զրոց նոցա. իշխան զօրուն փոխանակ զօրացն. ուստի Վիրգիլիոս ասէ. Եման ի կողովս զպարգևս աշխատութեան սանդարամետապետին. այս ինքն է հաց, և ի մշակութեան գիրսն ասէ. Սպանդարամեան, այս ինքն է որթ, սիրէ զբլուրս. գեղձ զսառամանիս և զցուրտ:

Սոյնպէս և ստացիչն փոխանակ ստացուածոց դնի. Հատուած գնացեալ Վարդգէս մանուկն ի Տուհաց դաւառէն, կռել կոփել զգուռն Արուանդայ արքայի. փոխանակ ասելոյ զգուռն քաղաքին Արուանդայ. Հայոց Վիպաս: Սոյնպէս Ղոմետ զոմն ասեն և կեալ ի հայս, որ է ինքն Վայսրն Ղոմետիանոս. որ սչ եթէ ինքն եկն այլ զհրաման նորա և զգօրսն յանուն նորա կոչեն:

Արկրորդ յորժամ արդիւնքն փոխանակ պատճառաց դնիցին, ուստի ասի ծագեաց տիւ կամ լոյս, փոխանակ ասելոյ արեգակն որ է պատճառ տուրնջեան և լուսոյ: Սոյնպէս որ ինչ արդեանցն է պատ-

Ճառին հաշուի, ուստի քիրտն ասի փոխանակ աշխատութեան, զի յաշխատելոյ լինի քրանել:

Արրորդ յորժամ տեղին փոխանակ նոցա որ ի տեղւոջն են դնի. ուստի ասի Հռոմ փոխանակ Հռոմացեաց, երկինք փոխանակ երկնաւորաց, եւ երկիր փոխանակ բնակչաց երկրի, նոյնպէս տուն կամ երգ ասի փոխանակ ընտանեացն. Սուգ առին երկինք ի վերայ ձեր. Եղիշ:

Չորրորդ յորժամ նշան իրիք փոխանակ իրացն ասի. ուստի սովորութիւն է ալիս ասել փոխանակ ծերութեան. ծիրանիս փոխանակ թաղաւորութեան. նոյնպէս ասի ձեռն տալ կամ թիկունք լինել փոխանակ օգնականութեան, զի ձեռն եւ թիկունք ամբութեան եւ պատասպարանաց նշանակ են:

Դ. ԻՄԱՆԱԼ

110. Իմանալ ասի յորժամ այլ ընդ այլոյ դնի, եւ ասի իմանալ զի իբրեւ թէ գուշակել եւ իմանալ պարտի լսողն ի միտջէ զայլ ինչ. եւ այս հնգէքումբք օրինակօք գործի:

Սախ յորժամ մասն ինչ փոխանակ բովանդակ իրացն դնի, որպէս դուռն կամ յարկ ասի փոխանակ տան. եւ կամ յորժամ միաբար ասի փոխանակ բազմաբար ասելոյ, որպէս ասի թշնամին պաշարեաց գրադաքն, կամ ոչխար, արջառ փոխանակ բազմութեան կամ հօտի ոչխարաց եւ արջառոց:

Արրորդ յորժամ բովանդակն դնի փոխանակ մասին իրիք, ուստի յորժամ ասիցի կոտորեալ զՊարթեւս, կամ վախեան Ասորիք, ոչ զամենայն Պարթեւս եւ զբնաւ Ասորիս իմանայ, այլ զմասն ինչ ի նոցանէ: Նոյնպէս յորժամ բազմաբար ասի փոխանակ միաւորի. եւ այս վասն ցածութեան, ուստի սովորութիւն է բազմադիմի բանիւք խօսել, արասցուք, կարգեսցուք, մեք, զմեր բանս, թէպէտ եւ մի ոք իցէ որ խօսիցին:

Արրորդ յորժամ նիւթն յորմէ կազմեալ է ինչ, փոխանակ իրացն դնի. որպէս երկաթ ասի փոխանակ սրոյ, փայտ փոխանակ նաւի, արծաթ փոխանակ ընչից. Չնչին փայտին հաւատան մարդիկ զանձինս իւրեանց. եւ շրջեալ ընդ ալիսն դոյզն լատտին ասպրեցան. ՚մ :

Չորրորդ յորժամ կերպարանք դնին փոխանակ ազգի, որպէս սովորութիւն է զամենայն երեւելի գունդս զօրաց զեզէոյն կոչել, որ գունդ ինչ էր Հռոմայեցւոց. կամ խարամանի որ ազգ ինչ օձից է, զամենայն շար օձս. նոյնպէս սովորութիւն է ասել պարսիկ խունկ, հնդիկ կերպաս, փոխանակ սրոյ եւ իցէ ազնիւ խնկոյ, կերպասոյ: Ար ի ցաւս է, զնա ոչ սինք կճեայք փռիւղացւոց ցածուցանել կարեն, ոչ խունկք անուշունք պարսիկն եւ արաբացին. Արատ:

Աւ կամ ազգն փոխանակ կերպարանաց, ուստի ասի մտեղի կամ մարմին միայն վասն մարդկան, թէպէտ եւ ամենայն ինչ որ յաշխարհի է, մարմնաւոր է: Այնպէս յորժամ ասի մարդիկ սիրեն զգատարկութիւն, ոչ զամենայն համօրէն մարդկանէ իմանայ այլ զոմանց միայն: Հինգերորդ, յորժամ շափ ինչ թիւ փոխանակ առանց թուոյ համարոյ, ուստի ասի բեւր, հազար, հազարք հազարաց, բիւրք բիւրուց, փոխանակ ասելոյ անշափ կամ բազում. Հօտք բեւր, եւ Սիկուղացւոց արջառք շուրջ զքեւ բչեն եւ գոչեն. Արատ:

Աւ կամ թիւ ինչ փոխանակ փոքր ինչ աւելոյ կամ սակաւու դնի. ուստի առ Հռոմայեցիս հարեւր եւ հինգ դատաւորք հարեւր արք կոչեցան. եւ եւ թանասուն եւ երկու թարգմանք, եւ թանասունք կոչին:

111. Խարդախութիւն կամ կեղծիք, ընդ որ Սոկրատէս յոյժ զուարճանայր, է ձեւ որ ոչ միայն զայլ ինչ, այլ եւ զհակառակ այնր զոր ասէ ոք, տայ իմանալ. որպէս յորժամ ասիցէ ոք մտացի, փոխանակ ասելոյ անմիտ, ուստի Կուինտիլիանոս այլաբանութիւն, կեղծաւորութիւն եւ խաբէութիւն կոչէ, որպէս եւ յունարէն բանն իրոնիա խարդախութիւն կամ կեղծիս նշանակէ:

Արդ խարդախութիւն կամ կեղծաւորութիւն բանիցն յայտնի լինի կամ անգատին յիրացն, կամ յօրինակէն որով ասի. որպէս եթէ ոք զգայլս կոչիցէ, պահապանս հօտից: Այսպէս կեղծեօք այլանէ Յուենաղիս զԿիպտացիս որ ամբարիշտ եւ անիմաստ կրօնիւք ոչ միայն զչորքոտանիս, այս ինքն է զշուն, զկապիկս, զցուլս եւ զեղինս, այլ եւ զպրաս եւ զսոխի պաշտօն առնուին. Յամենայն քաղաքս, ասէ, զշուն մեծարեն, իսկ զՆահիտ ոչ ոք. ի պրաս եւ ի սոխ չէ օրէն մերձենալ կամ բեկանել եւ կամ խածանել. ո՛ սուրբ ազգք, յորոց դրախտս այդպիսի աստուածք բուսանին:

Եւ Ատամ մոկացի այլանեաց երբեմն զՀապուհ, իբրեւ յորսս շուրջ պատեաց զնովաւ հուր եւ ոչ կարէր անցանել, ասէ. Աստուածորդիդ Պարսից, ահա հայր քո եւ աստուած, ընդէր զանգիտես:

Եւ Դղեքսանդր իբրեւ զԿիտոն սպանանէր հեզնեաց, ասէ. Արթ այժմ առ Քիզիպպոս եւ առ Պարմենիոն:

Ի այց զուարճալի յոյժ լինիցի եթէ բանքն յերկուս միտս հարկանիցին. որպէս զՆերոն մայրասպան, որ պարծէր թէ յՆեսայ ազգէն է, ծաղր առնէ պեթիկոսն այսպիսի բանիւք. Ո՛ ասիցէ թէ Ներոն յՆեսայ ազգէն չիցէ. եբարձ նա զհայրն, եբարձ եւ սա զմայրն:

Իսկ յայտնապէս ծաղըն առնել , այսպանութիւն կոչի . որպէս արար Սեմէի Վաւթայ , եւ Հրեայք Վրիստոսի . Ա՛հ՛ որ քակէիր զտաճարդ եւ զերիս աւուրս շինէիր :

Զ. ԱՌԱՒԵՆՈՒԹԻՒՆ

112. Ընդ շրջանս մտաց համարին եւ այլ եւս երկու ձեւք . առաջին Մաւելութիւն կամ աւելեաց բանք , որ է աւելի քան զչափն աճեցուցանել կամ նուազեցուցանել զիրոն . որպէս Վիրգիլիոս ասէ վասն երիւարացն Տուռնեայ թէ , սպիտակութեամբ անցանեն զանցանեն քան զձիւն , եւ զնացիւք քան զհողմն : Եւ Վիկերոն ցկայսր ասէ . Օչայնչափ տար աշխարհս եւ ոչ թէ ընթանայ ոք , կարէ հատանել անցանել այնպէս արագ , որպէս դու , ոչ միայն հատեր անցեր , այլ եւ ընդ ձեռամբ նուաճեցեր :

Եհաւասիկ առնութեր կայ թշնամին , որոյ բազմութիւն խոնարհեցուցանէ զըլուրս , եւ տայ սարսել երկրի , եւ ջուրք պակասեն ուր ըմպիցեն երիւարք նոցա . կղա :

Չգոյր թիւ բազմութեան հեծելազօր զնդացն , եւ ոչ համար շերտաւոր հետեւակ զօրուն . զի եւ ինքեանք զինքեանս զիւրեանց զօրսն թուել ոչ կարէին . Բուզ :

Եւ զՄրտաշիտէ ասեն պատմադիրք , թէ ի թանձրութենէ նեախցն ծածկեաց զարեգակն , եւ թէ առաւել չափոյ քան համարոյ պէտք եղեն ի համարել զզօրսն :

113. Իսկ երկրորդն է շրջելով ասել ինչ , այս ինքն է երկայնելով , կամ փոփոխական բանիւք . կամ վասն պարկեշտութեան եւ կամ առ ի ոչ զայրացուցանել զլսողսն . որպէս Վիկերոն փոխանակ ասելոյ թէ սպանին , ասէ . Իսկ ծառայք Միզոնի արարին զայն ինչ , զոր իւրաքանչիւր ոք կամէր , թէ իւր սպասաւորք առնէին յանպիսի ինչ իրս :

Մինչ դեռ ոգիքն կրտսերոյ մանկանն առ իւր կային. Մ'ակ :

Իսպց այս ձեւ ընդ փոփոխման նոյն հաշուի :

Բ. ՉԵՒՔ ԲԱՆԻՑ ՈՐ ՉԵՆ ՇՐՋԱՆՔ

114. Չեւք բանից որ չեն շրջանք, այնք են, որոց ճարտարութիւն ի բանն է, այնպէս զի եթէ բանքն փոփոխեցին, բառնի ձեւն. որպէս Ողբամ զքեզ Հայոց աշխարհ, ողբամ զքեզ. եթէ զմին բարձրես, ոչ եւս կայ մնայ ճարտարութիւնն :

Չեւք բանից որ չեն շրջանք երկուքումք օրինակօք լինին, ի ձեռն Յաւելուածոյ եւ Նուազութեան :

Ա. ՉԵՒՔ ԲԱՆԻՑ Ի ՉԵՌՆ ՅԱՒԵԼՈՒԱԾՈՅ

115. Եւթն ազգք են յաւելուածով ձեւոց, կրկնեւ, կրկրորդեւ, Եստիճան, Կից անուանք, Իսպմադէպ, Իսպմայօդ եւ Գատուցանեւ :

Ե. Կրկնեւ է զնոյն բան ի սկզբան կամ ի կատարածին եւ կամ եւ ի սկզբան եւ ի կատարածին կրկնեւ բազում անգամ :

Չիք ինչ, հաւատայ ինձ, քան զառաքինութիւն բնափր, չիք ինչ գեղեցիկ, չիք ինչ քան զնա սիրելի. Կիկ :

Յորմէ հետէ միաբանութիւն ի քաղաքէն բարձաւ, բարեկամութիւն բարձաւ, հաւատարմութիւն բարձաւ. Կիկ :

Օր ծերակոյան դատապարտիցէ, զոր ամենեցուն ակնկալութիւն դատապարտիցէ, դուք զխաբ գայնպիսին ձերովք վճռովք արձակիցէք. Կիկ :

Ըձեալ են աձեալ զսայլիկն, աձեալ են կացուցեալ,

Եւ ահա չարժէր սայլիկն այն, եւ ահա չխաղար անիւն այն. Նարեկ. Կրգ :

Արկնել յորդորէ եւ շարժէ յոյժ, այլ եթէ երկայնագոյն ձգեսցի ձանձրացուցանէ, նմին իրի պարսէ խառն ընդ այլ ձեւս առնել եւ իբր ամբքել իմն:

Բ. Արկորդութիւն ասի յորժամ նոյն բան ի սկզբանն երկիցս ասի, կամ երկրորդի:

Միհրդատ թագաւորէ, եւ այնպէս թագաւորէ, զի ոչ ի Պոնտոս եւ ոչ ի Ապագոզկիացոց կողմանս կամի դադարել. Աիկ:

Գնա, գնա, աստուածորդիդ Պարսից, թէ այր իցես. Խոր:

Այս ձեւ բանից յոյժ ի դէպ է շարժել յողորմութիւն, ի ցասումն, յուրախութիւն, նոյնպէս եւ ի ծաղր:

Գ. Ատիճան է որով իբրեւ ընդ որոշս կամ ի բարձունս լինի ելանել, կամ ի խոնարհ իջանել:

Աթէ ննջես, սթափեսց. թէ յոտն կաս, մուտ. եթէ մտանիցես, ընթասջիր. եթէ ընթանայցես, թռանիջիր. Աիկ:

Օայր հռոմայեցի կապել Ֆիաս է, հարկանել ոճիրք են, իբրեւ զՏայր սպանանել է խողխողելն, զինչ ապա ի խաչն հանել իցէ. Նոյն:

Դ. Աից անուանք կոչին բազմութիւնք անուանց որ դրեթէ զնոյն ինչ նշանակեն եւ միայն առ սասակութեան գնին. Չնջէլ, խլէլ, քակել, հիմն ի վեր ջանայր առնել. Եգաթ:

Ե. Բազմադէպ կոչի պէսպէս դիպօք, եւ գունակօք եւ ժամանակօք զնոյն բան կրկնել. Միոյ դպրոցի մանկունք զմի բան բարբառեալ խօսին. միով արուեստիւ ի մի որս բմբունեցան. Սամբրէ:

Զ. Բազմայօդ է, ուր իւրաքանչիւր բանք զօդիւք յեռեալ են ընդ միմեանս, որպէս. Մեռանի այն որ շնչէ, եւ շարժի, եւ ուտէ, եւ բմպէ. Եղիշ:

Օկայսր եւ օրրստօրէ իբք, եւ աւուրք, եւ մարդկան կարծիք եւ որպէս ինձ թուի իւր իսկ բնութիւն զգօնագոյն արարին. Աիկ:

Լ. Օչտուրցանել է իւրաքանչիւր անուան աւանձին բան աւրնթեր դնել, որպէս . Օչտուրցանտիա ջնջեաց, զվարքեդոն եբարձ ի միջոյ, զվորընթոս տապալեաց . ուր մարթ էր ասել միով բանիւ, Օչտուրցանտիա, զվարքեդոն, զվորընթոս կործանեաց . Աիկ :

Այս կառք զարմանալիք ի հակառակ եւ յանման երիւարաց լծեալ, ոչ ի մի միայն կողմն ի հանդէպ երեսացն եւեթ արշաւին, այլ յամենայն կողմանս վարդին, եւ ընդ հանուր արշաւին, եւ ընդ բնաւս սրանան . Եզն :

Բ. ՁԵՒՔ ԲԱՆԻՑ Ի ՁԵՌՆ ԿՈՒՆՉՈՒԹԵԱՆ

116. Արեք են ձեւք որ լինին ի ձեռն նուազութեան . Առութիւն, Ացել եւ Անջատել :

Ե. Առութիւն է յորժամ զբան ինչ մեղմով լինի իմանալ, որպէս . Այլ զիզեալ՝ ժողով անօրինաց, եւ վախճան նոցա ի բոց հրոյ . այս ինքն է, իբրեւ զվուշ զիզեալ է ժողով . . . :

Գայլ չար ի դոմս, հասուն արմուեաց անձրեւք, եւ մեղ Ամարիղիզայ ցասումն . ուր լինի իմանալ, զոր օրինակ դայլ չար ի դոմս . . . նոյնպէս եւ մեղ . . . :

Բ. Ացել է, յորժամ միոյ բանի բազում անուանք զկնի կցին . Յաղթեաց ցածութեան անառապութիւն, երկիւղին յանդգնութիւն, իմաստութեան անմտութիւն :

Գ. Անջատել է յորժամ ամենայն զօրք բառնին, զի սաստիկ լինիցին ճառքն :

Առք վաղվաղակի սուտեր, նեաաձիգ եզերութք, ելէք ի վերայ պարսպացդ, թշնամին շուրջ կայ . Ա իբդ :

ՎԵՍՆ ԵՆՑՄԵՆ

117. Անցումն զոր ոմանք ձեւ ասեն, եւ ոմանք շառնուն յանձն, է յեռուլ ընդ միմեանս զճառն, որով բոս օրինի կցեալ ընդ միմեանս անդամքն, իբրեւ զմի մարմին յարդարին :

Արհու ազգք են անցման, կատարեալ եւ անկատար. կատարեալ անցումն է, յորում համառօտիւք որ ասացանն եւ որ ասելոցն են յիշատակին, որպէս.

Արդ որովհետեւ զազգէ պատերազմին ասացի, այժմ եւ զմեծութենէն ասացից օակաւուք:

Իսկ անկատար անցումն է, յորում մի մասն եւեթ յիշատակի, որպէս. Աղէ այժմ զյաջորդան տեսցուք:

Օրինակս ինչ անցման դիցուք առաջի ի կիկերոնէ, վասն աշակերտացն դիւրութեան, որ ոչ սակաւ աշխատել սովոր են, առ ի գտանել անցմունս ճառից իւրեանց:

Հատ եւ բաւական է զ... այժմ ասացից զ...: Միում ի թղթոցն ետու պատասխանի, եկից այժմ առ մեզն եւս: Օչորին խնդիրս ցուցաք, զմնացեալսն լուիջիք: Օքազում ինչ պարտ է զեղէել, սակայն բազում ինչ ասի: Ասան սկզբանն բաւական ասացաւ, եկ այժմ ի պատմութիւնս անցուք: Ար ինչ վասն որոշմանց էր, ցայս վայր ասացաւ, այժմ զմնացեալսն տեսցուք: Այկեսցուք յայլ եւս ճարտարախօսաց տիս: Ի դէպ է յայլ եւս մատունս ճառիցն գալ. աւն առ զյօրինուածոյ ասացուք: Այլ թողեալ զսկիզբնն, ի բուն իսկ իրացն եկեսցուք: Մեծամեծս լուայք, լուիջիք այժմ զեւս մեծամեծս: Բայց եւ տեղիս պահանջէ ասել զ...: Թոյլ տուք ինձ զմանունս եւ զօրրստօրէն թողուլ: Թէպէտ եւ փութամ ճեպիմ յանկ հանել զճառս, սակայն զայնու զանց առնել չկարեմ: Օհաստատութենէ աւուրց ասացի, աւն առ այժմ եւ զտարեկանաց ասացից: Բայց եւ այն յայտնի եւ երեւելի է ամենեցուն, թէ զհարգ խնամով զգուշանան անձանց անասունք:

Աթէ դք եւս համառօտիւք կամիցի, այսոքիկ են: Յաւել ի նոյնս: Յաւելաւ ի նոսին: Եստ դէպ եղեւ զի...: Այսր ի դէպ է: Ամին անկ է: Եւն առ այժմ յայտ արացուք: Աոցին նման է: Այս մնայ

ասել: Աստատին մարթ է ի միտ առնուլ: Աոյնպէս է որպէս եւ ասացիս: Աոյն բանք են եւ . . . :

Բ Գ Լ Ո Ւ Խ

Շ Ր Զ Ո Ւ Մ Ն

118. Շ Ր Զ Ո Ւ Մ Ն, որպէս Արիստոտելէս ասէ, է համառօտ ինչ բան, որոյ է սկիզբն, եւ կատարած, եւ մեծութիւն կամ միջոց որ դիւրաւ ի մտաց հասանի: Արդ սկիզբն զոր ասէ, ոչ այլ ինչ է, բայց առաջին անգամ շրջման, որ այնպէս կրճատ եւ թերակատար է, զի այլ ինչ պարտի զնորին զհետ գալ, որով ի կատարումն եկեացէ: Իսկ միջոց եւ կատարած են այլ եւս անգամքն, որ պարտին բովանդակել եւ կատարել զառաջին անկատարն անգամ. զի կատարեալ ինչ միտք իմանայցին, եւ լիցի հանգիստ հագագասփռութեան:

Ա Թ Է Բ Ա Ն Ի Մ Ա Ս Ո Ւ Ն Բ Ի Ց Ե Ն Շ Ր Զ Մ Ա Ն

119. Շ Ր Զ Ո Ւ Մ Ն ի մասանց ինչ յօդեալ կայ, որոց մեծամեծքն Ննգամք անուանին, իսկ փոքունքն Հատածք:

Անգամ այն է, որ տայ ինչ իմանալ, այլ կրճատ եւ թերակատար. որպէս. Որ անձին իւրում չար է, աւասիկ անգամ կրճատ եւ անկատար, որ դայ ի կատարումն եթէ մեւս եւս անգամ ի նոյն յարեցի. զիարդ կարիցէ այլում բարի լինել ॥:

Իսկ հատած է մասն անգամոյ, զի զոր օրինակ ի շրջման գտանին անգամք, նոյնպէս եւ յանգամս գոն հատածք. որպէս. Չիք ինչ, հաւատայ ինձ, քան զառաքինութիւն զեզեցիկ*, չիք քան զնա սիրելի ॥. ուր երկու հատածք են միոյ անգամոյ:

Բայց հատած ոչ է վայրապար կրկնումն, այլ պարտի իւրաքանչիւր հատած նոր իմն միաս յաւելուլ յառաջին անգր. որպէս. Որ ընտանեացն ատելի

է*, եւ աշխարհին վնասակար ॥ Իբրեւ զփուտ հա-
տանել եւ ընկենուլ պարտ է զայնպիսին ։ Ուր ա-
ռաջնոյ անդամոյն երկու հասածք են, եւ երկոցունց
այլ եւ այլ միտք, այսինքն է ատելի լինել հայրե-
նեաց, եւ վնասակար աշխարհին ։

Բ. ԹԷ ԲԼՆԻ ԱԶԳԻ ԻՑԵՆ ՇԲՋՄԸՆՑ

120. Այլք ազգք շրջմանց են, կէսք երկան-
դամք կոչին, այլք երեքանդամք, եւ եւս այլք շս-
րեքանդամք ։ Իսկ քան զսոյնս սակաւ կամ աւելի ան-
դամք ոչ համարին ստոյգ եւ սերտ շրջումն, սակաւն՝
վասն զի շունի անդամս . զի գոնեայ երկու անդամք
պարտին լինել զի շրջումն կոչեսցի . իսկ աւելին՝ քան-
զի անյայտ եւ դժուարիմաց լինի, չէ ընդունելի . եւ
ի սմին միաբան են Դեմեարիոս փաղերացի, շերմն-
դենէս եւ Տերենտիանոս ։

ՕՐԻՆԱԿ ԵՐԿԸՆԴԱՄՆ ՇԲՋՄԸՆՑ

Աթէ աղբերք մշտաբուղիք հանապաղ բղխեն
եւ ոչ պակասեն ॥, որչափ եւս առաւել այն որ նոցա
զյորդութիւն բղխմանցն յօրինեաց ॥ . Եզնիկ ։

ՕՐԻՆԱԿ ԵՐԵՒԸՆԴԱՄՆ ՇԲՋՄԸՆՑ

Յորժամ զաներեւութէն եւ զնորին զմշանջե-
նաւոր զօրութենէն ճառիցէ ոք ॥, պարտի զմիաս
յստակել եւ զխորհուրդս սրբել ॥, զի յայն զսր առա-
ջի եզ հասանել կարացէ ॥ . Նոյն ։

ՕՐԻՆԱԿ ՁՈՐԵՒԸՆԴԱՄՆ ՇԲՋՄԸՆՑ

Նա եւ որ ընդ ճառազայթս արեգականն հայել
կամիցի ॥, պարտի զպղտորութիւն աշացն զաղան եւ
զբիժն ի բաց պարզել ॥ . զի մի մթաբքն որ զբբօքն
շողայցեն ॥, արգել հայելոյ ի յստակութիւն լուսոյն
լնցին ॥ . Նոյն ։

Գ. ԹԷ ԶԻԱՐԴ ԳԱՐՏԻՑԻ ԼԻՆԵԼ ՇՐՋՈՒՄՆ

121. Արկուս ինչս պարտ է ստեպ ի մտի ունել, նախ թէ անդամքն պարտին ընդ միմեանս յեռեալ, զմիմեամբք զրկախառնել, եւ մի ցիր եւ վայրավատին կալ:

Արկորդ իւրաքանչիւր անդամ թէպէտ եւ մասն է, եւ ոչ բովանդակ, սակայն պարտի զիւր լըումն ունել: զոր օրինակ ձեռն կամ ոտն ոչ ողջոյն մարմին է, այլ մասն ինչ, սակայն ունի զիւր լըութիւն, ապա եթէ կրճատ լինէր, ոչ ձեռն ողջ կոչէր, այլ խեղ:

Արբորդ շափաւոր ինչ բանիւք պարտ է փակել եւ յանկել զըջումն, ապա թէ թողուցուս սփիռ, տարածութիւն լինի եւ ոչ ըջումն, որ ամբողջ ինչ յայտ առնէ:

Գ. ԹԷ ՈՐՈՎ ՀՆԱՐԻՒՒՔ ՄԱՐԹ ԻՑԻ ԶՇՐՋՈՒՄՆ ԱՃԵՑՈՒՑԱՆԵԼ

122. Ոչ թողուցուն մանկտին զըջմունսն զեղուլ ելանել, եթէ ունիցին ի ձեռին եւ ի պատրաստի բանս ինչ եւ ասացածս, որովք զիւրին իցէ կատարել եւ յանկ հանել զըջմունսն, որպիսի են այն ամենայն բանք, որոց մերձաւորութիւն ինչ է ընդ յաջորդ բանս, որպիսի ինչ են թէպէտ եւն, թէ եւ, զոր օրինակ, որպէս, յորժամ, իբրեւ, քանիցս անգամ թէ, որչափ, որպիսի, քան. որոց կշռին այս բանք. սակայն, բայց սակայն, նոյնպէս, յայնժամ, նոյնչափ, նոյնպիսի, առաւել: Օ ի ի ըջմունսս որպէս ասացաք երկու բաժինք գտանին, որոց երկրորդն ընդ առաջնոյն կապեալ կայ. յառաջնումն իբր աճէ իմն եւ ստուարանայ բանն, եւ յերկրորդումն զիջանէ եւ յանկչի. ուստի այն բանք զոր ի վերոյն տողեցաք, յոյժ ի դէպ են յընդ միմեանս զերկոսին բաժինսն յեռուլ եւ ի գլխաւորել:

Արկորդ զեղեցիկ ընդարձակի եւ լայնի ըջումն եթէ հասու եւ հակիրճ բանն իբր ի մասունս զատու-

նիցի . որպէս Աիկերոն զայս սակաւ բան թէ ամենեքին աշխարհն զԱղոդիոս, աճեցուցանէ ի կարգ արկեալ մի ըստ միտջէ, թէ ոչք ամենեքինն իցեն, ուստի ասէ . Օ Աղոդիոս ողբայ ծերակոյտն, ողբան ասպետք, նիզակակիցք եւ հատուածք եւ ազարակք անգամ զնա մրմնջեն :

Աբրորդ անգամ լայնի շրջումն որոշմամբք, շրջանակաւ ասացածով եւ մեկնութեամբք, որ է զերոն գեղեցիկ եւ յայտնի բանիւք ցուցանել : Տեսցես եւ վերագոյն ի տեղոջ (24) ուր զաճեցուցանելոյ ասացաք :

Ե. ՎԼՄՆ ԹՈՒՌՅ ԵՒ ԱՅԼ ԵՒՍ ՃԱՐՏԱՐՈՒԹԵԱՆՑ ՇՐՋՄԱՆ

123. Թիւք շրջման զորոց աստ բանք են, չեն համարական թիւք, եւ ոչ յորինուածք եւ նուագք, որպիսի են յերգս վիպասանաց, այլ ծածուկ իմն միաբանութիւն եւ չափ, բայց սակայն ազդի, եւ քաղցր եւ հաճոյ թուի լսելեաց :

Վասն այնորիկ թողեալ է Աստուծոյ զսատանայ իբրեւ ի հրահանգս կռուանոցաց յաշխարհի, զի յորժամ իւր նահատակեալքն կռուիցին եւ յաղթիցեն նմա, պարծանք առաջնոյ յաղթութեանն նորա քակեսցին յայժմուն յայնպիսեացն մարդկանէ, որ լաւութեանցն ցանկութեամբ պարտիցեն զնա, եւ նշան յաղթութեան զնահատակութեանն կանգնիցեն . քանզի կոխան արկեալ ընդ ոտիւք մերովք անկեալ զնի մեռեալ, եւ կործանի առ ի լաւութեանցն ցանկութեան մերոյ ի պարտութիւն մատնեալ . Ազնիկ :

Ո՞ ոչ զգայցէ զքաղցրութիւն եւ իմանայցէ թէ է ինչ ճարտարութիւն ի բանս յայտոսիկ . բայց սակայն ոչ թիւ գոյ եւ ոչ չափ, միայն բնական քաջութիւն ճարտարին, որ զայնպիսի քաղցրութիւն յանդէաս հեղ ի բանսն, յորոյ եւ ի բովանդակ գիրս նոյն նշմարի :

Եւ եթէ որ զանուանի ճարտարախօսաց դիրս ընթեռնուցու, զՎիկերոնի, զԼուքիզայ, զՎեմոսթենեայ, զսոյն չափ դասնէ. մինչեւ վասն Վեմոսթենեայ ասել Վթենացոց թէ շանթս արձակէ:

Զ. ԿԱՆՈՒՅԻ ՀԱՄԱՐԱՆՈՐ ՇԻՋԱՄԱՆՑ

124. Օգտուպէս չափոց հանգամանս, եւ վասն զկարծն եւ զերկայն նշանագիրս ըստ պատշաճի ընդ միմեանս խառնելոյ Վրիտտոտեղէս եւ Վիկերոն եւ այլ եւս ճարտարք արուեստին երկայն բանիւք ուսուցանեն. որպէս եւ վասն այնր թէ չէ պարտ բազում կարճ եւ երկայն անուանս յաճախել. բայց զայս ամենայն թէպէտ եւ ի բարբառս նոցա վասն կարի նրբութեանն հարկ է գիտել, բայց առ մեզ ոչ այնպիսի ընտրութիւնք նշանագրաց եւ հեզեհայից պահանջին. մեք որ մեզն կարեւոր են զայն ասացուք:

Յերից իրաց պարտ է մանկանց զգոյշ լինել. նախ, գուցէ մինչ քաղցր զճառսն երեւեցուցանել կամիցին, բազում անուամբք ընուցուն զճառսն, որպէս թէ զխրամ ընուին:

Արկրորդ զի մի ի խնդրել իւրեանց զպատշաճաւոր չափ ի չափողութիւն անկանիցին, որպէս թէ չափովք բանս յօրինէին, անգամս եւ հանգիստ առնելով:

Իսկ երրորդ զգուշութիւն մանկանց, մանաւանդ թէ պատուէր այն է, մի ջանալ հնարել զի չափս եւ թիւս մուծանիցեն. իսկ այն համարաւոր շրջումն զորմէ վերագոյն ասացաք, ինքնին ի ստեպ ընթեռնելոյ զայնպիսի դիրս զայ նոցա. իսկ փոյթ այս միայն լիցի նոցա զընտանի անուանս եւ ասացածս ի կիր արկանել. իսկ բռնաբար եւ խնամով ոչ մի ինչ, զի քան զհեզգութիւն խնամք առաւել վնասակար են աստ:

ՎԱՄՆ ԸՆԴ ՄԷՋ ԱՆԿԵԱԼ ԲԱՆԻՑ

125. Բնդ մէջ անկեալ բանք են, որ ի մէջ անդամոց կամ հատածից անկանին, եւ բազում նպաստ լինին համառօտ եւ յայտնի լինելոյ բանին. որպէս. Սանկունք, քանզի հլու եւ առանց նենդու թեան են, դիւրաւ գան յառաքինութիւն, միայն թէ յառաքինի վարդապետաց, զոր գործ է գտանել, կրթեացին: Ուր տեսանեսս զի ի սակաւ բանս յոլով միտք բովանդակին, եւ այն յայտնի:

Գ Գ Լ Ո Ի Ի

ՎԱՄՆ ԿԱՐԳԻ

126. ՕՆՅՍՍ ամենայն վարդապետութիւն վասն կարգի զոր ոճն ասեն, առնումք ի գեղեցիկ գրոցն Ղեմետրեայ փաղերեանց, եւ ի սքանչելի ճառիցն Ղոնգինեայ. զսոցա զամենայն ասացեալն դիւրաւ ի մի վայր ժողովեացուք, զի դիւրնկալս ուսանելեացն առնիցեմք:

Արդ կարգ կամ ոճ ասի ասացուած կամ կերպարանք բանից. որոյ երեք ազգ են, Բարձրագոյն, Խոնարհագոյն եւ Չափ իմն: Բայց պարտ է զիտել զի բարձրութիւն, կամ խոնարհութիւն կամ չափինչ կարգի ոչ ի բանից է, այլ ի մտաց. ուստի ոչ որինչ դժուարին առ իմանալ է, կամ յօղապատ զարգարագիր բանիւք յօրինեալ, այն բարձր է, այլ որոյ միտք բարձր են, եւ ասացած սքանչելի. քանզի մարթի թէ յոյժ դիւրաբան եւ դիւրահաս իցէ, սակայն կարգն բարձրագոյն. ուստի եւ մի եւ նոյն մատենագիր կարէ եւ բարձրագոյնս ճառել եւ խոնարհագոյն եւ չափ իմն. որպէս Վիրգիլեայ անդիորդութիւնք խոնարհագոյն են քան զմշակութիւնսն եւ սոքա քան զենէիդոն. զի առաջինքն զհոլուաց ակամարագունից բանս ունին, երկրորդքն զչափաւոր մարդկան, իսկ

Երրորդքն որ են ենէիդք, զիմաստնոց եւ զգիւցազանց ճառս, նմին իրի բարձր եւ ազնուական են :

Ա. ԲԱՐՁՐԱԳՈՅՆ

127. Բարձրագոյն կոչի որ մեծ իմն եւ ազնուական միտս ընծայեցուցանէ, եւ լինի ի բարձրագոյն ճառս, ի փոփոխմունս եւ ի նմանութիւնս :

Թաղաւորաց ահաւորաց յիւրաքանչիւր ժողովս, իսկ ի մէջ նոցին թաղաւորաց Արամազդայ է իշխանութիւն. որ մեծապայծառ ձաղեաց զհակայս, եւ զընաւ յօնօքն շարժեալ դղրդէ. Որատ :

Աքանչելի է եւ պատասխանին Աղեքսանդրի. զի իբրեւ Ղարեհ աբբայ Պարսից զիւր դուստր տայր նմա եւ տասն հազար քանքար, եւ զկողմն մի Ասիացւոց աշխարհին, ասէ Պարմենիոն. ես առնուի յանձն, եթէ Աղեքսանդր էի. եւ ես, ասէ Աղեքսանդր, առնոյի յանձն եթէ Պարմենիոն էի :

Նմին նման է զոր նոյն Աղեքսանդր ասաց ցհրեշտակս Ղարեհի. Պատմեցէք, ասէ, Ղարեհի, թէ գոհութիւն առ թշնամիս աւելորդ է. ես զոր արարին, ոչ վասն նորին բարեկամութեան արարի, այլ յիմոց բարուց բնութենէ : Չէ իմ պատերազմ ընդ գերիս եւ ընդ կանայս. միայն սպառազէնք ատելի են ինձ :

Նոյնպիսի են եւ նորին գեղեցիկ բանք առ զօրսն. Չեւ եւս հաւասարեցաք կնոջ, եւ ահա տաղտկամք ընդ գովութիւնս :

Օր բարձրութիւն ոչ ունիցին եւ այն սակաւ բանք Ովիդեայ, որ ասէ. Այժմ հունձք են, ուր երբեմն հրովայւոց քաղաքն էր :

ՈՐՊԻՍԻ ԻՆՁ ՊԱՐՏԻՑԻ ԼԻՆԵԼ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԿԱՐԳՆ

128. Արկու ինչ պահանջին վասն ազնուականութեան բարձր սճոյ, նախ պարտ է զերեւելի եւ զնշանաւոր իրս յիշատակել, իսկ զտոնարհագոյնս եւ զնշինս կամ լուել պարտ է, կամ պատրուակել եւ

կամ բարեքել . որպէս երբեմն Վպեղէս արար, զպատկեր բարեկամին իւրոյ Վնտիգոնեայ միւսով կողմամբ էցոյց, զի զկոյր ակնն ծածկեացէ: Արպէս եւ Հոմերոս զփոթորիկս նկարէ զարմանալի ճարտարութեամբ միայն զնորանշան դէպսն ի կարգ արկեալ: Վովին ճարտարութեամբ եւ Վիրգիլիոս նկարագրէ զՆեպտոնայ կառօք հասանել, եւ զգնալ ի վերայ ծովուն, եւ յակնարկելն միայն զալիսն ցածուցանել:

Օայս իրբեւ ասէր անդէն զփբացեալ ալիսն ցածուցանէր, եւ հարածէր զամպս գումարեալս, եւ ծագեցուցանէր զարեգակն. եւ ինքն սահեալ զնայր ի վերայ վէտ վէտ մկանանց:

Արկրորդ փոփոխմամբ, մանաւանդ յորժամ ի նշանաւոր եւ ի հոյակապ իրաց լինիցին մեծապայծառ իմն եւ սքանչելի յարգարենն զճառն: Օոր մարթ է ստեպ ընթեռնլով զանուանի ճարտարաց գիրս ուսանել:

Բ. ԽՈՒՆԱՐՀԱԳՈՅՆ

129. Խոնարհագոյն կարգ զոր եւ պարզ կոչեն, այն է որ ի մանր եւ ի թեթեւ իրս ստեպ ի կիր արկանի, որպէս ի թուղթս, ի վարդապետութիւնս եւ ի բանս ընտանութեան:

Ի սմին ճշդիւ եւ խնայութեամբ պարտ է զչրջանս եւ զձեւս ի կիր արկանել, աւասիկ օրինակ յանդիորդութենէն Վիրգիլեայ:

Օքաղաքն, զոր Հոմն կոչեն, Մեղիբէ, համարէի թէ իրբեւ զմերն իցէ, ուր զմատաղագոյնս ի խաշանց տանել սովոր եմք: Օի զկորիւնս՝ շանց, եւ զուլս մարցն նմանս գիտեմ. նոյնպէս սովոր եմք զմեծամեծս ընդ մանունս կշռեալ համեմատել:

Գ. ՉԱՓ ԻՆՉ

130. Չափ իմն այնասի որ միջին իմն է ի մէջ երկոցունց կարգաց. ուստի ոչ յոյժ հոյակապ եւ

բարձր պարտի լինել, եւ ոչ կարի անօտ եւ լոկ. եւ անուանեալ կոչի ի Արիւստոնէ ծաղկալից եւ յղկեալ, զի ամենայն վայելչութիւն եւ զեղեցկութիւն ընտրանաւ աստէն պարտի գտանել: () Երկնակ ի մշակութեան գրոց Ա իրդիղեայ:

Բազում անգամ օգուտ է եւ այրելն զխոսքան ազարակս. եւ զխողանն հուրք կիզուլ. զի անտի կամ ծածուկ իմն զօրութիւն առնու երկիրն եւ պարարտագոյն լինի, եւ կամ որ ինչ յոռի եւ անպիտան կայր, զայն մաշէ սպառէ հուրն եւ ի բաց քրտնեցուցանէ զվնասակար հիւթն: Աւ գոյն կամ բազում զնացս առնիցէ, եւ զկայր անցս թուլացուցանիցէ, ընդ որս նոր հիւթ եկեցցէ ի բանջարս. եւ կամ առաւել խրտացուցանէ եւ զբացեալ երակսն կցէ, զի մի անձրեւ եւ տապ արեգական խարակիցէ կամ հողմն հիւսիսոյ ջրտակէզ առնիցէ:

ՕՐԻՆԱԿՔ Ի ՎԻՐԳԻՂԵԱՅ

ԽՈՒՆԱՐՀԱԳՈՅՆ

ՈՍԵղիւբէ, դիք արարին մեզ զայդ պարապ. ստէպ ի մերոց բակաց գառն մատաղ զնոցա բազին թանայցէ. Յանդիորդ:

ՉԱՓ ԻՄՆ

Աս ինքն զարդարեալ զգլուխ ի մանր մանր տերեւոց, տարայց պատարագս. այժմ ի դէպ է առնել տօնս տարեկանաց ի պաշտամանց տեղիս, եւ երինջօ կարեալս տեսանել. Ի մշակ:

ԲԱՐՉՐԱԳՈՅՆ

Ասաց, մինչ շերակղեայ երկգոյնն կաղամախի սքողէր զվարսս հովանովք, եւ տերեւովք ընդելուզեալ ի վայր կախեր, եւ նուիրականն տաշտ ընդր զաջն: Արագ արագ ամենեքին անդէն ի բաղմականին զուարճացեալք նուիրէին նուէրս, եւ առ դիսն պաղատէին. Յենէիդ:

ԽՈՒՆԱՐՀԱԳՈՅՆ

Օգլափնին որ մեռան, նիմիայք ի ձայն աղի եւ ողորմ աշխարէին. դուք կաղնիքդ եւ զեռք վկայ էք, յորժամ դիրկս արկեալ փարէր մայրն զմարմնով որդեկին, եւ առ դիմն եւ առ աստեղս անաղորոյնս կարգայր. Յանդիորդ:

ՉԱՓ ԻՄՆ

Ինքն ի նուազս սրնդի զթախծեալ դուքն սփափէր. զքեզ, քաղցր ամուսինն, զքեզ միայն միայնուկ ի ծովեղերին ընդ իւր, զքեզ ի զալ տուրնջեանն, զքեզ ի մեկնելն մրմնջէր. Ի մշակ:

ԲԱՐՉՐԱԳՈՅՆ

Այլ յաւանդրոս եւ ոչ մի ինչ բռնութիւն մարթի դամագիտ լինել: Աս եկն անց ի մէջ. ի բաց զկապարճսն եղեալ, բազմեր ի վերայ. եւ յենոյր արտասուէր եւ յողւոց հանէր, եւ հազիւ լինէր հնար բարբառելոյ ի փարատել արամութեանն. Յենէիդ:

ՎԱՍՆ ԶԻՐԻՍ ԱԶԳՍ ԶԱՅՍՈՍԻԿ Ի ԿԻՐ ԱՐԿԱՆԵԼՈՅ

131. Որովհետեւ երեք ինչ պատշաճ են ճարտարախօսի, ուսուցանել, զուարճացուցանել եւ յորդորել, խոնարհագոյն ոճով մարթի ուսուցանել, չափովն զուարճացուցանել, իսկ բարձրագունան յորդորել եւ շարժել:

Վարձեալ խոնարհագոյնն պատշաճի ի ձաղութիւնս, բարձրն ի մրմունջս, եւ չափն ի պատմութիւնս: Բայց չէ հարկ թէ իւրաքանչիւր ճառ զնոյն զմիազգի եւ զմիանման կարգ ունիցի, այլ մարթ է եւ ընդ բարձրագոյնն ուրեք ուրեք եւ խոնարհագոյն խառնել, ըստ իւրաքանչիւր պատշաճի:

Աստատին գոյ ի միտ առնուլ, թէ ոչ որ բարձրն է, այն միշտ մեծարոյ իցէ, այլ որ մօտաւոր նիւթոյն պատշաճ եւ ի դէպ է, բայց այնպէս՝ զի որպէս Աի-

կերոնն ասէ, մեծամեծք ցածութեամբ, չափոյքն մեղմով, եւ խոնարհադոյնք շքով ճառեոցին:

Գ. ՎԱՄՆ ՂԱԿՈՆԱՑԻՈՅ ԵՒ ԱՍԻԱՑԻՈՅ ՈՃՈՑ

132. Ղակոնացւոցն ոճ է յանդիմանական, հակիրճ եւ հատու, սակաւ բանիւք բազում ինչ ասէ, եւ զանունն էառ ի Ղակոնացւոց, որ եւ Սպարտացիք կոչին եւ Ղակեղմոնացիք, որոց համառօտիւք ասել յոյժ հաճոյ էր, եւ երկայնաբանութիւն ատելի եւ տաղակալի:

Արբեմն մինչ թշնամի երկայն երկայն թղթովք հուր եւ սուր սպառնայր քաղաքին, միով կարճ բանիւ ետուն պատասխանի Սպարտացիք. Եթէ. այս ինքն է եթէ ձեռնհաս իցես, եթէ թողցուք քեզ առնել զոր ասեսդ: Առքին փիղիպպեայ արքայի Սակեղմոնացւոց որ վասն իրիք յանիրաւի պնդեալ էր, ետուն պատասխանի թէ Ոչ:

Եւ Արքիդամայ առ Եղէացիս զրեալ ասեն. Արքիդամոս առ Եղէացիս, բարուք է հանգչել. զի Եղէացիքն ի պատերազմ խլրտէին:

Ըստ Ղակեղմոնացւոց բարուց զրեաց եւ Այսոր առ ծերակոյտն, յետ փառնակայ Պոնտացւոց թագաւորի, որդւոյ Սիհրգատայ յաղթելոյ, զայս ձեւ օրինակի. Ահի, տեսի, յաղթեցի:

Արբեմն լինի եւ ի հին ինչ պատմութիւն ակնարկել, որպէս Ղակեղմոնացիք ցփիղիպպոս ետուն զիրս, որ պատերազմ տալ կամեր, այսպէս. Ղակեղմոնացիք առ փիղիպպոս, Ղիոնիսիոս ի Աորնթոս. ակնարկէին յիրսն Ղիոնիսեայ որ իբրեւ բռնակալել կամեցաւ, անկեալ ի պատուոյն աքսորեցաւ ի Աորնթոս:

Օայս օրինակ խօսել նախ ի սպառնմունս լինի, զի ահագին իմն թուեցուցանէ. որպէս Ղակեղմոնացւոցն առ փիղիպպոս պատասխանին, եւ Արքիդամայն առ Եղէացիս: Արկրորդ անգամ ի կծանել,

որպէս Լ. Ղէքսանդր իրրեւ տայր սպանանել զՎղիտոն
ասէ . Լըթիջիր այժմ առ Պարմենիոն :

Իսկ Լ. սիացւոյն ոճ է երկայնաբան, զի բազում
բանիւք սակաւ ինչ տան իմանալ . եւ առ զանունն
յԼ. սիացւոյ, որ զերկայնբանութիւն սիրէին :

Թէ ԻԻ ԻԻԻԲ ԳԵՂԵՑԻԿ ԳՈՐԾԻՑԻ ԿԼՐԳԻՍ

133. Լըրէք են որովք զեղեցիկ գործի կարգ .
այս ինքն է զի իցէ Յայտնի, Բաղցր եւ Լ. զնուական :

Լ. Յայտնի կոչի որ ամենեցուն դիւրահասն է :

Նախ իմաստութեան եւ մտաց պէտք են, որովք
կարացուք զոր ինչ եւ կամիցիմք դիւրաւ յայլոց միտս
արկանել :

Լըրորդ պիտոյ է հաստատուն վարդապետու-
թիւն եւ գիտութիւն այնց իրաց զսրոց առաջի կայ-
դէ ճառել :

Լըրորդ ինամով հմուտ լինել լեզուին յորում
ճառքն անկանեցոց են :

Չորրորդ իմաստութիւն որ ուսուցանիցէ թէ ո՛ւր
կամ յորոց առաջի զինչ կամ զիարդ արժան իցէ
խօսել :

Նինգերորդ պարտ է յաւելուլ պատճառս եւ օ-
րինակս եւ վկայութիւնս :

Պատճառք են որ տան ի միտ առնուլ թէ վասն
էր կամ յոր սակս լեալ իցէ ինչ եւ կամ լինեցոց իցէ .
օրինակ կոչին գործք . իսկ վկայութիւն բանք ուրուք
որ իցէ անուանի եւ առաքինի եւ իմաստուն : Պատճա-
ռօք հաճի եւ հաւանի ոք, օրինակաւ շինի եւ վկայու-
թեամբ յորդորի . նմին իրի պատճառաց հարկ է հաս-
տատուն լինել, օրինակաց ճշմարիտ եւ արդարեւ լեալ .
ուստի ուր վասն զմահ արհամարհելոյ բանք իցեն,
չէ մարթ զնա որ անձին առնէ ածել օրինակ, եւ ոչ
դարձեալ զՎիկերոն մարթ է բերել օրինակ, որ բա-
նիւք արհամարհեաց զմահ, իսկ արդեամբք յոյժ իսկ
երկեաւ . այլ կարի քաջ զՎոկրատէս որ ճշմարտիւ եւ

արդեամբք քամահեաց . Ճշմարտիւ զի իբրեւ յայլոց յանիրաւի մեռանէր, համբեր . եւ արդեամբք եւս, զի ոչ բանիւք միայն զանմահութենէ ճառեաց, այլ եւ առ զմտախնդն եւ մեռաւ : Իսկ զկայութեանն պարտ է լինել իմաստնոյ ուրուք եւ անուանւոյ : Աթէ այդ ամենայն պահեսցի խնամով, անշուշտ յայանի լինի ճառն : Աւ այս կարգ է . նախ յայտ առնել զպատճառսն, ապա հաստատել, եւ յետ այնորիկ մեկնել եւ ցուցանել թէ զինչ շահ կամ որ մնաս գուցէ . ապա զնովմբ ածել եւ զօրինակն եւ զվկայութիւնն, կամ նախ զվկայութիւնն եւ ապա յետ այնորիկ զօրինակն :

Աս ոչ զինչս նոցա երբեք, ոչ զյարկսն մեծապայծառս, ոչ զմեծութիւնս, ոչ զիշխանութիւնս, եւ ոչ զցանկութիւնսն ընդ որս կարի շաղեալ են, բարի եւ ցանկալի համարեցայ : Պատճո . Օ ի տեսանէի թէ եւ ի զեղուլ եւ յաճախել իրացն շուրջանակի, այնց առաւել ցանկանան, որովք առատացեալն են : Հստա . Վանզի ոչ լնու եւ ոչ յաղի երբեք ցանկութեանն ծարաւ . եւ ոչ միայն տանջին եւ վշտանան զի զոր ունինն աճեցուցեն, այլ եւ յահի եւ ի գողութեան են թէ գուցէ կորուսցեն : Մեկն . Միթէ կարիցէ որ բարին է, ումք շարոյ լինել . կամ թէ գուցէ հնար թէ ի բարեացն լիութեան իցէ ոք, եւ ինքն չիցէ բարի : Արդ զայդ այդպէս տեսանեմք, զի եւ շարաց գոն, եւ լաւացն ի մնաս են : Վ կայ . Աս շասեմ երբեք թէ բարիս ոք կորոյս, եթէ զանասուն ոք կամ զկարասի կորուսանիցէ . նա ստեպ գովեմ զիմաստունն զայն զՎիանդէս, որ որպէս կարծեմ ընդ եւթն իմաստունս համարի, զորոյ զաշխարհն իբրեւ էաթիւնամի, այլք աճապարէին փախչել, եւ բազում ինչ եւս յիւրեանց ընչից ջանային խաղացուցանել ընդ իւրեանս . եւ ոմն մատուցեալ իրաատ տայր նմա զի զնոյն եւ ինքն առնիցէ . եւ նա ասէ, Աւ ես զնոյն առնեմ, զի զամենայն ինչ զեմ ընդ իս ասնիմ : Աս

զխաղալիկս բախտին անձին չհամարեցաւ, զորս մէք բարիս եւս անուանեալ կոչեմք :

Օրինկ. Բայց պարտ է զայս ամենայն վարուք եւ գործովք արանց անուանեաց լուսաւորագոյն գործել, որ բանիւք նրբագոյն քան զարժանն վիճել թուին : Վիք առաջի աչաց զմի մի իւրաքանչիւր ի թագաւորաց, կամիցիք ի Ռովմոզայ, կամ յետ քաղաքին ազատութեան ի նոցունց իսկ որ զնայն զերծուցին սկիզբն արասցուք : Այլէ ընդ սր աստիճանս յերկրինս եւ Ռովմոզոս, ընդ աշնս արդեւք զոր դոքս բարիս անուանեն, թէ արութեամբն եւ առաքինութեամբք : Օրինչ, զՆումայ Պոմպիլեայ նուիրանոցս եւ զԵսցեղէն սափորան սակաւ ինչ հաճոյս դիցն լինալ համարիցիմք, քան զայլոց տաշտ ազգի ազգի քանդակօք : Աթէ հարցանիցէ դք, թէ զինչ գործ գործեաց Բրուտոս յազատել զաշխարհն, եւ այլք եւս որ նորին խորհրդոյ հաղորդակիցք էին, զինչ դիտեալ նկատեին, յինչ ինչ յօժարեին, միթէ գտցէ՞ զդք որ ընդ փափկութիւնս կամ ընդ մեծութիւնս, կամ յայլ ինչ ամենեւին հայիցի, եւ ոչ մանաւանդ յայն ինչ, որ ժիր եւ առաքինի առն պատշաճ իցէ : Արիկ :

Բ. Վաղցր այն է, որ զուարճացուցանէ. եւ քաղցրութիւն լինի նախ ի յայտնութենէ, որպէս եւ ի մթարութենէ տաղտկութիւն :

Արկրորդ անգամ պէտպէս օրինակաւ զմիտանել զբանս փոփոխելով, զի պէտպէսն զբօսեցուցանել սովոր է :

Արրորդ եթէ զգոյշ լինիցիմք զի մի բանիւք ռամկաց վարեցուք ի ճառս մեր, մանաւանդ որ արհամարհելի եւ տաղտկալի են :

Չորրորդ եթէ պատրուակելով եւ բարեքելով ասիցեմք, զի մի ծանր ինչ թուիցի լսելեացն. ուստի ասի. վճարեցաւ, հանգեաւ, փոխեցաւ, փոխանակ ասելոյ մեռաւ :

Հինդերորդ յորժամ այնպիսի ինչ ասիցեմք, որ ամենեւին հակառակ է, որպէս Փղորիանոս ասէ. Փարիոս Առնկատատոր նոր իմն հնարս իմացաւ յաղթելոյ Աննիբաղայ, ամենեւին ոչ ընդխառնել. որ հակառակ թուի, զի եթէ ոչ խառնիցի ի պատերազմ, չկարէ յաղթել: Ամ այնպիսի բանիւք որոյ երկու երեսք են, որպէս Առետանիոս ասէ վասն Աերոնի կայսեր. II° իշխիցէ ասել թէ Աերոն չէ յԱնեայ ազգէն. եբարձ նա զհայրն, եբարձ եւ սա զմայրն. այս ինքն է նա ըստանձին եբարձ, եւ սա ի միջոյ:

Ամ յորժամ այլ մտօք ասիցի, եւ այլ մտօք տացի պատասխանի. որպէս յորժամ յեա պատերազմին որ առ Փարսաղեայ մըլեցաւ, եղեն ոմանք որ ասէին թէ չէ պարտ վհատել, զի տակաւին եւթն արծուիք կան, Աիկերոն ետ պատասխանի. Աւղիզ, ասէ, տայիր քաջալերս, եթէ ընդ ճայս էր մեզ պատերազմ: Աւ կամ համառօտիւք զանցեալ ինչ իրս ակնարկել, ուստի Փորիոս Աղբինոս յետ Առտինացւոց ճակատուն, իբրեւ հարցաւ թէ զինչ գործ գործիցէ Անտանիոս, ետ պատասխանի. Ար ինչ շուն, ասէ, յԱղիպտոս, ըմպէ եւ փախչի:

Ա եցերորդ նկարագիրք եթէ խնամով եւ համառօտ գործեսցին, քաղցունս առնեն զճառս. որպիսի է առ Ա իրգիղեայ նկարագիրն աւահանողստին որ Աստղըկան կոչէր. Մաւահանգիտան յալեաց ծփանաց կորացեալ է իբրեւ զաղեղն. քարինքն որ հանդէպ միմեանց կան, փրփրեն յաղտաղտին ջուրց, եւ ինքն զաւղեալ կայ: Յերկուց պարսպաց բազուկս իմն ի դուրս արձակեն խուժք աշտարակեայք, եւ փախստական լինի մեհեանն ի ծովեզերէն:

Մյն զկառամարտիկ կռիւն. Չտեսանիցեն, որպէս արագ տազնապաւ ի դաշտս դիմեն, եւ խաղան ելանեն կառքն ի գլխոց ասպարիսայն. մանկաին դէտակն ունին եւ կան սրտաբախ սրտաթուռնդ. սոքա ի վերայ կան ստիպեն տազնապեն կորն մտրակաւ եւ

խոնարհեալ թուլացուցանեն զփոխն . զնան բռնութեամբ կառքն յարշաւանի : Սերթ ի խոնարհ եւ մերթ ի բարձրաբերձ բարձունս նշմարին ընդ դատարկ օդս , եւ ամբառնան ի հողմն : Չիք անդ գեղերանք կամ հանգիստ , այլ յառնէ մըրիկ փոշւոյն , եւ տամկանան ի փրփրոյ եւ ի շնչոյ այնոցիկ որ զհետն գան :

Գ. Ազնուական երեւի ճառն , նախ ի մեծութենէ եւ յիմաստութենէ այնորիկ զորմէ ճառի , այս ինքն է թէ քանի արագ զերսն ի գլուխ եհան , եւ ի դէպ ժամու վճարեաց . որպէս Վիկերոն վասն Պոմպէի ասաց . Պոմպէոս ի յետին ձմերան կազմեցաւ , ի սկըզբան գարնայնոյն ձեռն արկ , եւ յամարայնուոյն ընդմիջել ի գլուխ եհան : Ի տեղւոջէն եւս , որպէս եթէ ի պատեհ տեղւոջ մղեցաւ պատերազմն :

Արկորդ յազնուականութենէ եւ ի մեծութենէ արանցն որ ի գործն հուպ իցեն . որպէս պարգեւ կամ յարգանք թագաւորի կամ իմաստնոյ ուրուք , աւելի իմն է քան զընծայս եւ զգովութիւն այլոյ ուրուք :

Արրորդ շրջելով ասել ազնուականագոյն է , բայց ոչ ամենայն ուրեք եւ յամենայնի . Այն ինչ վարդագոյն ծայրակարմիր արեգակն ընդ երկիր ծաւալել կամէր . Սակ :

Իբրեւ եկին հասին աւուրք ջերոտ հարաւահողմն գարուն գրանցն բանալոյ , համբարձաւ թագաւորն ի կողմանցն յայնցանէ . Ագաթ :

Ստոյգ նշան եւ սքանչելիք են , գասնել զոք ի մարդկեղէն կերպարանս , որ այնչափ գլիցէ զազանութեամբ զանասնովք , մինչեւ վասն որոց զքաղցր արեւս տեսանէ , զնոսին անարժանութեամբ յարեւէ արկանել . Վիկերոն . փոխանակ ասելոյ , որ զճնօղսն սպանանիցէ :

Չորրորդ եւ զմիտս բանիցն ուրեք թագուցանել նոյնպէս ազնուականութեան է եւ ցածութեան . ուստի Սսկրատէս յորժամ ասացն թէ մեծութեան ինչ

ոչ տենչամ, յաւել թէ քանդի իմաստութիւն սակաւութ շատանայ. որով ետ ի միտ առնուլ թէ եւ ինքն իմաստուն էր, զոր թէ յայտնապէս ասէր, իբրեւ սնապարծ եւ անձնգով արհամարհէր: Վարձեալ յառաջագոյն դնել ինչ առհասարակ իբրեւ յայտնի. եւ ապա յառանձին ինչ գալ: Վաւոկոն առ Վիրգիլեայ իբրեւ ասաց թէ ի պարզեւաց անգամ թշնամուոյն երկնչել պարտ է, անգրէն յիւր անձն շրջեաց. Արկնչիմ, ասէ, ի Վանացւոցդ որ պատարագս բերեն:

Հինգերորդ բանք եւս բազում պատիւ շնորհեն, եթէ գեղեցիկքն եւ սաստիկք ընտրանաւ կարգեսցին. ուստի ազդոյ է եթէ ասիցես խորդայր, քան թէ ննջէր. նոյնպէս գեղեցիկ է ասել վասն անդոց եւ քաղաքաց թէ վաճառակուր եղեն, քան լոկ թէ վաճառեցան: Աոյնպէս Վիկերոն ասէ. Հնչէր տեղին ի բարբառոյ արբելոյն, եւ յատակք ողորանէին ի գինւոյ. փոխանակ ասելոյ թէ լսելի լինէր բարբառ, թանային յատակք:

Աւ կամ այնպիսի բանիւք որ ինքնին զսաստիութիւն ցուցանեն. որպէս Վիկերոն վասն Վատիղինայ ասէ. Անկեալ դնի այժմ, եւ առ ի միտ թէ տկար եւ ապաժաման է. թիւրէ զաչան, եւ հայեցեալ ստէպ ընդ քաղաքս մննչէ եւ յողւոց հանէ, զի մինչդեռ յատամուռնն էր, կորզեցաւ: Այսպիսի բանիւք գազանի նմանեցուցանէ զնա, զի գազանաց է թիւրել զաչս եւ մննչել, յորժամ զորսն որ ի նոցանէ հանիցէ:

Վ եցերորդ զիւրաքանչիւր անուն ուրոյն բանիւք նշանակել, որպէս Վիկերոն ասէ զՀովերոսէ. Վողսփոնիացիք ասեն թէ իւրեանց քաղաքացի էր, Վիացիք իւրեանց իսկ վարկանին, Վաղամինացիք համարին թէ . . . ուր մարթ էր ասել միով բանիւ, Վողսփոնիացիք, Վիացիք եւ Վաղամինացիք ասեն թէ Հովերոս . . . :

Աթոռերորդ եթէ ընդ աստիճանս ելանիցեմք,
 ի փոքունց ի մեծամեծս. որպէս Աիկերոն զԱլեքեայ.
 Տաղնապեն զնա վիշաք վտանգի քաղաքացւոցն զո-
 րոց զամանս տապարաւ տաշեաց, զայլս մինչ դեռ ի
 կապանս էին, ետ խողխողել, զիկէսս որ վաղատու-
 թեան եւ զքաղաքի օրէնս խնդրէին, ի խաչ ետ հա-
 նել: Մեծ իմն է զայր քաղաքացի կոշկոճել տապա-
 րաւ, այլ մեծագոյն ի պարաւանդս տալ փողոտել.
 Իսկ եւս անհնարին աղէտք են զխաչէ պրկել:

Իսկ սոցին հակառակ լինի մթին եւ տաղտկալի
 եթէ այլ ընդ այլոյ ասիցի, որպէս ցասկոտ փոխանակ
 ցասուցելոյ, արբշիւ ի տեղի արբելոյ:

Արկրորդ եթէ շփոթութիւն ինչ լիցի անուանց,
 զի են անուանք որ բազում ինչ նշանակեն, որպէս
 նշան ասին սքանչելիք եւ դրօշ. եւ գունդ նշանակէ
 զնդաձեւ ինչ եւ միանգամայն զգունդ զօրաց:

Արրորդ անգամ եթէ միտք բանիցն ոչ իմաս-
 ցին որպէս եթէ ասիցես, հօրն խորհուրդ պատանւոյն
 շթուէր հաճոյ. չէ յայտ թէ ո՞յր խորհուրդ ո՞ւմ
 շթուէր հաճոյ:



Չ Ո Ր Ր Ո Ր Կ Ն Ա Ռ

Զ Ճ Ա Ռ Ս Ն Պ Ա Տ Մ Ե Լ

134. ՊԱՐՏ եւ պատշաճ է եւ վասն զճառս պատմելոյ ասել ինչ, որ կարծել կարծի յետին քան զամենայն ճառս ճարտարախօսութեան, սակայն այնպէս կարելոր է, մինչեւ յիրաւի եւ յարժանի զառաջինսն եւ զերկրորդս եւ զերրորդս նմին համարեցաւ Դեմոսթենէս:

Արդ պատմել զճառս է զձայնն եւ զկերպարանս ըստ պէտպէս իրացն եւ բանից յօրինել: Աիկերոն ուսուցանէ զհանդամանս օգտակարութեան եւ զօրութեան սորա, յորժամ ասիցէ, թէ բազում անգամ եւ տղայք եւ արք տղէտք վասն վայելուչ զճառան պատմելոյ, զօգուան եւ զպսակ ճարտարախօսութեան առին. իսկ բազում խօսողք եւ ճարտարաբանք վասն շունելոյ զճարտարութիւն պատմելոյ, իբրեւ զտղայս համարեցան: Աւստի ուղիղ մճիռ երբեք Աիկերոն, թէ պատմել զճառն, ճարտարախօսութիւն իմն է մարմնոյ, եւ յայլում վայրի մարմնոյ ճառս անուանեալ կոչէ. եւ արդարեւ շունչ իմն եւ ոգի է ճարտարախօսութեան, զի գրել բազումք գրեն, այլ զգրեալն ազդեցուցանել յոյժ սակաւք կարեն:

Արեք ինչ առ ուղիղ պատմել զճառս պիտոյ են, Յիշատակ, Չայն եւ Շարժմունք:

Ա Յ Ի Շ Ա Տ Ա Կ

135. Յիշատակ ոչ այլ ինչ է, բայց հաստատութեամբ ի միտ առնուլ զիրս եւ զբանս: Աւշն իբրեւ հիմն է զճառս պատմելոյ, որոյ զօրութիւն եւ շնորհք կորնչին, եթէ ի բերանոյ ոչ պատմիցի ճառն, եւ ճարտարախօսն գիր կամ նամակ ի ձեռին կալցի: Բայց արանց գլխաւորաց, եւ որ հասարակաց իրաց հոգայցեն, չէ պարտ բիծ դնել, եթէ գիր ի ձեռին ճառեցեն. որպէս երբեմն Լուգոստոս առնէր, որ առ

երկիւղի թէ գուցէ մոռանայցէ, ի գրոյ ասէր. նոյնպէս Վարդոզոս Տինգերորդ իբրեւ կամեցաւ հրաժարել յիշխանութենէ, եւ փիղիպպեայ որդւոյն տալ ի ձեռն, ասեն թէ գրով խօսեցաւ առ մեծամեծս եւ առ իշխանս: **Նոյնպէս ներել պարտ է եւ հիւանդաց եւ ծերոց վասն տկարութեան, բայց այլոց ոչ բնաւ:**

Արդ յիշատակ կրկին է, մին արուեստիւ եւ մեւս եւս բնութեամբ: Անութեամբ՝ յորժամ ոք ի բնէ սուր եւ ուշեղ իցէ, եւ զոր յուշն ընդունի, պահիցէ. այս զօրութիւն յիւրաքանչիւր ումեք, եւ յանցնիւր տիս պէսպէս է: Իսկ արուեստիւ այն՝ որ զբնական ուշն զօրացուցանէ եւ կրթէ. յառաջին ժամանակս ասեն, Սիմոնիդէս եզիտ հնարս զուշն կրթելոյ, վայրօք եւ պատկերօք, այս ինքն է զիւրաքանչիւր ինչ տեղեօք եւ պատկերօք իրաց նշանակել, զի դիւրաւ ի մտի պահիցին. բայց այս չէ ինչ. զի այնոցիկ որ ուշեղ իցեն, աւելորդ է, իսկ որոց ապուշն են անօգուտ: **Վամբոս դու եւ գքո եւ զայլոց բանս դիւրաւ ի միտ առնուլ եւ փութով յիշատակել, երկուունն մինչ չեւ ելեալ ի մահիճսդ, զայն զոր վաղիւն ուսանելոց ես, մի անգամ եւ երկիցս ընթերցիր, եւ որոճա, եթէ այնու չօգտիս, եւ ոչ այլ ինչ հնար դոյ օգնելոյ քեզ:**

Բ. 2 Ա Յ Ն

136. **Չայնն կամ բարբառ բազում ինչ նպաստ լինի ի պատմել զճառն. զի չէ ինչ փոյթ, ասէ Վիկերոն, թէ զինչ այն իցեն զոր ասեսն, այլ թէ որով օրինակաւ ասես:**

Օտրիս կանոնս զայտոսիկ հաւաստեաւ պարտ է պահել: Առաջին կանոն է, յայտնի մի ըստ միոջէ եւ յստակ ասել, այնպէս զի բովանդակ բանք եւ սիւղոբայք հնչիցին. բայց չէ պարտ այնպէս մի մի զհեղեւնայն հնչել, որպէս թէ զնշանադիրս համարիցի ոք. զի այն ծանր եւ տաղակալի լինէր: Աւ ոչ նմին հա-

կառակ փութանակի տաղնապաւ, այլ պարտ է երբեմն ողի առնուլ, եւ լսողացն տալ ժամ խորհելոյ:

Արկրորդ կանոն այն է, զի ըստ պէսպէս յանդիմանութեանց եւ բանից ձայնն եւս աղգիաղգի շրջիցի, եւ որպէս զհարդ ինքն ճարտարախօսն զգածեալ իցէ, նոյնպէս եւ զձայնն ածիցէ: Ի ցասնուլն պարտ է սաստկացուցանել. յարգահատելն եւ ի վշտանալ զելուլ եւ դորովել. ի խնդայն յորդել եւ կակղել եւ լըջացուցանել. յերկնչելն վարանեցուցանել:

Նոյնպէս յայլեւայլ մասունս ճառին այլեւայլ ձայն պիտոյ է. ի յառաջաբանութեան, եթէ չիցէ ցասմամբ, ցածուն եւ պատկառանաց պարտի լինել. ուստի չէ պարտ ճարտարախօսի անդէն համարձակել եւ ճոխաբան լինել. բարկն եւ յանդուզն վաղվաղակի ամենեցուն ատելի լինի: Այլ պարտ եւ պատշաճ է, սակաւիկ ինչ իբրեւ մտախորհ կալ մնալ. եւ այն հոգ զունկնդիրսն զուարճացուցէ, եւ ինքն եւս ասելին զանձն ամփոփիցէ եւ յասել կազմիցի:

Յառաջաբանութենէ առ սակաւ սակաւ բարձրացուցանի բարբառն, եւ ի պատմելն այնպիսի ձայնիւ վարիմք, որպէս ի խօսել ընդ ընտանիս սովոր եմք: Ի հաստատութեան եւ մանաւանդ ի յանդիմանութեան, սաստիկ ձայնիւ վարիմք. իսկ ի վերջին բանս որպէս թէ յաղթեաց, պարտի ճարտարախօսն յորդորանաց բանիւք խօսել, զի զանձն երեւեցուցէ ապաստան յիւր իրաւունս, եւ վստահ ի լսողացն լաւութիւն եւ խմաստութիւն:

Արրորդ կանոն է ըստ ընդարձակութեան տեղւոյն եւ բազմութեան մարդկանն նոյնպէս եւ զձայնն ձկտել կամ ամփոփել. բայց եւ ի նմին չէ պարտ ըստ չափ անցանել, զի կարին մեղմով ասել չունի զօրութիւն, զի լաւ է թէ բնաւ լւիցէ, յորժամ չիցեն բազումք լսելոց զբարբառն. իսկ յոյժ բարձրն աղաղակել դժկամակ թուի նոցա որ զիրզն են լսելեօք: Իայց գիտեմ զի խուժանն նմին հակառակ կարծիս

կարծէ . քաջ ճարտարախօս զնա համարի որ մեծա-
 ձայն աղաղակիցէ, զձեռս տատանիցէ, զկերպարանսն
 թիւրիցէ եւ շրջշրջիցի ստեպ ի վերայ բեմին: Բայց
 Աիկերոն այլազունակ կարծիս ունէր, զի զօղանջօղս
 անուանէր զայնպիսիս, քան ճարտարախօսս . որ ար-
 դարեւ նման են կաղաց որ քանզի շրջել ոչ կարեն,
 ձիովք խրոխտան:

Զ Գ Ո Ի Շ Ո Ի Թ Ի Ի Ն

Յերկուց իրաց մանաւանդ պարտ է զգուշանալ,
 նախ ի միօրինակ ձայնէ, որ ոչ միայն զասօղն տառա-
 պեցուցանէ, այլ եւ զսօղն առնէ ոգեսպառս, յոր-
 մէ ամենայն վայելչութիւն եւ զեղեցիութիւն ճառին
 թառամի եւ անցանէ: Ամին նման է եւ զձայնն զեղ-
 զեղել, որ ոչ այլ ինչ է, բայց եթէ նուազս իմն եւ
 երգ յարդարել: Այսմ դարման է ընդելացուցանել
 զմանկունս, զի այնպէս զճառսն պատմեսցեն, զի խօ-
 սել թուիցի եւ ոչ ի բերանոյ պատմել. զիւրաքան-
 չիւր ստիքս եւ զնուազս ըստ պատշաճի հնչել: Բայց
 մանաւանդ յայնպիսի ճառս կրթեսցին, ուր պէսպէս
 փոփոխմունք ձայնից պահանջին. զի ի միտ առցեն,
 թէ ո՛ր մեղմով եւ ցածութեամբ ասել պարտ իցէ,
 եւ ուր խստիւ եւ սաստկութեամբ:

Գ. Շ Ա Ր Ժ Մ Ո Ի Ն Ք

137. Ընդ ձայնին միաբան լինել պարտին եւ
 շարժմունք որ զազգի ազգի զգայութիւն մտացն յայտ
 առնեն: Այլ աստ զայնս միայն ի նախնեաց անտի
 բովանդակեսցուք, որ մերում ժամանակի պատշաճ
 են. զի բազում ինչ գոյր ի շարժմունս նախնեաց որ
 այժմ անընդել եւ խափանեալ իմն են:

Արդ ըստ Աուինտիլիանեայ շարժումն է հաստա-
 տութիւն եւ յօրինուած բովանդակ մարմնոյ: Ասխ մի
 ինչ գոցի իսմա մեղկութեան եւ կանացի բարուց, մի
 ինչ ընդօղնելոյ եւ հպտանաց, մի ինչ բանադրօսու-

Թեամբ: Խորատ տայ փարիոս թէ չէ պարտ բազում հոգաբարձու թեամբ մեղկել զճառս . զի այնպիսի ճարտարախօսք, ասէ, բազում անգամ կրիցեն, զոր ինչ երբեմն Սիպարիտացւոց հեծեալք կրեցին. զի զեղխ եւ կանացի աղգն որ հանապաղ ի պար անցանէին, զերիւարսն անգամ թուով եւ միաբանու թեամբ խայտալ ուսուցեալ էին, իբրեւ ընդդէմ Արոտոնիտացւոց ի պատերազմ երթային, երիւարք նոցա որոց ի գուսանութիւն մանաւանդ քան ի պատերազմ կրթեալ էր, իբրեւ լուսն զճայն փողոյն եւ զբարբառ նահատակացն, սկսան խայտալ քանզի խրաչէին, եւ կորեան ինքեանք եւ երիւարք իւրեանց: Աոյնպէս եւ ցօփ եւ մեղկ ճարտարախօսք, որ զանձինս համակ ի խայտալ ուսուցանեն, իբրեւ ի միջոյ ընտանեաց ի ճակատ երթայցեն, այս ինքն է ի հրապարակ, եւ զանձինս եւ զիրաւունս իւրեանց ի տաղնապի կացուցանեն:

Արկրորդ անգամ մի ինչ խիստ եւ վայրենական գացի, զի մի յորժամ ի պչրելոյ եւ ի հպտանաց փախչել կամիցիմք, ի վայրենութիւն անկանիցիմք: Սակայն եթէ ի մի յերկոցունց աստի իցէ անկանել, լաւ է լրկութիւն վայրենութեան քան զզարդասիրիկ ցանկութիւն:

Իայց ասացուք վասն միոյ միոյ յանդամոց մարմնոյ առանձինն:

ՄԱՐՄԻՆ. Ս ասն ողջոյն մարմնոյ այսպիսի ինչ պատուէր կայ: Ասխ մարմինն կայցէ ուղղորդ եւ կանգուն, առն օրինակաւ: Արկրորդ մի իբրեւ զպատկերս անշարժ եւ անխաղաց, եւ իբրեւ մածուցեալ կայցէ, որպէս Եպիկտետոս ընդ խաղ ասէր: Արրորդ մի ստէպ ստէպ շարժիցի մարմնովն ըստ օրինակի մուլելոց:

Նոյնպէս բիծ մեծ է այսր անդր վաղվաղել:

ԳԼՈՒԽ. Ս ասն գլխոյ այս օրէնք են. նախ չէ վայելուչ յաճախ զգլուխ շարժել իբրեւ զՍենադս

որ են քուրմք սպանդարամետին: Բայց չէ ինչ անդէպ երբեմն նշանացել, եւ կամ զգլուխ ի վայր կախել իբրեւ նշանակ թալանալոյ, եւ կամ ի վեր տանել առ շկամութեան, կամ այլ եւս նոցին նման շարժամաճք զերկբայութիւն կամ զայլ նոյնպիսի իղձօյստ առնել: Բայց եւ ոչ անշարժ պարտ է կալ զլսով, որ բիրտ եւ բարբարիկ մարդկան է. որպէս վասն Ռուփայ Հռետորի ասեն, զոր Վասնիոս ծաղր առնէ յ'Օտորորում Եպիգրամատին.

Պատկերս Ռուփայ Հռետորի, եթէ իցէ քարեղէն,
բուն նա ինքն Ռուփոս է.

Եւ ընդէր զայդ ասիցես. զի նա միշտ քարեղէն էր:

Նոյնպէս չէ պարտ յոյժ զլխարկեալ կալ կամ յողն երթալ, այլ ուղղորդ եւ կանգուն, թէպէտ եւ յայնմ եւս չէ արժան ըստ չափ ելանել զի մի վիսութեան եւ ընդողնելոյ կարծիցի. բայց զլխարկել մարթէ երբեմն ի նշանակ տրամութեան, սգոյ եւ թախծութեան, տըջանաց, շիկնելոյ եւ պատկառելոյ:

ԿԵՐՊԱՐԱՆՔ. Բայց մանաւանդ կերպարանք եւ դէմք են ստոյգ նշանակք, նմին իրի պարտ է ըստ պատշաճի իրացն մերթ լըջացուցանել զդէմս, եւ մերթ տխրեցուցանել, մերթ ողորջանս երեւեցուցանել եւ մերթ սպառնութիւն, ուստի ասէ Որատիոս. Տըրտմութեան բանից դէմք տխուրք վայելեն. ցասուցելոյ լի սպառնալեզր: Որ ողորէն մեղմով, իսկ խիստն սաստիւ պարտի խօսել:

ՃԱԿԱՏ. Օճակատն պարզել զուարթութեան նշանակ է. նմին հակառակ խստութիւն յայտ առնի յորժամ զճակատն դք եւ զյօնս կարկամեցուցանիցէ սւստի ասէ Վիկերոն. Մին ամբառնայ զյօնսն մինչեւ ցճակատն, եւ մեւսն մինչեւ ի կլափն խոնարհեցուցանէ, եւ այնպէս տան պատասխանի: Եւ Սարտիազէս ասէ ցՎայսր:

ԹՎէ յանկարծ ուրեք, Այսոյ, տեսցես զգրեանն,
 Աղաչեմ զիջն զյօնսդ, զտեսարս երկրի:

ԱԶՔ. Օգչս յերկինս ամբառնալ նշան է պա-
 զատանաց եւ խնդրուածոց, որպէս եւ զոչս ի բաց
 դարձուցանել զարչելոյ եւ յուրաստ լինելոյ նշանակ
 է, իսկ կափուցանելն մտախոհութեան եւ խորհրդա-
 կան մտաց. եւ աչք զգետին նշմարեալք զպարկեշ-
 տութիւն եւ զամօթխածութիւն եւ զմեծարանս
 նշանակեն:

ԲԱԶՈՒԿ. Քաղուկք ոչ ի խոնարհ կախիցին,
 եւ մի անշափ ձգեսցին, բայց եթէ ի սաստկութեան
 եռանդման: Քաղուկ ձգեալ եւ կարկառեալ զիշխա-
 նութիւն, զճոխութիւն եւ զգորութիւն յանդիման
 կացուցանէ. որպէս ունենն եւ ամփոփել զբազուկս
 ամօթոյ եւ պարկեշտութեան է:

ՁԵՌՔ. Առանց ձեռաց ձեռնատ եւ խեղ լինէր
 պատմութիւն ճառին, զորոյ զբազում պէտս չէ մարթ-
 ըստ բաւականին բանիւք յանդիման կացուցանել. զի
 այլ եւս անդամք խօսելեացն օգնեն, իսկ ձեռք զրե-
 թէ ինքեանք իսկ խօսին. ո՛չ ձեռք հայցեմք, խոս-
 տանամք, կոչեմք, թողումք, սպառնամք, զարչիմք
 եւ խորչիմք, երկնչիմք, յուրաստ լինիմք. զխնդու-
 թիւն, զտրամութիւն, զերկմտութիւն, զխոստո-
 վանութիւն, զզեղջ, զպայման, զյաճախութիւն,
 զհամար եւ զժամանակ ձեռք ցուցանեմք:

Այսն ձեռաց դոն յայտնի ինչ օրէնք սահմա-
 նեալ, որոց զգուշանալ պարտ է: Ասխ ի յառաջա-
 բանութեան չէ օրէն ձկակել զձեռս, այլ իբրեւ տա-
 կաւ սկսանիցի զուարթանալ ճառն, ձեռք եւս ի
 միասին սկսանին երեւել, եւ ընդ նմին զոյգ զիջա-
 նեն: Արկրորդ յորժամ զանձնէ խօսիցի ոք ի վերոյ
 լանջաց կացուցանին ձեռք. իսկ իբրեւ ընդ այլս լինի
 խօսել, առ նոսա ձգին: Արկրորդ զձեռն ձախ չէ ար-
 ժան միայն շարժել, այլ ընդ աջոյ ձեռին ի միասին.
 որպէս յորժամ ի մատունսն բաժանիցեն զնիւթ ձա-

սին, որպէս Արտենսիոս սովոր էր առնել, որ եւ այժմ յոմանց լինի. եւ կամ ավտփք մերժիցեմք ինչ եւ ի բաց վարիցեմք:

Չորրորդ սխալ լինի շարժմամբք, յորժամ այլ ինչ բանիւք ասիցի, եւ այլ ձեռօք ցուցանիցի. որպէս հռետորն այն, որ երկինս ասէր, եւ զգետին նշմարէր, եւ ցուցանէր ձեռամբն:

Հինգերորդ առ ի ստիպել արագ արագ զձեռս տատանեմք. աղաչեմք զձեռս վերացուցեալ եւ անդէն յարեցուցեալ ընդ միմեանս. հաստատեմք ինչ, եթէ զձեռս յամբ ի վայր տանիմք եւ բերեմք:

Վեցերորդ վերացուցանել զձեռն զարմանալոյ նշանակ է, ուստի Աիկերոն ասէ. Իսկ Արտենսիոս զարմանայր յոյժ, մինչեւ բազում անգամ ձեռն վերացուցանել. եւ առ Վայսր ասէ. Չեռն վերացուցաք ես եւ Իսղըրիոս:

Եւթներորդ զձեռն ձգելով առնեմք մեզ ունկընդրութիւն, եւ զլուութիւն յայտ առնեմք. որպէս Ղուկանոս ասէ վասն Վայսեր, թէ ցածոյց զամբօսն, եւ աջովն պատուէր տայր լուսիներէ:

Ութերորդ զձեռն ի բերան տանել լուելոյ եւ ցածութեան նշանակ է. ուստի ասի Թիբերան լինել. եւ հին Ագիպտացիք զպատկեր Հարպոկրատեայ ի նմին կերպարանս ետուն կոփել:

Իններորդ Աիկերոն սովոր էր մինչեւ սկիզբն խօսելոյ արարեալ, զմօրունն ունել, զոր ցայսօր բազումք սովոր են. դոն եւ այլք որ զճակատս շփեն, կամ ընդ ձեզունն պշնուն, այլ այս չէ վայելուչ: Աոյնպէս չէ արժան զձեռս ի վեր քան զգլուխ ամբառնալ, կամ քան զկուրծս ի խոնարհ արկանել, բայց եթէ դուն ուրեք, յորժամ այնպէս ի դէպ իցէ: Իսկ զկուրծս բախել, կամ զիստն հարկանել, ամենեւին ծաղու է:

Տասներորդ ձեռն արնուագոյնս ի ձախմէ կողմանէ սկսանի, եւ յաջակողմն կոյս դադարէ:

Մետասաներորդ անպատեհ է, ասէ Աիկերոն, այնպէս շարժել զմատունս եւ զձեռս որպէս գիրդքն. զայս ախտ ունէր Որտենսիոս անուանի Ճարտարախօսն, վասն որոյ եւ թշնամանի իսկ:

Իայց զայս ամենայն առաւելութիւն ճարտարախօսի, զոր ցարդ ասացաք, մարթ է խնամով եւ ջանիւ ստանալ. յայտ ի Ղեմնութենեայ օրինակէն է, որ քանզի զառաջին նշանագիր իւրոյ արուեստին չկարէր հնչել, փութով եւ կրթութեամբ ուսաւ հարթասել, եւ զթոթով լեզուն ուղղեաց, զի մանր մանր խիճս ի բերան դնէր. եւ քանզի նրբաձայն էր, ստէպ առ ծովեզեր կայր եւ աղաղակէր, եւ ընդ գոչիւն ալեացն ընդելացուցանէր զձայնն. եւ անձկութեան շնչոյն յաղթեաց, զի ընդ դժուարս եւ ընդ փափայս գոչելով ելանէր:

Այսչափ վասն հնչման եւ զձառս խօսելոյ բաւական է. զմնացեալն որ այնմ պատշաճ են, թողումք ուսանել կրթութեամբ որ քան զպատուէր եւ զհրամանս գիւրին եւ յաջողագոյն է:



ԵՐԿՐՈՐԳԻ ԳՊՐՈՒԹԻՒՆ

ՃԵՐՏԵՐԸ ԵՍ ՕՍՈՒԹԵԱՆ

Ն Ի Ի Թ

ՆԻԻԹ ճարտարախօսութեան որպէս վերադոյն ասացաք (9), են ԼՂԳՔՆ, որ երէք են, Յանդիմանակացութեան, Խրատառութեան եւ Խրաւանց, զորոց մի ըստ միջէ ճառեսցուք:

Ե ՈՒ Ե ՋՒՆ ՃԵՆ

ՎԼՄՆ ՅԵՆԳԻՄԵՆԵԱԿԱՑՈՒԹԵԱՆ ԸԶԳԻ

138. ՅԵՆԳԻՄԵՆԵԱԿԱՑՈՒԹԵԱՆ աղգ է որ զառաքինութիւն եւ զչարիս յանդիման կացուցանէ, յորժամ զմին գովեալ յարգիցէ եւ զմեան պարսաւիցէ:

Սմին աղգի պատշաճին ճառք կացրդից, Օճնդոց, Լռազաստի, Թաղման, Գոհութեան, Ուրախակից լինելոյ, զորոց կարգաւ ասացուք:

Ե ԳՒ Լ ՈՒ Ի

ԿԱՑՐԳԻՅ ՃԵՆՔ

139. ՃԵՆՔ կացրդից այնք են, զորս մեծաւ կազմութեամբ առնէին երբեմն յամենաժողով կացուրդս, յորժամ յամենայն կողմանց Յունաց աշխարհին ժողովէր բազմութիւն խաղս ինչ առնելոյ, կամ զոհս կամ վաճառս ի հրապարակս: Եւ վասն պայծառազոյն առնելոյ զճառսն, սկիզբն ի գովելոյ առնէին զգիսն, որ խաղուցն գլխաւոր կարծէր, որպէս զՆրամազդ յրմբշական մրցութիւնս, զՎարդան ի պիւթւոջն, ապա զաղբն կամ զքաղաքն ուր խաղքն կատարէին, գովէին. ապա զիշխանսն եւ զատենակալս որ կային ի վերայ խաղուցն, զնահատակսն որոց կռուեալ էր, մանաւանդ զյաղթօղսն, որոց պարգեւս առեալ էր, անչափ դրուաակին:

Այսպիսի ինչ էր օրինակ այնց ճառից հնոցն, որ ի կացուրդս կատարէին. բայց յետոյ ոչ միայն այնք որ յերեւելի ինչ խաղս լինէին ճառք կացրդից կոչեցան, այլ եւ որ ի նշանաւոր ժողովս, ի մէջ ծերակուտին կամ ի գովութիւնս թագաւորաց լինէին:

Արդ յայսպիսի ճառս կրկին է մին Հնարագիտութեան, եւ մեւս եւս ՚հնութեան:

Հնարագիտութեան այն կոչի, յորժամ առանց խնամ ունելոյ կարգի ժամանակին, որ ասելոցն են հնարիւք ի գլուխս ինչ բովանդակին. որպէս եթէ սք զերիցուն Աստոնի գովութիւն յերիս գլուխս բովանդակիցէ, թէ իմաստուն ատենակալ էր, քաջ ճարտարախօս եւ հմուտ զօրաւար: Արպէս եւ Աիկերոն զՊոմպէի գովութիւն ի շորս գումարեաց, ի տեղեկութիւն իրաց զինուորութեան, յառաքինութիւն, ի ճոխութիւն, եւ ի յաջողութիւն:

Իսկ բնութեան կարգ ասի, յորում պատմութեան եւ ժամանակին կարգ պահի. եւ նախ այն ասի որ յառաջ քան զճնանել ուրուք եղեւ, երկրորդ որ ինչ ի կենդանութեան եւ յաւուրս նորա գիպեցաւ, եւ երրորդ անգամ, եթէ վախճանեալ իցէ այրն, որ ինչ յետ մահուան նորա եղեն: Աիկերոն եւ Իսոկրատէս միշտ նոյնպէս առնէին. նոյնպէս եւ Պլինիոս զՏրայիանոսի անուանի գովութիւնն արար, զի յորդեգիրս գրելոյ նորա սկսանի զգովութիւնն, եւ կարգաւ մի ըստ միոջէ համարի մինչեւ ցժամանակն յորում Տրայիանոս երրորդ անգամ բղեշխ եկաց: Այրանի թէ նոյնպէս եւս յառաջ մատուցանէր, զի եւ զայլ եւս գործս քաջի զօրաւարին իմանայաք. բայց Պլինիոս որ առ երրորդ բղեշխութեամբն Տրայիանոսի եկաց, զչորրորդ բղեշխութիւնն չյիշէ, յորում ժամանակի յազթեաց նա Դեկերաղայ Դակաց թագաւորի, վասն որոյ եւ Դակիկոս անուն էառ. եւ ոչ դարձեալ զայլոց եւս ինչ գործոց եւ արութեանց նորին յիշատակէ:

Ա. ԺԱՄԱՆԱԿ ՈՐ ՅԱՌԱՋ ՔԱՆ ԶԾՆԱՆԵԼ
ՈՒՐՈՒՔ Է

140. Այսին ինչս մարթ է գովել ի ժամանակէն որ մինչ չեւ էր ոք, եղև. այս ինքն է զազգն, զգաւառն, եւ զգուշակութիւնս ինչ եթէ կայցեն:

Եթէ երեւելի ինչ ազգ ուրուք իցէ, գովիցես զազգատոհմին պայծառութիւն, զնախնեացն զարութիւնս եւ զառաքինութիւնս որ իբրեւ սերմն քաջութեան ի միտս ազնուականաց տնկեալ են. եւ ասացես թէ նախնեացն առաքինութիւն հանդերձ արեամբն զոյգ ի նա անց, որպէս պետիկոսն ասէ, թէ հզօրք առնին ի հզօրաց. ուստի եւ Վղաւդիանու ասացեալ է, թէ ամենայն յարգանաց սկիզբն է ազնուականութիւն, եւ ամենեքին անդրէն ի բուն սերմն գնան:

Ապա եթէ ոք յանարգ ազգէ իցէ, կարի ի դէպ ելանեն փեղիկեայ բանքն ցՍկտաւիոս, թէ ամենեքին հաւասար վիճակաւ ծնանիմք, միայն առաքինութեամբ ընտրիմք, կամ Վեղեայ, թէ որ լաւ ոք իցէ, ազնուագոյն է. կամ Սենեկայ, թէ որ զիւր ազգն գովէ, զօտարին յարգէ: Չիք այնպէս հռչակաւոր որպէս Ոգիսեայ պատգամն, որ իբրեւ ընդ Վ.յակայ կռուէր, ասաց. Օջազգս, ասէ, զհաւս, եւ զոր մեք ոչ արարաք, զայն մեր կոչել չէ արժան:

Իայց զի մի ազգին նկնութիւն խաւարեցուցէ ինչ զգովութիւնն, պատրաստ կայցեն հասարակաց օրինակքս:

Ասի թէ Վեգոստեայ հայրն եւ հաւ արծաթագործք էին, եւ հաւուն հաւ ազատեալ. իսկ մօրն հաւ հացարար Վրիկիացւոց, որովք նախատէր զնա ստեպ Վնտոնինոս, որպէս Սուետոնիոս պատմէ:

Ազաթոկղեայ Սիկիղացւոց թագաւորի հայրն բրուտ էր, որպէս Յուստինոս վկայէ:

Պատումէս առաջին Սգիպաացւոց թագաւոր յորմէ պայազատք ամենեքին Պատումեանք կոչեցան, դոյզն

ուրուք զօրականի որդի էր, որում անուն Ղազուս կոչէր :

Արշակ մեծ արքայ Պարթեւաց, ուստի նոյնպէս Արշակունիք անուանեցան, ի դոյզն ազդէ էր :

Ասի թէ եւ Ղեմսութենեայ հայրն առնէր սուսերս, զոր եւ Յուենաղիս ակնարկէ. Ի դից, ասէ, հակառակորդաց ծնաւ նա ձախող հրամանաւ. զոր հայր նորա զիճակն ի ծխոյ եւ ի կայծականց, մինչդեռ զերկաթն շողացուցանէր ունելեօք եւ կաղմէր սուսերս, ի խիստ եւ ի կաւեղէն դարբնոցէ առ հռետորս առաքեաց :

Մարթ է եւ զնշանաւոր բանսն Աիկերոնի յիշել, որ իբրեւ թշնամանօք նոր Արպինաս կոչեցաւ. Աս, ասէ, զիմ նախնիս իմով առաքինութեամբ պայծառացուցի : Վարձեալ մարթին դալ յառակ իմաստուն բանքն Իփիկրատեայ, որ որդի կարուակի էր, եւ իբրեւ վասն մեծի տեղեկութեանն իրաց զինուորութեան Աթենացւոց զօրացն զօրաւար եղեւ, այնմ որ զնա վասն ազգին անարգութեան աղարտէր, ետ պատասխանի. Իմ ազգ յինէն սկսանի, քոյդ ի քեզ դադարէ. իմոցն ես առաջին եմ, դու քոյոցն հուակ վերջին :

Վուլութիւն գաւառին լինի եթէ անուանի իցէ, եւ արք անուանիք կոյցեն ազնուականութեամբ : Ապա եթէ անարգ ինչ իցէ աշխարհն կամ դաւառ, ի դէպ է զանուանի բանսն յիշել, զոր ասաց Մաքարոսիս, որ քանզի ի Աիկութացւոց աշխարհին ծնեալ էր, իբրեւ ոմն ի յունաց թշնամանօք խուժ Աիկութացի կոչեաց զնա, իմաստութեամբ ետ պատասխանի թէ ինձ գաւառն նախատանաց է, իսկ դու գաւառին :

Վարձեալ մարթ է ասել ընդ Յուենաղեայ. զի թէպէտ եւ այնպէս յայտնի է ամենեցուն Ղեմսութեացոցն անմտութիւն, մինչեւ ի հասարակաց առակս շրջէր. ուստի եւ Մարտիաղէս ասաց թէ զՂեմսութեացւոց ամբոխին միտս ունիս. սակայն Ղեմսկրիտոս իմաստուն փիւսկեան եւ բնութեան սաստիկ խուզար-

կու, բեովտիացի էր. ուստիասաց Յուենաղես. Որոյ իմաստութիւնն, ասէ, յայտ առնէ թէ եւ ընդ թանձր օդով արբ մեծամեծք մարթին ծնանել: Ի սոյն յանկ են եւ Բասնեայ բանք զՎեւերոսէ ինքնակալէ, որ յՆփրիկեցոց աշխարհին ծնեալ էր. Պունիկէ է ծագումն նորա. բայց նա առաքինութեամբն յայտ առնիցէ, թէ չէ ինչ խափան տեղին, յորժամ առողջ են միտք:

Իսկ եթէ յառաջ քան զծնանելն երեւելի ինչ գէպք դիպեցան որով գուշակ եղեն թէ պայծառ եւ բարենշան լինելոց է մանուկն, զայն եւս պարտ է խնամով ի գովութեանն կարգել: Որպիտի են շեկուբայ իրքն, որ ետես յերազի թէ յղի է: Արյնպիտի էր եւ որթն զոր ետես Բժգահակ, որ բարունակօքն հովանի լինէր Բսիացոց աշխարհին, ուստի զՎիւրոսի մեծութիւնն գուշակեցին իղձք. եւ վասն Բմբրոսիոսի, ասեն, թէ մինչ տակաւին սանդիացն էր պարս մի մեղուաց եկն նստաւ ի շրթունս նորա. բազում են եւ այլ սոցին նման պատմութիւնք. այսչափ ինչ բաւական է վասն ժամանակին որ յառաջ քան զծնունդն:

Բ. ԻՐԲ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՅՈՐՈՒՄ ԿԵՆԴԱՆԻ ԷՐ ՈՒՐ

141. Պովութեան արժանի ի կեանս մարդկան բարութիւնք են, որոց երեք ազգք համարին, են որ ոգւոց են, են որ բնութեան եւ են որ բախտին են:

Ը. Ոգւոցն բարեաց երեք ազգք են, առաքինութիւնք, գիտութիւնք եւ ճարտարութիւնք: Վլուխ ամենայն առաքինութեանց կրօնք են եւ աստուածպաշտութիւն եւ գութ ունել ընդ ծնօղս եւ ընդ հայրենի աշխարհին. ուստի եւ Լնէաս անտի սկսանի զիւր գովութիւն. Վիցապաշտ եմ, ասէ, որ զկուռս հանեալ ի թշնամեաց ածի ընդ իս նաւատորմիղ նաւուք:

Նշրկորդ գովութեան արժանի է գթութիւն, համեստութիւն եւ արդարութիւն. թէ որչափ մեծ

իցէ ի մէջ մեծամեծաց զթուօթիւն, յայտ է ի բանիցն զոր Բնտոնինոս ինքնակալ ասաց ցփաւատինէ ցիւր կին. Բնաւ շէք ինչ, ասէ, որ զինքնակալս Հռոմայեցւոց ազնուագոյնս բնծայեցուսցէ ազգաց, որպէս զթուօթիւն. նոյն զՎայսր աստուածացոյց, եւ ի դիցն կարգ եհան, նոյն եւ զԼեզոստոս սրբեաց եւ նուիրեաց:

Երրորդ յարդանաց են առատամիտ կամք եւ բարեբարութիւն, որով իշխանք եւ թագաւորք առնին մերձաւորք Բասուծոյ. ուստի կարի դիպօզ են բանքն զոր Վկիւթացւոց պատգամաւորն ցՆդէքսանդրոս ասաց. Աթէ աստուած ոք իցես, պարտիս երախտիս առնել մարդկան, ոչ զնոցա ինչ հանել: Մարթ է հռչակել զինաման եւ զառատամիտ կամս Տիտոսի Վայսեր, որ զամենայն ինչ զոր միանգամ շնորհել մարթ էր, շնորհէր. չէ պատշաճ, ասէր, զի տրամութեամբ ոք զնայցէ ի թագաւորէ. իբրեւ երբեմն, մինչդեռ յընթրիս բազմեալ էր, յիշեաց թէ այն օր առանց բարեբարութեան անց, դարձաւ առ բարեկամսն եւ ասէ. բարեկամք, զօրն կորուսի. զի համարէր այնպէս թէ առ բարեբարել մարդկան տուեալ իցեն կեանք թագաւորաց. նմին իրի իսկ մեծամեծաց եւ փոքունց այնպէս ցանկալի եղեւ, զի ազգի մարդկան ուրախութիւն յիրաւի կոչիցի: Սմին նման է եւ այն զոր Վիրգիլիոս ասէ, թէ տեղի ինչ կայցէ որում անուն կոչիցի Լզիւսիոս, ուրոյն առաջոգի ամենեցուն այնոցիկ որոց առ այլս երախտաւոր լիեալ է:

Յետուստ ուրեմն գովելի է եւ զօրութիւն ի միսել զանձն ի վիշտս եւ յաշխատութեանց տանել. ազնուական միտք որ չզարհուրիցին յիմէքէ. հաստատուն եւ հաւատարիմ լինել ի խոստման. իմաստուն ի խորհել եւ արագ ի կատարել. ի շաջողութիւնս կշիռ զմիտսն ունել եւ ոչ երբեք զանդիտել կամ վհասել:

Իսկ ուսման կամ ճարտարութեան գովութիւն կրկին է, նախ եթէ ուսումն ինչ կամ ազատ ինչ ճարտարութիւն գիտիցէ որ գովին. երկրորդ անգամ եթէ դպրութեանց եւ արուեստից խնամ տարցի եւ ջատագով լինիցի. որպէս Պտղոմէոս Լեզիպտացոց թագաւոր, եւ Լեզոստոս Հռոմայեցոց, եւ Սեկե- նաս, զոր Արատիոս պետ ապաւէն կոչէ, եւ քաղցր վայելութիւն:

Ի. Ինութեան բարիք այն են, զորս ի բնէ ղք ունի, որպէս գեղեցկութիւն, ոյժ, եւ առողջութիւն եւ որ նոցին նման են. զորս թէ ունիցի ղք, գովի թէ բարւոք արկ ի կիր. իսկ եթէ չունիցի նոյնպէս յար- գի, թէ իմաստութեամբ եւ կարի ի դէպ ղրկեցաւ. ապա եթէ կորուսեալ ինչ իցէ, դարձեալ դրուատի, եթէ ժուժկալեաց եւ համբեր:

Ա. Թէպէտ եւ նոյնպիսի բարութիւնք չեն ի հա- մար գովութեան, որ առաքինութեան միայն անկ է, սակայն եւ առաքինութիւն նոյնպիսեօք պայծառա- գոյն գործի. երկրորդ անգամ գեղեցկութեան պա- տիւ բարւոք մտաց նշանակ է, եւ պատկեր եւ ծաղիկ առաքինութեան: Արրորդ անգամ ղի մարմնոյ վայել- չութիւն առանց բարբառոյ գովութիւն է, եւ որպէս գեղեցիկ ասէր Վառնէադէս, առանց ղինակրի թա- գաւորութիւն: Առաքինութիւն որ բարւոք եւ գե- ղեցիկ մարմնով գայ, յոյժ օգտէ, ասաց Սարոն: Սմին իրի իսկ յառաջ ժամանակաւ աղգք բաղումբ, մանաւանդ Լթուովպացիք եւ Հնդիկք իբրեւ տային զտէրութիւնն, ղբարձրաբերձն հասակ եւ ղգեղեցկու- թիւն գիտել սովոր էին, որպէս Լքիստոտեղէս պատ- մէ: Անհնարին տոյժս տուժեաց երբեմն ի Վակեղմո- նացոց Լքքիդամոս թագաւոր, ղի կարճ կին արար. ղի քանքատկին թէ ոչ արքայք, այլ արքայիկք յա- մուսնութենէ անտի ծնանելոց են: Չորրորդ անգամ գեղեցկութիւն ոչ միայն նշանակ է, այլ եւ օգնա- կանութիւն ճշմարտութեան: Զինդերորդ անգամ եւ

զլուխ իսկ զի եւ ի սուրբ գիրս քարոզի Ղաւիթ զեղեցիկ եւ բարւոք տեսանելով. եւ չեն ինչ զարմանք թէ ի Վոռնեղեայ Նեպոսայ դովիցի Նշկիրիադէս թէ Վան զամենեսին որ ի նորա տիս էին, բազմապատիկ զեղեցիկ էր: Նոյնպէս եւ Սկիպիոն Նփրիկանոս ի Պղուտարքեայ դովի. եւ վասն Թէոդոսի ասէ Պակատոս. Առաքինութիւն արժանի եղեւ իշխանութեան. այլ յառաքինութիւն նպաստ եղեւ զեզն: Նա յառաջագոյն եղեւ, զի օրէն լիցի քեզ իշխան լինել, իսկ սա զի վայելուչ:

Ապա եթէ յուր ինչ իցէ կամ տգեղ որ զուզին, յայնժամ զմարմնոյն բիծ մեծամեծ ինչ պարզեւօք մտացն ծածկեալ ցուցանիցես. յայն տպաստան զոր Սվիդիոս ասէ. Աթէ չեա ինձ զեղ բնութիւն, իմաստութեամբ զգեղեցիութեան վիասս հասուցանեմ: Վարձեալ եւ Սոկրատէս տգեղ էր, շոմերոս կոյր, եւ Փիղիպպոս հայր Նզեքսանդրի մեծի եւ Նննիբաղ միականիք էին:

Օկորստական եւ զանցաւոր գեղեցիութեան տկարութիւն, որ առօրին թառամի եւ խամբի, բանիք ստուարացուցես. ուստի Սոկրատէս իմաստութեամբ ասէր, թէ սակաւժամանակեան բռնաւորութիւն է: Աչ ոչ միայն տկար ասիցես, այլ եւ վնասակար, պատիր եւ լի վշտօք: Մարթ է եւ ընդ Պետրոնեայ յաւելուլ թէ դուն ուրեք եւ անօր իմաստութիւն ընդ գեղեցիութեան խառն է. եւ ընդ Սվիդեայ թէ զգեղեցիութեան զհեա երթայ ամբարտաւանութիւն. եւ ընդ Մարտիաղեայ թէ բազում անգամ լիտութիւն նորին ընկեր է. նոյն դարձեալ թէ կարի անօր է գեղեցիութեան եւ ցածութեան միաբանութիւն:

Գ. Վարիք որ բախտի կոչին կրկին են, պատիւ եւ մեծութիւնք: Օպատիւ երկոքումբք օրինակօք մարթ է զովել, նախ թէ արժանի այնմ եղեւ եւ բարւոք ի կիր էարկ: Աստափն Պղինիսս զՏրայիանոս

գովէ, թէ մինչ չեւ պատուոյ հասեալ, նախն արժանի գտաւ: Արկրորդ անգամ թէ արժանի էր, սակայն արհամարհեաց եւ անարգեաց զփառան. որպէս հոյակապն փրոնտինոս զոր Պղինիոս ի թուղթան ընդ Հռուփայ կշռէ:

Իսկ մեծութիւնք գովին նախ եթէ որ ունին, ստանայցէ, եւ ոչ ստանայցի. երկրորդ անգամ եթէ արդարութեան վաստակովք շահեալ իցէ. երրորդ եթէ վարիցի նոքօք, ոչ առ ի փափկութեան վայելելոյ, այլ ի պէտս պարկեշտութեան կենաց, կամ զի օգնիցէ բարեկամաց, կամ զկարօտելոց շքաւորութիւն բառնայցէ. որպէս Տրայիանոսն ցոր ասէ Պղինիոս. Չհամարիս ինչ քո, բայց եթէ զոր ընդ բարեկամն ունիս: Բայց ոչ եթէ վատնիցէ զինչան, որպէս առնեն որդիք զեղիք եւ օցտօղք, կամ թէ ազահ իցէ եւ ճղծիմ եւ կցիր:

Ապա եթէ բախտի ինչ բարութիւնս չունիցի, զոր գովելոցն իցես, յայն զոր առհասարակ յայնպիսի ինչ իրս ասել սովորութիւն է, ապաստան լինիցիս, թէ բախտին պարգեւք ի շարեաց մանաւանդ քան ի բարեաց համարի են. թէ կորստականք են, ոչ առաքինութեան կամ հանճարոյ, այլ անյայտ վիճակի եւ ժամանակաց վաստակք. եւ թէ թշուառութիւն իմն է, հանապազ երջանիկ եւ բարենշան լինել: Կարձեալ յուշ առնիցես զգեղեցիկ բանն, թէ մտաց բարեաց քոյր է աղքատութիւն. յաւել եւ զՊրատեայն թէ ոսկին անգիւտ եւ բարւօք զտեղեալ կայ, յորժամ ընդ հողով ծածկեալ է: Աւ ընդ Յուենաղեայ ասիցես. թէ բախտն ախորժիցէ, որ հռետորդ ես լինիցիս բղէշի. նոյն թէ կամիցի, միւսն անգամ եղիցես հռետոր որ բղէշիտք ես:

Գ. ԺԱՄԱՆԱԿՆ ՈՐ ՅԵՏ ՄԱՀՈՒԱՆ Է

142. Իայ մնայ արդ վերջին ժամանակն, որ կարի առաւել համարի, զի ասէր Սողոն մի ումք

երանել մինչեւ ցկատարած: Արիւս ինչս աստ մարթ է նշանակել. նախ որ ինչ ի մահուանն եղեն. երկրորդ որ զկնի մահուան դիպեցան:

Ի մահուան հայել պարտ է նախ յաղգ եւ ապա ի պատճառս մահուն: Աղգ կամ օրինակ մահուն այն է եթէ ոք աստուած պաշտութեամբ եւ քաջութեամբ կատարեցաւ, որպէս իմաստնոյ եւ պիտանոյ վայել է: Իսկ պատճառ այն, եթէ ոք վասն հայրենի աշխարհին մարտուցեալ ընկճեցաւ. զի քաղցր եւ վայելուչ իսկ է վասն աշխարհին մեռանել, ասէ Արատիոս: Ամ թէ վասն հաւատոցն պաշտպան լինելոյ կրեալ իցէ զմահն, որպէս Վրիստոսի սուրբ մարտիրոսքն. կամ թէ վասն շինայելոյ ի վաստակս եւ ի հոգս ձեպեաց մահն:

Իսկ յետ մահուան զերիս ինչս նկատել սովորութիւն է. նախ ի փառաւորութիւն թաղման եւ ի շուքն որ եղաւ մեռելոյն. որպէս Արիստոտելեայ անդրի պատկեր կանգնեցաւ այսպիսի ինչ զրով թէ Արիստոտելէս ազնուագոյն քան զամենայն փիղիսոփայս. եւ Վեմետրեայ փաղերեանց պատկերք երեքհարեւր եւ վաթսուն յԱթէնս կանգնեցան. իսկ Գոդեայ Վեւնտիսեայ ոչ սակեզօծ որպէս այլոց, այլ համակ սակի: Արկրորդ մարթ է հայել ի լաւացն արտմութիւն եւ ի սուգ. բայց սակայն չէ արժան զանչափն եւ զանհնարին կոծ պատմել որ խժաբար եւ ըստ օրինի բարբարոսաց լինի, որպէս էր աշխար զօրացն Աղեքսանդրի որ զմահն նորա լային, զոր Աուրատիոս ճարտարաբանութեամբ պատմէ:

Արրորդ անգամ զիտին որդիք եւ թոռունք որ կենդանի մնացին, յորոց մահուն ցաւք փոփոգել եւ վիշտքն նորոգել մարթին:

ՁԳՈՒՇՈՒԹԻՒՆ ՈՐ Ի ԳՈՎԵԼ ԶՈՔ ՊԻՏՈՅ Է

143. Յերից զգուշանալ արժան է ի գովել զոք. նախ մի ի մուրացածոյ եւ ի կցկցոտ զովութիւնս

անկցուք ապաւինել, որ ոչ եթէ պայծառութիւն ինչ տան ճառիցն, այլ եթէ ճշմարիտ ինչ եւս կայցէ, այնմ եւս շտան հաւատալ. որպէս գէպ եղեւ երբեմն անմիտ պւետեից, որ ոչ պատկառեցին էրզովք գանգուր զգիսակս Սորատոնիկեայ քարոզել, որ Սեղեւկեայ Վսորուոց թաղաւորի կին էր, որ ոչ միայն տղեղ էր, այլ եւ կունտ էր զոր ամենեքին գիտէին: Արեւելի է օրինակն Ղիպսեայ, որ զՂեքսանդրոս իմաստութեամբ նիզակիձեռն նկարեաց, կշտամբեալ զՂպեղէս որ զնա նկարեալ էր, որպէս թէ փայլատակունս արձակիցէ, որով եւ ի բուն եւ ի ճշմարիտ շքոյ կապեալ էր եւ ստութեամբ զարգարեալ, որ ի յետին ժամանակս չէր հաւատարիմ լինելոց:

Արկրորդ զգոյշ լինել պարտ է զի մի ի յաճախութեան ազնուագոյն իրաց զանարգան եւ զգուղնաքեայս խնդրեսցուք. զի որպէս ասէր փաւորինոս, առաւել թշնամանաց է սակաւ եւ ոյծ գովութիւնս առնուլ, քան մեծապէս պարսաւ լինել: Սակայն ի գովութիւնս արանց մեծամեծաց երբեմն եւ զմանր մանր ինչ իրս բնծայեցուցանել արդոյ է: Օգոյն յառաջ ժամանակաւ արար Ղամիս Ղպոզունին իւրում ի հիանականին, եւ իբրեւ կշտամբեցաւ, ետ պատասխանի թէ ի դիցն սեղանոց եւ զնշխարսն եւս խնամով ժողովել պարտ է, զի մի ինչ ի նոցանէ կորիցէ:

Արրորդ եւ գլուխ իսկ այնմ պարտ է հաւատեալ միտ դնել զի մի որ հասարակաց ամենեցուն անկ է ի յարգանսն խառնեսցի, այլ որ նմա միայն սեպհական է, կամ բնդ սակաւուց հասարակ, գովիցի. զի ի նա միայն յանկիցէ գովութիւնն, եւ մի յայլս ձգիցի: Ասան գովութեան շատ եւ բաւական ասացաւ, յորոց դիւրաւ մարթ է ի միտ առնուլ, թէ որպիսի ինչ պարսաւանքն պարտիցին լինել. ուր ամենեւին սոցին հակառակքն են:

144. ԾՆՆԴՈՑ ճառք կոչին, որ յաւուրս ծննդոց ուրուք պատմին:

Չորք գլուխք են ծննդոցն ճառից. առաջին գլուխըն զծնողացն եւ զնախնեացն գովութիւն բովանդակէ, որ իրաւամբք ժառանգութեան ի ծնունդս անդր պատշաճին. երկրորդ գլուխ ակնկալութիւնն զոր տայ մանուկն ակն ունել թէ գովելի եւ աղնուազոյն լինելոց է. երրորդ խնդալ եւ ուրախակից լինել ծնողացն վասն մանկանն յաջողութեամբ ծնանելոյ. չորրորդ գլուխ խնդրուածք եւ աղօթք առ Աստուած, զի ամենայն ինչ յաջողիցէ մանկանն եւ բարի լինիցի, եւ յաշխարհին վայելութիւն եւ ի զարդ աճիցէ եւ զարգանայցէ:

Այլ ուստի մարթիցի ակն ունել եւ սպասել թէ առաքինի եւ փառաւոր լինելոց է: Ի պէսպէս իրաց որ առաջի կան. նախ յազդէն իսկ. երկրորդ անգամ յերեսացն. երրորդ ի կրթութենէ որ հանդերձեալ է լինել. չորրորդ անգամ ի նշանացն եւ յարուեստից, ի յաղթութեանց եւ ի յաջող պատահարաց, եթէ այնպիսի ինչ յառաջագոյն, կամ յետոյ կամ ի ծնանել մանկանն դիպեցաւ. որպէս վասն Աւդոստեայ եւ վասն Պիւռոսի արքայի պատմի թէ զմայրենի ստեամբքն անկեալ ասացին թէ ախորժեմ, եւ նոյն բարբառ զհանդերձեալ համարձակութիւնն յայտ արար: Ապա թէ աղօթիւք եւ խնդրուածովք յԱստուծոյ շնորհեալ իցէ, յայնժամ գոն բարուրք բազում բարիս բղձանալոյ եւ ակն ունելոյ, որպէս վասն Ակիպիոնի յիշատակէ Վեղիոս, որպէս եւ սուրբն Ղուգովիկոս էր:

Իսկ յորինուած ի ծննդոց ճառս լինիցի. յառաջաբանն լիցի ուրախութեամբ եւ գոհութեամբ լի, ի ժամանակէն կամ ի տեղւոջէն կամ ի մարդկանէ որ մօտ իցեն եւ կամ յայլ ինչ նոյնպիսի իրաց: Հաս-

տատութիւնն ունիցի զհօր եւ զմօր մանկանն գովութիւն, եւ զպէսպէս պատճառս, որ զամենայն ուրախութիւն տացեն զմանկանէն ակն ունել. իսկ ի վերջին բանսն պաղատանս եւ աղօթս առնիցէ վասն մանկանն եւ ծնողացն առողջութեան:

Գոյ եւ այլ ճառ զոր առ հինսն բաղումք առնէին, յաւուր յորում զնէր անուն մանկանն. այլ այն սովորութիւն այժմ խափանեալ է, եւ եթէ զացի եւս տակաւին, ընդ առաջինսն նոյն է, վասն որոյ եւ առանձինն ինչ ասել աւելորդ է:

ՎԿԸՅՈՒԹԻԿԵՒԵ ԵՒ ՕՐԻՆԱԿԵ ԻՆՉ ՎԱՄՆ ՃԸՌԻՑ
ԾՆՆԻՒՈՅ

Պսակ ծերոց որդիք որդւոց. Լուակ:

Լճնունութեան ծաղիկք որդիքն են. Կղեմ. աղէք:

Աւրախութիւն հօր որդի իմաստուն. Սենանդր: Հօրք ծնանին ի հօրաց, է յերինջս, գոյ եւ յերիւարս հարցն առաքինութիւն, եւ ոչ արծուիք անպատեբազմասէր որդիս ծնանին. Արատ:

Ի փշոց ելանեն վարդք. Լճմիանոս:

Ար ոչն բարւոք ուսուցանիցեն եւ կրթեացեն զորդիս, ոչ միայն որդւոցն այլ եւ քաղաքին վիաս առնեն. Կիկ:

Մի ոք պարծեսցի թէ ի մեծ քաղաքէ ուստեք է, այլ թէ իցէ արժանի մեծի եւ հոյակապ աշխարհին. Լրիստ:

Վան զորդիս չէք ինչ արգոյ եւ պատուական առ մարդիկ. Ղիւիստ:

*Ազգարիս պատկեր հարց կոչէ զորդիս: Լսի թէ կարբեդոնացիք հանապազ աղօթս մատուցանէին, զի Հռոմայեցիք կամ շարք եւ կամ հիւանդք ծնցին:

Սաղիանոս պատմէ թէ Լսթեր իբրեւ ծնաւ, եւ նստաւ եւ հարուստ մի երգեաց քաղցր բարբառով. եւ Յուստինոս ասէ թէ Գրազաշտ ի ծնանելն ծիծա-

ղեցաւ. զնոյն զՎփրոդիտեայ պատմեն առասպելաբ-
կուք: Առերիսս Վենտատոսս ատամամբք ծնաւ ասեն,
վասն որոյ եւ զանունն էառ:

Փաբիոս Վմբուստոս մինչ դեռ մանուկն էր, կայ-
ծակունս շնչէր. եւ զչերակղեայ ասեն թէ ի մատաղ
հասակի մինչ դեռ ստնդեացն էր, իժս ձեռամբ սպա-
նանէր: Պղատոն իբրեւ նստաւ ի մրտենիս, պարս
մեղուաց եկն նստաւ ի բերան նորա: Իսկ զՇամիրա-
մայ ասէ Վփոդորոս սիկեղացի թէ ի աղայու թեանն
ընկեցեալ ի բացի, ի հաւուց սնանէր, այլք ասեն
թէ աղաւնի սնոյց զնա, որպէս եւ անունն ասորերէն
յայտ առնէ. եւ ի ծոց Վայեայ Սարեայ գտան ար-
ծուիք եւ թն, որ նշանակէր թէ եւ թն անգամ բղեշիս
կալոց է. եւ զՎերեղիանոս մանուկ ծնեալ ի խոնար-
հագոյն ազգէ, եբարձ արծիւ մի ուստի ննջէրն, եւ
ստարաւ եղ ի մերձաւոր սրահն, զայսոսիկ Սաբեղինոս
պատմէ:

Օչերոն սիրակուսացի, որ յետոյ թագաւո-
րեաց ի Սիկիղիա, ընկեցիկ լեալ մեղուք սնուցին
յանդառս: Սերուեայ Տուղեայ ի ննջէն երեւեցաւ
գլուխն շողացեալ, եւ բոց հրոյ փայլատակէր: Սու-
կրատէս իբրեւ հանդերձեալ էր հրահանդել զմանուկն
Պղատոն, թուեցաւ նմա տեսանել կարապ մի որ ի
գրկաց իւրոց ելեալ երգովք ընոյր զտիեզերս: Փի-
ղիպպոս մակեդոնացի տեսանէր յանուրջս, որպէս
թէ գրոշմիցէ կնիք, եւ էին կերպարանք առիւծու.
յետ այնորիկ ծնաւ Վղեքսանդրոս, որոյ սիրտ էր
իբրեւ զառիւծու: Աղեմպիաս մայր Վղեքսանդրի հա-
մարէր թէ փայլատակունս կրիցէ յորովայնի: Իբրեւ
ծնաւ Վղեքսանդրոս, արծուիք երկու նստէին ի վերայ
տանն, որոյ մին յարեւելս եւ մեւն ընդ արեւմուտս
սլացաւ, ասէ Պլուտարքոս:

Մայրն Վայսեր Ակտաւեայ Վեգոստեայ տեսա-
նէր երազ, զի ընդերք իւր աճեցին եւ հեղան ընդ
ամենայն աշխարհ. նոյնպէս ետես եթէ զարեգակն

Ծնանիցի, ուստի իբրեւ ծնաւ զիշխանութիւնն դու-
շակեաց նմա: Արկերոն երազ ետես եթէ Արամազդ-
ոսկեղէն շղթայիւք յերկնից ի դրունս Ասպիտոզեայ
իջոյց զԱկտաւիոս, եւ ապա տայր նմա խարազան. եւ
արդարեւ իշխանութիւն նորա եղև խարազան ջաղ-
խիչ յանդգնութեան ազնուականաց: Ահուբայ
թուեցաւ իւր յեցեալ ընդ ջահ. ապա ծնաւ Պարիս
որ կորսաւեան Տրովացւոց քաղաքին պատճառք եղև: Ա-
ժգաճակ, թագաւոր մարաց ետես երազ, որպէս
թէ ելանէր որթ մի յանձնէ, որ մեծի կողման աշ-
խարհի հովանի առնէր. յետ այնորիկ ծնաւ նմա
դուստր որ մայրն եղև Աիւրոսի հզօր թագաւորի
Պարսից եւ Մարաց: Ազարիստա կին Քոսանտիպ-
պեայ ետես յերազի ծնանել առեւծ, եւ ծնաւ ըզ-
Պերիկղէս: Յուստոս Պատրիկիոս հռոմայեցի տեսա-
նէր զի ելանէր յանձնէ ծիրանի. ապա ծնաւ դուստր
զՅուստինէ, որ եղև կին Ալպենտինեայ ինքնակալի:

ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆ ՆԱԽՆԵԱՑ

Սովորութիւն էր նախնեաց զմանկունս իբրեւ
ծնանէին, իսկոյն ի վերայ դեանոյ գնել, զի դիս իմն
համարէին զերկիր. ուստի զնորին օգնականութիւն
խնդրէին եւ աղաչէին զի ազնուազոյն կերակուրս
շնորհիցէ մանկանն. եւ ծնողացն նստեալ ուխտս ուխ-
տէին եւ երկիւղիւ իմն մերձենային յերկիր: Այն-
պէս սովոր էին զմանկունս ծնեալս ի վերայ վահա-
նաց դնել. իսկ Աակեղեմանացիք ի մէջ իսկ վահա-
նաց դնէին զմանկալին, զի նոյն տեղի ի ծնանելն լի-
նիցի մանկանն, որ ի մեռանելն հանդերձեալ էր լի-
նել, զի վահանօք թաղէին զմեռեալսն. նմին իրի
մարք որդւոց իւրեանց եթէ ի պատերազմ ուրեք եր-
թային, ասպար ի ձեռս տային եւ ասէին, կամ դո-
վին եւ կամ ի դմին:

Օմանկունս տղայս իբրեւ հինգօրեայք լինէին,
շուրջ զմահէնիւն շրջեցուցանէին դեսպակօք, եւ ա-

պա ընծայս յղէին նմա, մանաւանդ պողիւպս. եւ Ղիւսիաս տայ զպատճառսն. զի մանկուէք մատաղք իբրեւ զպողիւպս են, ասէ, այնպիսիք լինին, որպիսիք իցեն նոքա ընդ որս ստէպ շրջին: Աւ պողիւպն ձուկն ինչ է, որ յինչ եւ յարեւոյս զնորին գոյն առնու:

Արողոտոս պատմէ թէ Թրակացիք շուրջնստեալ Հանդերձ մտաւորօք լային զմանկուենս, եւ յառաջագոյն պատմէին նոցա զամենայն անցս որ ընդ նոսայն անցանելոց էին, իսկ զմեռեալս ուրախութեամբ թաղէին:

Հոռմայեցիք ամի ամի զօր ծննդոց իւրեանց աօն խմբէին, ուստի եւ զաօնն եւ զերգոն զոր ի նմին աւուր երգէին, ծննդոց անուանէին: Քարենշան Համարէին զայն օր, պարգեւս միմեանց առաքէին, եւ յարենէ եւ ի սպանութենէ Հրաժարէին այն օր, զի մի զօրն զոր ինքեանք ընկալան, յայլոց Հանցեն. նոյնպէս տարեւոր գիցն նուէրս կատարէին: Հեփեստեայ ոչ յաշտ առնէին ծնողք, զի սովոր էին վասն մանկանց յաշտ առնել. այնու զի եւ ոչ Արամազդ սեղանոյ եւ անկողնոց արժանի արար զնա:

Քրաքմանք ի ծնանել մանկանցն խորհուրդ արարեալ, յանգամոյն իմանային թէ որպիսի լինելոց իցեն բարք մանկանն, եթէ բարեբարոյ լինելոց էր, տային կրթել ի հրահանգս, ապա թէ ոչ սպանանէին:

Օ մանկուենս իբրեւ հատուցանէին ի ստենէ, նուիրէին Լոգուայ, Պոտինեայ եւ Աուբոյ գից, որ համարէին ուտելոյ, ըմպելոյ եւ ննջելոյ գիք:

Գ Գ Լ Ո Ւ Ի

ԼՈՒԿԱՍՍԻ ԿԱՄ ՀԱՐՍԱՆԵԱՅ ՃԱՌԻՔ

145. ԼՈՒԿԱՍՍԻ ճառք են, որպէս եւ յանուանէն իսկ յայտ է, որովք հարսանիք ուրուք գովին. զի առագաստ է սրսկապան փեսային եւ հարսին:

Չորք մասունք են այսպիսի ճառից. նախ առնի առ հասարակ համօրէն հարսանեաց գովութիւն, եւ վասն բարութեան ամուսնութեան, թէ զհարդ նովին զառաջինն մարդկան հաղորդութիւն սկսաւ, եւ քաղաքք շինեցան, նովին եւ ազգ մարդկան սփռի եւ տարածանի, եւ վիշաք եւ աղէտք բառնին, եւ գութ եւ սէր հաստատի ազգականութեամբ եւ խնամութեամբ:

Արհրորդ մասն ուր մանաւանդ հօգոյ եւ խնամոց պէտք են, բովանդակէ զերկոցունց ամուսնացն գովութիւնս. եւ գովութիւնքն առնին ի ծնողացն, ի հայրենեաց, ի պատուոյ եւ ի մեծութենէ, ի մարմնոց եւ ի մտացն պարզեւաց, եւ յայլոց եւս պատճառաց, ուստի գովել եւ յարդել սովոր են մարդիկ, զորոց յաճախագոյն ասացաք վերագոյն (139):

Արհրորդ գովի կազմութիւն եւ հռչակ հարսանեացն, կոչնականացն եւ մտաւորաց ուրախութիւն քարոզի. սովորութիւն է եւ գովութիւնս ինչ խառնել վասն նոցա որ ի հարսանիսն եկեալ իցեն: Չորրորդ յաջողութիւն եւ բարիք վասն ամենեցուն մաղթին եւ այնպէս յանկելեալ կատարին ճառքն. եւ առնին խնդրուածք առ Աստուած վասն երջանիկ եւ բարենշան զալոյ որդւոց յաշխարհ. նոյնպէս եւ ամուսնացն ընդ միմեանս միաբանութիւն եւ գութ յիշատակի:

ՎԿԵՅՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՕՐԻՆԱԿՔ ՎԱՄՆ ՃԼՈՒՅ

ԱՌԵԳԵՍՏԻ

Աին ժրտղլուխ պսակ է առն իւրում. Առակ:

Անջ բարեբարոյի երանելի է այր նորա, եւ թիւ աւուրց նորա կրկնակի. Սիր:

Շ նորհք ի վերայ շնորհաց կին ամօթղած. Անդ:

Սէր ամուսնութեան զբնութիւն մեր, որ ի կորուստ երթոյ, ծննդովքն միւսանգամ յարուցանէ. Պղտտ:

Թագաւորութիւն մեծ է առն կին եւ մանկունք.
Եւրիպ :

Սեծութիւն ազնուագոյն այն է, գտանել կին
առաքինի . Սենանդր :

Ազգ մարդկան ընկերասէր է, իսկ սկիզբն ընկե-
րութեան ամուսնութիւն . Աթենէոս :

Ամուսնութիւն զազգ մարդկան անմահ առնէ .
Պղատ :

Ի մէջ ամուսնացելոց պարտին ծաղկել հանա-
պազօր երկեւղ , շնորհք , զմիմեանս սիրել եւ հաւա-
տարմութիւն . Պղուտ :

Այնչափ առաւել պատուական է կին , որչափ
առաւել մեծարիցէ զայր իւր . Հերոն :

Արկպառակութիւն առն եւ կնոջ աղմկէ եւ խռ-
վէ զտունն . Աւգոս :

Օտերութիւն եւ հարսանիք նման են միմեանց,
երկոցունց եւս ցանկամք հասանել , բայց իբրեւ հա-
սանիցեմք , տրտմիւք . Թէոգատ :

Թեմիստոկղէս սովոր էր ասել , ընտրել պարտ է
մանաւանդ զայր առանց ընչից , քան զինչս առանց
առն . որ ակնարկէ զբանս Ղիողենեայ , որ իբրեւ ե-
տես զմեծատուն տգէտ , ահա , ասէ , անասուն ոսկե-
ղէն . անասուն սակս անմտութեանն , ոսկեղէն վասն
մեծութեանն :

Ղեմսկրիտոս ասէր , թէ որ բարւոյ փեսայի ե-
հաս , եզիտ որդի , ապա եթէ յուրոյ , եւ զգուտար
միանգամայն կորոյս : Հարցեալ ուրումն զՍոկրա-
տէս , թէ արժանիցէ կին առնել , ասէ . Չկունք որ
չեն ի մէջ ուռկանին , ցանկան մտանել , իսկ որ ընդ
ուռկանաւն են , ելանել կամին . տես եւ դու զի մի
նոյն եւ քեզ պատահիցէ : Սոկրատէս սովոր էր ա-
սել , թէ այր օրինակ է կնոջ :

Մինն ֆոկիոնի հարցեալ , թէ ընդէր ոչ ոսկուով
զարդարիցի ըստ օրինի կանանց , ասէ . Անոջ մարդոյ
զարդ մեծ է առաքինութիւն առն իւրոյ . եւ այլում

եա պատասխանի թէ իմ զարդ ոչ նոյնպիսի է, այլ
փոկիոն զարդարէ զիս, որ քսան անգամ զօրավար
եկաց Վթենացոց:

Առ Սնոկրիտացիս կանթեղ լուցեալ էր նշանակ
ամուսնութեան, զի սէր ամուսնացելոց պարտի ցանկ
վառել, համբաւն լուսաւորել, եւ զխաւար վշտաց
փարատել եւ մխիթարել կենաց կցորդ լինելով:

Արտեմիսիա զշխոյն Վարիացոց զՍաւսողոն
զայր իւր զվախճանեալն այնպիսի պատուով եւ
սիրով ասեն մեծարեաց, զի զմեռեալն յանձն իւր
թաղել կամեցաւ. զի զմոխիր վախճանելոյն ընդ զի-
նի խառնեալ առ սակաւ սակաւ էարբ եւ սպառեաց:

Ապա գերեզման եւս կանգնեաց, որ Սաւսողոնն կո-
չեցաւ, եւ ընդ եւթն հրաշակերտս աշխարհի համարի,
իսկ ի դիահանսն զամենայն իշխանս ճարտարախօսացն
Յունաց կոչեաց:

Վուսար Արեոպագիտայ, յետ մեռանելոյ առն
իւրոյ չէառ յանձն այլում ումեք ամուսնանալ, ասէ,
այլոց մեռեալ, այլ ինձ տակաւին կենդանի է այր
իմ: Իբրեւ սպանաւ Պրոթեսիդաս ի պատերազմին
Տրոյացոց, կին նորա Վաւոդիմիա ի սփոփանս արք-
ամութեանն աղօթս մատուցանէր, թէ զոնեայ
զստուեր առն իւրոյ տեսանել մարթայցէ. եւ իբրեւ
լսելի եղեւ, առ խնդութեան իբրեւ զիրկս արկանել
կամեցաւ ստուերին, եհան զողին:

Փիղիպպիդէս ասէր թէ երկու աւուրք են որ
կարի հեշտականք են ընդ կնոջ, մի յորժամ հարսն
դոց ի տուն, եւ մեռ եւս իբրեւ մեռեալ բառնայցի
ի տանէ:

Վիոգենէս ասէր թէ սէր է շահավաճառ դա-
տարկութեան, այնու զի զդատարկակեացս ըմբռնէ
այս ախտ: Սատոն ծերն ասէր, եթէ սիրելոյ շունչ
յօտար մարմինս կեայ, եւ անձն անդ է մանաւանդ ուր
սիրէ, քան ուր չնչէ. զայս Պղուտարբոս պատմէ ի
նորին վարս:

Օրը օրինակ չէ հնար զատուցանել զճառագայթս յարեգակնէ, զջերմութիւն ի հրոյ, ի սառամանեաց զցրտութիւն, զսպիտակութիւն ի ձեանէ, նոյնպէս չէ մարթ ի սիրոյ բաժանել զբարեկամութիւն, զընկերութիւն, զմերձաւորութիւն եւ զմիաբանութիւն:

Մարտիա դուստր կատոնի, իբրեւ հարցաւ թէ ընդէր յետ մահուան առնն ոչ զուգիցի ընդ այլում, ետ պատասխանի, զի չէ դիւրին, ասէ, դտանել այր որ առաւել զիս սիրիցէ, քան զիմս:

Ազգիոնսոս սովոր էր ասել, յայնժամ մարթի ամուսնութիւն հանդարտութեամբ եւ անարատ լինել, եթէ այրն խուլ լինիցի եւ կինն կոյր. այս ինքն է եթէ այրն լեզուանութեան կնոջն տանիցի, եւ կինն մի ստէպ կասկած չարեաց կարծիցէ զառնէն:

Անտիսթենէս ասէր թէ ամուսնանալ պարտք են բնութեան եւ հայրենեաց, զի եթէ խնամով հայեացի ոք, ասէ Պղուտարքոս, չգտանէ ինչ մեծ խտիր ընդ նա որ զքաղաքացի սպանանէ, եւ ընդ նա որ շնորհել մարդ քաղաքին կարիցէ, եւ հրաժարիցի:

Վեմոկրիտոս իբրեւ հարցաւ թէ ընդէր կին փոքրիկ արար, ետ պատասխանի, ես ասէ յամենայն չարեաց զսակաւն ընտրեցի:

Սմանք երբեմն ի ծովու իբրեւ տագնապել սկսան եւ մերձ էին նաւակոծ լինել, իբրեւ առայ նաւապեան ընկեցիկ առնել զբեռինսն զի թեթեւանայցէ նաւն, կէսք զվաճառսն, այլք զայլ եւս բեռինսն որ կայր անդ ի ծով ամային, մի ոմն առեալ զկին իւր ընկէց ի ջուր անդր, ասելով թէ քան զամենայն բեռն ծանր դա է ինձ:

Պրոթագորայ հարցեալ թէ ընդէր թշնամւոյն ետ զդուստր իւր կնութեան, ասէ. զի ոչ կարէի, ասէ, այլ ինչ վատթարագոյն տալ նմա:

Փիդիսոսիոս ոմն հարցեալ թէ զինչ իցէ կին չար, ետ պատասխանի. Ան նաւակոծութիւն, մըր-

բիկ եւ խռովութիւն տան, պատաղիչ խաղաղութեան, դերի լինել եւ հանապազորդ ի տազնապի, կամաւոր ճգունք, պատերազմ ծանր, ընդ դազանի բնակել, անասուն բարկ եւ անողորմ:

Ի ՆԱԽՆԵԱՅ ՍՈՎՈՐՈՒԹԵՆԷ:

Ան կարմանացիս շիշխեր ոք կին առնել, եթէ ոչ նախ զգլուխ թշնամւոյն ածէր առ թաղաւորն: Ան Հնդիկս առնոյր վարձ կին, որ ի գիրկընդխառն եւ ի բռնամարտիկ կռուին յաղթէր: Աոյնպէս առ Վճագոնս ոչ ոք մտանէր յամուսնութիւն, բայց եթէ որ թշնամւոյն յաղթէր եւ վճարէր զպատերազմն. զնոյն պատմեն եւ զՍաւրոմատաց, եւ զժողովրդոց որ բնակենն առ Սէովտին ծովակաւ: Ան Պարսիկս կանայք որ գիտէին հեծանել ի ձի, ունէին իրաւունս ամուսնանալոյ:

Իսկ զարդք հարսանեաց այս էր: Ան Հռոմայեցիս հարսն զգենոյր պարեգօտ ուղղորդ եւ պատմուծան սուրբ. պատմուծան սուրբ այն կոչէր յորոյ ի ստորոտսն չգոյր ծիրանի, եւ ոչ այլ ինչ գոյն արատեր իւիք զպայծառութիւնն. իսկ ուղղորդն պարեգօտ էր ծիրանի եւ նկարէն. ուստի թերեւս եւ այժմու սովորութիւնս է, զի հանդերձս սպիտակս ազանին, որ հանդերձեալ են յամուսնութեան դաշն մտանել: Տանակուիղ եղեւ առաջին, ասէ Պղինիոս, որ ուղղորդ պարեգօտս արար, զոր հանդերձ պատմուծանաւ սրբով զգենուին մանկունք եւ նորամուտք յամուսնութիւն: Այլ էր հանդերձն այն պայծառ յոյժ, բարակ եւ անուշահոտ եւ բախտին նուիրեալ էր, նմին իրի ձորձ բախտաւորութեան կոչեցաւ: Բայց ոչ ամենայն ումք շնորհէր, այլ այնմ միայն որ առաքինութեամբք եւ լաւութեամբք այնմ արժանի լիեալ էր, եւ զայն սակաւ ինչ ժամս օրէն էր արկանել. բայց Սերուեայ Տուղեայ, յորոյ ի ծնաննէն երեւեցաւ ճառագայթ շուրջ զգլխովն եւ բոց հրոյ առանց

վնասու, շնորհեցաւ զօրն ողջոյն զնոյն զգեհնուլ: Յաւել Վարրոն թէ նոյն հանդերձ եւ առ ժամանակօք Սեյանայ կայր, եւ վասն այնորիկ հանդերձ անմահու թեան կոչեցաւ:

Առ շերրայեցիս ցորչափ հարսուէք կային մնային կուսանք, սպիտակ պատմուճան ագանէին, զորս իբր եւ յառազաստ ածէին, արկանէին հանդերձս ծաղկեայս. աստատին ի դիրս ֆիղնի ասի զուրուք դրստերէ, թէ իբր եւ յուսով ամուսնութեան խաբեցաւ, զայս օրինակ սկսաւ խօսել, իսկ զսպիտակ նամփորան զոր անկ ինձ մայր իմ, ցեց մեցամէս կերիցէ:

Սքանչելին շերոնիմոս ի բանս քառասներորդ հինգերորդ սաղմոսին, ի վերջաւորս ոսկեհուռս զարդարեալ եւ պաճուճեալ, ասէ. Հանդերձք հարսանց առ Նբրայեցիս վահանակօք էին, վասն որոյ եւ վահանաւոր կոչէին, այնու զի վահանք ասղամբ նկարէին ի նոսա, եւ յիւրաքանչիւր վահանակս աւագաց պատկեր. եւ այնպէս հարսնն զիւր նախնիսն արկեալ զանձամբ յանդիման լինէր փեռային:

Յոսոոց եւ ի ծաղկանց հիւսէր երբեմն հարսն զիւր պսակ, եւ զայն բնդ վերարկուաւ ածէր առ այրն, եւ սոյն պսակք եթէ յազգի ազգի ծաղկանց էին, անուանեալ կոչէին ամենապտուղ:

Ի Բէովաիա զհարսն ծներեկ բուսով պսակէին, որպէս Պղոտարբոս յայտ առնէ. եւ զայն առնէին առ ի նշանակել զքաղցր եւ զհեշտական կենաց հաղորդութիւն. զի ծներեկ, որպէս ասեն տայ պտուղ քաղցր ի դառնադառն փշոց: Իսկ առ Ղուսիտանացիս միայն ի վարդից պարտէին լինել պսակք հարսնութեան:

Առ Յոյնս զգլուխ հարսին նիզակօք եւ աշտիւք զարդարէին. եւ զհերսն նովին բաժանէին: Օայսց իրաց Պղոտարբոս երիս պատճառս տայ. նախ առ ի խրատ կանանց, զի եթէ արանց պատերազմողաց դիպեցին, պարտ է նոցա ամենեւին ի զեղխութենէ եւ

ի հոպտանայ հեռի լինել, եւ զլին եւ զանպերճն զարդ սիրել: Արկրորդ անգամ, զի զայն ակնարկիցեն թէ միայն սուր կարէ բաժանել զամուսնութիւն. երրորդ զի բազում ինչ որ ի հարսանիս պատշաճին, շերայ համարին. իսկ շերայ նուիրեալ էր նիզակ, եւ զպատկեր շերայ նկարէին յեցեալ ի նիզակ:

Վարձեալ եւ շղաշատեռն արկանէին զգլխով, եւ արկանէին սյնպէս, զի ծածկէր զգլուխն երեսօքն հանդերձ, եւ էր ի գոյն դեղնութեան. եւ զպատճառսն փետոս յայտ առնէ. Տեռն, ասէ, արկանէ հարսն, զի հանապազ զպարկեշտութիւն եւ զպատկառութիւն ունիցի. նոյն սովորութիւն էր եւ առ Սպարտացիս եւ առ այլ ազգս, զի իբրեւ արտաքս ուրեք ելանէին աղջկունք, կամ զողջոյն իսկ զերեսսն եւ կամ կիսով չափ սքողէին:

ՅԵթէնս սովորութիւն էր ի գլուխս փեսայից սփռել տերեւս եւ պտուղս արմուենուոյ: Աւ ի հարսանիս թագաւորաց հայոց ի հասանել ի դուռն տաճարին, սփռէին դահեկան, իսկ տիկնաց յառազաստին մարգարիտ. ուստի ասի յերգս վիպասանաց շայոց. Տեղ ոսկի տեղայր ի փեսայութեանն Արտաշեսի, տեղայր մարգարիտ ի հարսնութեան Սթինկան:

Օ փեսայն եւ զհարսն գրեթէ ամենայն ազգ սովոր էին պսակել, որպէս Տերտուղիանոս ասէ, թէ պսակեն եւ հարսանիք զամուսինս. եւ այս սովորութիւն յԱդամայ ձգեցաւ եկն, որ ասի թէ զԱւս սիրովք դալարովք պսակեաց, իբրեւ ած զնա առ նա Աստուած: Պսակքն յառաջագոյն ի ծաղկանց էին, յետոյ ապա յոսկւոյ եւս սկսան առնել, եւ ընդելուզեալս մարգարտով եւ ակամբք պատուականօք: Անտի իսկ է զի հարսունք թագուհիք կոչին եւ փեսայք թագաւորք. եւ ի սուրբ գիրս հերբայեցի բանն որ է կին, տիկին եւս նշանակէ: Ապա գեղեցիկս ասաց Սսկերերան թէ առն իւրաքանչիւր թագաւորութիւն կին իւր է:

Իսկ օրինակ խօսելոյ զհարսն այսպիսի ինչ էր :
Ա. Հռոմայեցիս զնէին հուր եւ ջուր առաջի սեմոց,
 եւ հրամայէին երկոցունց եւս մերձենալ յայն : Պղու-
 տարքոս յայտ առնէ զպատճառսն . Հուր ջինջ առ-
 նէ, ասէ, եւ ջուր սուրբ . ապա վայելէ որում ամուս-
 նանայն զսրբութիւն եւ զզգաստութիւն պահել :

Ա. Ղեքսանդրոս մեծ ըստ սովորութեան աշխար-
 հին երեկ հաց սրով ընդ հարսին եւ այնպէս նուի-
 րեաց . զի սոյն նշանակ էր ամուսնութեան առ Սա-
 կեդանացիս :

Ա. Վաղատացիս որ յամուսնութիւն մտանե-
 լոց էին ըմբէին ի նմին բաժակէ . եւ Սովմոզայ ի հա-
 զորդութեան հացի եւ ջրոյ, ասի, հաստատեալ
 զամուսնութիւն, որպէս պատմէ Ղիոնիսիոս Ղղիկառ-
 նացի :

Ա. Ղաթինացիս փեսայն եւ հարսն արկանէին
 ապարուշս ծիրանիս, եւ սպիտակ կամ գոյնագոյն
 հանդերձիւ մտանէին ի լուծ . ուստի ասէ Վիրգիլիոս
 զշերայ գից . Աւ նախ քան զամենեսին շերայ, ո-
 րոյ է հոգ խնամոյ զսամետեաց լծոյ :

Պարսիկք եւ Սարք հաստատէին զամուսնութիւն,
 տուեալ աջ միմեանց . որպէս պատմէ Նորիանոս :

Ա. Վաղատացիս այս էր նշանակ առն որ ընտրէր,
 տայր ջուր ձեռամբ իւրով . զայս Յուստինոս պատմէ :
Ա. Եթենէոս ասէ, թէ առ Սասիղիացիս որում հարսն
 տաշտ լցեալ տայր, ընդ նմա ամուսնանայր :

Ա. Չութս իբրեւ քահանայն զմատանին օրհ-
 նեալ տայր, մօտակայքն ածէին ապտակ փեսային
 եւ հարսին : Իսկ առ Ղղինացիս հարսնն օրհնեալ ի
 քահանայէ սկսանէր ըմպել ի տաճարի անդ, մինչ փե-
 սայն հանդերձ այլովք զնոյն առնիցէ :

Սնգարացիք զփեսայն ընդ հարսին զուգեալ, ի
 գաւթէ մհհենին մինչեւ ի բագին անդր բռնի տա-
 նէին զնոսա . յայտ արարեալ թէ ոչ որ հասանէ յու-
 րախութիւն, եթէ ոչ նախ համբերիցէ վշտաց :

Իսկ զՆՏՔ զայս օրինակ մատչէին : Առ Հետրու-
կացիս յաւուր յորում ածէին առ միմեանս զփեսայն
եւ զհարսն յազէին կինճս : Առ Յոյնս կարգային
զգիս որ հարսանեաց համարէին, այս ինքն է զՆրա-
մազդ զարգացեալ եւ զՆրա ի չափ հասեալ, եւ
զՆահիտ. բայց մանաւանդ զՀիմէն, որպէս եւ Հոռ-
մայեցիք զՏաղասին :

Առ Բեովտիացիս եւ Ղրկացիս շքոյր ինչ հառ-
տատուն, բայց միայն փեսայն եւ հարսն ի վերայ բա-
զնի նուիրելոյ Նկղեսիայ կուսի կատարէին նուերս :
Ապա յամուսնացուցանել, եւ յածել ի տուն զհարսն,
ի հասանելն ի տուն անդր, ի կայն եւ մնալ ընդ
առն, եւ ապա յօժանելն առ իւրաքանչիւր գիս կար-
գային :

Ի Հոռմ էր մեհեան բախտի կանանց ի յիշա-
տակ Վեաուրիայ եւ Վոզումնիայ մօրն եւ կնոջ Վորիո-
ղանեայ. իբրեւ նուիրէին նմա պատկեր մի, երկիցս
ասնն լսելի եղև բարբառ, որ ասէր. Վրօնիւք տի-
կնաց տեսէք զիս եւ առն նուիրեցէք : Վիսնիսիոս
Նղիկառնացի ասէ, այսպիսի ինչ խրատ տուեալ քրք-
մին եթէ զայն պատկեր պսակիցեն որ նորոզն ա-
մուսնանայցեն :

Իսկ ի տուն ածել զհարսնն այսպէս լինէր : Հոռ-
մայեցիք չտային թոյլ երբեք հարսին զսեամս կու-
խել, այլ ի հասանել ի տուն վերամբարձ տարեալ լի-
նէր ի ներքս ի փեսաւիրաց եւ ի հարսնեղբարց : Աւ-
զայս վասն այնորիկ առնէին, ասէ Պղուտարքոս, զի
գիտացեն թէ չէ պարտ նոցա զտունսն թողուլ Լքա-
նել, բայց եթէ բռնադատեցին, զոր օրինակ եւ ի
մտանելն բռնութեամբ մտին : Օ՛ի եւ ի Բեովտիա
զղեսպակս եւ զգահաւորակս սրովք ածէին զհարսն,
առաջի դրացն այրէին, յայտ արարեալ թէ անդ
պարտի կալ մնալ հարսն, զի բարձան ի միջոյ հեծա-
նելիք, զի ի հին ժամանակս տիկնայք եւ օրիորդք ան-
դրուարօք եւ լկտեօք շրջէին :

Առ Հռոմայեցիս հարսնն ի մտանել իւրում ի տուն փեսային ասէր ցփեսայն, ուր դու Ասյիոս իցես, ես Ասյիա եմ: Օջայր իրաց երկուս պատճառս տայ Պղոլւտարքոս. նախ զի հարսն վասն այնորիկ մտանէ, զի հաղորդ լիցի ամենայն իրաց եւ լինիցի տնարար եւ երգաչէն: Օ ի այն բանք զայս ինչ նշանակեն, ուր դու տէր իցես, եւ ես տիկին: Արհրորդ զի Ասյիա Տարկուինեայ Պրիսկեայ թագաւորի կին էր, որ հմուտ էր տարազագործութեան, ուստի սովորութիւն եղև զնորոգ ամուսնացեալս առաջի դրաց արանցն հարցանել թէ զինչ կոչիցին, որք պատասխանի տային թէ Ասյիա:

Վարձեալ առ Հռոմայեցիս իբրեւ մտանէր հարսն ի տուն, երթայր առաջի նորա փողար, եւ դուստն որ երգէր զերգս հարսանեաց զոր Հիմենէոն կոչեն. եւ կրէր ընդ իւր մանելիս եւ իլ եւ առէջ. եւ էր երգն ի շնորհս Հիմենեայ դից հարսանեաց, որ եւ ի Յուսաց եւ ի Վատինացւոց պաշտէր, եւ նկարէր պատկեալ ամարակ ծաղկամբ եւ այլ եւս դունակ գունակ ծաղկամբք, եւ յաջոյ ձեռին ունէր ջահ եւ ձախովն քօղ շիկագոյն, եւ կօշիկս ի գոյն քրքմոյ յոտս: Իսկ զհարսն ածէին պատանիք երկու համահարք եւ համամարք, կամ որպէս փեստոս ասէ, որոց ծնօղք կենդանիք էին. մեւս եւս երրորդ առաջի երթայր եւ տանէր ջահ ի դժնկէ. եւ ջահս այս կոչէր յառաջալոյս, զոր յափշտակեալ առնուին բարեկամք, զի մի զայն վազվազակի տարցի այրն ի գերեզման, զի անդ վառեսցի, որ շուառութեան համարէր: Առ Յոյնս հարսն երթայր անդրուարաւ, եւ ընդ նմա գնային փեսայն եւ այլ ոմն ի կարեւոր բարեկամաց: Ասի թէ առ նոսա սովորութիւն էր զի իբրեւ հարսն ի տուն մտանէր, երթայր առաջի պատանեակ մի, որ տանէր փուշ եւ կողին կազամախուոյ եւ կողով հացի, եւ ասէր մեծաձայն, զերծայ ի չարեաց, եւ գտի բարիս:

Ան Հոռոմայեցիս շուրջ ածեին զհարսն եւ այնպէս բերեին ի տուն փեսային, որպէս թէ վասն այնորիկ, զի մի գիտասցէ զճանապարհն ի տուն անդր հայրենի:

Եւ զտունն յոր հարսն մտանելոց էր, այսպէս զարդարեին: Ան Հոռոմայեցիս զգուռն պատէին ասու, եւ դաբնուով զարդարեին: Իսկ հարսն քողով ասուեաւ մերձենայր ի դրանդս դրանն, եւ հրաման տայր օճանել ձիթով կամ ճարպով խողենեաւ եւ կամ ոլոռամբ, որպէս պատմէ Պղինիոս, զի մի ժանտինչ վնասակար եկեացէ յարեսցի ի տուն անդր: Այլ զզան լեղև ծխէին, այլ քառ դրունս տանցն դնէին զգայլոց ցուկ, զի մի կորիցէ ինչ կամ չարակնեացէ ոք յինչ, ոմանք եւս խալամ վիշապի դնէին առ ակնհար ի վերայ սեմոց: Իսկ հարսնն վառէր զկրակարանն եւ արկանէր դահեկան մի ի նշան պաշտաման, եւ ինքն պաճուճեալ զարդարէր պսակօք, իսկ զամենայն մուտս տանն ծաղկալից տերեւապատ զարդարեին:

Իսկ կերակուր ամուսնացելոցն այսպիսի ինչ էր: Առջի հարսին դնէին հոյզ մեկոնիոն ծաղկան խառնեալ կաթամբ եւ մեղու: Ան Պարսիկս ուտէր խրնձոր կամ ուղեղ ուղտու, եւ այլ ինչ կերակուր առնուլ չէր օրէն այն օր: Ան Բաբելոնացիս եւ Բրաբացիս ճաշակէր խունկ: Իսկ Պղուտարքոս պատմէ թէ Սողոմի օրէնսդրի հրաման տուեալ էր ի խրախունս հարսանեաց մատուցանել խնձոր Վիդոնիայ, որ էր քաղաք անուանի ի Արեաթ կղզւոջ յաշխարհին Յունաց: Յերկրորդում աւուր հարսանեաց առնէին կոշունս ուր եւ փեսայն բազմեր, եւ յայնժամ համարէր հարսն տանաիկին, նմին իրի եւ զփականսն յայնժամ մատուցանէին նմա:

Իսկ օրինակ ամուսնացուցանելոց այս էր: Ան Եղամիտացիս որ ամուսնանալոցն էին, զմատունս յորս զմատանին արկանէին, արիւնէին, եւ զարիւնն նուի-

րէին. զայս իբրեւ առնէին, կատարէր ամուսնութիւնն: Առ Գահս փեսայն եւ հարսն ի մի վայր եկեալ զնէին միմեանց անուանս, զոր ինքեանք կամէին, եթէ երկոքին եւս հաճեալ հաւանէին ընդ անուանան, այն նշան էր հաստատելոյ ամուսնութեանն:

Առ Պաննոնիացիս ի սկզբան հարսանեացն փեսայն ցհարսն զտան դիսն, գործեալ յարծաթոյ, եւ հարսն նոյնպէս ցփեսայն զիւր դիս արծաթեղէնս առաքէր, եւ իբրեւ զմիմեանց դիս ընդունէին, նովին լինէին ամուսինք:

Սիկիոնացւոց օրէնք զոյին հարսանեաց, զի փեսայն եւ հարսն միմեանց կօշիկս առաքիցեն, եւ եթէ զառ ի միմեանց առաքեալսն ընդունիցին, վճարեսցի ամուսնութեան դաշն:

Նշանակք հարսանեաց այսպիսի ինչ են: Միւրոսի արքայի որ ստեպ ի տեսիլ երթայր, եղբարք երեք ածին ի մէջ զիւրեանց քոյր որ մանէր յիլ, եւ արբուցանէր երիւարի, եւ կուժ մի ջրոյ: Օջարմացեալ թագաւորին ընդ կոյսն իբրեւ եհարց թէ ո՞րք իցէ, ասեն եղբարքն թէ քոյր մեր է: Հաճոյ թուեցաւ թագաւորին կոյսն ժրագլուխ եւ ած զնա իւր կնութեանն Սա իբրեւ տիկին եղեւ, եւ քանդակել ի պսակի իւրում մըջիւն եւ մեղու նշանակ իւրոց վաստակոց, այսպիսի ինչ բանիւք, ՍՈՎԻՆ ԿԱՄ, ՋՈՐ ԿՐԵՄՆ. իսկ ի վերայ գերեզմանի իւրոյ հողացաւ զի նկարեսցի իլ, երիւար եւ կուժ ջրոյ. Գուեվարրա:

Ազիպտացիք զգտտերս իւրեանց զկարի իսկ աղքատս մանեկօք զարդարէին. եւ յոմանց փոխանակ մանեկաց դատերքն խնդրէին դահեկան: Ի մանեկսն վեց կերպարանք էին, առաջին տատրակ այսպիսի ինչ բանիւք թէ ԱՅԴՊԷՍ ՄԻԱՅՆ ՄԻԱՅՆՈՒԿ. երկրորդ աղաւնի բանիւքս այսոքիւք, ՍՄԻՆ ՆՄԱՆ ՋԳԱՍՏ. երրորդ արծուի բանիւք թէ ԻԲԻԵԻ ՋԴԱ ՊԱՏՐԱՍԱՎԱՆ. չորրորդ արագիլ թռչուն ասելով ԱՅԴՊԷՍ ԴԻՅԱՊԱՇՏ. հինգերորդ չղջիկան եւ գիր այսպիսի

Թէ ԻԲԻԵՒ ԶՍԱ ՀՍԿՕՂ ԼԻՆԻՑԻՍ . վեցերորդ արտոյտ
Թռչուն բանիւքս այսոքիւք . ՍՄԻՆ ՀԼՆԳՈՅՆ ՍՈՒՐԲ
ԵՒ ՊԱՇՏՕՆԱՍԻՐ :

Պաւսանիաս ասէ, արա զվոյսն այնպէս, որպէս
փուղուիա զպորփիւրիտէս: Պորփիւրիտէսն քար ինչ
է, յոր զոր ինչ եւ կամիցիս, կարօղ ես քանդակել:
Իսկ փուղուիա քանդակեաց ի նմա կոյս, որ կայր ի
վերայ կրայի, եւ աստի եւ անտի օձք էին, յաջոյ ձե-
ռին ունէր խնձոր հանդերձ աստեղօք, եւ ձախոյն հա-
լածէր զազուաւ մի, եւ ի վերայ գլխոյ նորա ածէր
արմաւենի: Այս էր մեկնութիւնն, ի վերայ կրայի
կայր, զի գիտասցէ թէ կուսի արժան է ցածութեամբ
եւ յամր շարժել. օձք յերկոցունց կողմանց նշանա-
կեն, զի ամենայն ուրեք իմաստուն եւ զգուշաւոր
պարտի լինել. խնձոր հանդերձ աստեղօք յայտ առնէ
Թէ զերկինս ունիցի ի ձեռագործս եւ առաքինու-
թեամբք իբրեւ աստեղօք զիւր վարս զարգարիցէ:
Օչազուան հալածէ, զի մի լիցի լեզուանի եւ կու-
օղ. արմաւենի բուսեալ ածէ ի վերայ գլխոյ նորա,
զի կոյսն յաղթել պարտի առաքինութեամբք իւրովք
զամենայն զչար խորհուրդս եւ զցանկութիւնս:

Նին Ակիւթացիք գեղեցիկ յոյժ զկերպարանս
բարեկամութեան նկարէին պատանեակ մի նշանաւոր
գեղեցիկութեամբ, մերկ գլխով, զգեցեալ հանդերձ
Թաւացեալ, յորոյ ի ճարամանդս գրեալ էր ԿԵՆՆԲ
ԵՒ ՄԸՀ. ի ճակատուն ՉՄԵՌՆ ԵՒ ԱՄԸՌՆ. եւ կող
նորա մինչեւ ցսիրան բացեալ էր, ուր զայսպիսի ինչ
ոսկեղէն բանս կայր ընթեռնուլ ՄՕՏ ԵՒ ՀԵՌԻ. եւ
այս ամենայն նշանաւոր իմն վարդապետութիւն ըն-
ծայեցուցանէր: Օհնչ մատաղ հասակն իցէ, այն
իսկ զի բարեկամութիւն հանապաղ դալարանայ, եւ
երբեք ոչ ձերանայ: Օհնչ Թաւ հանդերձքն ցու-
ցանիցեն. բայց զի հաւատարիմ բարեկամի պարտ է
պատրաստ լինել ամենայն դժնդակաց տանել վասն
բարեկամին: Վլուխն ի բաց յայտ առնէ, Թէ չէ ար-

Ժան երբեք յուրաստ լինել զբարեկամէն: Աող հա-
լանեալ ակնարկէ զայս ինչ, թէ զբարեկամն սիրել
պարտ է ոչ բերանով միայն, այլ եւ սրտիւ եւ ար-
դեամբք: Ի ճակատուն ձմեռն եւ ամառն է, զի որ
սերտ եւ ճշմարիտ բարեկամն է, եւ ի յաջողութիւնս
եւ ի չուառութիւնս զօրէնս բարեկամութեան պահէ:
Շ ուրջ զսրտին էին այս երկու բանք ոսկեղէն գրովք
ծաղկեցուցեալ մօտ եւ հեռի. որ տայ իմանալ եթէ
որ ճշմարիտ բարեկամքն են, թէպէտ հեռի իցեն
թէպէտ մօտ, զմիմեանս սիրեն, զի օտարութիւն կամ
բացարձակութիւն վայրաց չբառնայ զբարեկամու-
թիւն, անջատել անջատէ զմարմինս, այլ զսիրտս եւ
զմիտս ոչ: Ի ճարամանդան էին մահ էւ կեանք,
զինչ անտի իմանայցի, ոչ այլ ինչ, բայց թէ որ
սիրէն ճշմարտիւ, մահու չափ սիրէ:

Ի մեւս եւս նշանակ երկուց աղաւնեաց որ
մազլօքն ունիցին մանեակ յորոյ վերայ գրեալ կայ-
ցէ այսպիսի ինչ, ՀԱՍԵՐԱԿԱՅ Է ԵՐԿՈՑՈՒՆՑ. այս ինքն
է տոնակապս կամ պարաւանդ. զի մանեակն անուր
սրտից է: Ի խոնարհ նկարի արագիլ որ կտորէ օձս,
այսպիսի ինչ բանիւք թէ, ՍՊԱՆԱՆԷ ԶԻ ՄԻ ՎՆԱՍԻՑԷ.
որ նշանակէր թէ ի հարսանեաց պարտ է զամենայն
զաժանութիւն եւ զթոյն ի բաց հատանել:

Ձերոնիմա Երրագոնիա Ենտոնեայ Աողումեայ
կին առ ի նշանակել զհանապազորդ միաբանութիւն
ընդ առն, ունէր նշանակ ջահս երկուս յեռեալս ընդ
միմեանս ոսկեղէն կապանօք, եւ առած այսպիսի
ինչ, ՄԻ ԵՂԷԻ ԵՒ ՄԻ ԵՂԻՑԻ, այս ինքն է միաշունչ
եւ համաբարոյ ընդ առն:

Աստանդիա Ափորաիա, զի զիւր յստակամիտ
պարզութիւն ի մէջ տան հոգոց ցուցանիցէ, նշանա-
կի վասն ունէր կարապ որ լողայր իմն ի ջուրս, եւ ե-
րիս չղջիկանս որ թռչելովն իբրեւ թէ խաւար սպառ-
նային. իսկ գիր այսպիսի, ԱՆԻԾՈՒԹԻԿՆ ԱՆԵՐԱՏՈՒ-
ԹԵԱՆ:

Աղիսարեթ կին Կարողեայ ինքնակալի Հինդերորդի ի նշանակ առաքինութեանց որովք Հաճոյ լինիցի առնն, փոյթ յանձին կալաւ տալ նկարել շնորհս երիս, որոց մին կրէր ի ձեռին վարդ, մեւսն մրտենի, եւ երրորդն կաղին, այսպիսի ինչ բանիւք ՁԵՅՍՈՍԻԿ ՈՒՆԻ ԵՒ ԸՌԱՒԵԼԵԱԼ Է:

Աղիսարեթ Ըւստրիակա դուստր փերդինանդեայ ինքնակալի ունէր ի նշանակ ծառ պողարեր, իսկ ի վերուստ յամպոց ելանէր ձեռն որ ունէր շանթ, եւ նովին Հատանէր զծառն, եւ էր գիր զայս օրինակ ԽԻԱՅՆ ԽԱՀ ԿԱՊՏԻ ԶԻԵՐ ՊԱՐԳԵՒՍ:

Ի Հարսանիան Սիդիսմունդեայ երրորդի արքայի Պողոնիացւոց ընդ Ըւստրիակայ տիկնոջ, այսպիսի ինչ դահեկան հատանէր. յաջմէ կողմանէ կայր արծուի սեռաւ երկգլուխ թագաւորութեանն Հոռմայեցւոց, ի ձախմէ սպիտակ արծուի արքայութեան Պաղոնիացւոց, եւ երկոքին արծուիքն կային ի վերայ նշանի զարմի աւստրիական տանն, որ են խրձուչք սպիտակք ի վահան կարմիր, եւ գիր այսպիսի ՅԵՏՈՅ ԶԻԵՍՍ ԽԻԱԲԱՆԵԼ ԲԱՐԻՈՔ Է:

Արկրորդ նշանակ նորին թագաւորի էին, արմաւենիք երկու ի վերայ ընդդիմակաց կողմանց եղեր գետոյ, որ առ միմեանս խոնարհեալ հակէին, այսպիսի ինչ գրով թէ ՍԷՐ ԵՒ ԶԲԱՅԱԿԱՆՍ ԶՕԴԷ:

Փրանկիսկոս երկրորդ Վաղեսիոս, արքայ Կաղիայ նշանակի վասն ունէր սակի դահեկան պսակեալ, զոր աջովն փորձէր ընդ քար Դիւդացւոց որ է քար փորձութեան այսպիսի ինչ բանիւք ԸՅՍՊԷՍ ՊԱՐՏ Է ԴԻՏԵԼ ԶՀԱՒԵՍՍ. որ նշանակէր եթէ հաւատարմութիւն բարեկամաց եւ սէր ամուսնացելոց ոչ բանիւք, այլ արդեամբք զայ յայտ եւ ճանաչի:

ՎԼԱՄՆ ԹՎԱԴՄԱՆ ՃԼՈՒԻՑ

146. ԹՎԱԴՄԱՆ ճառ այն կոչի, զոր կամ ի նմին իսկ առուր յուղարկաւորութեան, կամ ի դարձի տարւոյն առնեն. սոյնօրինակ էին ճառքն զորս հրաման ետ Մրտեմիսիա առնել ամի ամի առ դերեզմանան Սաւսողեայ. նոյնպէս որ յԼ.թէնս լինէին ի գովութիւն այնոցիկ, որոց վասն աշխարհին ի կռուի անկեալ էր, որպիսի են ճառք Պերիկղեայ առ Թուկիդիդեայ:

Սորին գտակ ի մէջ Յունաց Սողոն ճանաչի, մին յեւթանց իմաստնոց. իսկ ի մէջ Հռոմայեցոց Վաղերիոս Պուբլիկոզա, որ զիւր ընկերն զՅոնիոս Մրուտոս, որ ի պատերազմին ընդ Տարկուինեանս անկաւ նոյնպիսի ճառիւք գովեաց, որ այնպէս հաճոյ թուեցաւ ամբոխին, զի յետ այնորիկ սովորութիւն եղեւ հրապարակաւ գովել զզօրաւարս, որոց ի մարտի անկեալ էր. եւ նոյն սովորութիւն ի Հռոմայեցոց յայլ եւս ազգս եւ ի քրիստոնեայս իսկ անց: Տուղիոս եւ Վիլիոս ասեն թէ այսպիսի գովութիւնք սուտ պատմութեամբք լինէին, զի սովոր էին զիրան անչափ աճեցուցանել, եւ ողորջանօք մանաւանդ քան ճշմարտութեամբ զարդարն ասէին:

Թաղման ճառք յերից մասանց յօրինին, ի գովութենէ, ի միսիթարութենէ եւ ի թելադրութենէ. գովութիւն մեռելոյն, միսիթարութիւն ծնողաց եւ ազգականաց եւ կարեւոր բարեկամաց. իսկ թելադրութիւնն է խրատ առ մօտակայսն զի ի մեռելոյն վարս եւ յառաքինութիւն իբրեւ յօրինակ հայիցին:

Ասասցուք այժմ վասն արուեստգիտութեան թաղման ճառից, թէ զիարդ պարտիցին լինել, եւ ուստի առնիցի սկիզբն նոցա:

Սեճ իմն արտմութեան եւ սգոյ նշանակ պարտին ունել. իսկ սկիզբն առնի կամ ի պատրաստու-

Թենէ եւ ի հանդերձանաց սգոյ թաղմանն, եւ կամ ի ախուրն արամութենէ լսողացն, որ վազվազակի սարսափին զնորօք արկանէ: Ամ առակաւ իմն որ զանցաւոր վիճակ իրաց մարդկան, որ մեզ հանապազ առաջի աչաց կայ, ցուցանիցէ. կամ ի դիպաց ինչ որ ի մահուան վախճանելոյն դիպեալ իցեն, որպէս ի մայլ օդոց, ի սասանութենէ ի կոտորածէ, ի սրածութենէ կամ յանկարծ ինչ վշտաց եւ սր սոցին նման են, որ ի խօսողին իմաստութիւն ապաստան է:

Իսկ հաստատութիւն ճառին նոյնպէս յերեցունց մասանց անտի, որ սակաւիկ մի յառաջ յիշատակեցան, պարտի կալ, այս ինքն է ի գովութենէ, ի մխիթարութենէ եւ ի թելադրութենէ. գովութիւն մեռելոցն է, մխիթարութիւն մերձաւորացն եւ բարեկամաց, իսկ թելադրութիւն նոյնպէս առ որս շուրջն կան: Իսկ զհարգ պարտիցի լինել մեռելոյն գովութիւն, ի ճառս կացրդիցն (140) բաւական ասացաւ. այս ինչ միայն ի միջի կայ ընդ այս եւ ընդ այն գովութիւն, զի անդ որովհետեւ կենդանւոյ է գովութիւնն, ուրախութեան պարտի լինել, իսկ աստ քանզի մեռելոյ են յարգանքն, պարտին յողբս եւ ի արամութիւն յորդորել. ուստի հաւաստեալ խորշել պարտ է յամենայնէ որ ուրախութիւն ինչ եւ խնդութիւն մարթին ի միտս ծնուցանել: Օսոյն հնարագէտ ճարտարութիւն կարիցես նշմարել ի գեղեցիկ երգսն Արատիոսի, ուր զՎուինտիլիոս զիւր սիրելի բարեկամն ողբայ.

Մասուհետեւ զՎուինտիլիոս մշանջենաւոր
Թմբրութիւն

Տազնապէ: Յածութիւն եւ հաւատք ան-
եղծութեան,

Որ քոյրն են արդարութեան. եւ մերկազուխ
Ճշմարտութիւն

Ե՛րբ զոք նմին հանգոյն եւ հաւասար դոցեն:

Ան ի զթախծելոց ցաւս սփոփելոյ, նախ պարտ է զգոփութեան արժանի վարսն յուշ առնել, երկրորդ անգամ զպատիւն զոր մինչ կենդանին էր, ունէր, եւ որ յետ մահուանն իսկ առնի նմա. եւ զառաքինութիւնսն եւս պարտ է յիշատակել, որոց հասարակաց եւ իւր սեպհական յիշատակարանք վկայիցեն. երրորդ անգամ թէ առանց երկմտութեան մարթիակն ունել թէ անմահութեան հասեալ, եւ ընդ երանելի ոգիսն յերկինս վայելէ, կամ թէ երբեմն ըմբոշնեցոց է: Չորրորդ մարթ է զորդիս եւ զթոռունս ցուցանել, յորս հայրենի առաքինութեան ժառանգութիւն դնայ:

Ապա եթէ որ գովին, վասն աշխարհին ի պատերազմ մտեալ եւ անկեալ իցէ, յայնժամ մարթ է իբրեւ ի դաշտ ինչ բերրի մտեալ համարձակ դնալ, զոր Վիկերոն բանայ մեզ, յորժամ զըզէտն գունդն որ Սարտեանն կոչէր այս ինքն Նքեայ, մեծաւ հրոչակաւ գովիցէ, որոց ի Սուտինացոց կռուին քաջութեամբ կռուեալ եւ անկեալ էր:

Ամպարիշտքն այնոքիկ, ասէ, զորս սպանէրդ, ի դժոխսն իսկ վրէժս ընդ սպանութեանն տացեն. բայց դուք որ ոգւով չափ ի վերայ յաղթութեանն մարտեղեալ կռուեցարուք, զբարեպաշտաց զաթոռ եւ զտեղի ըմբռնեցէք: Վարձակեացք սակաւօրեայք եղերուք, այլ յիշատակ կենացն զոր ետուք, մշտնջենական է. որ եթէ երկայնագոյն քան զաստի կեանս չէր, ո՞ այնպէս անմիտ էր, որ մեծամեծ վատակովք եւ վշտօք ի բարձունս իսկ գոփութեան եւ փառաց գուն եղեալ ջանայր հասանել: Բայց որովհետեւ շուք եղեալ զփառաց սպաս հարկանեմք քաջաց եւ հզօր քաղաքացեաց, աւն առ եւ զնոցա մտաւորսն սփոփեսցուք, որոց աղնուագոյն մխիթարութիւն այն իսկ է, ծնողաց զի այնչափ պահս եւ պահակապանս քաղաքին ծնան. որդւոց զի ունիցին ընտանի օրինակս առաքինութեան. ամուսնաց զի

յարանց եղեն զորս գովել քան աշխարել պարտ է . եղբարց զի վատահ իցեն թէ զոր օրինակ զմարմնոցն նոյնպէս եւ զառաքինութեանցն նմանութիւն ունին յանձինս :

Ապա զամենայն առաքինութիւնսն զորս ցայն վայր գովեցեր , միւսանգամ յիշատակեալ ի բաց զարտմութիւնն վարատիցես յազգականացն :

Իսկ ի վերջին բանսն պարտ է նախ զմշտնջենաւորն երջանկութիւն յՆստուծոյ վասն մեռելոյն մաղթել . երկրորդ նմին հանապազորդ յիշատակ առ յետինսն ըզձանալ եւ խոստանալ եւս . երրորդ զնորին զանպայման անձուկ ի միտս լսողացն զարթուցանել :

ՎԿԵՅՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՕՐԻՆԵԿՔ ԹԱՂՄԱՆ ՃԱՌԻՑ

Մի երկնչիր ի դատաստանէ մահու . այս դատաստան է ի տեառնէ ամենայն մարմնոյ . եւ ընդէր գժուարիս ընդ հաճութիւն բարձրելոյն . Սիր :

Յուշ լիցին քեզ զի մահ ոչ յամենայ . Նոյն :

Մինչ չեւ իցէ քո վախճանեալ արա բարի բարեկամի . Նոյն :

Բարի կենաց թիւ ոչ գոյ աւուրց , եւ բարի աւուր մնայ յաւիտեան . Նոյն :

Որ արդարն է զգուշանայ ի մահուանէ , այլ ոչ երկնչի . Ս . Բեռն :

Չմարթի չարուք մեռանել , որ բարուքն եկեաց . Ս . Ըւգ :

Լաւ է որոց զչարն գործիցեն , արագ արագ մեռանել . Ս . Ըմբրոս :

Չէ պարտ չար համարել զմահ , եթէ բարուք եղեն կեանք որ յառաջագոյն եղեն . Ս . Ըւգ :

Որում պանդխտեն քաղցր է , ոչ սիրէ զգաւաւն . Նոյն :

Չոր օրինակ ծնանին չարք զի մեռանիցին , նոյնպէս մեռանին լաւք զի կենդանի լինիցին . Գուեվար :

Այր բարի թէպէտ եւ մեռանիցի, կենդանի է. այր չար թէպէտ եւ կենդանի կայցէ, մեռեալ է. Նոյն:

Աեանք անարատ անկասկած առնեն զմահ. եւ զանչափ ծաղու ի կեանս լալին բազում ի մահուան զՏեա գայ. Նոյն:

Աղքատն մեռանի զի հանգիցէ, մեծատունն զի տանջեսցի. Նոյն:

Ախայն երանելիս պարտ է անուանել զնոսա, որ մեկնիցին ի կենաց աստի պատուականք եւ արդոյք Աստուծոյ, եւ մարդկան շիցեն տաղակալիք. Նոյն:

Աերտ եւ գոհացող որդի յորում աւուր զիցէ զՏայր իւր ի խիստ հող, ի նմին իսկ աւուր պարտի ի կակղութեան սրտին թաղել զնա. Նոյն:

Ի մի եւ ի նոյն ստեանց զկեանս եւ զմահ ծծեմք. Ապիկտեսոս:

Չեն մեծ ինչ իրք կեալ, մեծ է բարւոյքն կեալ. Սենեկա:

Ար դիցն սիրելի է, մանուկ տիօք մեռանի. Պլաւտ
Օգոնուագոյնսն յափշտակէ մահ, իսկ զյոսիսն թողու. Հոմեր:

Անհ բժիշկ է չարեաց. Աբրիղ:

Անհ ահագին է այնոցիկ, որոց հանդերձ կենօք ամենայն ինչ անցանէ, այլ ոչ որոց զօլութիւն մեռանել չմարթի. Վիկ:

Ամբարշտութեամբ եւ անառակութեամբ կեալ ոչ միայն չարաչար կեալ է, այլ եւ յերկար մեռանել. Վեմսկրատ:

Ամենայն ուստեք նոյն է ճանապարհ ի գերեզման. Վիոգ:

Ի բովանդակ կեանս պարտ է ուսանել զմեռանել. Սենեկա:

Ի նութիւն ետ մեզ վանս առ ազանել, ոչ առ ի կալ մնալ. Վիկ:

Ի կենաց ելանել պարտ է իբրեւ յասպնջականութենէ, եւ ոչ իբրեւ ի տանէ. Նոյն:

Իսովանդակ կեանք մարդոյ մի օր է. փաբխոս :

Ոչ որ յերկարն կենդանի եղեն, նորա ազնուագոյն կեցին, այլ որ զգաստութեամբ եւ պարկեշտութեամբ. Վարրոն :

Պսովութեան արժանի կտակ այն է, զոր աստուած պաշտութիւն, հաւատք եւ ցածութիւն գրիցեն. Պղին :

Արանց աւագաց ոչ միայն զալուստն, այլ եւ յիշատակ օգտակար է. Սենեկա :

Որ քանքատիցէ զուրուք մեռանելոյ, այնպիսին զմարդն լինելոյ նորա արանջէ. Նոյն :

Չհամարէի թէ մեռանիմ, եթէ թողուի բարեկամս յետ իմ. եւ հաշուէի թէ կենդանի լինելոց եմ ոչ ընդ նոսա, այլ վասն նոցա. չթուէր ինձ փշել զոգի, այլ աւանդել. Նոյն :

Մի օր մարդոյ խրատելոյ առաւել է, քան զերկայն աւուրս անխրատին. Նոյն :

Որ իմաստուն դք իցէ, ցանկ զմտաւ ածէ, թէ զխարդ եւ որպիսի իցեն կեանք, եւ ոչ թէ որչափ եւ քանիօն. Նոյն :

Կենդանի է նա որ դործօն եւ պիտանի իցէ. իսկ որ խուսխուսենն եւ ընդարմացեալ են, ի տան իբրեւ ի գերեզմանի կան. Նոյն :

Ոչ ամենայն ուրեք մահ, ուր մերձ է, մօտ զանձն ցուցանէ. Նոյն :

Օի մի երկիցես երբեք ի մահուանէ, հանա պազ զմահուանէ ած զմտաւ. Նոյն :

Ողիւմպիոյ երեւեցաւ զիշեր ի կերպարանս եւ ի հանգերձս կնոջ, որ աջովն բուռն հարեալ էր զսպիտակ մանկանէ որ ի քուն էր, եւ ձախովն զթխոյ որ նման էր ննջեցելոյ, առաջինն անուանեալ կոչէր քուն, եւ երկրորդն մահ, եւ երկրբեան մանկունք զիշերոյ :

Առ Սպանիացիս սովորութիւն էր այնչափ աեզս եւ նիզակս հարկանել շուրջ զգերեզմանաւն, որչափ թշնամիս դք սպանեալ էր: Իսկ առ Սկիւթա-

ցիս որ միանգամ յաղթէր ի պատերազմի, ի կենդանութեան պարտ էր ըմպել ոսկեղէն տաշաիւ. եւ յետ մահուան ի վերայ գերեզմանին կախէր տաշտ ոսկի. Վերիտիկոս:

Թևսաղիս որովհետեւ ոչ գտաւ մօտ ի մօրն յուղարկաւորութեան, առաքեաց սպունգ արտասուօք լի հանդերձ այսպիսի բանիւք. Սրտիւ եւ արտասուօք դամ զկնի. Ապպիանոս:

Սիպարիտացիք զի անարգել ի փափկութիւնս հատանիցին, մահու սպանանէին զնա, որ զմահուանէ յիշատակէր. Սողինոս:

Յիշխանութեան Տիբերի կայսեր պատժովք պատուհասից արգելեալ էր լալ զմեռեալս. զմարս զլստվինն որ ողբային ի վերայ որդւոց իւրեանց մեռելոց, կապեալս փողոսէին. Տակիտոս:

Իբրեւ պատկէին ինքնակալք այսպիսի ինչ սովորութիւն էր, զի ի նմին իսկ աւուր յորում գնէր թագ ի գլուխ եւ գաւազան թագաւորութեան ի ձեռսն, ոմն յանուանի գաղատոսաց որ զգերեզմանս շինէին, երիս ազգիազգի վէմս մատուցանէր, կուճ, յասպիս եւ պորփիւր, ընտրել զմի ի նոցանէ զի շինիցեն անտի գերեզման, եւ գոչէր բարձր բարբառով թէ ընտրեա զմի ի սոցանէ, աւգոստէ կայսր, յորմէ կամիցիս զի շինեցից զգերեզման քո. Աղաւդիոս Պարպ:

Փիղիպպեայ մակեդոնացւոյ էր պատանեակ մի յարքունիս, զոր կացուցեալ էր ի սպաս, զի հանապազօր եկեալ ասիցէ ցնա, յիշեա, ով թագաւոր, զի մարդ ես դու. յայնժամ զմտաւ ածեալ թագաւորն զիւր ողորմելի պայման, այսպիսի ինչ յոգւոց հանեալ ասէր. Սայ ինձ, եղուկ եմ ես. մարդ եմ, եւ մահկանացու եւ ի միտիր դառնալոց. Ստրէնոս:

Մակրոբիացիք որ ժողովուրդ ինչ են Աթւովպացւոց աշխարհին, զպատկերս վախճանելոց յոսկոյ

կամ յարժաթոյ կամ ի փայտէ կանգնել սովոր էին, զի այնպէս յիշատակ վախճանելոցն ի միտս իւրեանց պահեսցի: Ի պատկերսն փորեալս արկանէին զաճիւն մեռելոց. իսկ որ մերձաւոր էր արեան մեռելոյն, զպատկերն ի տուն տանէր եւ արկանէր յապակի երեւելի: Իսկ այլ եւս ազգականք զերախայրիս արմտեաց իւրեանց եւ այլ եւս բազում ինչ ամի ամի մատուցանէին. Դիողորոս սիկիղ:

Վաղատացիք ունէին պաշտամունս, զի իբրեւ փչէր դք զողին, պէսպէս թուղթս եւ գիրս առ նա կարգէին, զոր ի նմին թաղման աւուրն մարմնովն հանդերձ այրէին. զի համարէին թէ զթուղթսն մեռեալն յայլում աշխարհի ընթեռնուցու. Ե.դ. յ.դէք:

Վակեղմանացիք զի զմանկտին վառիցեն նմանօղ լինել աւագաց, զմեռելոց դիւցազանց պատկերս ի պղնձի եւ ի մարմարիոնի դրոշմէին, եւ զմի մի իւրաքանչիւր դնէին ի մէջ ծերակուտին հանդերձ նոցին գովութեամբք եւ այսպիսի ինչ բանիւք թէ իբրեւ զդոսս լինիջիք, եթէ եղիջիք հանգոյն դոցա. Ի.էոս:

Արտեղիոս աշխարհագիր ասէ թէ ազգ մի է, որ զոսկերս մեռելոց փոխանակ արժաթոյ ունին, եւ ի տեղի ոսկոյ նոքիմբք վարին ի գնել եւ ի վաճառել, եւ նոյնք ընդ մեծութիւնս համարին նոցա:

Փիղիսոփոս ոմն ազաշեալ զի վճիռ ինչ տացէ զկարծութենէ կենաց, լռեալ շուրջ եկն: Եւս ոմն փիղիսոփոս սակաւիկ մի եկաց մնաց, եւ ապա թաղոյց զանձն, սոյն, ասէ, ազնուագոյնս յայտ առնէ զկեանս մարդկան:

Նիկեփորայ ինքնակալի էր բաժակ ի գանգէ. յորմէ ապա իշխանն Բուզգարացւոց տայր ըմպել մեծամեծաց իւրոց: Եւ Հռոմայեցիք, իբրեւ ախտացեալք յոգւոցն պարզել մերձ էին, մտաւորքն եղեալ զբերանս ընդունէին զլունչն որ ելանէր. Աոսին:

Նոքին դարձեալ նոճւով կնքէին զմեռելոց տունս, զի զոր օրինակ նոյն ծառ հատեալ միւսան-

գամ ոչ բուսանի, նոյնպէս չիք ինչ յուսալ ի մեռելոյ: Փողարք երթային առաջի ի յուղարկել զմեռեալս, որ զգովութիւն եւ զգործս վախճանելոցն երգէին. ածէին առաջի եւ զնշանակս բարեացն զորս վճարեաց եւ ազգի ազգի պսակս որոց արժանին էր. գարձեալ եւ պատկերք համօրէն ազգատոհմին տարեալ լինէին ի նիզակս եւ ի ձողս: Օտառայք վախճանելոյն որոց զազատութիւն առեալ էր, արտասուելով եւ արտախուրեալք, կամ արկեալ սպիտակ կտաւ զգլխով երթային առաջի դազազացն, եւ այս կարի մեծարանաց էր. Աստինոս:

Առ Հռոմայեցիս էր եւ այս սովորութիւն, զի յետ զդիակնն այրելոյ, կոծօղն մեծաձայն ազազակէր, Արժան է ի տունս երթալ. զայս իբրեւ ասէր, որոց յուղարկն երթեալ էր, ի գնալն իւրաքանչիւր յիւր տուն, երիցս ազազակէին. Ողջ լեր, մեք զճեա քո կարգաւ, զոր բնութիւն տացէ, եկեսցուք. Նոյն:

Ապիսկոպոսք Վոստանդինուպոզոյ երբեմն այսպէս խնդային ընդ ինքնակալաց. Ինքնակալ ծնանիցիս, ինքնակալ մեռանիցիս: Օնոյն բանս եւ ինքնակալք շուրջ զպսակաւն ընդելուզեալ ահամբք պատուականօք կրէին:

Սեւերոս կայսր իբրեւ մեռանէր ասէ. Ամենայն ինչ իմ է, այլ ինչ ոչ օգաէ. Լղիոս:

Առ գին Ղղեքսանդրի բազում փիղիսոփայք խուռն եկեալ ժողովեալ էին, եւ լային ի վերայ արքունական դիականն: Ասէ ոմն ի նոցանէ. միթէ արդ չորից գրկաց վայր շատ իցէ, որում մեծանիստ մեծատարած երկիրս չեղել բաւական: Մեւս ոմն յարէ ի նոյն թէ երէկ մարթայր Ղղեքսանդրոս զորս միանգամ կամերն, ազատել ի մահուանէ, այսօր եւ զանձն ապրեցուցանել չէ ատակ: Այլ ոք երբորդ հոյեցեալ ընդ գերեզմանն ասէ. երէկ Ղղեքսանդրոս յոսկւոյ առնէր իւր գանձ, այսօր ոսկին արկ զՂղեքսանդր ի գանձանակ. Պոտիոս Ղղփոնսոս:

Ազոստոս կայսր ի վերջնում աւուր կենացն կօչեալ զբարեկամս իւր եհարց ցնոսա, թէ զգուսանութիւնն բարւոք ի գլուխ եհան, համարելով զկեանս իբրեւ զխաղ գուսանութեան, իբրեւ նոքա ետուն պատասխանի թէ բարւոք, հապա կայթեցէք, ասէ, հապա դովեցէք. Սուեանն. յԱւգ:

Ի ժամանակս Սեւերի կայսեր գտաւ դահեկան, որ կոչէր հերոս, որ թարգմանի զիւցազն, յորում զարմանալի ինչ կերպարանք նկարեալ կային. զլուխ փղի էր, եւ գրեալ ի վերայ Սեծանձնութիւն. լանջք դեղփին ձկան եւ գիր Սարգասիրութիւն. ձեռն կղբոյ հանդերձ գրով Բարեբարութիւն. ոտք արջոյ եւ առ նմին գրեալ Համեստութիւն: Պատկերն գիւցազին էր, որ նշանակէր զառաքինութիւնս որով զարգարին կեանք, զի առանց մեռանելոյ կենդանի լիցուք դովութեամբք եւ յարգանքք. Տրեբեղիոս:

Հենրիկեայ Բաւարիացւոց իշխանի երեւեցաւ ոմն որ գրէր յորմն զբանս զայս. Յետ վեց Հենրիկոս. նմա այսպէս թուեցաւ թէ յետ վեց աւուրց մեռանելոց իցէ, եւ վասն այնորիկ բազում հաւաստեալ պատրաստեաց զանձն ի մահ. բայց իբրեւ անցին աւուրք վեց եւ նա տակաւին ողջանդամ կայր, ասէ ընդ միտս իւր յետ վեց եւ թներորդաց մեռանիցիմ, վասն որոյ միւսանդամ սկսաւ զանձն յարգարելայլ եւ ոչ յայնժամ մեռաւ. նմին իրի յետ վեց ամսոց կարծեաց թէ վախճան լինելոց է կենաց իւրոց, եւ վերստին կազմ կայր իբր այն թէ ունիցի մեռանել. բայց եւ յայնժամ եւս եկաց մնաց կենդանի, ապա ստոյգ եդ ի մտի թէ յետ վեց ամաց մեռանելոց է. այլ իբրեւ անցին ամք վեց ընտրեցաւ կայսր. Գրեկերոս:

Փիղիպպոս մակեդոնացի ի մեռանել իւրում ասէ ցմեծամեծս իւր, Ոչ մեռանիմ զի զՂեքսանդրոս թողում զկնի իմ. Պղուտարք:

Ադուարդոս չորրորդ արքայ Անգղիայ ի մեռանել իւրում, իբրեւ ասաց ցնա սենեկապետ իւր, թէ շիցենք քեզ վիշաք զի զմեծապայծառ ապարանս եւ զստացուածս հանդերձեալ ես թողուլ, ասէ ցուցեալ զորդիան. Վոքա եզիցին ինձ փղոսկրեայ ապարանք, յորս բնակեցայց ցորչափ կայցեն. նոքին եւ ստացուածք իմ են, յորոց անջան եւ անաշխատ ընկալայց շահս:

Իբրեւ Վաղենոս անուանի բժիշկ զՆոտոնինոս Պիոս ի մահաբեր ինչ ակտէ զերծոյց, կայսրն զիւր թագ ետ պարգեւ բժշկին, եւ ասէ. Նոտոնինոս ինքնակալ Հռոմայեցւոց, Վաղենոս՝ ակտից:

Աթենացիք թագաւորաց իւրեանց զայս օրինակ խնդրէին կեանս. Յազթեոցես զթշնամիս զինուք, զքաղաքացիս մտօք, զեղջերուս ամօք: Իսկ Վակեղմոնացիք ասէին. Տացենք քեզ դիք ձեռն առատ, երկայնամիտ հաւատս եւ յերկար կեանս: Աւ Սենետացիք ասէին. Իշխանդ այնչափ ամք եղիցին քո, որչափ հնազանդեալք են:

Աուսիացիք եւ Վութք ի ծնանել մանկան լային եւ սգային, եւ ի մեռանելն խնդային. Ստորէոս:

Անծագօրն Սաղադինոս թագաւոր Ադիպտացւոց, իբրեւ հնազանդեցոյց ընդ իւրեւ զբովանդակ արեւելս, դողացոյց զարեւմուտս, նուաճեաց զՍիա եւ սասանեցոյց զամենայն տիեզերս, տեսեալ զանձն մերձ ի մահ, հրաման ետ զի իբրեւ փշիցէ շողին, զնեքքին պարեգօտ իւր անդէն հարեալ ի նիզակ շրջեցուսցեն ընդ քաղաքս եւ ընդ դեւղս, եւ քարոզ կարգայցէ բարձր բարբառով թէ. Սաղադինոս հարուած արեւելից, տէր եւ իշխան Սիացւոց, ահն եւ երկելզ ամենայն ազգաց, յետ ամենայն յաղթութեանցն զորս ստացաւ ի պատերազմունս, այժմ յերեսաց մեծի տիկնոջն մահու խոյս տուեալ չառնու ինչ ընդ իւր, բայց զազանելիս զայս, որով ծածկել մարթացի ի գերեզմանի. Ննտ:

Վրսերքսեայ գումարեալ էր անթիւ անհամար գունդս զօրաց, զորս իբրեւ խաղացոյց ի գլուխ լերին յարասուս հարեալ յոգւոց եհան եւ ասէ. յետ ամաց հարիւրոց ոչ դք ամենեւին կայցէ մնայցէ, ամենեքին մոխիր լինիցին. Պղուտ:

Փիղիպպոս մակեդոնացի իբրեւ եմուտ ի կռուանոցն յորում Յոյնք կռուէին, եւ իբրեւ յոգորելն յերկիր անկանէր, տեսեալ զպատկեր մարմնոյն տպաւորեալ յաւազի, եւ զմտաւ ածեալ թէ որչափ սակաւ վայրս գրաւեալ ունէր, ասէ ընդ խաղ. Ո՞քանի սակաւիկ վայր վիճակեցաւ մեզ ի բնութենէ, եւ համօրէն զամենայն տիեզերս ցանկամք ունել:

Վրաքմանք իբրեւ խնդրեցին յՂեքսանդրէ պարգեւ անմահութեան, նա ետ պատասխանի թէ չէ հնար նմա զիրս զոր խնդրեն շնորհել, զի եւ ես ինքն, ասէ, մահկանացու եմ. եւ նոքա ասեն, ընդէր ապա մոլիս կողիս դու ցանկութեամբ տիրելոյ, եւ բուռն լինիս, որպէս եթէ չիցես երբեք մահու հարկ հարկանելոց:

Վկարիչք զի զմահու բնութիւն յայտ առնիցեն, զնա մերկ յանդիման կացուցանեն, զրկեալ ի լուսոյ, պակասեալ ի լսելոյ եւ ջահ ի ձեռին: Արկ վասն այնորիկ, զի ուսուցանիցեն եթէ աստի մերկանդամ պարտիմք ելանել. զրկեալ ի լուսոյ յայն սակս, զի ում եւ է ընդհարկանիցի, եւ առանց ակն առնլոյ ընկիծիցի: Պակասեն եւ լսելիք, զի աղաղակաւ ոչ խոնարհի, եւ ոչ գայ ի հաւան արտասուօք, եւ առաղերս մարդկան իբրեւ զվէմ սալացեալ խլացեալ կայ. նմին իրի եւ ի Պերիկլէայ Ն.թենացւոց զօրավարէ անուանեալ կոչի Նարոպս, որ չգայ յաղերս: Իսկ ջահ զոր ի ձեռին կրէ, զայրիչ եւ աւերիչ զօրութիւնն նշանակէ, զի մահ զամենայն ինչ գեանոյ հաւասարէ: Անմիտս կոչեաց Ղ.գրիգենտինացիս հին ժամանակն, զօրոց ասի. Ն.գրիգենտինացիք շուայտին որպէս թէ միշտ կենդանի լինելոց են:

Ազգիոնսոս զօրաւար կաղաքրիայ Ազուարդեայ որդւոյ իւրում ետ ասպար սակի եւ ի վերայ նորա կամար, յորում անասունք չորք նկարեալ էին. առաջինն էր եղջերու հանդերձ գրով թէ ՅԱՍՏՈՒԾՈՅ ԵՐԿԻԲ, զի եղջերու յորոտմանց եւ ի փայլատահանց երկնչի: Արկրորդն էր արագիլ եւ գիր ի վերայ թէ ՋՏԾՆՕՂԱՄԵԾԱՐԵԱՅ, զի արագիլք զծնողսն իրրեւ ծերանայցեն, ի վերայ թիկանց կրեն եւ ջամբեն նոցա: Արրորդն էր կրայ գրով հանդերձ թէ ՎԱՄՆ ՏԱՆ ՅԱՌԱՋԱԳՈՅ ՆՈԳԱ, զի կրայ զիւր տուն հանապազ ընդ իւր կրէ: Չորրորդն էր գեղվին եւ էր գրեալ ի վերայ թէ ՍՊԵՍԵՒՈՐՈՒԹԻԿՆ ՀԱՐԿԱՆԻՋԻՐ. զի գեղվին զայլ ձկունս բարեբարելովն եւ չվնասելով յինքն արկանէ, յառաջագոյն ազդ առնէ նաւավարաց յորժամ ստոստիցէ եւ խաղայցէ, եթէ ձմեռն ի վերայ կայ. իսկ զորս ընկղմիցինն ի վերայ թիկանց բառնայ տանի: Իսկ ի վերայ ամենայնի այսոցիկ գրեալ էր ԱՐԱԳԵՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ԳՆԱՅՔ. այս ինքն է, այնպէս վաղ ծերանալ մարթասոցք եւ երկայն կեանս կեալ. կամպոս:

Բարաքսիղոս փիղիստփոս իրրեւ մեռանէր, բազումք ի ծերակուտէն ստէպ գային եւ ողբային, իսկ նա ասէր եթէ վասն չորից ուրախ եմ: Ասխ վասն բարւոյ խղճի մտաց վկայութեան. երկրորդ զի տեսանէր զայնչափ արս որ զիւր մահ սգային. երրորդ զի զամս վաթսուն քաղաքին եւ այլոց օգուտ լինել փոյթ յանձին կալաւ: Չորրորդ զի հանապազորդ եւ ստէպ էր ի մեծարել զայլս որոց պարտէր, ապա յաւել ասել թէ այսօր թուի ինձ թէ ի կեանս գամ. Ղայերափոս ի վարս փիղ:

Ապամինոնդաս զմահ արանց քաջաց հանգիստ կոչեաց, իսկ զվատացն եւ զանպիտանեաց աշխատութիւն եւ ջան:

Պղատոն սովոր էր ասել. Աեանք մեր նման են բոցոյ վշոյ, որ ի սակաւիկ ինչ հողմոյ շիջանի:

Փիղիսպպոս արքայ Մակեդոնացւոց իբրեւ եհարց զիղծս թէ զիարդ մարթիցի ծերանալ, եւ պատասխանի, զգոյշ լեր ի շորից ձիոց: Օչայս լուեալ հրաման եւ, զի մի ոք շորիւք ձիովք վարեսցի. ապա իբրեւ լուաւ թէ լեառն մի է, որոյ անուն կոչիցի շորք ձիք, կործանեաց եւ հարթեաց զլեառնն: Այլ Պաւսանիաս յերախակալ անդր սրոյն, որով սպան զնա, թագուցեալ ունէր զհրաման պատասխանւոյն: Բայց մարթ էր մեկնել զհրամանն, եթէ կամիս հասանել ի չափ հասակի զգոյշ լեր ի շորից ձիոց Բատղիան: Օ ի զԼստղիկ, որպէս պւեափկոսք ասեն, շորք կարապք կրեն. եւ ըստ Բեռնարդեայ զեղխութեան կառք շորիւք անուօք շրջանակի, որկորսութեամբ որովայնի, անամօթութեամբ բնկերաց, վափկութեամբ հանդերձից, դատարկութեամբ եւ քնով:

Օ ենոն փիղիսոփոս իբրեւ եհարց զհարցուին, թէ զիարդ մարթ իցէ բարւոք կեալ, եւ պատասխանի թէ շարց զմեռեալս, եւ ի նոցանէ ուսանիցիս թէ զինչ առնել պարտ իցէ:

Անտիսթենէս յաշակերտացն հարցեալ թէ զինչ իցէ մահ, երկուս շրջանակս արար, եւ հաստատեաց թէ այս է մահ: Այս է մեկնութիւնն, մի շրջանակն մարմին է, որ ուստի սկիզբն առնէ, անդէն կատարի, այս ինքն է յերկրէ յերկիր. երկրորդ շրջանակն հոգի է, որ նոյնպէս զիւր սահման խնդրէ:

Աբրաթացւոց թագաւորք ի լանջս իւրեանց կրէին զմահ, այսպիսի ինչ զրով. Մայր բարեաց, մօրու չարաց: Առ Աղիւթացիս ի պսակել զթագաւորս ցանէին հող եւ մոխիր, եւ միանգամայն ասէին զբանս զայսոսիկ. Այս է քո սկիզբն, տես մի ամբարտաւանս ինչ զնայցես: Յուստինոս ինքնակալ պատուէր տուեալ էր ցանել փոշի ի մահիծս իւր, եւ արտասուելով ասէր իբրեւ ելանէր յանկողին. Այժմ ննջցից ի հող, զի հող իսկ եմ, եւ ի հող դառնալոց. Աղերենոս:

Ան Աղբանացիս եթէ արու մանուկ ծնանէր, մերձաւորք նորա բերէին զէնս եւ զարդս, եւ ասէին. Ա առեսջիր դռքզք, մանուկ դու հէք եւ թշուառական, զի ի պատերազմ եւ ոչ ի հանդիսս եկիր. Արիսպինիանոս :

Ապամինոնդաս զօրավար Թեբացւոց կարեվէր խոցեալ, իբրեւ համօրէն քաղաքն զմարմնով նորա խռնեալ կայր, զվարձուց վաստակոց հարցեալ ասէ. Չկամիմ այլ ինչ, բայց զսիշատակ իմ: Այնպէս եհարց հաւաստեալ թէ վահանն ողջ կայցէ, եւ իբրեւ լուալ թէ տակաւին կայ, ասէ. այժմ ուրախութեամբ մեռանիմ ի դորա զերծանել, զոր օրինակ ուրախ էի մինչեւ դա զերծ էր: Ապամինոնդաս զօրաւար ձեր այժմ սկսանի կենդանի լինել, զի այդպէս մեռանի. Վիւկոստեն:

Վեմոկրիտոս փիղիսոփոս իբրեւ մտիթարեւոց էր զՎարեհ արքայ, որ տրտում էր վասն մահու կնոջն, խոստացաւ նմա թէ տալոց է միւսանդամ կեանս մեռելոյն, եթէ միայն երեք արք գտցին, որոց չիցէ երբեք թուխ հանդերձս զգեցեալ. եւ իբրեւ խնդրեցան երեք ընդ ամենայն աշխարհն Պարսից եւ ոչ գտան, յայնժամ ասէ ցթագաւորն. Տեսանես, արքայ, զհարդ անլուկ իցէ ամենեցուն օրհասին հարկ. չէ արժան լալ, յորմէ չէ մարթ խուսափել. Աոյն եւ Յուզիանոս:

Փերդինանդոս արքայ, իբրեւ իմացաւ յսիդորայ թէ մերձ է ժամ մահուն, զգեցեալ զհանդերձս արքունականս ի տաճար շքաւ, եւ անդ կացեալ առ սեղանոյն զծիրանիսն, զգաւազանն, զթաղն, զմանեակն եւ զմատանին եւ զամենայն զարքունի հանդերձս ի բաց մերկացեալ դնէր, եւ ասէր այսպէս. Տէր, զիչխանութիւն թագաւորութեանս զոր ի քէն ընկալայ, այդրէն ի քեզ դարձուցանեմ, զետեղեա զիս ի մշանջենաւոր լոյսդ. եւ այնպէս մեռանէր. Ապոնդանոս:

Պատումէս փիղաղեղփոս Վղխատացւոց թա-
գաւոր ի մէջ խրախուժեանց զմեռելոյ գանգ հանա-
պազ առաջի ունէր, եւ կամէր թէ պաշտօնեայքն զայս
բանս ասէին ցնա. Հայեաց, արքայ, եւ զմտաւ ւժ-
եթէ այսպիսի երբեմն լինելոց ես. Պղուտար:

Քսենոփոնտեայ իբրեւ զոհս մատուցանէր, գոյժ
ետուն եթէ որդի նորա անդրանիկ անկաւ ի պատե-
րազմի, զարքունի պատկն զառաջինն ի բաց դնէր,
եւ խնդրէր եթէ որդունակ անկաւ, իբրեւ լուաւ եթէ
քաջութեամբ ի պատերազմէն վասն աշխարհին ան-
կեալ է, միւսանգամ եղ զթագն ի դլուխ, եւ վկայ-
եաց թէ ուրախութեամբ մեծաւ քան արամութեամբ
յորդեալ զեղաւ. Ղիւկոստէն:

Բաւիղիոս եպիսկոպոս մինչ դեռ կենդանի էր,
եւ շինել իւր գերեզման, այլ անկատար եթող խոր-
հրդով. իբրեւ յաւուրս տօնից ստիպէր արկանել
զհանդերձս եպիսկոպոսութեան, կարգեալ էր պատա-
նեակ մի, որ կայր եւ աղաղակէր, թէ Հայր, զմտաւ ւժ-
զմահ, եւ տուր հրաման կատարել զգերեզման քո.
Մարդիակ:

Օկարողոս մեծ իբրեւ ի յետին ժամ մահուան
հասեալ էր, հարցին իւր սեպհականք, թէ զինչ
նշանս կամիցի դնել ի վերայ գերեզմանին, եւ պա-
տասխանի թէ միայն մահու նշանք քանդակեսցին,
զի սա իսկ է, ասէ, տիկինն այն հարուստ, որ զամե-
նայն զիմ յաղթութիւնս յոչինչ զարձոյց, եւ ինձ որ
յաղթօղն էի, յաղթեաց, այսպիսի ինչ գրով. Միայն
մահ զամենայն հաւատարէ. Ղրիգոր. Տուր:

Ղիոզենէս շնական իբրեւ երբեմն խնամով զգե-
րեզմանս որոնէր, ուր մեռելոց սկիւրտին երեւէին,
պատահեցաւ նմա Վղքսանդրոս մեծ, եւ իբրեւ ե-
հարց թէ զինչ ի մէջ մեռելստուոց գործիցէ, ասէ. Ի
մէջ այսչափ բազմակոյս սկերաց ի խոյզ արկեալ
խնդրեմ զհօր քո փիղիպպեայ զգանգ, այլ չկարեմ
յայլոց ընտրել. Ղայերտիս:

Մաւսոնիոս փիղիսոփոս հարցեալ թէ որով օրինակաւ մարթիցէ ցվերջին օր յաջողութեամբ հասանել, ասէ. Ահաց, որպէս թէ վաղիւ մեռանելոց իցես. Սարդ:

Աղփոնսոս Երազոնացւոց թագաւոր ասի թէ ի նշանակ ունէր պսակ, շուրջ զպսակաւն կայր այսպիսի ինչ գիր. ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ԱՌՆԵՒ, ԱՅՂ ԱՍՏՈՒԱԾ ԻԱՂ ԱՌՆԵՒ ԴՆԵԼՈՎ ԵՒ ՄԻՒՍԸՆԳԱՄ ԱՌՆԼՈՎ: Ի ճակատու պսակին գոյր խնձոր ի զմրխատէ, այսպիսի բանիւք թէ ԱՄԱՐԱՆԻ ՀԱՍԱՆԵՄ, ԱՇՆԱՅՆԻ ԿՈՂՈՊՏԻՄ, ՉՄԵՐԱՅՆԻ ԿՈՐՆՉԻՄ. եւ ձեռն որ ունէր ասղանուով զդունդ երկրի, այսպիսի բանիւք թէ ՋՆՈՒՐԲ ԹԵԼԷ ԿԱԽԱԼ ԿԱՅ:

Մահու նշանակ է եւ ճրագ վառեալ, գրով, թէ ՄԻՆՉ ԱՅԼՈՑ ՕԳՏԵՄ, ԵՍ ԻՆՔՆ ՍՊԱՌԻՄ. Տօրպոկիոս:

Իրաքմանք ընդ ժամանակս ժամանակս սովոր են առարել միմեանց տերեւս դօսացեալս այսպիսի բանիւք. Այնպիսի են կեանք մարդկան, որպէս տերեւոցն են. Դրեքսեղ:

Յովհաննէս զօրաւար Կղիւխացւոց ունէր նշանակ զշուշան ծաղիկ գրով, թէ ԱՅՍՕՐ ԵՄ ԻՆՉ, ԵՒ ՎԱՂԻՒ ԸՉ ԻՆՉ: Ուստի ի գերեզմանս նախնեաց ընկենուին շուշան եւ վարդ. Տեպոտիոս:

Աղյնպէս սովորութիւն է գնել երկուս գանգս, ընդ միումն գաւազան եւ թագ, եւ ընդ երկրորդին խառն մանգաղակ եւ բահ, եւ գիր թէ ԴՈՔԻՄԲԲ ԸՆՏՐԵԱ ՉՔԱԳԱՒՈՐՆ Ի ՇԻՆԱԿԱՆԵ: Պարսիկք տային քանդակել ի գերեզմանս արեգակն, սովին բանիւ թէ ԾԱԳԵՍՅԷ: Ըին Եգիպտացիք զփիւնիկ հաւն յետ օրհասին տակաւին կենդանի նկարէին, այսպիսի բանիւք թէ ԹՈՒԱՆԻՑԻ:

Ասի թէ թռչուն մի է, որ զմի միայն օր կեայ, առաւօտու ծնանի, եւ երեկոյին մեռանի. այլ շրջի ընդ բոյնս այլոց հաւուց եւ զմիոյ միոյ բարբառս եւ

զերգ ուսանի, եւ երգէ մերթ իբրեւ զկարապ եւ մերթ որպէս զսոխակ եւ զասպուճակ: Այս թուշուն մարթի լինել օրինակ մարդոյ որ վաղ մեռանի, զբով թէ 02 ԵՐԿԱՅՆ ԱՅԼ ԲԱՒԱԿԱՆ:

Ի վերայ շիրմին Պաւտանեայ նկարեալ էին շունք բազումք որ հեաամուտ լինէին ազգի ազգի երէոց ընդ դաշտս եւ ընդ մայրիս, եւ այս բան. ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՒՆ: Օջի որսորդութիւն է կեանք մարդկան, եւ բազում անգամ իբրեւ կամիցիմք ըմբռնել, մեք ի բուռն անկանիմք. Աիրիկա:

Ազիպտացիք առ ի յայտ առնել զայն որ վստահ իցէ յիրս այսց կենաց, եւ զյոյս իւր ի կորստականս գնիցէ, նկարէին այր որ ունիցի ի ձեռին զենքեղիս ձուկն. զի աշխարհի իբք իբրեւ զենքեղիս ձուկն են որ զերծանին ի ձեռաց, եւ բռնել զնոսա չէ հնար: Այլք ի նշանակել զկեանս մարդկան նկարէին նաւ, զորոյ զամիան, զուղղիչ նաւին, ունիցի Աստուած. Պիերիսու:

Սպարտացիք զմեհեան գից մահու շինեցին ի սպիտակ կճոյ, յորոյ դրանդան գրեալ էր ՄԱՀՈՒ ՄՕՐ ՄՇՏԵՋԵՆԱՒՈՐՆ ԵՐԱՆՈՒԹԵԱՆ. Պաւսանիաս:

ՁԻՆՐԴ ՊԱՐՏ ԻՅԷ ԱՌՆԵԼ ՁԳԻՐ Ի ՎԵՐԱՅ
ԳԵՐԵՉՄԱՆԱՅ

Պիր ի վերայ գերեզմանաց կամ ճառ է եւ կամ երգ. եւ պարտի ունել զանուն մեռելոյն, զազգ մահուանն, եւ զազգէն եւ զտոհմէն, զնշանաւոր ինչ գործոց եւս պարտ է յիշատակել: Ի վերայ գրոյն առ հասարակ այս բանք գնին. ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵԾԻ ԵՒ ԲԱՐԵՐԱՐԻ կամ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ. Իսկ ի ներքոյ գնին անուանք նոցա, որոց զգիրն յօրինեալ իցէ:

Մարթի զոյնօրինակ գիրս առնել ազգի ազգի օրինակաւ. զի մերթ լոկ պատմի, թէ ո՞ կամ որպիսի դք իցէ, որ անդն թաղեալ կայցէ. եւ մերթ ինքն մեռեալն սկիզբն առնէ խօսել ընդ անցաւորի կամ ընդ այնմ որ ընթեռնու. է զի վէմն կամ քար խօսի զնմա-

նէ զոր ամփոփեալ ունի. եւ է եւս զի գործիք կամ կազմածք խօսին, որք ի գերեզմանս մեռելոց քան զակին կամ նկարին. զի սովոր էին յառաջին ժամանակս իւրաքանչիւր զիւր գործի առընթեր քանդակել, հովուի՝ ցուպ, նաւավարի՝ ղեկ, հողագործի՝ արօր, զօրականաց՝ գեղարդն կամ նիզակ, որսորդաց՝ բաղէ կամ շուն, եւ այլոց այլեւայլ ինչ. յայժմու ժամանակս դնին նմանութիւնք ինչ կամ նշանակք, որպէս զօրաւարաց՝ արծուի կամ առեւծ, քահանայից՝ փականք, ճարտարախօսաց՝ շանթ, պետիկոսաց՝ կարապ:

Արբեմն դնի ի վերայ գերեզմանի միայն նկար ինչ կամ նշան հանդերձ գովութեամբ կամ ճարտար ինչ բանիւք. որպէս եթէ կամփոյս զթագաւորի ուրուք գով յառ իւր հնազանդեալս յանդիման կացուցանել, մարթիս նկարել հաւալուսն որ արեամբ իւրով դրդիցէ զձագս իւր, այսպիսի գովութեան բանիւ թէ վ.Ա.Մ. ՕՐԻՆԱՅ ԵՒ ՀՕՅԻ. կամ արծուի տարածեալ զթեւս իւր հանդերձ գրով թէ ԸՆԴ ՀՈՎԱՆԵԱՒ ԹԵՒՈՅ ԻՄՈՑ. կամ առեւծ որ ննջիցէ աչօք բացօք, եւ այսպիսի ինչ բանս. ՈՐ ՊԱՀԷՆ ՈՉ ՆՆՋԻ:

Օչայս ինչ պարտ է գիտել եթէ բանք որ ի վերայ գերեզմանաց դնին, պարտին լինել լի վարդապետութեամբք եւ խրատու բարոյից:

Գիր գերեզմանին Վիրդիղեաց իշխանի պետիկոսաց, զոր ինքն կանգնեաց մերձ ի մահ, հայեցեալ ի գիրս իւր զորս գրեալ էր զանդիորդութենէ, զմշակութենէ եւ զլինեաց, այսպիսի ինչ է.

ՀՈՎԻՒ, ՀԵՐԿԱՐԱՐ, ՀԵԾԵԱԼ, ԱՐԱԾԵՅԻ, ԴԱՐՄԱՆԵՅԻ, ՅԱԳԹԵՅԻ,

ՁԱՅԾԻՍ, ՁԱՆԴՍ, ՁԹՇԱՄԻՍ, ՏԵՐԵՒՈՎ, ՄԱՆԳԱԼԻ, ՁԿՈՒՔ:

ՅԱՅԾԵԱՅ ԱՐՕՏԱԿԱՆԱՅ, ՅԱԳԱՐԱԿԻ ՎԱՐԵԼՈՅ, Ի ԹՇԱՄԻՈՅ ՆՈՒԱՃԵԼՈՅ

ՈՉ ԿԱԹՆ, ՈՉ ՀՈՒՆՉՍ, ԱՒԱՐ ԵՒ ՈՉ ՄԻ ԲԱՐՉԻ:

Եւ Ովիդեայ .

ԱՍՏ ԵՍ ՈՐ ԱՆԿԵԱԼ ԴՆԻՄ ՈՐ ԵՐԳԷՒ ԶԵՐԳՍ ՍԻ-
 րՈՅ ԽԱՆԴԱՂԱՏԱՆԵՑ
 ԻՄՈՎ ՀԱՆՃԱՐՈՎ ԿՈՐԵԱՅ ՆԱՍՈՐ ՊԻԵՏԷՍ

Ի վերայ գերեզմանին Սարդանապաղայ էր ձեռն
 քանդակեալ, որ որպէս թէ առնիցէ զղրդիւն եւ սաւ-
 սափիւն մատամբն .

ՍԱՐԴԱՆԱՊԱՂՈՍ ԱՆԱԿԻՆԴԱՔՍԵԱՅ ՈՐԴԻ
 ԶԱՆՔԻԱՂԷՍ ԵՒ ԶՏԱՐՍՈՐ Ի ՄԻՈՒՄ ԱՒՈՒՐ ՇՅԵԱՅ
 ԿԵՐ ԱՐԻ ԽԱՂԱՍՋԻՐ
 ԱՅՆ ԱՄԵՆԱՅՆ ԶԷ ԻՆՉ ԱՒԵԼԻ ՔԱՆ ԶԴՂԴԴԻԻՆ ԵՒ
 ԶՍԱՒՍԱՒԻԻՆ ՄԱՏԱՆՑ

Եւ Մաքսիմիղիանու կայսեր ի վիճենա այսպիսի
 է գիր ի վերայ գերեզմանի .

ՄԱՔՍԻՄԻՂԻԱՆՈՍ ԿԱՅՍԻ ՄԻՇՏ ԱՒԳՈՍՏՈՍ
 ՅԵՐԿԵՒՑ ԱՅՍԻ ԱՌԱՔԵԱԼ
 ՄԻՒՍԱՆԳԱՄ ՅԵՐԿԻՍ ՏՈՒԱԻ
 ՈՉ ՄԵՌԱԻ ԱՅԼ ՄԵԿԵՑԱԻ

Ե Գ Լ Ո Ւ Խ

ՎԱՄՆ ԳՈՀՈՒԹԵԱՆ ՃԱՌԻՑ

147. ԳՈՀՈՒԹԵԱՆ ճառ այն կոչի, որով զք վասն
 երեւելի ինչ երախտեաց զոր ընկալեալ իցէ, շնոր-
 հակալ լինիցի ումեք. որպէս Մատնիոս ճարտարա-
 խօս պւէտ Գրատիանոսի կայսեր, որ երբեմն իւր ա-
 շակերտ էր, շնորհակալ եղեւ, զի զնա բղեշխ կացոյց:

Արիս ինչս պարտ է ի գոհութեան ճառսն առ-
 նել. նախ զուրախութիւնն որ ի բարերարութենէ ան-
 տի լինեալ իցէ, յայտ առնել. երկրորդ զերախտեացն
 զոր ընկալաւ զմեծութիւն ստուարացուցանել. երրորդ
 խոստանալ թէ գոհացող լինելոց է եւ հանապազ ի
 մտի ունելոց զերախտիսն :

Սկիզբն գոհացողութեան ճառիցն յայտնի եւ
 յստակ պարտի լինել, եւ զնշանակ գոհացող մտացն

պարտի ունել որ յորդիցէ իմն . եւ զայն մարթ է առնուլ նախ յերախտեացն մեծութենէ , զոր խոստովան լինիցիս թէ կշիռ գտակաւ պատմել չես կարող : Արկրորդ եթէ յամեալ ինչ իցէ , յողոք անկեալ աղերսիցէ վասն երկարագոյն լուութեանն յեա զերախտիսն ընդունելոյ :

Իսկ ի հաստատութեանն նախ ստուարացուցանել եւ յայտ ածել պարտ է զբարերարութեանն մեծութիւն . երկրորդ յարգեալ զովել զերախտաւորն եւ զբարերար :

Ստուարացուցանել չորիւք օրինակօք մարթի . նախ յայնմանէ որ բարերարէ , եթէ թագաւոր դքիցէ , կամ ի մեծ ինչ աստիճանի կացուցեալ , զի յերախտագործին մեծութենէ ածէ երախտեացն առաւելութիւն . երկրորդ յայնմանէ որում բարերարէն , եթէ կարօտելոյ առնին երախտիքն կամ անարժանի կամ թէ առ բազումս յանկիցէ . երրորդ ի բուն իսկ երախտեացն որ լինին , եթէ համեստ իցէ եւ պատշաճական , ցանկալի եւ դժուարին . չորրորդ ի հանգամանացն եւ յօրինակէն , եթէ ոչ ահամայ այլ մտադեւր առնիցէ որ առնէն . ոչ աղաչեալ յումեքէ , այլ ինքնակամ կամօք . ոչ եթէ հասուցանիցէ զերախտիսն , այլ առնիցէ . ոչ յամր ինչ , այլ յանկարծակի վաղվաղակի . ուստի հին ինչ առակ է թէ Արկիցս տայ , որ արագն տայ . այնպէս զի երբեմն եւ վաղվաղակի հրաժարելն բարերարութիւն համարի , քան օր ի յօր առնել եւ մաշել զինդրօզն : Ուստի եւ այն զեզեցիկ զիւր է , զոր որ զրեացն չէ յայտ , սակայն կարի հին է .

Եւ դրունս կայսերնստեալ կամ զցայդ եւ զցերեկ ,

Եւ շնորհի մուտ զի զոր ունիմն խօսեցայց :

Երթայք , բարերար դիք , եւ ձերով անուամբ

Գանեայ ասասջիք ցկայսր .

Օ ի թէ խօսել յունկն կայսեր չեմ կարող ,

Գէթ եկեսցէ դք , որ ասիցէ ցիս , ի բաց գնա :

Իսկ ի վերջին բանս ասիցես թէ յիշատակ երախտեացն չէ երբեք եղծանելոց, այլ իբրեւ զբեւեռ հեծանի, այնպէս բեւեռեալ են. որպէս Աւստինոս ցՎրատիանոս ասէ թէ Ամենայն ուրեք հանդիպին երախտիքն, ի տաճարի, ի հրապարակի, յարքունիան, ի պաղատան, եւ ի տան: Այնպէս եւ Սամեթրախոս առ ինքնակալ Զուղիանոս ի փոխարինել զչնորհսրն Զայս ինչ, ասէ, քեզ խոստանամ, եւ հանապաղ արարից, զի ոչ ի խրատսն տալ՝ զճշմարտութիւնն, ոչ ի հասանել ի վերայ վշտաց՝ զանձն, եւ ոչ ի ջան յանձն առնուլ զյօժարութիւնն կասեցուցից:

Վասցես եւ ի քսաներորդ գիրսն Ղիւիոսի զՍաղունաինացւոց ճառսն, որ շնորհակալ եղեն Հոռոմոց ծերակուտին, զի ի նոցա աղագս ետուն պատերազմ ընդ Անիւրաղայ: Այլ ի յուզութեան մարտին զՎոյեքայ արքայի առ Շիղայ ճառսն. եւ զուրախութեան թուղթն, որով Տուղիոս շնորհակալ լինի Սարկեղեայ, վասն պաղատանաց զբոյն նմա ընդ նորա ձեռն շնորհելոյ:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՕՐԻՆԱԿՔ ՎԼԵՆ ԳՈՀՈՒԹԵԱՆ ՃՆՈՒԹ

Առանց գոհացողութեան ոչ խունկ եւ ոչ զմուռս հաճոյ են Աստուծոյ. Տրիամեզ:

Արախտիք իբրեւ ոտնակապք են եւ իբրեւ սուկեղէն շղթայս, որով կապին ոգիք եւ մտանին:

Որ ի մեծամեծ ինչ վելշաս ի թիկունս հասանիցէ, կամ մեծամեծ ինչ բարիս այլում առնիցէ, փոխանակ Աստուծոյ համարի, եւ նմա որում բարեբարեացն, յԱստուծոյ տեղի է. Աիկ:

Աշխարհս տուն է մարդոյ, եւ երկինք ձեղուն, որ այլազգ ի տուրնջեան ծագեն, եւ այլազունակ ի գիշերի. Սենեկա:

Ոչ միայն պիտոյից մերոց հոգացաւ Աստուած, այլ եւ անշափ եւ անպոյման սիրիմք ի նմանէ. Նոյն:

Արախտիք զոր խտտիւ զք առնիցէ, նման են քարուտ հացի. Նոյն:

Արկիցս տայ, որ վազվազակին տայ. Նոյն:

Շնորհք առանց ստրջանաց պարտին լինել. Թէսփրաստ:

Առակք են թէ յամբ շնորհք անշնորհաւոր շնորհք են. նոյնպէս ասի յառնելն երախտիս լեր կոյր, յընդունելն լինիջիր տեսող:

Արժանի է զի խաբիցի, որ ի տալն զառնուլն զմտաւ ածէ:

Առաւել հաճոյ է, որ դիւրան, քան որ լի ձեռամբ շնորհիցի:

Ձեք ինչ որ այնպէս ծանրազնի գնիցի, որպէս որ աղաչանօքն գնիցի:

Ի ձեռս դեղփեանն Ապողոնեայ երեք շնորհք էին, որոց մին ունէր քնար, երկրորդն փող, եւ երրորդն սրինգ, որ զայս ինչ նկատէին, եթէ ճշմարիտ շնորհակալութիւն բարբառ պարտի ունել եւ զերախտիսն զոր բնկալաւ, ամենայն ուրեք երգել եւ հռչակ հարկանել, եւ զբարերարութիւնն եթէ այլով իւիք չիցէ ձեռնհաս, գոնեա հռչակաւ պարտի փոխարինել. Պիերիոս:

Շնորհաց նշանակ երբեմն վարդ էր, զի զոր օրինակ սա զբզկս սատակէ, նոյնպէս եւ շնորհք զապախտաւորութիւն. Նոյն:

Պիւթագորաս հարցեալ թէ որով օրինակաւ կարիցեն մարդիկ դիցն հանգոյն կեալ, ետ պատասխանի, եթէ զճշմարտութենէ գիրկընդխառն լինիցին, եւ ամենեցուն գուն գործիցեն բարեգործել. Աղիանոս:

Աղեքսանդրոս մեծ պարգեւեաց ուսեմն քաղաք մի, որոյ երկուցեալ ի նախանձուէ, ասէր թէ այն չէ պատշաճ իւրոյ բախտին, որում ետ պատասխանի Աղեքսանդրոս. Չինդրեմ ասէ, զինչ քեզ վայել իցէ առնուլ, այլ զինչ ինձ տալ:

Անաքսիղաւոս հարցեալ թէ զինչ իցէ որ ի
 թագաւորութեան առնիցէ երանելի, ասէ. Չյաղթել
 բարերարութեամբ. փաւոր:

Աչ միայն առ մարդիկ, այլ եւ առ անասունս
 իսկ երախտահատոյցք եղեն Վթենացիք. զի հրա-
 ման ետուն եթէ ջորիք, որոյ բնգերկար վաստակեալ
 իցէ, իբրեւ մերձ ի մահ լինիցին, արձակեսցին ի կա-
 պանաց զի արձակ ճարակեսցին:

Պանդոնիոս զօրավար Հռոմայեցւոյ, իբրեւ յաղ-
 թութեամբ գառնայր, երիս բրգունս կամէին կանգ-
 նել նմա որդիքն, իբրեւ նա աղաչեաց զի մի այնպիսի
 ինչ առնիցեն, նոքա կանգնեալ երիս բլրածեւս պա-
 տերազմի, յաղթութեան եւ ձաղութեան, յաւելին
 մեւս եւս շորբորդ իբրեւ որում արհամարհիցէ զփառս.
 Հմտտ:

Ազեսիղաւոս արքայ իբրեւ եկն տեսանել զՎ-
 պեղէս, որ խօթացեալ էր, պատճառանօք, որպէս
 թէ ուղղիցէ զբարձն, մեղմով եղ սկի բնդ սնարին.
 յետ սակաւ միոյ իբրեւ մեկնեալ էր թագաւորն,
 եկն մանուկն եւ ի բաց առեալ զբարձն իբրեւ զխրչ-
 տեակն տարածանել կամէր, գտեալ զսկին աղաղա-
 կեաց թէ, Տէր, տէր, տես զինչ ի մահի՞ճս քո
 գտաւ: Ասէ Վպեղէս լուռ լեր, այս են գողօնք թա-
 գաւորին. ասէ պատանեակն. զի՞նչ, նա յորդորեալ
 ի բարերարութենէ կամեցաւ կարօտութեան քում
 օգնական լինել, եւ դու գողօնս ասես. եւ կարի
 իսկ քաջ, ասէ Վպեղէս, զի թագաւորն գովին զմեզ
 գողացաւ, եւ յախտեան ինքն յանկոյց: Օ ի գի-
 տէր Ազեսիղաւոս եթէ յոյժ ազնուագոյն է զայլս մե-
 ծացուցանել, քան ինքն մեծատուն լինել, եւ թէ
 չէք շքեղագոյն քան երախտիս առնել առն բարոյ:

Օ. Գ. Լ. ՈՒ Խ

ՅԱՂԹՈՒԹԵԱՆ ՃԱՌՔ ԵՒ ՈՒՐԱԽԱԿԻՑՆ
ԼԻՆԵԼՈՅ

147. ՅԱՂԹՈՒԹԵԱՆ ճառ է խնդակից լինել ու մեք վասն զյաղթութիւնն ստանալոյ:

Յօրինուած այսպիսի ճառից պարտի լինել այսպէս, սկիզբն կամ յառաջաբանն լինիցի պայծառագոյն եւ ծաղկալից, լի ուրախութեամբ. եւ առաւել յանկարծն բարւոք թուի քան մեղմախառնն, թէպէտ եւ այն վայելուչ է ըստ ասողին իմաստութեան:

Ի հաստատութեան ասացի նախ պատերազմին հարկ, երկրորդ դժուարութիւն, երրորդ արգարութիւն ի յանձնն առնուլ, յօժարութիւն ի պատրաստելն, քաջութիւն ի մղել զմարտն, եւ արագութիւն ի զլուխ հանել. չորրորդ պարտ է մի ըստ միտջէ ի կարգ արկեալ թուել զգիրութիւն եւ զօգուտ յաղթութեան, որ զժողովուրդն յերկիւղէ, զքաղաքս ի խախտելոյ եւ զնահանգս յաւերածոյ եւ ի կործանմանէ ապրեցոյց: Գովեցին եւ արք զօրաւորք, որ քաջութեամբ կռուեցան եւ անկան:

Օջրագլխաց եւս, եւ իշխանաց զօրուն լիցին նոյնպէս յարգանք եւ զովութիւն, եւ որոց նպաստն եղեն ի յաղթութիւն: Որպէս Ռուէոս սովին գրով, որ Լւգոստեայ դարին արժանի է, սրբեաց եւ նուիրեաց զանուն այնոցիկ, որ զատուիկական պատերազմն հանդերձ մեծան Ղուգովիկոսիւ մղեցին.

ՂՈՒԴՈՎԻԿԵԱՅ ԻՇԽԱՆԻ ԿՈՆԴԱՅՒՈՑ
ՋԵՐԵՍԻՆ ՃԱԿԱՏՄՆ ԱՌ ՍԵՆԵՓՈՒ
ԽՈՐՏԱԿԵԱԼ.

ՀԵՆՐԻԿՈՍԻ ԻՇԽԱՆԻ ՏՈՒՌԵՆԱՅՒՈՑ ՈՐ ՋԵՐԾՈՅՑ
ՋՍԱՀՄԱՆՍ ԹԱԳԱՌՈՐՈՒԹԵԱՆՆ ՀԱԼԾԱԿԱՆՍ
ԱՐԱՐԵԱԼ ՋԳԵՐՄԱՆՍ ԱՆԴԻ
ՔԱՆ ՋՌԵՆՈՍ ԳԵՑ
ՋՈՐՈՑ ՋԲԱՆԱԿՍ ՋՈՐԻՑՍ ԵՀԱՐ.
ՓՐԱՆԿԻՍԿԵԱՅ ՄԱՐԵՍԿԵԱՅ ԿՐԵԿՈՒԵԱՅ
ՈՐ ԱՌԱՆՑ ԱՐԵԱՆ ՅԱՂԹԵԱԼ ԲՆԱՋԻՆՋ
ԱՐԱՐ ՋԳԵՐՄԱՆԻՑ ԳՈՒՆԴՍ:

Իսկ ի վերջին բանս լինիցին խնդրուածք զի որ յաղթեացն ողջանդամ, փառաւոր եւ երջանիկ լինիցի, որպէս ինչ Աստուծոյ, որ յաղթութեանց տուիչ է եւ ամենայն բարութեանց աղբեր, հաճոյ թուեսցի:

Ապա եթէ ոչ վասն յաղթութեանց ինչ, այլ վասն զինչ եւ պէտ մեծի պատուոյ եւ շքոյ աստիճանի, զոր բնկալեալ իցէ ոք, լինիցի ուրախակիցն լինել, յայնժամ պարտ է նախ յայտ առնել թէ որչափ ուրախութիւն իցէ քեզ ի պատուոյ անտի զոր նա նորոգ առ. երկրորդ թէ քանիօն եւ հասարակացն զուարթութիւն եւ խնդութիւն իցէ վասն նորին իրաց. երրորդ զպատուոյն եւ զաստիճանին աւագութիւն բանիւք բարձրացուցանիցես. չորրորդ ցուցանիցես, թէ ոչ վրիպակաւ ինչ, ոչ դրաւելով կամ յողալով, ոչ աղաչանօք եւ պարգեւօք, այլ մտօք եւ արդեանցն գործովք յանձն կրթեաց զպատիւն, զոր բազումք շուրջ եկեալ հնարեցան, սակայն սակաւք հասին:

Առ բնձայութեան ազգն պատշաճի եւ զոր Իժշկութեանն կոչեն, եւ Յուղարկելոյ, եւ Գնալոյ յաշխարհէն եւ Այսրէն դառնալոյ:

Իժշկութեան ճառ այն կոչի, որով ումեք վասն միւսանդամ յառողջութիւնն հաստատելոյ ուրախակից ոք լինիցի, եւ վասն ողջանդամն մնալոյ նորա եւ կենացն շնորհ ունիցի Աստուծոյ:

Յուղարկելոյ է, որով վասն ուրուք որ մեկնել ուրեք հանդերձեալ է, աղօթս եւ խնդրուածս առնեմք. գեղեցիկ է օրինակն որ կայ ի գիրս Արատիոսի վասն Վիրգիլեայ որ յԹէնս գնալոց էր.

Այդպէս զքեզ դիք հզօր Վիպրոսի,

Նոյնպէս եղբարքն շեղինեայ մեծապայծառ աստեղք,

Եւ հայրն հողմոց վարեցէ,

Օչպէս կապեալ կծկեալ բաց ի Յապիւգայ.

Նաւդ, որ պարտիս զՎիրգիլ

Որ քեզն հաւատացաւ, աղաչեմ,
 Հատուցես ողջ սահմանայն Ատտիկեցւոց,
 Եւ պահեսցես զկէս անձին իմոյ :

Իսկ ճառ Վնալոյ ուստեք այն իսկ է, զոր ի գնալ
 ուրուք յիւրմէ գաւառէ կամ յայլմէ տեղւոջէ ուր
 բազում մարդասիրութեամբ եւ խնամով ընկալեալ
 իցէ, առնէ. իսկ այսրէն դառնալոյ է, զոր ի դառնալ
 ուրուք ի տարաշխարհական ինչ ճանապարհէ, ող-
 ջամբ ի քաղաք եւ ի տուն իւր, խօսի առ ընտանիս
 եւ առ բարեկամս, բայց վասն սոցա ամենեցուն թէ
 զխորդ պարտիցին լինել ուրոյն ասել ինչ աւելորդ է.
 զի յայնց որ ասացան, մարթի ոչ միայն զսոսա, այլ
 եւ զայլ բազում սոցին նման ճառս, իմանալ եւ յօ-
 րինել, զի նիւթ այնպիսի ճառից է գոհանալ վասն
 յաջողութեան ճանապարհին, յայտ առնել զիւր ան-
 ձուկ զոր ունէր, եւ զուրախութիւնն զոր անդրէն ի
 տեսանէն զնոսա ունիցի, եւ ըղձանալ զի ողջ եւ
 անարատ որպէս տեսինն զմիմեանս, նոյնպէս յայնմ
 հետէ կեցցեն :

Բայց զիցուք աստ զբանս Անեայ զոր խօսեցաւ
 առ Հեղենոս եւ առ Անդրոմաքոս, իբրեւ մեկնէր ի
 նոցանէ :

Առ նոսա ի մեկնել իմում յարտասուս հարեալ
 խօսէի, կեցջիք երջանիկք, բարենշանք, որոց բախտ
 իւրեանց վաղ ի գլուխ ելեալ է. մէք այլք յայլոց
 յօրհաս հրաւիրիմք. դուք հասէք հանդստեան, ոչ
 զհարթութիւն ինչ ուրեք ծովու արօրագիր առնել
 կայ ձեզ, եւ ոչ խնդրել որոնել զանգս Աւսոնեայ որ
 հանապազն տեղի տան յետս : Օ կերպարանս Վասն-
 թեայ եւ զՏրոյիա տեսանէք, զոր ձեռք ձեր արարին :

ՎԿԵՅՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՕՐԻՆԱԿՔ ՈՒՐԱԽԿԻՑ ԼԿՆԵԼՈՅ ԸՆԴ
 ՊԵՏԻ ՈՒՐՈՒՔ

Պտտիւ որ ստուեր առաքինութեան է, ընդ
 նոսա իսկ որ շկամիցին, ի միասին գնայ. Սենեկա :

Պատիւ զաշխատութիւն թեթեւագոյն առնէ.
Ըփրիկան:

Իշխանութիւն ցուցանէ զայր. Ըփաս:

Ըռաքինութեան զովութիւն պիտի. Ըրիստ:

Փառք կից դնան ընդ առաքինութեան. Տակիտ:

Միայն բարեաց արժան է պատիւ. Ըրիստ:

Պատիւ որ չարաց շնորհիցի, ի նոցա աւեր շքի.
Ս. Գրիգ:

Ոչ զպատուոյ զհետ երթալ պարտի առաքի-
նութիւն, այլ պատիւ զառաքինութեան Ս. Ընդ:

Ի քաղաքի յորում չառնի պատիւ, չդնի շուք
առաքինութեան, չէք կայ եւ հատատութիւն, եւ
ոչ զեանդ եւ հատատուն լինել կարէ. Ըրիստ:

Իշխանութիւն բժիշկ է քաղաքի, առաց թուկի-
դիդէս. եւ Եփեսոն օրէնս խօսողս կոչեաց:

Չիք ուրախութիւն մարդկեղէն որ յատուածե-
ղէն անդր այնպէս մերձենայցէ, որպէս խնդութիւն
զոր ի պատուոյ հասանիցէ ունել. Բսենոփ:

Օր օրինակ խունկ ոչ մարդկան, այլ դից վայել
է, նոյնպէս զզովութիւն ոչ անարժանաց, այլ լաւաց
օրէն է մատուցանել. Ստորէոս:

Սակաւ իմն են կեանք, այլ փառաց ընթացք
ճանջենականք են. Եփի:

Յորմէ հեռէ ինչք ի պատուի լինել սկսան,
ճշմարիտ պատիւ անկաւ. Սենեկա:

Ոչ առանց ծխոյ ամբառնայ բոց, եւ ոչ համ-
բաւ առանց զըպարտութեան. Գիպսիոս:

Ըզգ ինչ սպանութեան է, զանուն ուրուք ա-
զարտել. Գուիկիարդ:

Ըռ շոմայեցիս պատուոյ մեհեան առնթեր
կայր առաքինութեանն մեհենի, եւ չէր հնար մտա-
նել ի պատուոյն մեհեան, մինչ չեւ անցեալ ընդ ա-
ռաքինութեանն մեհեան:

Տիմոն փիղիսոփոս հարցեալ թէ զինչ ի միջի
կայցէ ընդ իշխան եւ ընդ ժողովուրդ, եւ պատաս-

խանի, որ ինչ ի մէջ միոյ եւ ամենայնի. զի ամենայն հնազանդեալք միում իշխանի անկ են, իսկ մի իշխան ամենեցուն սովորութիւնս եւ օրէնս կարգէ. Վրխոնն:

Արկադացիք յաթուս թագաւորաց գնէին բզբախան ոսկեղէն, որ աջովն ունէր պսակ թագաւորութեան եւ արեգակն, եւ ձախովն զգունդ տիեզերաց եւ շուշան ծաղիկ: Արով կամէին յայտ առնել եթէ պարտ է նմա որ ի պատուի է, իբրեւ զարեգակն լուսաւոր լինել, որպէս զոսկի զքաղաքն մեծացուցանել, եւ իբրեւ զշուշան սփռել անուշահոտութիւն առաքինութեամբքն. կարդանոս:

Արխատուղէս ասէր, չէ այն իշխանութիւն ունել շուք եւ պատիւ, այլ յորժամ այլք համարիցին արժանի պատուոյ:

Ազիպտացիք իբրեւ ուրախակից լինէին նորոյ իշխանի, մատուցանէին նմա դաւազան. ի խոնարհ ի վերայ դաւազանին քանդակեալ լինէր գլուխն հանգի, որ զազանագոյն եւ բարկ է, եւ ի վերոյ գլուխ արագլի, որ քան զամենայն թռչունս զգօնագոյն է, առ ի յայտ առնել թէ պարտ է իշխանի լինել սաստիկ առչարս, եւ բարերար առ լաւս. Պիերիոս:

Առ Ազիպտացիս նոյնպէս էր սովորութիւն ի հինսն նոցա ընտրելոյ թագաւոր եւ ուրախակից լինելոյ նմա: Ի դաշտի ուրեք ի բացի, ուր պսակելոց էր թագաւորն, հարցանէին թէ իցէ դիցապաշտ, եւ նա զձեռն յերկինս ձգէր. ապա խնդրէին թէ իցէ արդար. եւ նա զնիզակն զոր կրէր, գնէր ի վերայ պարանոցին. յետոյ ասէին իցէ առատամիտ, եւ նա յայնժամ արկանէր ոսկի եւ արծաթ ի ժողովուրդն. շորորդ ասէր ոմն իցէ աշխատասէր, իսկ նա զմաճ արօրոյն զոր մատուցանէր նմա ոմն ի շինականաց, որպէս թէ հերկիցէ տանէր մինչեւ ցարքունիսն. իբրեւ մերձենայր յարքունիս վաղվազակի ընթանային պատանիք հանդերձ զարդուք եւ արքունի նշանակօք: Իբրեւ մտանէր ի ներքս յարքունիսն, գային հասա-

նէին պատանեակք հարելը արծաթի դանակօք, եւ վասն թագաւորին որ նայէր յապարանից իւրոց, անկանէին ի վերայ սուսերայն իւրեանց եւ մեռանէին ասելով . **Մեռանիմք զի դու կենդանի կայցես . Սեբեղիկոս :**

ՕՅ. Գաթոկղեայ, որ բրուտ էր եւ թագաւոր եղեւ, պատմի, թէ ամի ամի խորհրդականաց իւրոց որ դային ուրախակից լինել ընդ նմա, բաշխէր պուտունս զորս ինքն կազմեալ էր, յորս գրեալ կային այսպիսի ինչ բանք թէ . **Աշխատութիւն անարգ պատիւ է թագաւորի :**

Բակտրիացիք ի դարձի տարւոյն ծննդոց թագաւորին այրէին նոճիս ի նշան մահկանացութեան, եւ փայտս մայրս եւ մրտենիս դնէին յարեւու ի նշանակ անմահութեան, եւ աղաղակէին այսպէս . **Տեղացէ հուր կենդանական ի թագաւորս . Ապիտ :**

Ազիսնսս թագաւոր իբրեւ աղաղակէր ամբօին յաւուր թագ կապելոյ նորա, կեցցէ արքայ, ինքն եւս աղաղակէր կեցցեն օրէնք, կեցցեն իրաւունք. զի յայնժամ կանգուն կայ իշխանութիւն, յորժամ կենդանի են օրէնք եւ իրաւունք :

Բհին ժամանակս Անդղիացւոց իբրեւ թագաւոր նոր պսակէր, քաղաքացիքն մատուցանէին նախ շուշան սսկեղէն եւ սուսեր, այսպիսի բանիւք թէ . **Ա**ւ ի խաղաղութեան եւ ի պատերազմի քո եմք . երկրորդ մատուցանէին նիզակս կամ գեղարդունս սսկիս, եւ ասէին . **Վ**ու միայն քան զամենեսին առաւել վճարես . երրորդ փականս սսկիս եւ ասէին . **Ա**նդ քեզ եւ մտանել եւ ելանել եւ կալ մնալ պատրաստ եմք . չորրորդ մատուցանէին նմա զորդիս իւրեանց եւ ըզմանկունս, եւ աղաղակէին թէ **Ա**՛ւ հարց եւ որդւոց եւ թոռանց թագաւոր լիջիր . **Հ**ինգերորդ ասնէին պսակս յայնչափ ծաղկանց, որչափ քաղաքք էին յԱնդղիա, եւ պսակեալ նովին զթագաւորն աղաղակէին . **Ա**ռ զթագ արքայութեան եւ կեաց . **Վ**եներր :

Վ զաղիսղաւոս արքայ շունգարիայ եւ Բոհեմիայ ի նշանակ ունէր քարկոթող, յորոյ ի ծայրն եղեալ կայր պտակ սօկի, յոր նկրտէր այր թեւաւոր, եւ էր գիր գրեալ այսպէս. ԵԹԷ ԱՅԳՊԷՍ ԶԱՆԱՅԻ Տիպոտիոս:

Ազուարդոս Սարքիոն ունէր նշանակ դաբնի առ եզեր գետոյ, եւ ի վերոյ ի մէջ ամպոց արեգակն, յորոյ ճառագայթիցն այրէր դաբնին, եւ գիր այսպիսի. ՈՉ ԱՅԱՅԳ. որով նշանակի թէ չէ հնար ումէք արժանի լինել դաբնւոյ, եթէ ոչ առաքինութեամբ իբրեւ զարեգակն պայծառագոյն լինիցի, եւ տանիցի տապոյ աշխատութեան: Ամին իրի եւ հին շումայցիք ջահս լուցեալս տանէին առաջի իշխանաց, առակնարկել թէ իշխանաց պարտ է առաքինութեամբ պայծառանալ. Ոոսինոս:

Ազիպտացիք առ ի ցուցանել զայր իշխան, նկարէին ծերունի, յաջոյ ձեռին նորա արեգակն, եւ ի ձախումն քսան եւ չորք ժամք տուրնջեան եւ գիշերոյ. քսան եւ չորք ժամք ի ձեռին վասն այնորիկ, զի ըստ այնմ կարգիցէ զաւուրս եւ զկեանս իւր, եւ արեգակն, զի օրինակաւ եւ բարոյիւք պայծառագոյն լիցի ի մէջ իւրայոցն:

Ազիոնսոսի Արագոնացւոց թագաւորի էր նշանակ ճրագ վառեալ, այսպիսի ինչ բանիւ թէ ՄԻՆՉ ԱՅԱՅՍ ՍՊԱՍ ԶԱՐԿԱՆԵՄ. ԵՍ ԻՆՔՆ ՍՊԱՆԻՄ ԵՒ ՄԱՇՄ Ինեսա:

Վ ուղովիկոս Ա. Երրորդ արքայ Գաղղիայ ունէր ի նշանակ հաւալուան որ արեամբ իւրով կենդանացուցանէր զձագս իւր մեռեալս, եւ գիր այսպիսի թէ, ԱՐԻՆ ԻՄ ԷՔ. ԿԵՑԶԻՔ:

ՈՒՐԱԽԱԿԻՑ ԼԻՆԵԼ ՎԱՄՆ ՅԱՂԹՈՒԹԵԱՆ

Ուղիղ յաղթութեամբն վարել պայծառագոյն է, քան զկենդանին լինել. Պղուտարք:

Յաղթութիւն հանապազ յանգուզն է. Վիկ:

Ոչ այնչափ զինուք եւ սպառազինօք, որչափ աստուած պաշտութեամբ յաջողի յաղթութիւն. Եւ գաթօկղ :

Ճշմարիտ յաղթութիւն այն է, որ առողջ հաւատովք եւ ողջամիտ պատուով կազմիցի. Փղորոս :

Եթէ կամիս յաղթել, գթութեամբ գնասջիր. Փղ. Սպիտակոս :

Ենծին իւրում յաղթել քան զամենայն յաղթութիւնս առաջին եւ ազնուագոյն է. Պղատ :

Եռատամիտ եւ մարգասէր լինել առ խոնարհագոյնս գեղեցիկ իմն պաշար է զօրաւարի առ յաղթել եւ ձաղել. Գորգիսս :

Հանձար եւ խորհուրդ սեպհական արուեստք են զօրաւարի. Տակիտ :

Սովոր է Եւստուած նոցա, որ արգարութեամբ եւ ի հարկէ գէնս զանձամբ արկանեն եւ տան պատերազմ, ի դէպ ժամանակի տալ զյաղթութիւնն. Պաւղոս Յովիտս :

Եպամինոնգաս զբազմամբոխ բանակ թշնամեաց, որոց չգոյր զօրաւար առաքինի, զազան առանց գլխոյ կոչեաց. Ստորէոս :

Պաւսանիաս հարցեալ յումեքէ թէ զխարդ մարթիցէ թրակացւոց յաղթել, ասէ. Եթէ առաքինի ոք այր զօրաւար ընտրիցի. Պղուտար :

Եղեսիլաւոս հարցեալ թէ զինչ այն իցէ որ զիշխան զօրուն առաւել զարգարիցէ, ասէ. Ինդդէմ թշնամեացն համարձակութիւն, եւ ի դէպ ժամանակի իմաստութիւն եւ խորհուրդ. Ստոր :

Նուամանտացիք ի փախուստ դարձեալ յերեսաց Սկիպիոնեայ, իբրեւ պատուհասէին յիւրեանց սեպհականաց թէ ընդէր այնչափ յաղթեալ, արդ փախտեայ գնացէք, եւ պատասխանի ոմն ի նոցանէ. խաշնն եւ այժմ իսկ նոյն է, այլ հովիւ այլ է. ակնարկեալ թէ զօրն եւ յանժամ նոյնպէս հզօր եւ հարուստ էր, այլ զօրաւարն տկար. Իրիսոնիտս :

Յուզիոս կայսր ի ճակատու ուրեմն յաղթեալ ի Պոմպեայ, իբրեւ շեղեն նմա թշնամիքն հետամուտ, ասէ. Այսօր յաղթութիւն առ թշնամիս էր, այլ շիբ նոցա զօրաւար, որ յաղթութեամբն գիտիցէ վարել. Պղուտարք:

Փրիզերիկոս ինքնակալ խորտակեալ զթշնամիս ի շունգարիա, ասէ ցիւրսն. Մեծամեծ գործք վճարեցան, զօրականք, այլ այժմ եւս մեծ ինչ կայ մնայ, այս ինքն է զի անձանց յաղթեսցուք, եւ ազահութեան եւ վրէժխնդրութեանն ցանկութեան սանձս գնիցեմք, եւ զժլատութեան եւ զառի եւ զաւարի տենչանս կարճեսցուք. Կնէաս Սիղուիոս:

Աղեքսանդրոս Պարմենիոնի որ հաւանեցուցանէր նմա գիշերայն յարձակել ի վերայ Ղարեհի, ետ պատասխանի. Առաւել ախորժեմ սարջանալ ընդ բախտս, քան ընդ յաղթութիւնս ամաչել. եւ շկամիմ զյաղթութիւն գողանալ. Աուրտ:

Այսօր յաղթեալ զթշնամիս, այսպիսի ինչ գրուատիս գրեաց զանձնէ առ ծերակոյսան. Կկի, տեսի, յաղթեցի. եւ Արոողոս ինքնակալ ասաց. Կկի, տեսի, այլ յաղթեաց Վրիստոս. Փիզ. Աամեր:

Տիմոդիոն ի Աորնթոս իբրեւ ի մեհենին Ղեղիացւոց զՆպոդոն վասն յաղթութեան հարցանէր, պսակն որ ի մէջ նուիրացն կախեալ կայր, ի գլուխ նորա այնպէս յանկ անկաւ, որպէս եթէ ձեռամբ գնէր ոք, որ ի դից իմն եղև գուշակութիւն յաղթութեան. Փուզգոս:

Այսօր եկեալ Մ. փրիկէ իբրեւ անկաւ յերկիր, գուշակութիւն համարեալ զիրսն ազաղակեաց, ունիմ զքեզ Մ. փրիկէ. Սաբեղ:

Աղեքսանդրոս մեծ իբրեւ պաշարեալ ունէր ըզՏիւրոս թուէր նմա տեսանել զՎահագն որ ի Տիւրացւոց պաշտէր կարկառեալ նմա ձեռն ի պարսպէ անտի, ուստի առեալ գուշակութիւն յաղթութեան յաղթեաց. Նոյն:

Յառաջնում պատերազմին ընդդէմ Մարեայ տեսանէր Շիղա զի Պաղղաղեայ տուեալ լինէր նմա կայծակն, եւ նոյն տայր նմա խրատ ի նմին իսկ աւուր հասանել հարկանել զթշնամիս. ուստի հալածական արարեալ զՄարիոս յաշխարհէն հրով եւ սրով, յետոյ ապա իբրեւ ընդ որդւոյն Մարեայ հանդերձեալ էր տալ պատերազմ, ետես զՄարիոս զհայրն որ խրատ տայր որդւոյն եւ ասէր թէ, մի վաղիւ խառնեսցիս ի պատերազմ ընդ Շիղայի վասն այնորիկ զի այն օրնմա չուառութեան լինելոց էր. փուզդոս:

Յուզաս Մակարէոս մինչ չեւ ճակատ տուեալ ընդ Նիկանորայ զօրաւարի արքային Մսորոց, ետես յանուրջս զՄինիս որ աղօթս վասն իւր մատուցանէր, եւ Նրեմիս մարգարէ սուսեր մի ոսկեհանդերձ ձեռն ի ձեռն տայր նմա. Նոյն:

Առ կեղտս տանէր ոք առաջի զօրաւարի զօրաց տաշա ջրոյ, եւ կոչէր ըմպելի բախտաւորութեան: Աթէ վրիպակաւ իմն հեղոյր ինչ ի ջրոյ անտի, շարեաց նշանակ զայն համարէին, ապա եթէ առ անհոգութեան զերծանէր ի ձեռաց տաշտն, ամենեւին իսկ անյոյս լինէին եւ ինքնակամ նուաճէին ընդ ձեռամբ թշնամեացն. Թէոփրաստ:

Միթրիդատէս թագաւոր Պոնտացւոց պարտեալ ի Պոմպեայ, այսպէս զանձն մխիթարէր. ինձ ամենայն չուառութիւնք, որոց պատճառք Պոմպէոս է, առ հանդուրժել են. զի չեն ինչ ծանականք ի պարտութիւն մասնել ի նմանէ, որում յաղթել չէր օրէն եւ պատշաճ. եւ ոչ նախաաինք ինչ իցեն ընդ նորա իշխանութեամբ լինել, զոր բախտն բարձրացոյց քան զամենայն ոք. Պատերկուզոս:

Ազփոնսոս թագաւոր Վաստեղեայ ասէր, զզօրականս առարքինիս կրկին ձեռն վառէ, զօրութիւն եւ արգարութիւն. իսկ ի նենդաւորաց երեք ինչ հաննն զսպառազինութիւնն, խորամանկութիւն, աստուածպաշտութիւն եւ քաջութիւն. Նւենտինոս:

Վարբիսացի զօրաւար Նթենացւոց սովոր էր ասել, եթէ առաւել խորթէ զերամս ազուաւուց որոց առեւծ զօրաւար իցէ, քան զերամսիս առիւծուց, որոց առաջնորդիցէ ազուաւ. Սարգի:

Վուրդովիկոս Ռուրզուէնդացւոց թագաւոր ընդդէմ Վայսեր յարոյց մարտ պատերազմի, այլ ըմբռնեալ ի նմանէ երդուաւ թէ չէ այլ եւս պատերազմ տալոց ընդ նմա. բայց իբրեւ զերծաւ վերստին յաճախագոյն զօրօք եկն ի վերայ նորա, այլ միւսանդամ պարտեալ զամենայն ինչ կորոյս, նա բրեցան աչք նորա եւ ի ճակատն ունկանէ յունկն այսպիսի ինչ դիր երկաթով դրոշմեցաւ. Օր պահեաց զթութիւն, նենդութիւն կորոյս. ֆուղգաս:

Ա Վիմբրացիս ընդդէմ նենդաւորաց չորս վաշտոհանէին, առաջինն մանկանց էր, երկրորդ պատանեկաց, երրորդ արանց, չորրորդ ծերոց. այլ առաջին երէք գունդքն դէտակն եւեթ ունէին պատերազմին, իսկ չորրորդ վաշտն տայր պատերազմ. զի համարէին թէ արք տկարք բաւականք են առ այն զի զուխաադրութս պարտիցեն, զի նենդութիւն թողացուցանի յՆստուծոյ, եւ վասն այնորիկ տկար եւ ջղատ է. Պուղիտիս:

Վերսոնացիք ունէին սակի գաւազան իբրեւ զաէգ նիզակի, զոր Նրամագդայ շնորհեալ էր Պեղտպայ, որ զայսպիսի ինչ առաւելութիւն ունէր, զի քանիցս անդամ թէ ամբօխէր զօրն, թագաւորն միայն մերձեցեալ ի գաւազանն ցածուցանէր զթխորն, եւ եթէ կողմն որ պարտէր, կատաղէր եւ երկպառակէր, վերացուցեալ զգաւազանն առնէր միաբանութիւն. իբրեւ պակասէին ինչք, զտուրս որ նմա մատուցանէին յինչ եւ է նիւթոյ, մերձեալ ի գաւազանն յոսկի փոխէր. Պաւսանիաս ի Ռէովտ:

Ե Ր Կ Ր Ո Ր Գ Ն Ա Ռ

ՎԱՄՆ ԽՐԱՏՏՈՒՈՒԹԵԱՆ ԱԶԳԻ

148. Այժմ զայն ասացուք թէ զինչ նիւթ խրատուութեան ազգին իցէ:

Արդ նիւթ սորին ազգի են ամենայն իրք որ ի մեր ձեռս եւ ի մերում կարի են. զի որպէս ասէ Աիկերոն, բառնի ի միջոյ խրատուութիւն, եթէ յայտ իցէ թէ չէ հնար, կամ թէ շտապ տազնապի ի վերայ հասանիցէ: Օյ շտայ ոք խրատ, թէ զհարդ կամ որսով օրինակաւ ցանկ եւ միշտ կենդանի կալ մարթիցի, քանզի զիտէ թէ մեռանել հարկ է. եւ ոչ զմտաւ ոք ածէ թէ որպէս թռչել կարիցէ, զի խելամուտ է թէ շունի թեւս:

Իսկ կատարած կամ կէտ զոր առաջի եղեալ է խրատուութեան, է պարկեշտութիւն եւ պիտանութիւն: Շառք որ սմին ազգի պատշաճին են Հաւանեցուցանել եւ նորին հակառակին, խրատ տալ եւ հակառակ թելադիր լինել, Գրգռել եւ Յաժուցանել, Յանձն առնել, Խնդրել եւ Սխիթարել:

Ե Գ Լ Ո Ւ Խ

ՀԱՒԵՆԵՑՈՒՑԱՆԵԼ ԵՒ ՆՈՐԻՆ ՀԱԿԱՌԱԿՆ

149. ՀԱՒԵՆԵՑՈՒՑԱՆԵԼ է ճառ խրատուական, որով ցուցանի թէ զինչ ինչ առնել պարտ իցէ. իսկ նորին հակառակն է հակառակ խրատ տալ:

Այլ թէ ուստի մարթ իցէ յանդիմանութիւնս հաւանեցուցանելոյ եւ հակառակ խրատ տալոյ դտանել, պարտ եւ պատշաճ է զոր ասելոցն եմք, ի միտ առնուլ. այս ինքն է ցուցանել արժան է նախ թէ հարկ է, երկրորդ անգամ օգուտ եւս, երրորդ բարւոք, չորրորդ անգամ զիւրին, հինգերորդ անգամ հեշտական: Օչոցին հակառակսն պարտ է ցուցանել, յորժամ հակառակ խրատ տալ կայցէ առաջի, որ թէ զինչ իցեն, մի ըստ միտջէ յանդիման կացուցուք:

ՀԱՐԿ. Հարկ այն կոչի, որ կարեւորն է, առանց որոյ կեանք կամ պատիւ ուրուք չկարիցեն կալ յա- կաստանի: Ամ թէ լաւ եւս կամիցիս իմանալ, կա- րեւոր այն կոչի, որ այնպէս պիտանի է, զի առանց նորին չէ մարթ իրացն լինել եւ կալ: Սորա բազում եւ մեծ զօրութիւն է. զի բազումք այնպէս խօթա- սիրտ եւ վեհերոտ են, զի թէպէտ եւ դիտիցեն թէ բարի եւ օգտակար է, սակայն եթէ մեծաւ աշխա- տութեամբ եւ ջանիւ հանդերձ լինելոց իցէ, դիւրաւ վհատին եւ Լքանին. այնպիսեացն հարկ վտանգին համառօտ պայման է առ հաւանեցուցանել:

ԲԱՐԻ. Բարի զայն իմանամք, ասէ Վիկերոն, որ այնպիսի ինչ իցէ, զի թէպէտ եւ ոչ մի ինչ օ- գուտ կայցէ, սակայն եւ այնպէս ինքնին գովելի եւ փափաքելի իցէ. որպէս եթէ ումք խրատ տայցեմք, զի ըստ Ս. Մտտիղեայ Ռեզուզայ օրինակին առաւել ի մահ է ի կապանս զնալ ախորժիցէ, քան հաւա- տոյն զոր թշնամւոյն ետ, ստիցէ: Որպէս եւ Վիկերոն ի մանիղիական ճառսն ցուցանէ թէ պարտ է տալ պատերազմ ընդ Միհրդատայ, զի բառնայցեն զնա- խատինսն զոր արար Միհրդատ Հռոմայեցւոց, յոր- ժամ զայնչափ հազարս ի Հռոմայեցւոց հրամանս ետ ի միում ժամու կոտորել: Ասվին օրինակաւ եւ Վա- տոն վառեաց զմիտս զօրականին միայն փառացն զբու- ատեօք, զի յանձն առնուցուն երթալ զճանապարհն զլի վտանգօք, եւ զդժուարին:

Օյր ճառս ոչ փակեալ ունիցին յինքեանս այն գեղեցիկ բանք, թէ Օձ, ծարաւ, տօթ եւ աւաղ քաղցունք են առաքինութեան. խնդայ համբերութիւն ընդ վիշտս. ուրախ լինի քանիցս անդամ թէ մեծա- մեծս կրել հասանիցէ նմա վասն բարութեան:

ՕԳՏԵԿԱՐ. Օգտակար է որում վասն դիւրու- թեան լինի փափաքել, թէպէտ յաւելուած ունիցի զբարութիւն որպէս փառք, պատիւ, շուք, թէպէտ շունիցի, որպէս մեծութիւնք, առողջութիւն, հան-

գարտութիւն, ի բաց զչարիսն հալածել, եւ այլ նոցին նմանք: Միայն թէ մի զչար ինչ եւ վնասակար իբրեւ զբարի եւ զհասաւետ թեւադրեալ հաւանեցուցանիցէ. որպէս Վատիղինա միաբանելոցն յապտամբութիւն խրատ տայր յանարժան շարիսն, զոր նա մեծ եւ գեղեցիկ կոչէ: «Վոյնպէս Վուրիսս որ բազում պարտս ունէր, զի զանձն ի պարտուցն թափիցէ, թեւադիր լինէր Յուդեայ կայսեր վասն ընտանի պատերազմին:

ԳԻԻԲԻՆ. Գիւրին այն է, որ առանց մեծի վատակոց եւ ծախուց կամ նեղութեան եւ վշտաց, ի սակաւ ինչ ժամանակի լինել եւ ի գլուխ ելանել մարթի, այս ամենայն յոյժ ի դէպ եւ կարեւոր է առ հաւանեցուցանել: Օրու եւ վայրապար հաւանեցուցանի ինչ, որ հազիւ կամ դժուարաւ յոյժ լինելոց կարծի: «Վմին իրի իսկ եթէ ոք զայսոց իրաց խիղճ արկանիցէ ի լսողսն, մի ակնկալցի այնպիսին թէ ընդ միտ մտանել կամ հաճել կարիցէ երբեք զլսողսն:

ՀԵՇՏԱԿԱՆ. Հեշտական ասի, որ ախորժական ինչ մտաց կամ մարմնոյ իցէ. եւ հեշտական վասն այնորիկ կոչի զի ըստ երկոցունց եւս, կամ ըստ միոյ յերկոցունցն հեշտի է:

Ի հաւանեցուցանելն կամ ի հակառակն խրատ տալ երիս ինչս խնամով դիտել պարտ է. նախ թէ զինչ այն իցէ վասն որոյ խրատն տայ. երկրորդ զյբ իցեն որ խրատուցն անսալոց եւ զիրս կարգելոց են. երրորդ ո՛ր իցէ նա, որ հաւանեցուցանէ կամ հակառակն խրատ տայ:

Վասն իրացն յորոց աղագս լինի խրատտուութիւն, զհնգեսին զայնոսիկ զորոց ասացաքն, պարտ է մանր կրկտել. այս ինքն թէ արդեւք բարի՞ իցէ օգտակար, կարեւոր, դիւրին եւ հեշտական:

Վասն նոցա որ խրատուն անսալոց եւ այնպէս յօրինելոց են զիրսն, բազում ինչ պիտոյ է. քանզի է իսկ գլուխ ճարտարութեան ամենեւին զմիտս նոցա որոց զխրատն թեւադրելոց իցեմք, ճանաչել, եւ

զնոցա կամանն եւ զընութիւն յառաջագոյն իմանալ, զի մարթասցուք զսէզս եւ զհպարտս պայծառագոյն իրօք, զազահսն զօգուտն եւ զշահ ցուցանելով, զգիրգս հեշտականօք ձգել, եւ այնպէս զիւրաքանչիւր, որպէս ասենն, անցնիւր կարթիւ որսալ:

Արդ ճարտարախօսի իմաստնոյ գործ լիցի տեսանել ընդ սւմ խօսի. միթէ ընդ առն թագաւորի՞ կամ ընդ իշխանի՞ խօսիցի, առ որս բանք ողորանաց եւ աղերսի պիտոյ են, թէ ընդ ազնուականս, որոց միայն որ ինչ բարւոք եւ զովելի է, հաճոյ թուի, թէ ընդ խառնազանճ ամբօխի, որ դաղան բազմազլուխ է, եւ խօսել առ նոսա դժուարին է յոյժ: Բայց չէ բաւական ի պատիւն հայել, այլ պիտի եւ մտաց եւ բարոյից եւ հասակին պատկառ կալ, զի դիւրաւ եւս կարիցես զիրան ի գլուխ հանել: Ապա յիրաւի զպէսպէս հասակաց, զմարդկան եւ զազգաց սովորութենէ աստէն ծառել ինչ սովոր են վարդապետք այս արուեստի, մանաւանդ Արիստոտելէս:

Ա. ՎԱՄՆ ԲԱՐՈՅԻՑ ՊԷՍՊԷՍ ԵՒ ԱԶԳԻԱԶԳԻ ՀԱՍԱԿԱՑ

Ասացուք նախ թէ զինչ մանկանց, արանց եւ ծերոց բարք իցեն:

Օ իւրաքանչիւր հասակաց զբարս գրով այսպէս նկարէ Որատիոս յարուեստին վիպասանութեան:

Պատանիք մանկունք, իբրեւ ելանիցեն ըստ պահ, ուրախ լինին երիւարօք եւ պառականօք եւ ի դաշտս կանաչագեղս. գիւրաւ միտեն ի շարխս, խրատչացն հեստեն, անագան զօգուտն տեսանեն, վատնեն զինչս, հպարտք եւ ցանկացօք են, զոր սիրենն ինչ թողուլ չառնուն յանձն: Իբրեւ շրջիցի փոյթն, միտք եւ հասակ առն խնդրէ մեծութիւն եւ բարեկամս, պատուոյ սպաս հարկանէ, ապաստան առնել զգուշանայ, զոր փոփոխել անգամ դժուարէր: Օ ծերս բազում վիշտք եւ նեղութիւնք շուրջ պաշարեն, զի իբրեւ խնդրենն

ինչ եւ դտանեն, անդրէն հրաժարեն եւ ի կիր արկանել երկնչին. դարձեալ զի զամենայն ինչ զոր մտակարարենն, երկիւղիւ եւ տաղտիութեամբ առնեն, վեհերօտք են, կարճամիտք, յոյլք, հանդերձելոց ցանկացօղք, դժնեայք, կազացօղք, զմանկութեան ժամանակին իրս ստէպ գովեն, ընտրօղք եւ կշտամբիչք են սակաւ ինչ իրաց:

Ապա ուրեմն պատանիք յեռանդման ցանկութեան են, դիւրաւ եւ սաստիկ զայրանան, ուստի եւ երիտասարդութիւն տապ մտաց անուանեալ կոչի. զբարի ինչ քան զօգուտ լաւ համարին, համարձակք են, յստակք եւ ողորմածք, զի ըստ իւրեանց անմեղութեան նոյնպէս եւ զայլս հաշուին: Օցտօղք են եւ զեղիւք ի ծախս, զի շեն տակաւին զկարօտութեան զչափ առեալ, մէտք եւ յօժարք են ի ծաղը եւ ի շատխօսութիւն:

Ամենեւին նոցին աննման են ծերոց միտք: Օջարանալ եւ նոքա զայրանան դիւրաւ, այլ ոչ իսկ եւ իսկ ի ցասումն զառածանին, որպէս իմաստութեամբ ասէ Արատիոս, թէ Ապիտակ հերք ցածուցանեն զնոսա որ զկուիւ եւ զկագ ախորժիցեն: Սակաւ ինչ ակն ունին կեալ, զի ընդերկար կեցին, չկամին ի բազում ինչ իրս ձեռնամուխ լինել, ընդ անցեալ զառանցեալ իրս խնդան, զխեղկատակութիւն եւ զծաղը ատեան, մտադեր զպատշաճս պահանջն, ուշակալութք են, դանդաղագոյնք, խիտք, կատկածօղք, զի յիշեն թէ կամ ինքեանք կամ այլք խաբեցան բազում անգամ. դարձեալ բաներօղք են եւ դժնդակք. զի որպէս ասէ Տուղիոս ի տկար մարմնի ատելի են ամենայն վիշտք. եւ միանգամայն իսկ շաղփաղիք են եւ շատախօսք, զի ուսուցանել սիրեն: Մայց զայս ամենայն դիւրաւ մարթ է տիոց նոցա շնորհել, փոխանակ մեծամեծ առաքինութեանց, որովք այն ամենայն շարիք ծածկին:

Հասակ առն ի ծերութեան եւ յերիտա-
սարդութեան միջի կայ, եւ իբրեւ ի սահմանի կա-
ցուցեալ, երկոցունց եւս առաքինութեանցն եւ չա-
րեաց հաղորդ է, եւ զերկոցունց եւս բարս իբրեւ ի
մտաւորութենէ ձգէ: Հօր է մանկութիւն, այլ
առանց ժուժկալութեան, ծերութիւն կարի ժուժ-
կալ է, սակայն երկչոտ, առն հասակ եւ հօր է եւ
զդաստ: Մանկունք յոյժ դիւրահաւանք են, ծերք
կասկածօղք, իսկ արք է զի կարի վստահ լինին, եւ
է զի յոյժ վհատեն: Մանկունք զբարին առաւել
խնդրեն քան զօգուան եւ զհաս. ծերք մանաւանդ զօ-
գուան կամին քան զբարին, արք եւ զօգուան եւ զբա-
րութիւն միանգամայն խնդրեն: Մանկութեան հա-
սակն ջերմաջերմ է, առժամայն փոփոխի, ի բնէ
յանկ են առ առաքինութիւն, զփառաց եւ զպատուոյ
կղկաթեն: Աւր Տուղեայ զի՛նչ ասիցէ վասն նոցա.
Սրչափ փոյթ է մանկաւոյ դուպարելոց, սրպէս
հարստանան ուրախութեամբ յորժամ յաղթիցեն,
զիւրդ չախորժեն սողիւտ լինել, քանի՛օն ցանկան
դովել, զոր ջանս ոչ յանձն առնուցուն, զի ի մէջ
զուգականաց իշխանք լինիցին:

Բ. ՎԱՄԵ ԲԱՐՈՒՅ ԱԶՆՈՒԱԿԱՆԱՅ ՄԵԾԱՏԱՆՅ
ԵՒ ԽԱՌՆԱՂԱՆՃ ՄԱՐԴԻԿԱՆ

Ասացուք այժմ՝ վասն բարուց ազնուականաց,
մեծատանց եւ խառնիճաղանճ մարդկան:

Ազնուականք բազում փոյթ յանձինս ունին
վասն պատուոյ եւ փառաց, եւ կամին անձանց շուք
դնել. եւ սովոր են ոչ միայն զանարգս եւ զանտոհմս
արհամարհել, այլ եւ զնորատունկս, որ նորոգ պա-
տուոյ ինչ հասեալ իցեն. որպէս Սեանդոս զՎ. Սա-
րիոս անդսնէր, եւ խանտայր ընդ նորա բղէշին կալ.
ուստի ասէ Սաղուստիոս. Արհամարհոտ մտօք էր եւ
ամբարտաւանութեամբ, որ հասարակաց չարիք են
ազնուականաց:

Մեծատունք, մանաւանդ եթէ զմեծութիւնսն նորոգ ստացեալ իցեն, թշնամանօք լինին եւ հպարտք: Օխ զնեն ի մօտ թէ վերագոյն իցեն քան զայլ մարդիկ, որոց ամենայն ինչ զնոց են. եւ առաւել սովոր են ի վառիկութիւն եւ ի զեղխութիւն հասանել: Օչ այս զոր յիշատակեցաքն, զնորոց մեծատանց ամբարհաւածութիւն, իմաստութեամբ Վիկերոն զՏ. Ռոսկեայ կողմնակի իմն ասէ. թէպէտ եւ յիւրն ինչ աղքատագոյն եւ կարօտագոյն էր, սակայն յօտարինն յանդուզն եւ լիբբ էր:

Իսկ զննդածին բարս խառնազանճ մարդկան զեղեցիկ եւ վայելուչ նկարեն Սաղուստիոս, Որատիոս, Տակիտոս. եւ Սենեկայ ասէ թէ Վազան բաղմագլուխ է. եւ թէ, Վան զթեւ եւ զհողմ շարժնագոյն. եւ, Մաւել կարծեօք զնայ քան ճմարտութեամբ, եւ զնայ յս եւ զնայ, եւ ոչ թէ ուր երթալն պարտ էր. եւ թէ, Ընձին դիւրութեան մանաւանդ սպաս հարկանէ քան հասարակաց բարութեան կամ տենչանաց. եւ, Յանկայ նորաձեւս նորոգել. եւ միանդամայն իսկ ասել. Չարեաց յանդիմանութիւն է ամբօխն:

Գ. ՎԱՄՆ ՊԵՍՊԻՍ ԿԵՐՊԱՐԱՆԱՅ ՔԱՂԱՔԻ

Ի խրատտութեան չէ բաւական զիւրաքանչիւր հասակաց եւ զմարդկան բնութիւն եւ զփոյթ հաւաստեաւ գիտել, այլ պարտ է մանաւանդ եւ զքաղաքին սովորութիւն նկատել, որ ըստ պէսպէս քաղաքաւորութեան կերպարանաց, պէսպէս եւ ազգի ազգի է. զի այլազգ պարտ է զնալ ընդ Վազիացիս եւ ընդ Հիսպանիացիս եւ ընդ Վերմանացիս որոց թագաւորք են եւ արքական իշխանութիւն, եւ այլազգ ընդ այնոսիկ, որոց ռամիկն կամ ազնուականք տիրիցեն, որպէս էին երբեմն Հռոմայեցիք եւ Վենետացիք: Ըրդ միայ ուրուք տէրութիւն, որ ընդ հասարակաց օգուտ հոգայցէ, անուանեալ կոչի միահեծան տէրութիւն: Իսկ եթէ ազնուականք տիրի-

ցեն, որպէս Վենետացւոյն էր, աղնուականաց տէ-
րութիւն կոչի, ուր թէ սակաւք սմանք իցեն ազ-
նուականքն, նուազ իշխանաց անուանի: Ապա եթէ
ժողովուրդն իշխիցէ, որպէս առ Հեղուեաթիացին,
յայնժամ ընկերհաշտութիւն անուանի: Չոյ եւ
անիշխանութիւն, որ ի խռովութեանց ժամանակս
յառնել սովոր է, յորժամ առանց թագաւորի եւ
իշխանաց ծովածուփ ալեկոծ լինիցի իշխանութիւնն:

Գ. ՎԱՄՆ ԱԶԳԻ ԱԶԳԻ ԲԱՐՈՅԻՑ ՊԷՍՊԷՍ
ԱԶԳԱՅ

Սանաւանդ զպէսպէս ազգաց բարոյից եւ զմտաց
հանգամանս ճշդիւ գտակաւ առնուցուս ի միտ, եւ
զբուն բնութիւն նոցա խնամով նկատիցես, զի կա-
բող լինիցիս նոցին համեմատ զբանս պատշաճեցու-
ցանել, զի որպէս Որատիոս ասէ. Բազում ինչ ի մի-
ջի կայ թէ ծառայիցէ արդեւք որ խօսին, եթէ ա-
նուանի դք, կողքացի թէ Ասորեստանեայ, ի թեքէ
թէ յԱրգոս սնեալ:

Արդ այս բարք են պէսպէս ազգաց Եւրոպացւոց:

Գաղիացիք մարդասէրք են, հիւրասէրք, առանց
կեղծաւորութեան, մարդընդելք, յարդոյք, յան-
դդունք, պատերազմօղք, յեղյեղուկք, երազունք,
երկար տեւել բաւել եւ ակն ունել ոչ կարեն, դիւ-
բաւ մոռացօնս առնեն անիրաւութեանց եւ երախ-
տեաց, իսկզբան դժնդակք են, եւ անիրաւք ի կատա-
բածին, եւ որպէս Փղորոս զհին Գաղատացւոց ասէ,
զառաջինն առաքինիք արութեամբ են, յետոյ ապա
ոչ նոյնպիսի կան մնան. ստեպ պանդխտանան, ուս-
տի յիրաւի ասեն, թէ առանց դաղիացի զօրականի
չմղի պատերազմ:

Գերմանացիք միամիտք են, սիրունք, զօրաւորք,
զանձինս շնորհեն, ճշմարիտ բարեկամք եւ ստոյգ
թշնամիք, ասէ Սկաղիզէր: Բեղգիացիք եւ Բա-
տաւիացիք ունին հաստատութեամբ զհասարակա-

կշիռն կշիռ ի մէջ Գաղիացւոց եւ Վերմանացւոց: Հիսպանիացիք հաստատունք են, հանդարտք, ծանր ի խորհել, աշխատութեան եւ խրատու ասկան, զանարդ ինչ սպասաւորութիւն, թէպէտ եւ մեծամեծ իրաց կայցէ ակն ունել, սակայն եւ այնպէս չառնուն յանձն: Իտալացիք վեհերոտք են, հանձարեղք, իմաստունք, բարձունք եւ խորհրդականք մտօք, եւ ամենեւին առաջնորդութեան յանկք. որպէս ասէ Վիրգիլիոս. «Սու զմաւ ած, Հռոմայեցի, վարել զազգս իշխանութեամբ, այն քո արուեստ լիցի:

Պոլոնիացիք վայրենամիտք են, պատերազմօղք, որոց մանաւանդ ճարտարութեամբ եւ խելօք մարթէ յաղթել, քան զօրութեամբ եւ ուժով. իսկ Սոսկովացիք նմին հակառակ նենդաւորք են: Այսչափ ինչ շատ լիցի, զի եթէ զայլ եւս ազգս յիշատակել կամիցիմք կարի երկայնաձիգ բանք տողին:

Իսկ վասն ազգաց արեւելից պարտ է գիտել զի որովհետեւ ի ժամանակի աստ յայսմիկ գրեթէ առհասարակ առանց ուսման եւ դպրութեան են, վասն որոյ եւ մեծամիտք լինին, արծաթասէրք, խաբէբայք, ուրեք ուրեք ամենեւին իսկ անագորոյնք եւ աւազակաբարոյք, բայց եւ ողորմածք են եւ հիւրասէրք:

Իայց եւ զայս ինչ գիտել արժան է զի կրօնք բազում այլակերպութիւն ցուցանեն ի բարս մարդկան, նմին իրի քրիստոնէայք մարդասիրագոյնք են, եւ ընկերասէրք, քան զայլ բարբարոս: Այնպէս եւ գիտութիւն եւ ուսումն բազում ինչ փոփոխն ի մարդկան վարս. նմին իրի եւ ազգք Աւրոպացւոց ազնուագոյնք համարին, թէ միայն չիցեն ի բազում ակտս եւ ի շարիս շողեալ:

Իսկ ի նմա որ հաւանեցուցանէ կամ հակառակ խրատ տայ, երեք ինչ պարտին դտանել, իմաստութիւն, լաւութիւն եւ բարւոք կամք: Իմաստութիւն վասն այնորիկ զի նոցա մանաւանդ հաւատալ եւ ան-

սալ սովոր եմք, ասէ Վիկերոն, զորս համարիմք թէ առաւել քան զմեզ գիտիցեն եւ իմանայցեն: Առու թիւն յայն սակս զի որչափ նենդաւոր եւ խորամանկ իցէ ոք նոյնչափ ատելի եւ կասկածոտ լինի. եթէ ոք լինել իցէ իմաստուն եւ հմուտ, սակայն խաբեալայ կարծիցի, եւ անձնասէր, յայնպիսւոյն խորհրդոց ամենեւին իսկ խորշել եւ դարշել պարտ է: Արորդ բարւոք կամք եւս պիտին յայնմ որ հաւանեցուցանէ, զի եթէ ոք իմաստուն իցէ եւ լաւ, սակայն ատիցէ զմեզ, կամ առաւել ի մեւս կողմն անդր միտեալ համարիցի, չկարծի երբեք թէ բարւոք ինչ խորհուրդ տալ մեզ կամիցի: Օչերիս զայսոսիկ թուի թէ ունէր ի մտի Վիկերոն յորժամ առ Ատտիկոս զրեաց. Այժմ եւ խորհրդովք քովք եւ սիրով եւ հաւատովք կարօտ եմ. նմին իրի փութասջիր. զի ամենայն ինչ ի գլուխ ելանիցէ, եթէ դու մօտ իցես: Արդ խորհուրդ իմաստութեան է, հաւատք առաքինութեան կամ լաւութեան, իսկ սէր բարւոք կամաց:

Բ Գ Լ Ո Ւ Խ

ԽՐԱՏ ՏԱԼ ԵՒ ՀԱԿԱՌԱԿ ԹԵԼԱԳԻՒՐ ԼԻՆԵԼ

150. ԱՍԵՍՅՈՒՔ թէ իւ իւիք ընտրիցի խրատն տալ ի հաւանեցուցանելոյ:

Այս ինչ ընդ հաւանեցուցանել եւ ընդ խրատն տալ ի միջի կայ, զի հաւանեցուցանել մտօք եւ խորհրդովք լինիցի, իսկ խրատ տալ յորդորելով եւ ստիպելով. հաւանեցուցանելն ուսուցանէ, նմին իրի իսկ բազում յանդիմանութեամբք կատարի, իսկ խրատն տալ արծարծէ եւ բորբոքէ, վասն որոյ եւ եռանդամբ եւ տապով է: Հաւանեցուցանելն տայ քեզ ի միտ առնուլ թէ զինչ ինչ առնել պարտ իցէ. իսկ խրատն տալ առնէ զի ախորժիցես եւ համարձակեսցիս առնել. սորայ է վառել եւ խթանել զլսողացն միտս, եւ եռանդն ածել նոցա առ ի բարւոք զիրսն վճարելոյ. եւ միանգամայն իսկ ասել, հաւանե-

ցուցանել հաստատութեան ճառին պատշաճ է, իսկ խրատն տալ ի դիտարկել զճառս վճարի:

Իբրեւ խրատ տաս, պարտիս յորդորել նախ զյոյս եւ զվստահութիւն. երկրորդ անգամ զգութեւ զցանկութիւն իրացն զորոց զխրատն տաս. երրորդ անգամ, նախանձուկս արկանել օտարին փառաց, որ իբրեւ զնեա հարկանէ զմիտան. չորրորդ անգամ գովիցես զառաքինութիւն նոցա որոց զխրատն տաս, եւ ասիցես թէ չեն իսկ կարօտ խրատու. զի որպէս ասէ Աիկերոն, ի դրդուել եւ ի սրել բազմապատիկ զօրաւոր է գովելն եւ ողբել զնա որ խրատի:

Պէտքեցիկ է խրատն ի Աուրտեայ եւթներորդ գիրսն զոր Աղեքսանդրոս ետ երեքհարեւր պատանեկաց զի ելցեն ի վէմն Աոգդիանացւոց, որ առապար էր եւ երեսուն վտաւան բարձր կայր, զոր Արիմազէս երեսուն սպառազէն զօրօք պաշարեալ ունէր:

Իսկ հակառակ թելադիր լինել ոչ այլ ինչ է, բայց խրատ հակառակ հրամանաց կամ խրատուց ուրուք տալ. որոյ գեղեցիկ օրինակ կայ առ Աիւեայ ի քսաներորդ երրորդ գիրսն ի ճառսն Աաղաւեսայ Աամպանացւոյ, որ խրատ տայ որդւոյ իւրում Պերողեայ զի մի սպանցէ զՆնիբաղ:

Ասան որոց եւ է իրաւանց, որդեակ, որ ընդ որդիս եւ ընդ ծնողս են, աղաչեմ եւ խնդրեմ մի առաջի աչաց հօր քո զայն ամենայն անհնարին չարիս առնիցես եւ հասուցես: Ասկաւ ժամք են, զի երդուեալ յինչ որ դիցն է, ձեռն ի ձեռն դաշինս կուցար զի ի նուիրական սեղանոցն կերիցուք: Արդ հրաժարեալք ի խօսելոյ ընդ միմեանս, յանկարծակի ի նա՞ վառեսցուք. յարուցեալ ի հիւրամեծարն սեղանոյ զսեղանն ի գլխովին շաղախել արեամբ հիւրոյն կամիցիս: Օ՛ Ննիբաղ մարթացայ որ հայրս էի, ընդ որդւոյս ցածուցանել, իսկ զորդիս ընդ Ննիբաղայ ողբել չմարթիցիմ: Վու միայն յարձակելոց ես ի վերայ Ննիբաղայ, զի՞նչ առնիցէ այնչափ ամբօխ աղատելոց եւ

սպասաւորաց, զի՞ ամենեցուն աչք ի նա յառեալ
 Հային, այնչափ բազուկք միթէ ընդարմացեալ կայ-
 ցեն յանմտութեան անդ: Օխարդ ժուժել կարաս-
 ցես յերեսաց նորին իսկ Մենիբաղայ յորմէ գունդք
 գունդք սպառազինաց դողան, յորմէ Հռոմայեցիք
 անգամ սոսկան եւ զարհուրին: Աւ եթէ չգուցէ եւս
 ուստեք օգնականութիւն, զիս ինքն դիտովին, զիմ
 մարմին զոր առաջի արկից փոխանակ ընդ մարմնոյն
 Մենիբաղայ խոցել առնուցնուս յանձն. այլ նա ընդ
 լանջս իմ յարձակելոց եւ հարկանելոց է դքեզ: Յանձն
 առ առաւել աստ երկնչել, քան անդ ի պարտու-
 թիւն մատնել: Օջորացին աղաչանք իմ առ քեզ,
 որպէս զօրացանն իսկ այսօր վասն քո:

Գ Գ Լ Ո Ի Խ

ԳԲԳՌԵԼԵԻ ՅԱՄՈՒՅԱՆԵԼ

151. ԳԲԳՌԵԼ է խռովեցուցանել զայլս, յոր-
 ժամ որ զմիտս ամբոխին զայրացուցեալ յապս-
 տամբութիւն եւ ի ստահակութիւն յորդորէ. օրի-
 նակ ինչ սմին ի Տակիտոսէ բերից, որ պատմէ թէ
 զօրական մի էր ի բանակին Հռոմայեցւոց, այլ խռ-
 վիչ եւ ստահակ, որոյ մատուցեալ առ զինուորա-
 կիցսն ջանայր յապտամբութիւն զրդուել այսպիսի
 ինչ մենքենաւոր բանիւք եւ ասէր. Մնդէր սակաւ
 հարիւրապետացն եւ եւս սակաւ հազարապետացն ըստ
 օրինակի ծառայից հնազանդիցեն. երբ մտաբերեցեն
 մարթեւ զտանել զարմանս, եթէ ոչ առ նոր իշ-
 խանն եւ որ տակաւին ի վարանս է աղաչանօք կամ
 զինուք մատչիցին: Մաւական իսկ են վնասք որ ընդ
 այնչափ ամս յուրութեամբ եղեն. զի զերեսուն եւ դքա-
 ուստուն ամ առին թոշակս ձերք եւ բազումք եւս
 խեղք մարմնով ի վիրաց: Աւ ոչ յետ արձակելոյ զբա-
 լինիցի զինուորութեան, այլ կայցեն մնայցեն յիւ-
 բաքանչիւր դրօշս եւ այլով անուամբ զնոյն վաստակս

կրիցեն: Աւ յետ սակաւ միոյ ասէ. Յաւուրն տասն տասն լուամայի զոգի եւ զմարմին միանգամայն տալ. նովին զհանգերձս, զգէնս, զվրանս հողալ պարտ է, ի հարիւրապետաց խոտութենէ, եւ ի խափանածոյ ոռճկաց փրկել, նա ի բանից իսկ եւ ի վերաց, ի սաստիկ ձմերայնոյ եւ ի տապախառն ամարայնոյ, ի խիստ ինչ պատերազմէ եւ յանպտուղ եւ ի մշտնջենաւոր խաղաղութենէ:

Գրգռելոյն հակառակ է ցածուցանելն, որով կամ ընդ մեզ զոք հաշտ առնեմք եւ կամ զորս յերկպառախութեան իցեն, ջանամք ի միաբանութիւն եւ յաղերս ածել: Որպէս երբեմն Գերմանիկոս Վայսր զզօրսն աղմկեալս իմաստութեամբ ցածոյց. եւ Յուզիոս Վայսր նոյնպէս սանձահարեաց զզօրսն, Հոռմայեցիս կոչելով, փոխանակ զօրս ասելոյ. եւ նովին միով բանիւ յանկարծ նուաճեաց զապստամբութիւնն:

Գ Գ Լ Ո Ի Խ

ՅԼՆՉՆ ԼՌՆԵԼ

152. ՅԼՆՉՆ առնել է զոք ումք ընծայեցուցանել, որ է զի եւ բացականաց լինի թղթովք ընծայութեան: Ի յանձնն առնել երիս ինչս պարտ է առնել, նախ զպատճառս ընծայութեանն յայտ առնել, եւ զայն պարկեշտութեամբ եւ ցածութեամբ, թէ արժանի է այրն երախտիս գտանելոյ ի մէնջ եւ ի մերոց, եւ թէ մերձաւոր մեր է ազգականութեամբ կամ խնամութեամբ եւ կամ բարեկամութեամբ, եւ թէ մարդասէր է յոյժ, հաւատարիմ, իմաստուն, առաքինի. եւ զնովիմբ ածել մարթ է, թէ զիտեմք զոր Որատիոսն ասէ, թէ Զգոյշ լեր խնամով եւ տես թէ զո՞ գովես, զի մի օտարին մեզք քեզ յամօթ եւ ի նախատինս լինիցին: Բայց առնն լաւութիւն եւ պատուականութիւն յայտնի եւ ծանօթ են մեզ:

Արկրորդ յայտ արարցուք թէ վասն որոց իրաց յանձն առնեմք զայրն:

Արրորդ աղաչեացուք եւ վկայութիւն գիցուք, կամ ասացուք թէ չկամիմք երկայն ձկաւել զի մի զնորա մարդասիրութենէ, զոր աղաչեմքն, երկմտեալ ինչ թուեսցուք:

Չորրորդ խոստացուք թե եւ մեք եւ նա զոր յանձն առնեմք, գոհացող լինելոց եմք եւ գոհչատակ երախտեացն ունելոց եմք ի մտի:

Այսրթի եւ կողմնակի իմն յանձն առնել զքք, ուր թուի թէ չկամիմք նմա յանձն առնել զայրն, սակայն մեծապէս գովութեամբ յանձն առնեմք, որպէս եթէ ասիցէ որ ցբարեկամն թէ զՍեքստիս չկամիմք քեզ յանձն առնել, բայց աղաչեմ միայն, զի մի գոհարեցոցիս մտադիւրագոյնս ճանաչել զայրն: Օ՛ի ակն ունիմ թէ քան ես քեզ, որպէս սովորութիւն իսկ է որոց յանձնն առնեն զքք, դու ինձ մանաւանդ շնորհակալ լինելոց ես, զի յիմ ձեռն այնպիսի բարեկամութեան հասեր:

Ե Գ Լ ՈՒ Խ

ԽՆԴԻՈՒԱԾ

153. ԽՆԴԻՈՒԱԾՔ է որով խնդրեմք ինչ յու-
մեքէ վասն մեր, կամ վասն այլոյ ուրուք. բայց խըն-
դրուածն որ վասն այլոյ ուրուք լինի, բարեխօսու-
թիւն կոչի. զերկոսին եւս ճարտարութեամբ բովան-
դակեալ ի գլուխ եհան Սերուիոս, ի պատմել իւրում
զՆ.յերայ առ Աւստրոս աղաչանսն:

Նաեւորաց, ասէ, պարտէ յամենայն խնդրուածս
զայսոսիկ խնամով ունել ի մտի: *Ասխ զոր խնդրենն
գիւրին ինչ իցէ, զի չէ օրէն զկարի գոհարին ինչ
խնդրել, յորմէ բազում աշխատութիւն հասանիցէ
այնմ յորմէ խնդրին: Արկրորդ անգամ արդար լիցի
խնդրուածն եւ իրաւացի: Արրորդ չափով եւ համու-
տութեամբ լիցի, այս ինքն է զի եթէ չիցէ մարթ
գմեծամեծսն տալ, փոքումբ շատանայցէ: Չորրորդ
անգամ զնովիմբ ածել թէ փոխարէն ինչ հատու-

ցումն ըստ իւրում կարին առնելոյ է: Օ շորեօին զայ-
տոսիկ մարթ է գտանել յԱյերայ խնդրուածսն, նախ
ասէ թէ գիւրաւ մարթի լինել:

Եւ լողէ, քանզի քեզ գիցն հայր, եւ մարդկան
թագաւոր,

Եւ ցածուցանել ետ զալիս, եւ յարուցանել
հողմով:

Եպա ցուցանէ թէ արդար են խնդրուածքն այնու զի
վասն ի թշնամեաց ապրելոյ աղաչէր:

Ընդ տիւռենական համատարածն նաւարկէ
ազգ թշնամի:

Եպա երկուս ինչս խնդրեալ, միովն յերկոցունց ան-
տի շատանայ:

Տուր բռնութիւն հողմոց, զիսելս նաւացն ըն-
կուղեալս ծածկեա.

Կամ տար ընդ այլեայլ կողմանս, եւ ցրուեա
զմարմինսն ի մէջ ծովուն:

Յեա այնորիկ վարձս ընդ երախտեացն խոստանայ:

Են իմ Նիմիայք շրեքտասան աղնուազոյնք
մարմնով,

Յորոց զՎեւոպէա, որ չքնաղաղեղն է եւ իմ
սեպհական,

Յօգեցից հաստատուն ամուսնութեամբ, եւ
նուիրեցից:

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՕՐԻՆԱԿՔ ՎԱՄՆ ԽՆԴՐԵԼՈՅ ԻՆՁ

Գեղեցիկ գանձ մթերեալ է բարերարութիւն.
Սենանդ:

Բարերարել մարդոյ է մեծամեծ ինչ երախտիս
դնել ի պահեատ առ Վստուծոյ. Սիդանիս:

Տուրք իշխանաց վարձք են ծառայութեան.
Ղեմսութ:

Թաղենիք ոչ բերեն ծաղիկ եւ տան պտուղ քաղցր.
նոյնպէս են որ երախտիս առնեն, այլ ոչ խոստանան
յառաջագոյն. Պղուտարք:

Միայն զմեծութիւնս զորս տայցենն, հանապաղ
ունիցիս . Մարտիազ :

Իշխանն որ առատամիտ է, բարեկամն ի թշնա-
մեաց, յօտարաց իւրս, եւ ի նենգաւորաց հաւատա-
րիմն գործէ . Յովհաննոս :

Ազնուազոյնս պահպանի քաղաք բարերարու-
թեամբք, քան զինուք սպառազինաց . Նոյն :

Երախտիք եւ շնորհք են կապանք միաբանու-
թեան . Վիկ :

Երանելի պարգեւք են յանձին իշխանի առա-
տամիտ կամք եւ գթութիւն . Պոմպ . Ղատին :

Մարմինք կերակրով սնանին, միտք ազնուա-
կանք գովութեամբ, պատուով եւ պարգեւօք . Վսեն :

Յոյժ իսկ պայծառազոյն է զերախտեաց քան
զախոյանաց յիշատակ թողուլ . Նոյն :

Առատութեան ոսկեղէն սերմն ածէ զհողմն
շնորհաց, յորմէ ելանեն հունձք պատուոյ . Սոփոկղ :

Ազահութեան փախուստ եւ առատութեան
շնորհք թագաւորաց փառք են եւ թագաւորու-
թեանց հաստատութիւն . Լքիստ . առ Լղէքս :

Արիստս իբրեւ մեծութեամբք յօրանայր առա-
ջի հրեշտակաց արտաքնոյ, Լզիպտացւոց պատգա-
մաւորն եհարց, թէ ո՞ր գանձ քան զամենայն օգտա-
կարազոյն իցէ . որում ետ պատասխանի թագաւորն,
թէ առատաձեռնութեանն գանձ առաւել է քան
զամենայն գանձս ոսկւոյ եւ ականց պատուականաց .
Պղուտարք :

Յակորոս երկրորդ Լքագոնացւոց թագաւոր ետ
նկարել եղջերու թեւաւոր ոսկեղէն եղջերօք, գրեալ
ի վերայ գիր ե՛ի ՈՍԿԻՈՎ Ե՛ի ԵՐԱԳՈՒԹԵԱՄԲ . ակնար-
կէր եթէ իշխանաց պարտ է առատս լինել եւ արագ
ի գործել . Տիպոկիոս :

Արեղիանոս ինքնակալ իբրեւ խնդրեաց յիւ-
րոցն թէ որով օրինակաւ բարւոք վարիցէ զթա-
գաւորութիւնն, ետ պատասխանի ոմն, թէ ոսկւով

եւ երկաթով . այս ինքն է առատութեամբ , այլ առատ եւ հզօր ձեռամբ . Թոնարոս :

Պտղովէոս թագաւոր անհնարին զուարճանայր , եթէ յիւրմէ զոք մեծացեալ տեսներ . եւ ասել սովոր էր . Մեծ իմն է թագաւորաց մեծացուցանել քան զմեծանալ . Վոկեր :

Աղեքսանդրոս մեծ վիճեալ ընդ փիղիսոփայս , իբրեւ վասն երջանկութեան հարցաւ , զայս ինչ ասաց . Չիք ինչ այնպէս երանելի , որպէս տրովք եւ պարզեւօք զբազումս ընդ անձին զօղել : Աւ ինքն պանծացեալ պարծէր թէ նմա ի բնէ տուեալ իցէ , ոչ ումք թողուլ զլել զինքն բարեբարութեամբք . Նոյն :

Ոմն ի թագաւորաց շնդկաց հանդիպեալ Աղեքսանդրի մեծի ասէ . կոչեմ զքեզ ոչ ի կուի եւ ոչ ի պատերազմ , այլ յայլ իմն ազգ մրցութեան : Աթէ խոնարհագոյն քան զմեզ իցես , ընկալջիր երախտիս , ապա եթէ վերագոյն օք ես , մեզ երախտիս արա . Պղուտարք :

Ազոստոս ինքնակալ իբրեւ էառ զիշխանութիւնն , ոչ ընդ այլ ինչ , ասէ , այնպէս ուրախ եմ , որպէս ընդ հասանել յայնպիսի աստիճան առաջութեան , յորմէ տացի ինձ իշխանութիւն ամենեցուն բարեգործելոյ . Վիսն :

Վիսնիսիոս արքայ Սիկիլիացւոց մեծանուն , այն որ ի Սիրակուսս բռնացեալ տիրեաց , մտեալ առ օրդին իբրեւ ետես զմեծասպաս փառաւորութիւն եւ զգրուագս սակոյ եւ արծաթոյ ի սեղանի անդ , օրդեակ , ասէ , ոչ դոն ի քեզ միտք արքունականք , որ այդու ամենայնիւ շարարեր քեզ զոք բարեկամ . Պղուտարք :

Միմոն Աթենացւոց իշխան այնպէս ի տալ պատրաստ եւ յօժար էր , զի եւ զկալուածսն զորս ի տեղիս տեղիս ուներ , առանց պահապանաց եւ պահպանութեան եթող , զի մի օք այնպէս խափանեացի , որ

կամիցին իւրովք բարութեամբք վայելել: Աւ իբրեւ
գնայր ուրեք, ծառայք արծաթով գհեա նորա երթայ
ին, զի եթէ դք նորա ընչիւք կարօտ իցէ, վաղվազակի
ունիցի զինչ տացէ. Նոյն:

Ապիկատեսու տայր խրատ թէ զոր օրինակ արեւ
գաին ոչ կայ եւ սպասէ աղաչանաց եւ ողբանաց, զի
ծագեսցէ, այլ իւրովի յառնէ, եւ ամենեքին ողջոյն
տաննմա, նոյնպէս եւ դումի կար մնար լսել կայթիւնս
եւ յարգանս զի բարիս առնիցես, այլ ինքնակամ
կամք արա երախտիս, եւ իբրեւ զարեգակն լինիցիս
հաճոյ. Ստորէոս:

Թէնոգոսեայ ինքնակալի այնպէս ստոյգ էին եւ
բախտիք, զի յայնժամ իսկ ընկալեալ հաշուէր, յոր
ժամ խոստանայրն: Աւ Սաքսիմիղիանոս առաջին
սովոր էր ասել. Պուլթ ոչ կայ մնայ աղաչանաց կա
րօտելոց, այլ ուր կարիս ինչ տեսանէ յառաջ քան
զաղերս փութայ ճեպի:

Այսպիսի ինչ դովութիւն գրեալ կայ զՆղե
քսանդրէ Սեւերոսէ կայսերէ. շէանց օր, յորում
չառնէր ինչ որ հեզութեան, մարդասիրութեան եւ
աստուածպաշտութեան էր. այլ այնպէս զի ոչ թա
փեաց եւ կործանեաց զարքունի գանձն:

Արքեզաւոս արքայ Սակեդոնացոց, յորժամ
ոմն ի նմանէ խնդրեաց նուազ ոսկեղէն, նա հրաման
եա սպասաւորին զի զնոյն Նարիպիգեայ տացէ, եւ
ցնա որ խնդրէրն զտաշան ասէ. դու արժանի էիր
խնդրելոյ եւ շառնոյ. իսկ սա արժանի է զի առցէ
եւ ոչ խնդրեսցէ. Պղուա:

Աղեքսանդրոս մեծ հարցեալ թէ ուր իցեն
գանձք նորա, զբարեկամն եցոյց, դոքա, ասէ, իմոյ
առատութեան դարանք են:

Աղեքսանդրոս Սեւերոս ինքնակալ զԻւրաքան
չիւր ուրուք զանուն, որոց օգնականութիւն ինչ մա
տուցեալ էր, գրեալ պահէր. եւ որ ոչ ինչ եւ կամ
սակաւ ինչ խնդրէին, զնոսա կոչեցեալ ասէր, զի է

զի չխնդրես ինչ, միթէ կամի՞ս զի ես քեզ պարտա-
կան գտանիցիմ, խնդրեա զի մի զըկեալ ինչ յինէն
տրանջեացես :

Ազապետոս այսպէս գրեաց առ Յուստինիանոս
ինքնակալ. Հանդերձք որ ոչ հնանան, են ազանե-
լիք եւ անեղծ պատմութեան բարերարութեան որ աղ-
քատաց առնի: Արդ այնմ որ ստոյգն թագաւորել
կամիցի, պարտ եւ պատշաճ է այնպիսի հանդերձից
գեղեցկութեամբ զմիտս զարդարել, զի որ զծիրանիս
սիրոյ որ առ կարօտեալս է, արկանիցէ զանձամբ,
զսպիտակութիւն պայծառութեան երկնիցն արքայու-
թեան զգեցեալ է. Բոկեր:

Մենեկրատէս այսպիսի ինչ պայմանաւ բժշկէր
ձրի զբազումս, զի հանդերձս ի նմանէ առեալ խոս-
տովան լինիցին, եթէ ընդ նորա խնամովք են եւ ի
նմանէ իսկ զառողջութիւն ընկալան. Պղուտարք:

Ղուգովիկոսի երանելոյ էին աղքատք հարեւր
եւ քսան, որ ամենայն ուրեք զհետ նորա շրջէին, եւ
նովին կերակրով որով նայն, սնանէին. իսկ յաւուրս
քառասնորդացն կրկնէր զթիւ աղքատաց: Իսկ Ղու-
գովիկոս հինգերորդ արքայ Սկոտացւոց առ առատու-
թեանն ի կարօտեալս յորջորջանս ընկալաւ, զի հայր
աղքատաց կոչիցի, եւ զնոյն յորջորջումն քան զայլ
ամենայն անուն ազնուադոյն եւ պատուական հա-
մարէր:

Թ. Գ. Լ. ՈՒ Ի Խ

ՄԻԻԹԱՐԵԼ

154. Որ միթարէն կամ կրտսեր է, կամ հաւա-
սար եւ կամ երէց: Որ կրտսերն է զգուշութեամբ
եւ մեղմով խօսեացի. դիցէ վկայութիւն վասն իւրոյ
սիրոյն, եւ մի մեծամտեալ մեծաբանել թուիցի. եւ
զոր ասելոցն իցէ, ասիցէ թէ երբեմն յառնէ իմաս-
տնոյ եւ ի խրատելոյ լուեալ է: Իսկ որ հաւասարն

կամ ընկեր է, վասն հասարակաց մտերմութեան ցուցանիցէ զանձն յօժարեալ ի խօսել: Բայց երիցուն մարթ է համարձակ եւս խօսել. եւ եթէ նա զոր մխիթարելն կամի, յանչափ տրամութեան եւ ի ցաւս իցէ եւ սփոփել շկամիցի, իշխիցէ յանդիմանել, բայց մեղմով եւ քաղցրախառն բանիւք:

Վասն մխիթարութեան այսպէս ասէ Սկաղիզէր յերրորդ դիրսն վասն արուեստի վիպասանութեան: Ար մխիթարէն, ասէ, կամ երէց է եւ կամ հաւասար. զերիցութիւն իմա, կամ որ իշխանութեամբ երէց իցէ, կամ պատուով, կամ մեծութեամբ, կամ իմաստութեամբ եւ կամ տիօք: Օխ այլ ազդ Վիւիա զՆասոն մխիթարէ, եւ այլազգ Նասոն զՎիւիա. այս իշխանութեան է: Պատիւ առանց իշխանութեան եւս մարթի լինել, որպէս եթէ հայր զորդի սփոփիցէ, կամ Պոմպէոս զՎիկերոն: Մեծութեամբք որպէս եթէ Արասոս յամբոխէ անտի զոք որ ընդ իւրով պաշտպանութեամբ իցէ: Իմաստութեամբ, զոր օրինակ Սենեկա զՊողիւբիսս կամ զմայր իւր: Իսկ վասն տիոց հասակին շէ հարկ օրինակ ինչ բերել: Արէցն կարօղ է ի մխիթարութիւնսն եւ յանդիմանութիւնս յաւելուլ. իմաստունն վիճմունս: Արտսերն ցուցցէ թէ յիմաստնոց առ ընկալաւ: Հաւասարն եւ զուգական վկայութիւն դիցէ վասն բարեկամութեանն, եւ հասարակաց մարդասիրութեան եւ զթոյ:

Եթէ ցաւք թախծելոյն այնպէս ծանր եւ այնպէս նորոգ իցեն, զի զամենայն դարման թուիցի ի բաց թքանել, ընդ երկուս բաժանել պարտ է զճառսն: Յառաջնումն պարտ է ցուցանել թէ շեմք բաւական զայլս մխիթարել, ուր մէք զլսովին մխիթարութեամբ կարօտ եմք. եւ զպատճառս եւս ցաւոյն յայտ արասցուք, եւ ի նոյն յարեացուք թէ ոչ միայն մէք, այլ եւ ամենեքին որ բարի են տիրին եւ վշտանան, եւ սոյն այս պարտի ում եւ է թախծելոյ

մեծ սխտուութիւն լինել, զի որպէս ասի, որ ինչ հասարակաց է, թեթեւագոյն է:

Իսկ ի միւսում եւս մասին զայնց ճառեսցուք, որ առ ցածուցանել զցաւս պատշաճ են, որ երեք իսկ են. նախ հասարակաց կենաց պայման, որ ընդ բազում չարեօք եւ վշտօք անկեալ է. երկրորդ անգամ իմաստութիւն, առաքինութիւն եւ մեծանձնութիւն այնորիկ զոր մխիթարեմքն: Արրորդ անգամ թէ անչահուութիւն, նա մնաս իսկ է, անչափն վշտանալ, յորմէ չիք հնար ուղղել կամ միւսանգամ նորոգել զմնասն: Չորրորդ անգամ համբերութեան զօրութիւն մեղմացուցանէ զամենայն, որպէս եւ ասաց Վենուսինոս պետէս, թէ Որ խիտն է, առնի թեթեւագոյն համբերութեամբ, յորժամ ուղղել չիցէ մարթ եւ հնար:

Չինգերորդ անգամ թէ բարի եւ վայելուչ է յոյժ ի խորհուրդս եւ ի հրամանս աստուածեղէն կամայն հանգուցեալ դադարել: Աւելցերորդ անգամ թէ քանիօն իմաստութեան է, եւ որչափ գովութեան, իմաստութեամբ եւ խորհրդով ցածուցանել եւ հանգուցանել զցաւս, որ աւուրբք եւ ժամանակօք մեղմանալոց եւ ցածնլոց են:



Ե Ր Ր Ո Ր Կ Ճ Ե ՈՒ

ՎԱՄՆ ԻՐԱՒԱՆՑ ԱԶԳԻ

155. ԻՐԱՒԱՆՑ վասն այնորիկ կոչի, զի զդատաստանաց եւ զդատ վարելոյ հանգամանս ցուցանէ, ուստի եւ բաց ի ճարտարախօսութեան արուեստէ, եւ իրաւանց դիտութիւն վասն սորին պահանջի: Բայց քանզի այս ազգ յայժմու ժամանակիս չէ այնչափ կարեւոր, համառօտիւք ասացուք ինչ ինչ վասն տեղեակ առնելոյ:

Թէ ՈՐԶԱՓ ՄԱՍՈՒՆՍ ՈՒՆԻՑԻ ԵՒ ՔԼՆԻՊԼՏԻԿ ԻՑԻ
ԻՐԱՒԱՆՑՆ ԱԶԳ:

Արկու մատուցէ են իրաւանցն ազգի, ամբաստանութիւն եւ պատասխանատուութիւն. ամբաստանութիւն վրէժ խնդրելոյ եւ պատժելոյ վասն է, իսկ պատասխանատուութիւն յաղաղս անպատիժ արձակելոյ: Բազում եւ ազգի ազգի ազգք են սորա: Ասի պարզ, յորժամ զմիտջէ իրաց կամ յանցուածոց ճառիցի: Արկրորդ բազմադիմի, յորժամ բազում յանցուածք նորին միոյ ազգի միանգամայն ի միասին դասնին: Արրորդ համեմատութեան անուանեալ, յորժամ խնդրիցի թէ ո՞ր իցեն իրաւունք: Չորրորդ դատախազութեան, յորժամ երկոքին կողմանք զմիմեանց չարախօսեսցեն, որպիսի էր ճառն վասն Սիղոնի: Օ՞ր Սիղոն ասէր թէ Վզոգիոս նմա դարան գործեաց, իսկ հակառակորդն պնդեալ էր թէ Սիղոն նմա արար նենդ:

Աիւթ իրաւանցն ազգի է այն ամենայն, զորմէ կազ եւ մաքառումն մարթի լինել, եւ դատաստանօք իրաւ առնի: Աւ կազքն կամ կուրք կամ պատժապարտութեան են եւ կամ քաղաքի. պատժապարտութեանն զյանցուածոց եւ զվնասուց է, իսկ քաղաքին վասն իրաւունս առնելոյ կամ համոզակեր լինելոյ:

Այս յակաստանի իրաւանցն ազգ, եթէ պատ-
ճառք հաստատիցին. որպէս յորժամ գործն ոչ ու-
րանայցի, այլ ստիցի թէ բռնութիւնն ոչ եղեւ. կամ
թէ չէ անիրաւ, որպէս յանդիմանին, այլ արդար եւ
իրաւացի է:

Մարթ է եւ վիճել եւ պայքարել ի վերայ օրի-
նաց, թէ այսպէս կամ այնպէս պարտ իցէ մեկնել,
թէ այս կամ այն կամք իցեն օրէնսդրին կամ մատե-
նագրին. մարթ է եւ օրինացն այլ օրէնս հակառակ
կացուցանել:

Պատճառք կոչին ի Վիկերոնէ այնք, որովք զայ
ինչ յարդիւնս, կամ ի գլուխ ելանէ. եւ կրկին է
ստիպել տազնապել, եւ խժբժել. որովք գրեթէ
երկեւան երկմտութեան փարատի:

Յաւելուածք են այն ամենայն որ յետ իրացն ի
գլուխ ելանելոյ կան մնան, եւ են նշանք կամ հետք
իրացն գործելոց. եւ սոքա կամ յառաջադոյն են, որ-
պէս շու եւ երթ ուրեք, սպառնալիք, հակառակու-
թիւնք, կազք եւ այլ նոյնպիսիք. կամ ի միտին
որպէս աղաղակ լսելի լեալ, բանք նշանակեալք, զդին
թագուցանել. եւ կամ յետոյ որպէս գեղնութիւն
երեսաց եւ այլ եւս նմանք. զի բազում ինչ վճարեն
յիրաւանց ճառս այս ամենայն, ո՛վ, զինչ, ո՛ւր, իւ
իւրք այլովքն հանդերձ, զորոց այլուրեք եղեն բանք:

Յօրինուած իրաւանց ճառից այսպիսի ինչ է:
Յառաջաբան այնորիկ որ ամբաստանէ, պարտի լի-
նել խտութեամբ եւ ատելութեամբ. իսկ որոյ ա-
ղերսն արկանէ, հեզութեամբ եւ գթով. վասն եր-
կոցունց եւս ոչ սակաւ ճարտարութիւն պահանջի:

Յետ յառաջաբանութեան զայ գործոցն պատ-
մութիւն յայտնի եւ հաւանութեան. որ յամբաստա-
նեւն երկայնադոյն լինի, քան ի պատասխանի տալ.
զի յայնժամ եթէ պատմիցին գործքն, ոչ պատմին
բովանդակ, բայց եթէ այնպէս ինչ օգուտ իցէ. իսկ
եթէ ողջոյն պատմութիւն ի վնաս իցէ, ամենեւին

պարտ է թողուլ, կամ միայն ի բաց հատանել զայնս որ շէն յօգուտ:

Օպատուութեան զհետ դայ հաստատութիւն, յորում ոչ խառնիխուռն եւ միանգամայն այլ մի բառ միջէ պարտ է առաջի դնել զյանդիմանութիւնս, զի զիւրեանց կշիռ եւ մեծ իմն զօրութիւն ստանայցեն, զորս ի միտ առնուցուս ի կանոնաց, որ կանխաւ ասացան յորժամ զտեղեաց ճառէաք, թէ զհարդառ իւրաքանչիւր խնդիր պատշաճ պարտին լինել պատճառք: Օ ի հաստատութեանն յանդիմանութիւնք այնպէս յօրինել պարտին, զի հզօրագոյնք եւ առողջագոյնք յառաջնումն եւ ի վերջնում տեղող ճառին կարգեսցին. իսկ որոց սակաւ ինչ զօրութիւն իցէ ի միջոցին կայցեն: Անդ զօրաւոր յանդիմանութիւնս համարի սաստիկ ինչ գլուխ բանից, կամ հարցուածով, կամ գոչմամբ եւ կամ բողոքելով: Հաստատութիւն պարտի համեմատ լինել ճառից հակառակորդին. զի զզօրեղ յանդիմանութիւնս դատախազին կամ լուծանել պարտ է, եւ կամ, որպէս թէ դուզնաքեայ ինչ իցեն, պատասխանի անգամ չէ պարտ տալ. իսկ որ արդարեւ դուզնաքեայք իցեն, զնոսա պարտ է սաստիկութեամբ մերժել. ուր ոչ սակաւ օգուտ են խաղք եւ ծաղրածութիւնք: Ասցց եւ զբազում ինչ պարտ է ընդկուտակել կամ մթով պաշարել, սակայն այնպէս, զի ցուցցուք թէ շունիմք ինչ երկեւղ. տեսցես եւ զորս զխախտելոյ ասացեալ են:

Իսկ վերջին բանք պարտին զամենայն զճառն բովանդակել, նա եւ զայլ եւս շարժմունս, որպէս զատելութեան, զսիրոյ, զգթոյ, զողոքանաց եւ զողորմածութեան, զորոց ուրոյն ուրոյն բանք եղեն յերկրորդ ճառս:

ՎԼՍՆ ՅՕՐԻՆԵԱԼ ԿԸՐԳԵԼՈՅ ԶԻՐԱԵՆՑՆ ԸԶԳ

Ի ճառս դատաստանաց, էթէ հրապարակաւ լինիցին, ի ժողովոյն եւ ի հանդիսատեսացն պարտ է սկիզբն առնել, եւ աղաչել զի մտադիւրութեամբ եւ յօժարութեամբ ունին դիցեն: Այթէ հասարակաց ինչ հանապազորդ ճառք իցեն, ճարտարախօսն նոյնպէս յայտ առնիցէ թէ ունի ինչ ասել, առ ի յայտ առնելոյ զիրօն, որ տակաւին չիցեն ի հանդիսի անցուցեալ բանիւ կամ նամակաւ. զայն ամենայն այնպէս պարտ է առնել որպէս բազում անգամ ասացաւ: Իսկ ի քաղաքի իրս սկիզբն կարճառօտ պարտի լինել, եւ ի խնամոց դատաւորին արժան է սկսանել զճառսն: Օպատմութիւնն պարտ է համառօտիւք կարճառօտս հատանել եւ յայտնի բանիւք, իսկ բանքն պարտին լինել ցածութեամբ եւ շքով, եւ մի սեթեւեթելով եւ պաճուճանօք բանից:

Ե Գ Լ ՈՒ Խ

ՀՐԱՀԱՆԳՔ ԱՓԹՈՆԵԱՅ

156. Առ իրաւանցն ազգ պատշաճին այս հրահանգք, յորս բովանդակին Հաստատութիւն, Խախտումն, Հասարակաց տեղի եւ Օրէնսդրութիւն

Ա. ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ

Հաստատութիւն է ի հանդիսի անցուցանել զիրս որ առաջի եղան: Աս այսպիսի ինչ օրինակաւ յօրինի. յառաջաբանն կամ սկիզբն լինիցի գովութիւն առ այնոսիկ, որոց զբանն զորմէ խնդիրն է, ասացեալ կամ գրեալ իցէ. ապա զնորին զհետ եկեացէ յայտ առնել եւ յանդիման կացուցանել զնոյն բանս. յետոյ ապա նոյն հաստատեսցի, յայտ արարեալ նախ թէ յայտնի եւ երեւելի են իրքն. երկրորդ անգամ հաւանութեան են եւ ըստ բազմացն կարծեաց, երրորդ անգամ թէ հնար է այնպէս լինել

եւ պատահել իրացն . չորրորդ թէ միաբան եւ հաւան են միտք , այս ինքն է , չէք ինչ հակառակութիւն . հինգերորդ անգամ թէ օգտակար եւս է : Յետ այսորիկ գլխաւորին եւ կատարին վերջին բանք :

Հաստատութիւնս այս միաբան գտանի ընդ այնք հաստատութեան զորմէ վերագոյն (40) ասացաւ , վասն որոյ անդէն յուզեալ գտցես : Միում միում ի սոցանէ օրինակս գտցես յիւրաքանչիւր ճառս կիկերոնեայ :

Բ . ԽԱԽՏՈՒՄՆ

Խախտումն է զիրս որ առաջի կան յանդիմանել եւ ցուցանել թէ չեն այնպէս : Այս այնք խախտին , որ չեն ամենեւին յայտնի , եւ ոչ բնաւին անհաւատ :

Արդ խախտման այսպիսի ինչ է . զյառաջաբանն մարթ է առնել ի յանդիմանութենէ այնոցիկ , որոց զայն բանս ասացեալ իցէ . ապա յետ այնորիկ ի մէջ բերել զասացեալն , եւ յետոյ զնոյնս խախտել եւ մերժել . զոր մարթ է առնել , յայտ արարեալ նախ թէ մթին են իրքն . երկրորդ թէ չեն հաւատալի . երրորդ անգամ թէ անհնարին են . չորրորդ անգամ թէ երկբայ իմն են . հինգերորդ թէ չեն վայելուչ . վեցերորդ թէ անօգուտ եւս են . եւ ապա յետոյ գլխաւորի վերջին բանիւք :

-Գ . ՀԱՍԱՐԱԿԱՅ ՏԵՂԻ

Հասարակաց տեղի են ճառք , յորս բարի ինչ կամ չար , որ յիմիք գոն , աճեցուցանին : Առջի հասարակաց տեղի , զի պատշաճի ամենայնի որոյ հաղորդութիւն ինչ իցէ ընդ այնք իրաց , զորոց խնդիրն է . որպէս որ ինչ զմեզաց առհասարակ աօիցի , մարթի ստել զմիտջէ միտջէ մեզաց ուրոյն առանձինն , զժուլութենէ , զամբարտաւանութենէ , զնախանձուէ :

Այսպիսի իմն է յօրինուած հասարակացն տեղոյ : Յառաջաբան է եւ չէ , այլ սկիզբն առնի ի

Հակառակէն յանդիման կացուցեալ զիրան, զի լսողքն առաւել Հաւանեային: Յետ զսկիզբնն ասելոյ ի Հակառակէ բարեաց կամ չարեաց, իրքն որ աճեցուցանին, յաճախագոյնս պարտին ի յայտ գալ. եւ ապա սկիզբն լինի աճեցուցանելոյ, նախ Համեմատութեամբ իւրիք:

Արկորդ յայտ առնելով զգիտաւորութիւն նորա, զորմէ բանքն են:

Արբորդ անգամ ցուցանելով զկարծիս զկենաց նորա զանցելոց կամ զհանդերձելոց:

Չորբորդ մերժեալ զողորմութիւն եւ զգութ, եթէ իցեն բանք զպատժապարտէ. այլ ոչ յորժամ գոգովութիւն ուրուք իցէ. իսկ եթէ պատասխանատուութիւն վասն ուրուք իցէ, պարտ է յայտ առնել թէ արժան է առնել ընդ նմա ողորմութիւն վասն նոցին պատճառանաց, վասն որոց նոյն չնորհի յանցաւորին: Աւ յորդորի ողորմութիւն նախ ցուցեալ թէ օրէն է, երկրորդ անգամ արդար, երրորդ օգտակար, չորբորդ անգամ դիւրին եւ հնար իսկ է, հինգերորդ անգամ ի դիպաց, յայտ արարեալ թէ զինչ ինչ պատահեալ իցէ, կամ զինչ զհետ եկեալ:

Գ. ՕՐԷՆՍՄԻՐՈՒԹԻՒՆ

Օրէնագրութիւն կոչի օրինաց եղելոց պաշտպան կամ մեղադիր լինել: Այսպիսի ինչ է սորին յօրինուած. յետ սկզբան առաջի դնին օրէնք, ապա եթէ իրաւունս տալոց իցէ, յանդիմանութիւնս պարտ է գտանել, նախ յայտ արարեալ թէ օրէնքն որ եղան, արժան եւ իրաւացի են. երրորդ թէ օգտութիւնս եւս բազմապատիկ ունին: Ապ'եթէ կշտամբել յանդիմանել կամ իցիս զօրէնսն, պատճառք ի նոցին Հակառակէն խնդրին: Յերկոսին իսկ եթէ յիրաւունսն տալ եւ եթէ ի մեղադիր լինել, առնին խնդիրք, որ յիւրաքանչիւր զլուխ յարին, եւ տարակուսանք լուծանին:

Ասացուք այժմ զազգի ազգի ճառից իրաւանց:

Բ Գ Լ Ո Ի Խ

Ա. ԱՄԲԱՍԱՆՈՒԹԻՒՆ

157. ԼԻԹԷ ոք որոյ իցէ ճոխութիւն, կամ որ եւ է ոք, առաջի զուգականաց իւրոց լինիցի ամբաստան զուսմէքէ, պարտի սկիզբն առնել ամբաստանութեան իւրոյ, թէ յամենայն վրէժխնդրութենէ, ի թշնամութենէ, յատելութենէ եւ յոխակալութենէ, յամենայն իսկ չար ախտից ազատ է. որպէս Աիկերոն առնէ ի սկզբան ճառին որ ըղձութիւնն անուանեալ կոչի :

Թեւեւս ի ձէնջ ոք, դատաւորք, եւ կամ ի նոցանէ որ շուրջս կան, զարմանայցէ իմն ընդ իս, թէ որ զայնչափ ամն յիրաւունս եւ ի դատաստանս հասարակաց այնպէս շրջեցայ, զի պաշտպանեցի բազմաց, վնասեցի եւ ոչ ուսմէք, յանկարծ այժմ փոխեալ յայնպիսի մտաց, իջեալ կամ յամբաստան լինել. սա, եթէ զիմոյ խորհրդեան զպատճառս եւ զհանգամանս գիտէր, միանգամայն եւ ընդ այն, զոր առնեմն, հաճեալ հաւանէր, եւ ի դատաստանի աստ չհամարէր իսկ թէ պարտ իցէ զոք յամբաստանաց քան զիս նախամեծար առնել : Մինչ դեռ կասարձակիրն էի ի Աիկիղիս, դատաւորք, եւ այնպէս յաշխարհէ անտի ի բաց գնայի, զի Աիկիղիացւոցն ամենեցուն հեշտահան իմն եւ հանապազորդ յիշատակ իմոյ իշխանութեան եւ անուանս թողուցում, գէպ եղեւ զի, զոր օրինակ բազում իմն ի բազումս ի հին վերակացուաց, նոյնպէս եւ յիս սակաւ ինչ պահպանութիւն իւրեանց ընչից հաստատեալ համարէին : Ար այժմ կողոպտեալք եւ լլկեալք, համօրէն առ իս եկին հրապարակաւ, զի զամենայն զիւրեանց գոյից զդատաստանս եւ զպատասխանատուութիւն յանձն առից. քո բազում անգամ խոստացեալ եւ յայտ արարեալ է, ասէին, զի թէ եկեսցէ ժամանակ, յորում խըն-

գրիցէք ինչ յինէն, առնել ինչ դելր ձեզ չեմ հրա-
 ժարելոց. եկն եհաս, ասեն, ժամանակ, ոչ զի մե-
 րում ինչ դիւրի, այլ զի կենաց եւ փրկութեան ող-
 ջոյն իսկ գաւառին պաշտպանիցես. զիք անգամ ի
 քաղաքս մեր, առ որս ապաւինեսցուք, ոչ գոն մեր.
 զպատկերս նոցա զնուիրականս Վ. Վերբէս երարձ ի
 պաշտամանց տեղեաց: Օր ինչ իրս զեղխութիւն ի
 յոռութիւնս, անագորունութիւն ի տանջանս, աղա-
 հութիւն ի յափշտակութիւնս, ամբարտաւանութիւն
 ի թշնամանս գործել մարթիցի զայն ամենայն, ասեն,
 մէք առ միով հաղարապետաւ երեամ մի կրեցաք.
 աղաչէին եւ աղերսէին զի մի արհամարհեցից ինչ զա-
 ղաչանս նոցա. մեզ չէ պարտ եւ պատշաճ, ասեն,
 ցորչափ դուդ ողջ ես, զոք աղերսել: Վժկամակ իմն
 եղէ եւ զւարեցայ, դատաւորք, զի ցայն վայր եկի,
 զի կամ նոցա պարտ էր ի յուսոյ վրիպել, որ յինէն
 զօրաւիզն օգնականութեան խնդրէին, կամ ինձ որ
 անդասին ի մանկութենէ պաշտպան լինել մարդկան
 առ ի յանձն, ստիպեալ ի ժամանակէ եւ ի պատշա-
 ճից, հարկ էր յամբաստանել զալ: Ասեմ, է ձեր
 դատախազ Վ. Վեկիղիոս, որոյ ստիկան իսկ լեալ է
 ի նմին գաւառի, յետ իմոյ կապարճակիրն կալոյ:
 Արով օգնականութեամբ ես ակն ունէի թէ կարի-
 ցեմ զհոգն յանձնէ ի բաց թօթափել, այն ինձ մե-
 ծապէս թշնամի հակառակորդ էր: Օի նոքա յոյժ
 իսկ դիւրաւ թողուին ինձ զայս, եթէ զդա չգիտէին,
 կամ եթէ դորա չէր առ նոցա իշխան լիեալ: Յոր-
 դորեալ իմն եմ, դատաւորք, ի պարտուց, ի հաւա-
 տոց, յողորմութենէ, յօրինակէ բազմաց որ բարիքն
 են, հին ինչ սովորութեամբ, հաստատութեամբ
 աւագաց, զի զրեւն զայս զաշխատութեան եւ զսպա-
 սու, ոչ յիմ ինչ, այլ յիմոց կարեւորաց վիշտս յանձն
 առնուլ արժան համարիցիմ: Սակայն եւ ի սոյն
 գործ այն իմն զիս միտթարէ, դատաւորք, զի զոյն
 զայս որ ամբաստանութիւնս թուի, ոչ այնչափ ամ-

բաստանութիւն , որչափ պատասխանատուութիւն պարտ է համարել : Օ ի պատասխանի տալոց եմ բազում մարդկան , յորով քաղաքաց եւ ողջոյն իսկ Սիկիդիացւոց աշխարհին :

Աթէ պարտաւորն վատանշան ոք իցէ , մարթ է սկիզբն առնել ի թշուառութեանց ժամանակին եւ ի զեղծ բարոյից , կամ ի ցոփութենէ մտակորոյս առնն , կամ ի շտապ տաղնապէ պատժելոյ զյանցաւորսն վասն հասարակաց շինութեան եւ օգտի , կամ ի վնասուն ծանրութենէ , կամ՝ յայլ ինչ նոյնպիսեաց : Իսկ պատմութիւն ուժգին պարտի լինել քան պաճուճանօք , որպէս նախն ասացաւ : Ի հաստատութեան սծիրք վնասուցն իւրաքանչիւր դումարին եւ խնամով մի ըստ միոջէ յայտ առնին , վճիռք ինչ պատմին , վկայք ի մէջ մուծանին , սճով մանր քննին իրքն , ի մէջ գան պատճառք որ յօգնականութիւն իցնն , միաք ստուարացուցանին , դոյզն յանդիմանութիւնք զեղելով ասին :

Ս երջին բանք պարտին զցատումն եւ զատելութիւն զրգուել :

Բ. ԱՂԵՐՍ ԿԱՄ ՊԼՏԱՍԻԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆ

158. Պատասխանատուութեան սկիզբն առնի մերթ ի տեղւոջէն , եւ մերթ յորոց շուրջն կան երբեմն ի սպասաւորութեանց եւ ի պաշտամանց , եւ այլ երբեմն յառնէն վասն որոյ պատասխանատուութիւնն է , եւ կամ ի խոստովանութենէ մոլորութեանն , կամ ի գթութենէ եւ ի մարդասիրութենէ դատաւորին , կամ ի նմանէ որ ամբաստանէն , յայտարարեալ թէ առ ցասման , եւ առ դատարկութեան էառ յանձն չարախօսել : Յետ յառաջարանութեան դայ համառօտիւք պատմութիւն , որ որպէս ասացաք ի պատմութեան տեղւոջ , մի է ի բազում մասանց ծառին : Ապա յետ պատմութեան կարեւորագոյն տեղի խախտումն է , զի որ զհակառակորդն սուտ առնէ կամ յանդիմանէ , զիւրոյ դատատանին արգարու-

Թիւն միանգամայն հաստատէ. եւ խախտել պարտ է մանաւանդ զայն բանս հակառակորդին, որ եթէ կործանիցին, մնացեալքն դիւրաւ քայքային. վասն խախտելոյ ասացաւ նոյնպէս ի ճառս յօրինուածոց:

Ա երջին բանք բազում անգամ աղաչանօք լինին. գտանիցես ի նոյն ճառս եւ զվերջին բանից ասացեալ բազում ինչ:

Վիցուք օրինակս ինչ ի Աիկերոնեայ վասն պէսպէս սկիզբն առնելոյ ամբաստանութեան ճառից, որ դժուարինն է ի ճառս իրաւանց ազգի:

Աթէ իցէ ոք այժմ աստ, դատաւորք, որ անգէտ իցէ օրինաց, դատաստանաց, եւ մերոյ սովորութեանց, զարմանալ զարմանայցէ, թէ զինչ իցէ այնչափ խստութիւն այսր դատաստանի, զի եւ յաւուրս տօնից անգամ եւ խաղուց հասարակաց, եւ իբրեւ ամենայն դատաստանք դադարեալ կան, միայն այս դատ վարիցի. սակայն ոչ երկմտիցէ, թէ որ յանդիմանին այնչափ մնասուց իցէ պատժապարտ, զի եթէ զայնմանէ անփոյթ ոք առնիցէ, կալ յակաստանի քաղաքն շմարթիցի: Վոյն իբրեւ լիցէ թէ գոն օրէնք, որ հրաման տան հանապազօր ամբաստան լինել զստահակ եւ զմնասակար քաղաքացեաց, որ սպառազինեալ զճերակոյտն շուրջ նստեալ պաշարիցեն, ի վերայ իշխանաց ամիցեն բռնութիւն, եւ տացեն մարտ պատերազմի ընդ քաղաքին, զօրէնսն ինչ ոչ խոտիցէ, եւ զյանցանսն որ յեղձեղուցուն ի դատաստանի, յուզեալ խնդրիցէ. . . Աիկ. վասն Աեղեայ:

Օ որ օրինակ յամենայն մեծամեծ ինչ դատաստանս, Ա. Աայսր, անդէն իսկ ի սկզբան բանից սովոր իմ յուզել սասակագոյնս քան որչափ պէտքն եւ հասակ տիրոցս պահանջիցեն, նոյնպէս եւ ի դատաստանի աստ յայսմիկ բազում ինչ է, որ այնպէս խռովեցուցանէ զիս, զի որչափ փոյթ ինձ հաւատարմութիւն յաւելուցու առ պաշտպան լինելոյ կենաց Վէիտարայ արքայի, նոյնչափ ահ եւ երկիւղ արդեւու

զիս: «Այս ասեմ՝ վասն դիւոյ եւ ընչից թագաւորին, զի թէպէտ եւ չէ անիրաւութիւն, ի քում տազնապի միայն, առն թագաւորի գլխովք պարտաւոր լինել, սակայն նոր իմն է, եւ չէ իսկ սովորութիւն, եւ ոչ յականջալուր եկեալ յառաջ քան զայս ժամանակ: Աշխարհք անգամ զոր յառաջագոյն հանդերձ համօրէն ծերակուտիւ գովել սովոր էի, վասն նորին մշանջնաւոր արժանեացն ի մեր քաղաքս, այժմ ստիպիմ յերեսաց դժնդակ իմն շարեաց նմա պաշտպանել: «Վէպ եղև ինձ յերկուց արանց որ ամբաստանէին, ի միոյն Վանագորունութենէ, եւ ի միւսոյն անարժանութենէ աղմկել: Մնագորոյնն Վաստոր, շատացից շարագործ եւ ամպարիշտ, որ թոռն էր եւ բզհաւն ի վիշտս մահու հասուցանէր, եւ զիւրոյ մանկութեան սոսկումն ածէր ի վերայ նորա, զորոյ զծերութիւնն տածել եւ խնամել պարտ էր . . . զհաւուն ծառայ զեղծուցեալ պարզեւօք, յորգորեաց ած ամբաստան լինել զտեառնէն . . . Աորին վասն Վիտտարայ:

Իբրեւ տեսանէի արս բազումս եւ լուս, որ վասն ազնուագոյն եւ շքնաղ հաւատարմութեանն Ան. Պղանկեայ զոր ի պահել զիմ փրկութիւն եցոյց, նորին պատուոյ պաշտպան եւ ջատագով լինէին, ունէի ոչ սակաւ ինչ ուրախութիւն յանձին. զի որոյ իմում փրկութեան նպաստն լեալ էր, նմա զամենեւին յիմում ժամանակի աստ օգնական եւ ձեռնտու տեսանէի: Այլ իբրեւ լու եղև ինձ, եթէ որք թշնամութեամբ իւրք կամ նախանձու էին ընդ իս, այսմ ամբաստանութեան գլխաւորք են, եւ թէ նոյն իբր որ ի խնդիրն օգնականութիւն էին Ան. Պղանկեայ, նոյնք ի դատաստանի ի թշնամութիւն եւ ի հակառակութիւն եղնն նմա, ցաւեաց ինձ, դատաւորք, եւ դրժկամակ իմն լինէի, եթէ սորին փրկութիւն ի տազնապի լինիցի վասն այնորիկ, զի իմում փրկութեան եւ կենաց իւրով բարեխորժն կամօք եւ պահպանութեամբ զգուշացաւ եւ պատսպարան եղև: Այլ

այժմ, դատաւորք, ձեր տեսիլս եւ ժողով զօրացուցանէ եւ զուարթացուցանէ զմիտս իմ, իբրեւ նկատիցեմ եւ յառեալ հայիցիմ ընդ մի մի իւրաքանչիւր ի ձէնջ: Օ ի տեսանեմ ի մէջ այնչափ համարոյ եւ ոչ զոք, որում իմ փրկութիւնն շնորհեալ արգոյ եւ պատուական, որոյ մեծամեծ երախտիք յիս չգտանիցին, որում շնորհեմ ստեպ պարտական մշանջենաւոր յիշատակաւ բարերարութեանն: Վսմին իրի շղարհուրիմ ինչ . . . Նորին վասն Պղանկեայ:

Աթէ կայցէ յիս հանձար, դատաւորք, զոր ի միտ առնում թէ սակաւ իմն է, կամ եթէ կրթութութիւնն ինչ խօսելոյ, զորով, չհրաժարեմ ասել, չափով իմն եկի, կամ եթէ առ ի ինչ զայսց իրաց հանգամանս ի վարթոյ ազնուագոյն ճարտարութեանց եւ ի խրատուէ յորմէ խոստովան լինիմ, թէ ոչ խորշեցայ ընդ ամենայն ժամանակ տիտցս, զայնք ամենայնի շահս մանաւանդ սոյն Ն. Ղիկինիոս յինէն գրեթէ իրաւամբք առնուլ պարտի: Օ ի որչափ ինչ մարթեմ մտօքս հեռագոյն հայել նկատել զանջրպետութիւնն անցեալ զառանցեալ ժամանակին, եւ զյետին ինչ յիշատակ մանկութեան զմտաւ ածել, անդրտին իսկ սկիզբն արարեալ, գտանեմ զի դա եղև ինձ առաջնորդ եւ ի յանձն առնուլ եւ ի թելակոխել ի հանգամանս այսպիսի ուսմանց: Արդ եթէ այս բարբառ սորին խրատու եւ վարդապետութեամբք յարդարեալ բազմաց երբեք երբեք ի փրկութիւնն եղև, որչափ եւս առաւել սմա զլիտովին, որչափ ի մերում կարի է, օղնականութիւնն եւ կեանս մատուցանել պարտիմք, յորմէ ընկալաք իսկ զայն՝ որով այլոց օգնական լինել եւ զայլս ապրեցուցանել մարթացոյք: Ապա մի ոք ի մէնջ ընդ ասելս զայդ այդպէս զարմացի զի . . . Նորին վասն Մ. Բքեայ պեւտի:

Աթէ է ոք, դատաւորք, որ զՎ. Ոսաբիբիոս ընդ կշտամբանօք համարիցի, զի զիւրոց ընչից ստացուածս, մանաւանդ որ հաստատեալ եւ ազնուագոյնս կար-

զեալ էին, յարքունական իշխանութիւն եւ ի տեն-
չանս ապաստան արար, յաւելուցու յիւր դատաստան,
ոչ միայն զիմ վճիռ, այլ եւ զնորին իսկ գլխովին, որ
գործեացն: Օ ի առաւել նմա չթուի հաճոյ խոր-
հուրդ նորա քան այլում ումէք ի մարդկանէ: Սկե-
պէտ եւ զայն իմն բազում անգամ առնեմք, զի
զխորհուրդս ի գիպաց կշռեմք. որում բարուք ինչ
յաջողեացի, ասեմք թէ բազում ինչ նա յառաջա-
դոյն ետես, եւ որում այլազգ ինչ գիպեացի, ասեմք,
նա չզգաց ինչ եւ ոչ ի միտ առ: Այլ թէ լինէր յարքայի
հաւատարմութիւն, քան զՊոստումնս իմաստնագոյն
ոք չհամարէր. արդ զի ստեաց թաղաւորն, շասի
ինչ քան զնոյն անմտագոյն. որպէս զի թուել թէ
ոչ այլ ինչ, բայց դուշակել եւ բղձանալ պարտ իցէ
իմաստնոյ: Բայց սակայն եթէ է ոք, դատաւորք,
որ կամ զնոտի յոյս Պոստումայ, կամ զանխորհր-
դական միտս, կամ, դժնդակագոյն իսկ բանիւ վա-
րեցայց, զյանդգնութիւն դարովել արժան համարի-
ցի, ես կարծեաց այնպիսւոյն չկամ ինչ հակառակ.
սակայն զայս ինչ ազաչեմ, զի իբրեւ տեսանիցէ թէ
ի բախտէն եւս խստիւ տոյժս կրեցին սորին խոր-
հուրդք, մի ինչ յաւերսն որովք սա հարստահարե-
ցաւ, դառնութիւն յաւելուլ յօժարիցի: Շատ իսկ
է չկանգնել զայնսսիկ որ առանց իմաստութեան
զայլթակղիցին, ստիպել եւս զորս անկեալն զնիցին,
եւ զորս դլորեցինն տազնապեցուցանել, արդարեւ
անագորունութեան է. մանաւանդ, դատաւորք . . .
Նորին վասն Աբբիրեայ Պոստումայ:

Գ. ԿՇՏԱՄԲԱՆՔ

159. Աշտամբանք են կսկծեցուցիչ ճառք, որ
կրկին են. մի յերեսս իսկ կշտամբել, որ անօր պար-
տի լինել. եւ մեւս եւս զարիս որ բազում անգամ
լինի: Յառաջաբանութիւն այսպիսի ճառից լինի
ի յայտ առնելոյ զյանցանսն կամ ի պատճառացն

վասն որոյ յորդորեալ եկն ի կշտամբել, այս ինքն է առ դժնդակութեան շարեաց, կամ յառնէն որ յանգիմանի, կամ յայլ ինչ իրաց տեղւոյն եւ ժամանակին: Պատմութիւնն ի մանկութենէ սկիզբն արարեալ պարտի զամենայն կեանս յուղեալ քննել. ի հաստատութիւնսն պարտ է ընդ ամենայն շարիս եւ կարիս այնպէս անցանել, զի ցուցցէ թէ ոճիրքն հակառակ են աստուածեղէն եւ մարդկեղէն օրինաց, սովորութեանց դաւառին, կարգաց նախնեաց եւ այլ ինչ որ սոցին նման է: Աճեն եւ ստուարացուցանին վիշտք, եւ ապա ուրեմն ցուցանի թէ քանի մեծաց պատժոց պատուհասից արժանի իցէ, որ ամբաստանին. եւ այն լինի համեմատութեամբ, եւ զատելութիւն, զնախանձ ի լսողսն յորդորելով. ի վերջին բանս պարտ է զսաստկազոյն կարիս շարժել, զգաստմն, զատելութիւն, զնախանձ, զպատկառանս:

Գ. ՍԱՍ

160. Սաստ է պատուհաս զխաւորի առ խոնարհագոյն դք, եւ սկիզբն լինի ի պատճառաց սաստիցն, կամ յարհամարհութենէ առնն կամ յանցուածոցն որ պատուհասին, կամ ի մեղացն սաստկութենէ, եւ կամ ի յոռութենէ իրացն. կամ երկմտելով թէ ուստի արժան իցէ սկիզբն առնել, եւ այլ եւս բազում օրինակաւ: Պատմութիւնն զերսն զնէ առաջի: Հաստատութիւնն զվնասն աճեցուցանէ ի պատշաճ պատշաճ տեղեաց ճարտարախօսութեան: Ա վերջին բանք պարտին մեղմագոյն լինել, զի պարտին ցուցանել թէ սաստն առ սիրոյ եւ ոչ առ ատելութեան է:

Ե. ՏԻՏՆԶԵԼ

161. Տրանջել լինի զանիրաւութենէ զոր ընկալեալ է որ, եւ որոշի ի քանքատելոյ այնու, զի սա մեղմագոյն լինի եւ նա սաստիկ: Պարտ է զգոյշ լի-

նել հաւաստեալ, զի մի չառեալ հանգամանս երեսաց, տեղւոյ եւ ժամանակի առանց իմաստութեան եւ խորհրդոյ ասիցի ինչ: **Ի** արտունջս, որչափ ինչ մարթիցէ, պարտ է զկաման ազատել ի մեղադրութեանէ, եւ յայտ առնել թէ չկամիմք զապահատաւորութեան կարծիս կարծել զնմանէ զորմէ արտունջն է, եւ կամ չյիշատակել զերախտիսն զորս ընկալեալ իցէ, սակայն զարմանամք, ուստի իցէ, զի այնպիսի յանցմունք սպրդեցին մտին: **Տ**րտնջելոյ սկիզբն սովոր է լինել ի յիշատակելոյ զերախտիս, զոր նմայն արարեալ իցեմք զորմէ արանջեմքն, եւ մինչ չեւ զանիրաւութիւնն պատմեալ, պարտ է խնդրել չմեղադրութիւն եւ ներել թողութեան, զի պարկեշտութեամբ եւ իմաստութեամբ լիցի: **Ի** հաստատութեան պարտ է աճեցուցանել զանիրաւութիւնն: **Վ** երջին բանք զրդոփցեն զգութ ոլորմութեան, զարգահաստութիւն, զերկեւզ եւ զայլ ինչ կարիս ըստ պէսպէս լինելոյ յանդիմանութեանն:

Վսն եւ այլ ազգի ազգի ճառք, որպէս սպառնալիք, պաղատանք, որ չեն ինչ այլակերպ յայնց որ ասացանս. որպէս սպառնալիք նոյն են ընդ սաստի, եւ պաղատանք ընդ պատասխանատուութեան, ուստի որ ինչ վասն նոցին ասացան, բաւական են եւ վասն սոցա:

ՎԿՆՅՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՕՐԻՆԱԿՔ ԻՆՉ ՎԱՄՆ ԴԱՏԱՍԵՆԱՅ

Տգիտութիւն եւ չարութիւն դատաւորի բազում անդամ անմեղաց թշուառութիւն է. **Ս**. **Լ**. Է. Գ. :

Եթէ բարձցի արդարութիւն, զի՛նչ այլ ինչ իցեն իշխանութիւնք, բայց մեծամեծ ինչ զողութիւնք. **Ն**ոյն:

Եյնչափ ժամանակս դատաւոր կոչի, ցորչափ արդար համարի. **Վ**ասիող:

Պարտի յապաղիչ լինել, որ դատին զվերկութեանէ. **Ն**ոյն:

Ենիբաւ է դատաւոր, որ կամ նախանձիցի եւ կամ թեկն ածիցէ. Աիկ:

Չիք դազան շարաթոյն քան զչար դատաւոր. Պետրար:

Բարբառ դատաւորի օրինաց բարբառ է, եւ նորին իսկ արդարութեան. Նոյն:

Պատաւոր չար ամենայն շարեաց պատճառ է. Ստորէոս:

Օպատիժ եթէ անկասկած մարթիս, տացես, ապա թէ ոչ ցածուսցես. Սենեկա:

Ոչ իշխանք ի վեր քան զօրէնս են, այլ օրէնք վերագոյն քան զիշխանս. Պղինիոս ցՏրայիանոս:

Չար եւ անիբաւ է ասել այնչափ զօրաւոր են օրէնք, որչափ հզօր են թագաւորք, զոր կշտամբէ ի մաստունն յորժամ ասիցէ յերեսաց բռնաւորաց. Օրէնս արդարութեան բռնութիւն մեր եղիցի. այլ աշնուազոյն այն է, ասել. Եյնչափ իշխանութիւն է թագաւորաց, որչափ ինչ օրէնք կամիցին:

Եթէ յունին դատաւորի միմնջեսցեն ինչք, Որփեայ քնար եւ երգ Ըմիիոնի եւ նուազ Վիրգիլեայ հեղձնուն ի բարբառոյ անտի ընչիցն: Օրնչ աւելի եւս, ուր կաշառ խօսիցի, ճարտարախօսութեան փող չհնչէ. ուր կաշառ զինուորիցի, փայլատակունք արդարութեանն զինուց ցածնուն. ուր մարտնչիցին ինչք վանեալ վկանդի քաջութիւն քաջին Վահագնի, յազթէ կաշառ, նոյն թագաւորէ, նա ընդ հանուր իշխէ:

Վայ քաղաքի ուր բազում ինչ վճարէ օճան յանձին դատաւորի, քան օրէնք ի մատենի:

Երդարութիւն ոչ գիտէ զհայր, ոչ ճանաչէ զմայր, ճշմարտութեան տեղեակ է, շառնու ակն եւ Ըստուծոյ նմանէ. Աստիող:

Իշխանք բժիշկիք են քաղաքի . թուկիդիդ :

Եւսագոյն է քաղաքի վարել յառնէ ազնուազունէ քան յազնուազոյն օրինաց . Ըրիտ :

Ուր այր փիղիսոփոս գլխաւոր է , անդ երջանիկ եւ բարեշէն է քաղաք . Նոյն :

Մոլեգնելոյ սուր , եւ անիրաւի իշխանութիւն ի ձեռս տալ վիշտ վտանգի է . Պիւթազ :

Ճարտարութիւն գքաղաքս վարելոյ յամենայն ճարտարութիւնս գգլխաւորութիւն շահեալ ունի . Ըրիտ :

Իշխանութիւնք խօսուն օրէնք են . Աիկ :

Որք միանգամ քաղաքաց իշխանք են , ոչ իւիք իրօք դիւրաւ զմիտս ամբոխին հաշտ առնիցեն , որպէս ժուժկալութեամբ եւ պնդութեամբ . Նոյն :

Որ իշխանն է , ի միտ առնուցու թէ գքաղաքին երեսս յանձին կրէ , եւ զնորին պատիւ եւ գվայելչութիւն պարտի յանձն առնուլ . Նոյն :

Որ գլխաւորքն են նմանօղ լիցին օրինաց , որ ոչ յասմամբ , այլ արդարութեամբ ի պատուհասել գան . Նոյն :

Որ քաղաքի ոստիկանն է , պարտ եւ պատշաճ է մինչ գեռ կայն իսկ , մեռանել . Վիտն :

Եւբքիտաս ասէր ստէպ թէ , դատաւոր եւ բազին նոյն մի ինչ է , երկօքին ապաստան են որոց ի վիշտս ինչ իցեն :

Եւղեքսանդրոս մեծ իբրեւ նստաւ լսել զբանս ամբաստանչի , զմեւս ունին վաղվազակի եխից ձեռամբ . եւ հարցեալ թէ ընդէր առնիցէ , ասէ . Օ՛մեւս ունին օղջ թողում այնմ որ պատասխանի տալոց է . Պղբա :

Եւ Եգիպտացիս նոյնք որ քուրմն էին , կային դատաւորք . Եղիանոս :

Եւ Ղակեղեմնացիս դատաւորք փակեալ ուրեք այնպէս դատէին դատաստան , զի մի զըք տեսա-

նիցեն, դուցէ ակն ինչ երեսաց առնուցուն. ԱՂ. յՂէքս:

Ի իւթինացիք իբրեւ դատաստան ինչ դասել Հանդերձեալ էին, դէմյանդիման արեգական զնէին ստեան. Նոյն:

Ազորորդացիք մինչ չեւ ի դատաստան երթեալ, զգինույ նուազ ըմպէին, զոր անուանեալ կոչէին նուազ ճշմարտութեան եւ դատաստանի. զի թե-րեւս յունջ քամեցեն զճշմարտութիւնն. կամ զի խօսողք եւ համարձակագոյնք լինիցին. եւ կամ թէ զոր օրինակ գինի քաղցր եւ բարի է, նոյնպէս պարտ է դատաւորի լինել բարի արդարութեամբ, եւ քաղցր գթով. եւ որպէս գինի զլծադաւոր եւ զռամիկ միան-գամայն արբեցուցանէ, նոյնպէս եւ դատաստան պարտի լինել առանց հայերոյ:

Տրայիանոս ինքնակալ զայս նշանակ տայր դատաւորաց, փայլատակունս ի վերայ բարձի, այսպիսի ինչ բանիւք. ՄԵՂՄԸԿԱՆ ԽՍՏՈՒԹԻՒՆ:

Եւ Լզիպտացիս դատաւորք կրէին ի պարանոցի զպատկեր ճշմարտութեան ի շափիւղայէ, որոյ աչք կափուցեալք էին եւ բազում գրեան առաջինորա. Վիող:

Գեղեցիկ իմն զճշմարտութեանն պատկերէ ասէ Լզիանոս. Այս ոչ զայն ինչ կամիմ թէ դատաւոր զճշմարտութիւնն քանդակեալ ի վիմէ շուրջ արկանիցէ, այլ ի սրտին բեւեռեալ ունիցի:

Եւ Ղուղովիկոս Իժ. երորդ արքայ Ղազխայ մատեաւ ոմն որ զսպանութեան թողութիւն խնդրէր: Իբրեւ իմացաւ թաղաւորն զանհնարին սճիրն եւ թէ երիցս զնոյն յանցանս յանցուցեալ էր, ասէ. Իշխենս այր դու, վասն երից սպանութեանց ներելոյ թողութեան պաղատել. յայնժամ կատակն ծաղրածու որ անդ դիպեցաւ, ասէ. Աչ, ասէ, քաջ արանց, վասն միոյ եւեթ մաղթէ, զի երկրորդն եւ երրորդ քո են, զի եթէ քո յառաջնումն չէր ներեալ, այլ եւս մնացեալք չդիպէին. Պոնտանոս:

Անուգոս իշխան Անդաղաց յոյժ իսկ արդար էր, եւ ոչ ումեք թէպէտ բարեկամ էր, թէպէտ ազգական, խնայէր երբեք: Իբրեւ երբեմն պատիժք ի պատժապարտաց պահանջէին, ոմն ի պարտաւորելոց անտի ազաղակեաց, թէ ազգական եմ իշխանին, խնայ արարէք. յայնժամ թագաւորն ասէ ցղահիճան, աղէ զի պատուական եւ շքեղ լինիցի տեղի ազգականիդ իմոյ, բարձրագոյն քան զայլոց արասջէք զդորա կախաղան. Արանզիոս:

Փերդինանդոս կայսր, որ ողորմած եւ արդար էր, զայս ինչ կիրթ ի բերան ունէր. Աղեցի արդարութիւն, կամ կորնչիցի իսկ աշխարհ. Աոկետոս:

Պակեդեմոնացոց հարեւր եւ քառասուն աթոռք էին ի ծերակուտին եւ նոյնչափ դատաւորք. եւ աթոռքն էին ի ժանեաց փղաց եւ կային ի վերայ առիւծուց, եւ առեւծքն միով ոտամբ ունէին զաթոռն եւ միւսովն հալածէին զկապիկս, եւ էր գիր գրեալ թէ. ՏԵՂԻ ՏՈՒՔԻ ԱՍՏ ԱՌԵՒԾՔ ԲԱԶՄԵՍՅԻՆ. Լպիտ:

Պղէոն իբրեւ կացուցաւ ի վերակացութիւն քաղաքին, կոչեալ զբարեկամս իւր ասէ. կամ է ինձ քակել լուծանել զբարեկամութեան կապանս. քանզի երկեաւ թէ գուցէ ի նոցա զթոյն յօժարիցի յարդարութեանն շաւղաց խոտորել. Պղուտ:

Օւնոն սովոր էր ասել, զաթոռս եւ զքաղաքս պարտ է շքեղացուցանել ոչ պատուական եւ մեծազին զարդուք, այլ արամբք. Ստրէոս:

Մեքսիկացիք քանիցս անգամ թէ թագաւորնոր ընտրեն, պահանջեն ի նմանէ երգնուլ թէ արդարութեան արբանեկելոց է եւ շէ հարստահարելոց զհնազանդեալս, եւ թէ ժիր եւ քաջ լինելոց է ի պատերազմի, եւ միանգամայն իսկ խնամ տանելոց է, զի արեգակն զգնացս իւր եւ զպայծառութիւն հանապաղ ունիցի, ամպք տեղացեն զանձրեւ, գետք յորդիցեն ջուրքք եւ երկիր աննախանձ զպուղս

իւր տացէ: Օ՛րհ համարէին այնպէս թէ թագաւոր
եթէ ընտիր եւ փորձ դտանիցի, նմա եւ արեգակն
հնազանդեսցի, եւ գետին բերրի լինիցի եւ բովան-
դակ իսկ տիեզերք հաճք եւ հաւանք եղիցին վասն
արդարութեանն ուղղութեամբ ժողովրդեան արբա-
նեկելոյ. Սուեգրա:

Օ՛տոյն եւ Հովերոս նոյնպէս ասէ. Երբեւ ազ-
նուազոյն թագաւորի, որ զգից խնամ ունիցի, եւ
բազում ընտիր արամբք զիրաւունս կշիռ մատակա-
բարիցէ. նմա գետինն ինքնին գլխովին որ թխացեալ
սեւանայ, կազմ եւ առատ է, տայ զարմտիս եւ ըզ-
հունձս, եւ մրդովք ակաղձեալ է ծառ. յառաջ դան
անասունք, եւ ծով տայ զձկունս, վասն ուղիղ իշխա-
նութեան ժողովրդեան. վիճակ բովանդակ երանելի
է: Ուստի եւ Բոէտիոս ասէ. Օ՛ամն բարի ոչ այն-
չափ ի բարի բարի պտղոց պարտ է հաշուել, որչափ
յայնցանէ որ արդարութեամբն թագաւորիցեն: Ե-
ռակ է թէ նշան է թէ բարւոք է առաջնորդութիւն
եւ որ առաջնորդէն, յորժամ հաց կայցէ ի հնոցի.
եւ թէ, արդարութիւն ի դատաստանի ամենայն ու-
րեք անկասկած առնէ:

Արիւստիպպոս իբրեւ հարցաւ թէ էր վասն չկամի-
ցի առաջնորդել քաղաքին, ասէ. Եթէ շարաշար վա-
րիցեմ, շեղէց հաճոյ դից, ապա եթէ բարւոք, մար-
գկան. ըստ վճռոյ պետեւին որ ասէ. Եթէ զճշմար-
տութեան զհետ երթիցես, եւ եթէ խտտեսցես, շա-
րաշար կեցցես. զի կամ զգիցն զտտելութիւն ձղիցես,
կամ զմարդկան:

Իբրեւ երբեմն Ապամինոնդեայ առ նախանձու եւ
թշնամանաց անարգ ինչ իշխանութիւն տուաւ, յանձն
առ զայն եւ ասէ. Ոչ իշխանութիւն ցուցանէ եւ
զարդարէ զայր, այլ այր զիշխանութիւն: Եւ այն-
պէս իսկ վճարեաց եւ զիշխանութիւնն արար պա-
տուական, որպէս զի ի բազմաց այնուհետեւ մեծա-
րել. Արասմ:

Ազեսիդաւոս իբրեւ հարցաւ թէ զի՞ է զի Սպարտացւոց քաղաքն քան զայլս առաւել պայծառագոյն իցէ, ասէ. Օ՛ի Սպարտացիք եւ իշխել զիտեն եւ հնազանդ լինել. Պղուտ:

Ազաթոն ասէ թէ որ յիշխանութեան իմիք իցեն, երիս ինչս պարտին ցանկ ի մոտի ունել, նախ թէ մարդկան հրամանն տան. երկրորդ թէ հանգոյնս օրինաց տայցեն պատուէրս. եւ երրորդ թէ մի հանապազ ճոխանայցեն. Ստորէոս:

Սատուռնինոս իբրեւ զօրքն արկին զնովաւ ծիրանիս թագաւորութեան, ի մի վայր դուժարեալ զնոսս ասէ. Օջրականք, զբարուք զօրաւարդ վտարանդի ետուք, եւ զյոռին կացուցէք իշխան: Այր սա հմուտ զօրաց, այլ իբրեւ թագաւոր եղել, քանզի խիստ էր յոյժ, ի զօրացն սպանաւ. Տրեբեղ. Պողինոս:

Թեմիստոկղէս իբրեւ լուաւ թէ են տմանք որ զիշխանութեան թեկն ամեն, ասէ. Աթէ ինձ երկուս ճանապարհս ոք ցուցանէր, որոց մին ի գերեզման տանիցի եւ մեան եւս յատեան, մտադեր իսկ երթայի ընդ այն, որ ուղղորդ ի գերեզման ամիցէ. Աղիանոս: Պեմոսթենէս ասէր. Աթէ զմի ինչ յերկոցունց ոք յընտիր առնիցէ ինձ, ընտրէի մանաւանդ ըստ աշխարհն ելեալ երթալ, քան ի բեժ կամ յատեան: Օ՛ի հմուտ էր թէ որչափ ինչ նախանձ եւ զրպարտութիւն եւ տագնապ կայցէ կրել, որում յառաջնորդելն մտաչիցի. Արամ:

Աեղեւկոս ստէպ ասէր թէ սակաւուց յայտ են մեծամեծ հոգք, որ իշխանաց ի վերայ կան, ապա թէ ոչ չգտանէր ոք որ զարքունի պսակ թէպէտ եւ յերկիր իսկ ընկեցիկ լեալ տեսանէր, բառնայր. Նոյն:

Ասի թէ Անտիգոնոս իբրեւ զարքայութեան թագ եւ զծիրանիս առնոյր, ասաց. Ա ձորձ, որ ազնուագոյն մանաւանդ, քան երջանիկ ես. Ստորէոս:

Իսոն ասէր թէ պարտ եւ պաաշաճ է առն լուի ոչ մեծութեամբ, այլ պայծառութեամբ յիշխանու-

Թենէ ի բայ դնալ : Պիւթագորաս ասէ թէ նախ զեղիութիւն հասանէ ի վերայ քաղաքի, ապա յազուրդ, յետոյ թշնամանք, եւ ապա ուրեմն կարուստ. նոյն :

Տրայիանոս ինքնակալ իբրեւ ումեմն յաստիկանաց զգատաւորութեան սուսերն տայր ածել ընդ մէջ, ասէ : Առ զվաղակաւորս զայս, եւ եթէ իրաւամբք թագաւորեցից, վասն իմ, ապա եթէ անիրաւ, հակառակ իմ վարեցիս դովաւ. Վիսն :

Անտոնինոս պիսակ իբրեւ ընտրեցաւ ինքնակալ, ասէ : Այժմ՝ ամենայն ինչ եւ յամենայնի իսկ օրէն է ինձ : Իսկ Ղակեդամնացւոց թագաւորք համարէին թէ սակաւ յոյժ է նոցա իշխանութիւն, քան իւրաքանչիւր մտրդկան. Տրանկուիդոս :

Սլոտարեայ արքայի Վաղիացւոց այսպիսի ինչ քայռ էր : Սիրա ի գոյն կարմրութեան ի վերայ սպիտակութեան. ի սրտէ անտի ելանէին հասկք երկու, մին յաջմէ ելանէր սկիի, եւ փոխանակ քսաոց շուրջ բակ ունէր ի ճառագայթից արեգական, այսպիսի ինչ գրով թէ. ԵՒ ՊԸՅԾԱՌՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՏԱՊՈՎ : ՍԵԼԱ ԵԼԱ հասկն ի ձախմէ էր ազամանդեայ եւ ունէր քիստս սկիս, սոյնպիսի բանիւք. ՈՉ ԼՈՒՍԵԻՈՐՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՈՉ ՏԱՊՈՎ : Առաջին հասկն զաստուածպաշտութիւն նշանակէ, որ տապով եւ լուսով բարեացն օրինակի պայծառագոյն է : Արկորդ հասկն զմեծանձնութիւն ցուցանէ, զոր ոչ տապ թշուառութեան եւ սչ յաջողութեան փայլուն քայքայել մարթի. այդպիսի սիրտ պարտին ունել որ յաւազութիւն ինչ պատուոյ հասանիցեն. Ուէիսներոս :

Ղուրդովիկոս Սփորտիա առաքեաց զմին ի սահմանակալաց իւրոց առ Վենուացիս, զի ի նոցանէ հարկս մեծամեծս հարկանիցէ : Արքա ընկալան զայրն մարգասիրութեամբ եւ ածեալ ի դրախտ ուրեմն, մատուցին նմա զբասիղիկ բանջար եւ ասեն. Առ եւ զտկար զայդ բանջար, զնշանակ վշտագինն քաղաքի.

նա իբրեւ ընկալաւ եւ առ զհօտն անուշութեան զոր հարկանէ նոյն բանջար, հրաման ետուն նմա ճմլել եւ ջաղջախել զխոտն եւ միւսանդամ հոտոտել. նա իբրեւ արար այնպէս, զգաց շար հոտոյն: Յայնժամ ասեն արք քաղաքին. Աթէ գթով գնայցէ իշխանն, լիցի նորա շնորհ առ ամենեօին, ապա եթէ ճմլիցէ ինչ զմեզ եւ մանրիցէ, զգայցէ դառնութեան եւ վշտաց. Կուիկկարդինոս:

Պերիկղէս իբրեւ ընտրեցաւ զօրաւար Աթենացւոց, ստէպ անձամբ անձին զայս բանս ասէր ի միտս իւր, մանաւանդ ընդ առաւօտս առաւօտս իբրեւ արկանէր զձորձս իւր. Մւշ կալ, Պերիկղէս, պատկառկաց, քաղաքացիք են, որդիք են, Յոյնք են, Աթենացիք են որոց առաջնորդեսդ. Պղուտարբոս:

Առ Հնդիկս գլխաւոր իշխանն, զոր նոքա իւրեանց բարբառովն վոբոն կոչէին, որ թարգմանի պայծառութիւն պատուոյ, ըստ սեամն ապարանիցն երբեք ոչ անցանէր, եւ ոչ յակն մարդկան անկանէր, այլ ըստ ապարանն կամ անդրուարաւ կրէր, եւ կամ յերկրէ գահաւորակաւ եւ գեսպակաւ բարձեալ շրջէր, զի մի ի գետին մերձենայցէ. իբրեւ նստէր յաթոռ ի միջէ կողմանէ կախէր դաշոյն կամ սուսեր, եւ ի միւսմէ կուսէ աղեպն եւ նետք. Կիքտերոս:

Վարողոս մեծ ասէր թէ ինձ այնպիսի իշխանք հաճոյ են, որ իբրեւ զՆւգոստոսն իցեն իշխանութեամբ, հանգոյն Պերիկղեայ դատաստանաւ եւ ըստ նմանութեան Նղէքսանդրի գոռ պատերազմաւ: Նոյն ասէր թէ իշխանաց պարս է աշխատասէր լինել իբրեւ զՆուգամ, եւ աստուածապաշտ որպէս զՆբրահամն:

Նումիդացիք թագաւորաց իւրեանց վտակ անուն եղեալ կարգային. եւ այս անախ էր, զի Նումիդացւոցն էր աղբեր, որ կոչէր Նրամազդայ աղբեր, որում միայն յանտէրնչութեան ժամանակս զոհէին զոհս, զի ցուցցէ նոցա թագաւոր: Յայնպիսի ժամանակս քրմապեան եկեալ հայէր ի ներքս յաղբեր

անդր, եւ որոյ երեսաց կերպարանք երեւէին ի ջուր
անդ, ազդ առնէր քրմապետն թէ Ղրամազդայ ըն-
տրեցաւ լինել թագաւոր Նումիդացոց: Ի յիշատակ
յուշարար այնպիսի կրօնից, թագաւորն հանապազօր
ջրով նորին ազբեր զձեռնն լուանայր, զոր իբրեւ
մատուցանէր սենեկապետն ատեր. Յուշ լիցի քեզ,
արքայ, զի վտակ անուանեալ կոչիս:

Եւ այսպէս արքայ նախատէր զՏամերզանոս
թէ հովիւ էր ազգաւ, եւ նա ասէ ցնա. Չգիտիցես
զի յասուէ ոչխարաց առնին ծիրանիք թագաւորաց:

Պաւսանիաս Ղակեղեմնացոց թագաւոր իբրեւ
ազաչեաց զՍիմոնիգէս փիղիսոսփոս զի արժանի ինչ
խրատ տոյցէ նմա առ ուղիղ զիշխանութիւն թա-
գաւորութեանն վարելոյ, նա եւ պատասխանի թէ
Յուշ լիցի քեզ եթէ մարդ ես դու:

Եւ մովսիս Ագիպտացոց թագաւոր ի խոնարհա-
գոյն ազգէ ծնեալ, իբրեւ յարքունական պատիւ
հասանէր, ազնուականք եւ նախարարք պատիւ առ-
նել նմա դժկամակ լինէին. յայնժամ թագաւորն
կոչեալ ոսկերիչ, պատուէր ետ զի ի կոնքէ միջէ ո-
րովք կանխաւ զոտան լուանայր, զործիցէ պատկեր
նշանաւոր Ղրամազդայ, զոր յաւուր միում, մինչդեռ
ինքն եւ ժողովուրդն ամենայն ի տաճարին շրջէին,
եւ հրամանն ի մէջ ածել. իսկոյն ծունր կրկնեալ ա-
մենեցուն երկիր պագին այնմ. ասէ ցնոսա Մովսիս,
նւմ երկիր պագանէք. երկիր պագանէք անօթոյ, որ
երէկ ի լուանալ զոտս իմ պաշտէր. ամենեքին միա-
բան ետուն պատասխանի թէ ոչ յինչ էրն հայիմք,
այլ զինչ այժմն է: Յայնժամ թագաւորն զնոյն
բանս ցնոսա ասէ. Եւ պա չէ պարտնկատել թէ ո՞րք
էի, այլ թէ ո՞րք այժմ իցեմ, եմ իսկ խոնարհա-
գոյն ուստեք, սակայն ի դից որ այդպէսն կարգեցին,
ելի յաթոռ թագաւորութեան. շերտոստոս:

Տրայիանոս կայսր որ ի պատերազմ ուրեք եր-
թալոց էր, իբրեւ յերիւար իսկ հեծեալ էր, ընդա-

աւջ եղեւ այրի մի, որ բարձր բարբառով առ քաջարանցն բողբէր թէ, որդի իմ, արքայ, առ քոյով թաղաւորութեամբ սպանաւ. եւ անդէն կալեալ զսոց նորա, ասէ. Փարելի քո, տէր, զի որովհետեւ զնա ինձ միւսանգամ դարձուցանել չես կարող, գոնեայ զվրէժ արեան նորա խնդրել մարթացիս: Աս, ասէ թաղաւորն, հաճեցից զքեզ իբրեւ դարձայց այսրէն. ապա եթէ չդառնայցես, ասէ կինն, ո՞ առնիցէ ինձ իրաւ. որ զիսն յաջորդիցէ, ասէ կայսրն. նա ասէ. եւ ի՛նչ իւրիք զխտացից զայդ, արքայ. եւ թէ իցէ լինիցի, ո՞ր շահ անտի կայցէ քեզ եթէ այլք բարերարիցեն. ո՞չ լաւ իցէ, իշխանդ, զի դու քեզէն առնիցես իրաւունս, եւ փոխանակ ընդ այնր վարձս այդրէն ընկալցիս: Յուզեցան դուրթ թաղաւորին. եւ իջեալ յերկարէն, հաւաստեաւ արար հարձափորձ գատաստանի այրւոյն, եւ արժանի հատուցմամբ փոխարինին մտիթարեցաւ կինն: Օջմանէ ասի, թէ իբրեւ մեղադիր եղեն նմա բարեկամքն, թէ կարի իմն հասարակիցէ եւ քաղցր առ ամենեսին է, եւս պատասխանի զգօնութեամբ. Ասմիմ այնպիսի ընդ իւրաքանչիւր մարդկան լինել, որպիսի այր իւրաքանչիւր ցանկանայցէ. աստտոին յիրաւի եւ արժանի եղեւ յաւակ մարդասիրութիւն Տրայիանոսի. Աւարոպ:

Աեփիդոս ոմն խստիւ ամբաստան լինէր առաջի Յուզիանոսի զՆումերեայ, թէ զող է. իբրեւ նա սրբբեաց ի բաց զչարախօսութիւնն, յայնժամ որ ամբաստանէրն ազազակ եղեալ գոչէր թէ, ո՞ յանցաւոր մարթիցի լինել այսու հետեւ, եթէ ուրանալ բուական իցէ. յայնժամ ասէ Յուզիանոս, եւ ո՞ անպարտ լինել կարիցէ, եթէ ամբաստանել միայն շատ իցէ. Ամիանոս Մարկեղինոս.

Աեղուպիդաս զօրաւար իբրեւ յարշաւանս ուրեք երթալ պատրաստէր, եկեալ կնոջն ստեպ թախանձէր արտասուօք թէ անձին կենաց զգուշանայցէ եւ իւրոյ ինքեան հոգայցէ. նա պատասխանի տուեալ

ասէ. Այլոց է, իւրեանց կենաց զգուշանալ, առն զօրաւարի պարտ է իւրովք վշտօք դելըր առնել քաղաքին. Սարկ:

Աղէքսանդրոս մօր իւրում, որ սախպէր սպանանել զոմն որոյ չէր ինչ վնաս, եւ զայն իմն վեր ի վայր յեղյեղէր թէ զինն ամիս կրեցի զքեզ յարգանդի, այսպէս իմաստութեամբ եւ բարւոք ետ պատասխանի. Այլ իմն վարձս խնդրեա յինեն, մայր իմ, զի կենաց մարդոյ չէք ինչ փոխարէն հատուցանել. Ըմբիան. Սարկեզ:

Թեմիատոկէս Սիմոնիդեայ որ խնդրէր եթէ աշիրաւ ինչ դատաստան առնիցի, ետ պատասխանի. Ոչ դու, ասէ, լինիցիս հմուտ վիպասան, եթէ ոչ ըստ նուագաց արուեստականաց երգիցես, եւ ոչ ես եղէց քաջ իշխան, եթէ հակառակ ինչ օրինաց վճիռ տայցեմ:

Անախորոս արքայ Ասիացւոց քաղաքաց քաղաքաց իւրոյ թագաւորութեանն գրեաց. Աթէ, ասէ, ի հրովարտակս, որ ի մեր անուն գրեցցին, յանկարծ թէ գտցի ինչ, որ ընդդէմ օրինաց թուեսցի, զիտասցեն եթէ չեմ ես իրագէտ այնպիսի թղթոց թէ գրեալ իցեն, եւ վասն այնորիկ մի ինչ այնց ուկնդիր լեալ անտայցեն. փուղգոս:

Օթագաւորաց Ագիպտացւոց ասի, թէ պատուէր տային խնամով դատաւորաց եւ տային երգմնի լինել, զի մի ընդ հակառակս ինչ ելեալ հակառակ օրինաց գործիցեն, թէպէտ եւ ի նոցունց իսկ թագաւորաց հրամայեցին. Պղուտ:





Վ ԼԵՆՆԱ ԴԿՈՒՄԵՆՏ

պատմական ու սոցիալական գրքերու ցանկը

	Վ.Լ.Ն.Ա.Դ.Կ.Ո.Ս.Ե.Մ.Ը.	Գրքեր	Բեր
Պիլլուարտ. Ռովանդակութիւն բովանդակութեան սրբոյն (Թովմայի)	10	—	
Հաբերտ. Մատուածարանութիւն	1	30	
Քերականութիւն դաղղիերէն լեզուի	1	15	
Վարժութիւն մանկանց	—	24	
Պատմութիւն վարուց մեծին Վաստանդիանոսի	—	48	
Ստորագրութիւն Վեննայի	1	20	
Թուաբանութիւն	—	30	
Վոչումն ընծայութեան	2	—	
Ըշխարհագրութիւն Համառօտ	2	—	
Քերականութիւն իտալերէն	1	—	
Բառարան ի Հայէ ի տաճիկ	1	24	
Բառարան ի տաճիկականէ ի Հայ	2	36	
Վայելագրութիւն և Հատուած	6	—	
Քերականութիւն Հայերէն կրթութեամբ	1	6	
Քերականութիւն Հայերէն առանց կրթութեան	—	50	
Քերականութիւն Հայ, գրաբառ վարդապետութեամբ	—	50	
Վրթութիւն դործնական	—	16	
Տեսութիւն երկրագնաց	—	36	
Հրահանգք աստեղագիտական ի վերայ գիտաւոր աստեղաց	—	40	
Բոսուետայ խօսք վասն տիեզերական պատմութեան	2	—	
Բնական դիտութիւն	1	40	
Բնական պատմութիւն	1	40	
Վ. Նեպոտայ Վարք զօրավարաց անուանեաց	—	48	
Վ. Ուակինեայ Նրգք վասն կրօնից	1	—	

Ս. Բենեդիկտոսի Անոնք	—	20
Քսենոփոնեանայ Ալեքսի Խրատ	—	48
Նոր քերականութիւն գաղիերէն. Լ. Հատոր. Քերականութիւն եւ գրագիտութիւն	1	12
Ուսողութիւն. Լ. Տոմար. Համարողութիւն եւ Նշանագրովք Համարողութիւն (ալճեպրայ)	2	—
Ճարտարխօսութիւն	—	40
Նոր քերականութիւն գաղիերէն. Բ. Հատոր. Արթութիւն		
Ս. Աւերտեայ Ռուփայ վասն գործոց եւ արութեանց Նշեքսանդրի արքայի Մակեդոնացոց		



ԷԶ	ՏՈՂ	ՍԽԱԼ	ՈՒՂԻՂ
11	12	Հարոյր	Համբոյր
24	23	մերժաց	մերժեաց
26	34	յօրանչէն	յօրանչեն
28	8	ժողովուրդն	ժողովուրդն
28	25	մամինն	մարմինն
51	28	պեա	պեա
65	13	եղին	եղեն
79	31	տիերաց	տիեզերաց
84	3	եցես	իցես
139	4	ինչ	իրենչ
265	9	ցածուցանելի	ցածուցանելն
283	30	սովոր իմ	սովոր եմ



